

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

YEREVAN STATE UNIVERSITY
INSTITUTE FOR ARMENIAN STUDIES

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀԱՆԴԵՍ

3 (9)

ARMENOLOGICAL ISSUES

BULLETIN

ԵՐԵՎԱՆ – YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ – YSU PRESS
2016

Հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ
Հրատարակվում է 2014 թվականից

The Bulletin is published thrice a year.
It has been published since 2014

Գլխավոր խմբագիր՝ **Միմոնյան Ա. Հ.**

Խմբագրական խորհուրդ՝

Ավագյան Ա. Ա.

Ավետիսյան Լ. Վ. (գլխավոր
խմբագրի տեղակալ)

Ավետիսյան Հ. Գ.

Ավետիսյան Յու. Ս.

Բայրամյան Հ. Ս.

Բարդակչյան Գ. (ՄՄՆ)

Դեղեյան Ժ. (Ֆրանսիա)

Դրոսթ-Աբգարյան Ա. Գ.
(Գերմանիա)

Չաքարյան Ս. Ա.

Հայրունի Ա. Ն.

Հովհաննիսյան Ս. Ս.

Հովսեփյան Լ. Ս.

Ղարիբյան Ա. Ա.

Մարգարյան Հ. Գ.

Մինասյան Է. Գ.

Մուրադյան Ս. Պ.

Պողոսյան Վ. Ա. (պատասխա-
նատու քարտուղար)

Սայադով Ս. Ս. (Ռուսաստան)

Սաֆարյան Ա. Վ.

Տազեայան Ա. (Լիբանան)

Editor-in-chief: **Simonyan A.**

Editorial Board:

Avagyan A.

Avetisyan H.

Avetisyan L. (Deputy editor-in-
chief)

Avetisyan Y.

Bardakchian G. (USA)

Bayramyan H.

Dakessian A. (Lebanon)

Dedeyan G. (France)

Drost-Abgaryan A. (Germany)

Gharibyan A.

Hayruni A.

Hovhannisyan M.

Hovsepyan L.

Margaryan H.

Minasyan E.

Muradyan S.

Poghosyan V. (Executive
Secretary)

Safaryan A.

Sayadov S. (Russia)

Zakaryan S.

ՀԻՆ ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱՎՆԱՐԿ

Բանալի բառեր - սկզբնաղբյուրներ, հին (պատմական) քարտեզներ, քարտեզագրության պատմություն, մապա մունդի, պորտոլան, հավաքածու, ատլաս, ֆաքսիմիլային հրատարակություն, քարոզչություն, Հայաստան, Վրաստան, Ադրբեջան

Մարդկության զարգացմանը զուգընթաց՝ ձևավորվել են նաև նրա գիտելիքները և պատկերացումները շրջակա միջավայրի ու աշխարհի վերաբերյալ, որոնք անհրաժեշտություն են առաջացրել քարտեզագրության սկզբնավորման: Տարբեր ժողովուրդների մոտ՝ պայմանավորված քաղաքակրթության աստիճանով, քարտեզագրության և քարտեզների վերաբերյալ գիտելիքները տարբեր են եղել: Այսօր մեզ են հասել քարտեզներ, որոնք պատմական բացառիկ սկզբնաղբյուրներ են, մշակութային կարևոր հուշարձաններ:

Հին քարտեզների ուսումնասիրություններն սկսվել են համեմատաբար ոչ վաղ անցյալում, որոնք սկզբնական շրջանում սահմանափակվում էին միայն առանձին քարտեզների կամ հավաքածուների ֆաքսիմիլային հրատարակությամբ¹ և քարտեզագրության պատմության լուսաբանմամբ, իսկ մեր օրերում այդ ամենի հետ մեկտեղ օգտագործվում են նաև քարտեզագրական հետազոտման մեթոդներ:

Քարտեզագրության պատմության նկատմամբ հետաքրքրությունն աճել է XVIII դարի վերջին և XIX դարի կեսերին, ինչը պայմանավորված էր թե՛ տնտեսության ու տրանսպորտային ցանցի արագ զարգացմամբ և թե՛ ուժային կառույցների համար քարտեզագրական ճշգրիտ տվյալների անհրաժեշտությամբ: Այդ ժամանակաշրջանում Եվրոպայում սկսում են հրատարակել հին քարտեզների պատճենները՝ գիտական մեկնաբանություններով:

¹ Ֆաքսիմիլային հրատարակությունը [facsimile edition] ձեռագիր կամ տպագիր բնօրինակի (ձեռագրեր, գրքեր, քարտեզներ, ատլասներ) ճշգրիտ վերարտադրությունն է՝ դրանց գրաֆիկական և տեքստային բոլոր առանձնահատկություններով հանդերձ: Տե՛ս **Берлянт А. М.**, Картографический словарь, М., 2005, с. 360:

Մանաստիպ առաջին աշխատություններից են ֆրանսիացի գիտնական Մ. Ֆ. Սանտարեմի (1791-1855) հրատարակած հին քարտեզների ատլասը¹ և կոսմոգրաֆիայի² պատմությունը³: 1842-1862 թթ. Է. Ֆ. Ժոմարը (1777-1862) հրատարակում է «Աշխարհագրության պատմության հուշարձաններ» հավաքածուն⁴: Նույն ժամանակաշրջանում են լույս տեսել նաև Ժ. Լելևելի (1786-1861) քարտեզագրության պատմության վերաբերյալ աշխատանքները⁵:

Պատմական աշխարհագրության և հին քարտեզների նկատմամբ հետաքրքրությունն ավելի է մեծանում միջազգային քարտեզագրական գիտաժողովների կազմակերպմամբ, որոնցից առաջինը (Աշխարհագրական միջազգային գիտաժողով)⁶ տեղի է ունեցել Անսվերպենում 1871 թ.: Այստեղ կազմակերպվել էր հին հազվագյուտ քարտեզների ցուցահանդես՝ նվիրված Գ. Մերկատորի (1512-1594) աշխարհի ծովագնացության քարտեզների⁷ և Ա. Օրտելիի (լատ. Օրտելիուսի) (1527-1598)՝ ժամանակակից տեսքով առաջին աշխարհագրական ատլասի⁸ ստեղծման 300-ամյակին:

Քարտեզագրության պատմության և քարտեզագրական հուշարձանների հետազոտության, զարգացման ու տարածման գործում իր մեծ ավանդն ունի բևեռախույզ Ա. Է. Նորդենշելդը (1832-1901), որը հրատարակել է պտղոմեոսյան քարտեզներին⁹ և քարտեզ պորտուլաններին նվիրված մի շարք աշխա-

¹ Տե՛ս **Santarém M. F.**, Atlas, composé de mappemondes, de portulans et de cartes historiques, depuis le VI^e siècle jusqu'au VIII^e siècle, pour la plupart inédites, tirées des manuscrits des différents bibliothèques de l'Europe, pour servir, de preuves à l'Histoire de la Géographie du Moyen Âge, et à celle des découvertes des portugais, Paris, 1846:

² Մինչև XVII դարը կոսմոգրաֆիա [cosmographia] էին կոչում աշխարհագրությունը, հասկապես նկարագրական աշխարհագրությունը քարտեզագրության հետ մեկտեղ: <http://ru.wikipedia.org/wiki/Космография> (հասանելի էր 04.09.2016):

³ Տե՛ս **Santarém M. F.**, Essai sur l'histoire de la Cosmographie et de la Cartographie pendant le Moyen Âge, et sur les progrès de la Géographie après les grandes découvertes du XV^e siècle, pour servir d'introduction et d'explication à l'Atlas composé de mappemondes et de portulans, et d'autres monuments géographiques depuis le VI^e siècle de notre ère jusqu'au XVII^e, t. I-III, Paris, 1849-1852:

⁴ Տե՛ս **Jomard E. F.**, Les monuments de la géographie, ou, Recueil d'anciennes cartes européennes et orientales : accompagnées de sphères terrestres et célestes, de mappemondes et tables cosmographiques, d'astrolabes et autres instruments d'observation, depuis les temps les plus reculés jusqu'à l'époque d'Ortelius et de Gérard Mercator, publiés en facsimilé de la grandeur des originaux, vol. 1-8, Paris, 1842-1862:

⁵ Տե՛ս **Lelewel J.**, Géographie du Moyen Âge, Bruxelles, 1850 et 1852-1857, vol. 5, Repr. Amsterdam, 1966-1967:

⁶ Տե՛ս **Котляков В. М.**, Избранные сочинения, кн. 3, География в меняющемся мире, М., 2001: http://igu.org.ru/articles/kotlyakov_01.html (հասանելի էր 04. 09. 2016):

⁷ Տե՛ս **Mercator G.**, Carta del Mundo de Mercator, 1569:

⁸ Տե՛ս **Ortelius A.**, Theatrum Orbis Terrarum, Antwerpen, 1570:

⁹ Տե՛ս **Nordenskiöld A. E.**, Facsimile-Atlas to the Early History of Cartography: With reproductions of the most important maps printed in the XV and XVI centuries, Translated from the Swedish original by Johan Adolf Ekelöf and Clements R. Markham, Stockholm, Norstedt, 1889, 141 p. 51 plates, maps, reprint: New York, Dover, 1973:

տություններ¹: 1895-1898 թթ. Կ. Միլլերը տպագրել է «մապա մունդիներին»² նվիրված վեցհատորյակը³ և արաբական միջնադարյան քարտեզների ֆաքսիմիլային հավաքածուն⁴: «Մապա մունդիները» վաղ միջնադարյան եվրոպական քարտեզագրությանը բնորոշ եկեղեցական քարտեզներ են, որոնց ուշ միջնադարում փոխարինել են նավարկության համար նախատեսված քարտեզները՝ պորտոլանները⁵: «Մապա մունդիներին» և պորտոլանների ստեղծման ժամանակին, տեղին և պատմական քարտեզագրությանն առնչվող այլ հարցեր քննարկվել են շատ աշխատություններում, որոնցից նշանավոր են Կ. Կորադի, Ռ. Բաշիսիոյի, Չ. Խեպգուդի, Պ. Դալիշեի, Մ. Ֆրանսիսկոյի և Ի. Ֆոմենկոյի գրքերը⁶:

XX դարում հետաքրքրությունը հին քարտեզների նկատմամբ ավելի է աճում, որը խթան դարձավ քարտեզների պատմության ուսումնասիրությունների շրջանակի ընդլայնման, հատկապես հին քարտեզների ֆաքսիմիլային հրատարակումների համար: 1917 թ. լույս է տեսնում Լ. Ս. Բագրովի (1881-1957) «Աշխարհագրական քարտեզների պատմություն» աշխատությունը, որտեղ հեղինակն ընդհանրացնում է իր նախորդների կատարած աշխատանքը⁷, իսկ 1951 թ. նա տպագրում է համաշխարհային քարտեզագրության պատմությանը նվիրված իր ծավալուն աշխատությունը⁸: Վերջինիս «Քարտեզագրության պատմությունը» Ռ. Ա. Սկելտոնը լրամշակում և անգլերենով հրատարակում է 1966 թ.: Նոր տարբերակը շահեկանորեն տարբերվում է

¹ Տե՛ս **Nordenskiöld A. E.**, *Periplus: An Essay on the Early History of Charts and Sailing-Directions*, Transl. by Bather F.A., Stockholm: P.A. Norstedt, 1897: 60 double plates incl. 234 maps (part colored) illustrations:

² *Mappa mundi* (լատ.) – «աշխարհի քարտեզ», http://ru.wikipedia.org/wiki/Mappa_mundi (հասանելի էր 04. 09. 2016):

³ Տե՛ս **Miller K.**, *Mappaemundi: Die ältesten Weltkarten*, Bd. 1-6, Stuttgart, 1895-1898:

⁴ Տե՛ս **Miller K.**, *Mappae Arabicae: Arabische Welt- und Länderkarten des 9.-13. Jahrhunderts in arabischer Urschrift. Lateinischer Transkription und Übertragung in neuzeitliche Kartenskizzen Miteinleitenden Texten*, Bd. 1-6, Stuttgart, 1926-1931:

⁵ Պորտոլան (պորտոլան) [portolan chart, portulan] XIII-XVII դդ. նավարկության (նավիգացիոն) քարտեզ՝ ափագծերի, զետաբերանների և նավահանգիստների շատ մանրամասն պատկերմամբ: Այդ մասին տե՛ս **Берлянт А. М.**, նշվ. աշխ., էջ 249: <http://ru.wikipedia.org/wiki/Портолан>), (հասանելի էր 04. 09. 2016):

⁶ Տե՛ս **Konrad K.**, *Die italienischen Portolane des Mittelalters, Ein Beitrage zur Geschichte der Kartographie und Nautik*, vol. 13, Berlin, 1909; **Bacchisio R. M.**, *Il Compasso da Navigare, Opera italiana della metà del secolo XIII*, Cagliari, Annali della facoltà di lettere e filosofia dell'Università di Cagliari, VIII, 1947; **Хэнгуд Ч.**, *Карты морских царей, составитель Непомнящий Н.*, с предисл. акад. РАН В. Котлякова, М., 1994; **Dalché P. G.**, *Carte marine et portulan au XII^e siècle. Le Liber de existencia rivieriarum et forma maris nostri Mediterranei, Pise, circa 1200*, Roma, École Française de Rome, 1995; **Francesco M. L.**, *Prima Parte dello Specchio del Mare*, Genova, G. Marino e B. Celle, 1664. Disponibile anche in ristampa anastatica dell'edizione originale, Galatina, Congedo, 2002; **Фоменко И. К.**, *Образ мира на старинных портоланах: Причерноморье: конец XIII-XVII в.*, М., 2011:

⁷ Տե՛ս **Багров Л. С.**, *История Географической карты (очерк и указатель литературы)*, Пг., 1917:

⁸ Տե՛ս **Bagrow L. S.**, *Die Geschichte der Kartographie*, Berlin, 1951:

առաջինից և հազեցած է ցուցադրական մեծ նյութով՝ բազմաթիվ հին քարտեզների գունավոր պատճեններ ու քարտեզագիրների կենսագրական տեղեկություններ¹: Առավել արժեքավոր է համարվում 1926-1951 թթ. Յուսուֆ Քեմալի հրատարակած՝ տասնվեց մասից բաղկացած «Աֆրիկայի և Եգիպտոսի քարտեզագրության հուշարձաններ» շատ հազվագյուտ ատլասը (100 օրինակ տպաքանակով)²:

Խորհրդային գիտնականներից Կ. Ա. Սալիշչևն առաջիններից էր, որ անդրադարձավ հին քարտեզներին ու համաշխարհային քարտեզագրության պատմության խնդիրներին³: 1950 թ. լույս է տեսել Լ. Բրաունի «Քարտեզների պատմությունը»⁴ աշխատությունը, ուր ներկայացված է եվրոպական քարտեզագրության պատմությունը հնագույն ժամանակաշրջանից մինչև 1940-ական թվականները: 1953 թ. Գ. Ռ. Քրոունը հրատարակում է «Քարտեզները և դրանք ստեղծողները»⁵ գիրքը:

Անհրաժեշտ է առանձնացնել նաև Ռ. Ա. Սկելտոնի⁶, Ն. Տրոուլերի⁷, Պ. Դ. Ա. Հարվեի⁸, Լ. Բագրովի⁹ և Ա. Վ. Պոստնիկովի¹⁰ պատմական քարտեզների պատմությանն ու հին քարտեզների ուսումնասիրությանը նվիրված աշխատանքները:

Մինչև XX դարի կեսերը գիտական աշխատությունների մեծ մասը հիմնականում նվիրված էր քարտեզների պատմությանը և ակնառու քարտեզագիրների կենսագրականներին, սակայն, 50-ական թվականներից սկսած, արևմուտքում հին քարտեզներ ուսումնասիրողներն իրենց առջև դնում են այլ խնդիրներ: Այդ նոր աշխատանքների համար բնորոշ էին համալիրային մոտեցումները: Նկատելի էր դառնում կապը քարտեզագրության,

¹ Sté u **Bagrow L. S., Skelton R. A.**, History of Cartography, Cambridge, 1966:

² Sté u **Youssef Kamal**, Monumenta cartographica Africae et Aegypti, 5 vol. in 16 books, Le Caire, 1926-1951:

³ Sté u **Салищев К. А.**, Основы картоведения: историческая часть, М., 1943; նույնի՝ Основы картоведения: часть ист. и картогр. материалы, М., 1948; նույնի՝ История картографии // Итоги науки и техники, Картография, т. 6, М., 1974, с. 218-238:

⁴ Sté u **Brown L. A.**, The Story of Maps, Boston, 1950; **Браун Л. А.**, История географических карт, пер. с англ. Н. И. Лисовой, М., 2006:

⁵ Sté u **Crone G. R.**, Maps and Their Makers: An Introduction to the History of Cartography, London, 1953, 2nd rev. ed. Dawson, 1978:

⁶ Sté u **Skelton R. A.**, Looking at an Early Map, Lawrence, 1965 (Univ. of Kansas, Publ. Libr. Ser.: № 17); Maps: A Historical Survey of their Study and Collecting, University of Chicago Press, 1972:

⁷ Sté u **Thrower Norman J. W.**, The Terraqueous Globe: the History of Geography and Cartography, Los Angeles, 1969; նույնի՝ Maps and Man: Examination of Cartography in Relation to Culture and Civilization, Englewood Cliffs, 1972:

⁸ Sté u **Harvey P. D. A.**, The History of Topographical Maps: Symbols, Pictures and Surveys, With 116 ill., 10 in colour., London, First edition, 1980:

⁹ Sté u **Багров Л.**, История русской картографии, М., 2005:

¹⁰ Sté u **Постников А. В.**, Развитие картографии и вопросы использования старых карт, М., 1985:

պատմության, կոսմոգրաֆիայի, աստղագիտության, մաթեմատիկայի և այլ գիտությունների միջև¹:

XIX դարի վերջին և XX դարում հրատարակվում են հին քարտեզներին և դրանց ուսումնասիրությանը նվիրված առավել կարևոր աշխատություններ, իսկ անցյալի քարտեզագրական նյութի հիմնական մասը ֆաքսիմիլային հրատարակությունների միջոցով դրվում է գիտական շրջանառության մեջ՝ աղբյուրագիտական հենք ստեղծելով հետազոտությունների համար:

Ամփոփելով վերոբերյալը՝ կարող ենք նշել, որ պատմական քարտեզագրության և քարտեզների հետազոտության ընդհանուր խնդիրներին նվիրված աշխատություններում, ըստ էության, չեն շոշափվում մեր տարածաշրջանին առնչվող հին քարտեզների ուսումնասիրության ու քարտեզագրության պատմության հիմնահարցերը:

Վրաստանում և Ադրբեջանում հին քարտեզների ուսումնասիրությանը նվիրված աշխատություններին առնչվող մեր տվյալները բավական սահմանափակ են, քանզի դրանք հասանելի են միայն իրենց գրադարաններում և համացանցում եղած տեղեկատվությամբ: Դրանցից կարելի է նշել 1961 թ. Թբիլիսիում հրատարակված Ի. Վ. Մատուրելիի՝ XVIII դ. առաջին կեսի վրացական քարտեզագրությանը նվիրված աշխատությունը, որը հիմնականում նվիրված է XVIII դ. գիտնական Վախուշտի Բագրատիոնիի քարտեզագրական աշխատանքների մեկնաբանությանը և ուսումնասիրությանը²:

2012 թ. Սանկտ Պետերբուրգում լույս է տեսել 1667-1914 թթ. քարտեզների՝ «Ադրբեջանի հին քարտեզների հավաքածու» խորագրով ֆաքսիմիլային հրատարակությունը³: Ըստ համացանցում եղած համառոտագրության՝ այն բաղկացած է պատմական և աշխարհագրական քարտեզներից, որոնցում ներկայացված է «Ադրբեջանի տարածքը»: Ըստ հրատարակիչների գովազդային հայտարարության՝ հավաքածուի քարտեզներն ընտրված են XVI-XIX դդ. հրատարակված ատլասներից: Նշենք, որ ըստ վերնագրում նշված թվագրության՝ դրանք պետք է ընտրված լինեին XVII-XX դդ. հրատարակություններից:

Այս հավաքածուի շարունակությունն են մեր արևելյան հարևանի՝ համացանցում տարածաշրջանային քարտեզներին առնչվող և օր օրի մեծ չափերի հասնող, սակայն բարբառանքից ոչնչով չտարբերվող հակահայկական քարոզչական փորձերը, որոնք նենգափոխում են պատմական սկզբնաղբյուրները. տվյալ դեպքում խոսքը կրկին վերաբերում է հին քարտեզներին և

¹ Տե՛ս Գусарова Т. П., Димитрова О. В., Филипов И. С. и др., Введение в специальные исторические дисциплины, М., 1990:

² Տե՛ս Матурели И. В., Материалы по грузинской картографии первой половины XVIII века, Тбилиси, 1961:

³ Տե՛ս Собрание старинных карт Азербайджана, Факсимильное издание 1667-1914 гг., 4 с.: 64 л. карт, СПб., 2012: <http://www.alfaret.ru/item.php?prod=2204&subid=130&catid=194> (հասանելի էր 04.09.2016):

դրանց բովանդակությանը: Նմանօրինակ հրապարակումներից է Էմիր Էյվազի՝ համացանցում տեղադրած՝ «Մեծ Թուրանի» երկյուղը ստիպում է հայերին նենգափոխել հին քարտեզները» հրապարակումը¹:

Հայրենական պատմագրության մեջ Հայաստանի և տարածաշրջանային քարտեզների ուսումնասիրությանը շատ համեստ տեղ է հատկացվում: Դա բացատրվում է մեր երկրում քարտեզագրական հարուստ հավաքածուների և քարտարանների՝ քարտեզների ցուցակների (քարտեզների գտնվելու տեղը, հեղինակը, չափերը և այլն) բացակայությամբ և կենտրոնական գրադարաններում հին քարտեզներին վերաբերող նյութերի ոչ բավարար քանակով:

Հայաստանի հին քարտեզներին, քարտեզագրության պատմությանը և քարտեզագրական հրատարակություններին նվիրված մեզ հայտնի առաջին՝ «Հայ քարտեզագրական հրատարակությունները 260 տարում (1695-1955)» աշխատության հեղինակը Հ. Ս. Ստեփանյանն է²: Առաջին մասում նա անդրադառնում է հայ քարտեզագրական հրատարակությունների հիմնախնդիրներին, երկրորդ մասում ներկայացնում է հայ քարտեզագրական հրատարակությունների ցուցակը (1695-1955), իսկ երրորդ մասը նվիրված է հայկական քարտեզագրության վերլուծությանը: Հեղինակը հիմնականում օգտագործել է քարտեզների վերլուծության ավանդական և հաճախ օգտագործվող նկարագրական եղանակը, անդրադարձ կատարել քննարկվող քարտեզների ստեղծման պատմությանը, տվել որոշ աշխարհագրական տերմինների մեկնաբանություններ: Գրքի չորրորդ մասը նվիրված է «Սովետահայ քարտեզագրության արդի խնդիրներին»: Այս աշխատանքը կարելի է համարել տվյալ ժամանակաշրջանի համար առաջադիմական, սակայն այն ունի մի մեծ բացթողում. այնտեղ բացակայում են քարտեզների պատճենները՝ ցուցադրական նյութը:

Իսկ Հայաստանի հին քարտեզներին վերաբերող մեզ հայտնի առաջին հավաքածուն 25 քարտեզներից բաղկացած «Ակնարկ Հայաստանի աշխարհագրական միավորի վերաբերյալ» աշխատությունն է³, որը կազմել է տաղանդավոր քարտեզագիր, հանիրավի մոռացության մատնված, ծովակալ, աշխարհագետ-քարտեզագիր Զատիկ Խանգադյանը⁴: 1960 թ. նա կազմել է

¹ **Амир Эйваз**, Страх перед «Великим Тураном» заставляет армян искажать старинные карты: <http://pan.turkist.org/2012/04/blog-post.html> (հասանելի էր 04. 09. 2016):

² Տե՛ս **Ստեփանյան Հ. Ս.**, Հայ քարտեզագրական հրատարակությունները 260 տարում (1695-1955), համառոտ ակնարկ, Երևան, 1957:

³ Տե՛ս **Khazadian Z.**, Rapport sur l'unité géographique de l'Arménie : atlas historique, fac-similé héliographique des 25 cartes de l'antiquité, du Moyen Âge, des temps modernes et contemporains, Paris, 1920:

⁴ Զատիկ Խանգադյան – ծնվել է 1886 թ. Արևմտյան Հայաստանի Մանասա կոչվող բնակավայրում, դպրոցի տնօրենի ընտանիքում, մահացել է 1980 թ. Փարիզում: Նա սկզբնական կրթությունը ստացել է տեղի դպրոցում, ապա՝ Չմյուռնիայի (Իզմիրի) ռազմածովային ուսումնարանում, այնուհետև ուսումնառությունը շարունակել է Ֆրասիայում: Վերադառնալով Թուրքիա՝ Կոստանդնուպոլսում զբաղեցրել է տեղի ռազմածովային ուժերի քարտեզագրության բաժնի պետի պաշտոնը:

«Հայաստանի պատմական աշխարհագրության ատլաս»¹ քարտեզների մեծ հավաքածուն՝ այն նվիրելով «Սովետական Հայաստանի փառապանծ 40-ամյակին»: Ատլասը բաղկացած է անտիկ ժամանակաշրջանից մինչև տվյալ ժամանակահատվածը կազմված և պատմական Հայաստանի տարածքն ընդգրկող հայտնի քարտեզների պատճենների շարքից՝ առանց վերլուծությունների:

1961 թ. Ա. Բաղդասարյանի խմբագրությամբ հրատարակվել է «Հայկական սովետական սոցիալիստական ռեսպուբլիկայի ատլաս»-ը², որի վերջին երկու էջը կրում է «Հայաստանի պատկերումը հին քարտեզներում» խորագիրը: Այստեղ զետեղված են Հայաստանի տարածքը պատկերող յոթ քարտեզներ՝ վերնագրերով, առանց մեկնաբանությունների:

1976 թ. հրատարակվում է Մ. Մ. Խաչատրյանի «Միջնադարի ձվածիր հայերեն քարտեզը»³ խորագրով հոդվածը, որը մանրամասն նկարագրել է Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող ձվածիր քարտեզը, համեմատել այն նմանատիպ տարբեր քարտեզների հետ, քննարկել քարտեզի տե-

գրական ծառայության պետի պաշտոնը, իսկ 1912 թ. նրան շնորհվում է աշխարհագրության դոկտորի գիտական աստիճան: Սակայն Առաջին աշխարհամարտի սկսվելուն պես թուրքերը, նախագգուշանալով, նրան համարելով իրենց համար անցանկալի անձ, հեռացնում են պաշտոնից և բանտարկյալի կարգավիճակով պահում նավի վրա: Բուլղարացի գեներալ Մարկովի ջանքերով նա կարողանում է տեղափոխվել Բուլղարիա, իսկ պատերազմի ավարտից հետո՝ Ֆրանսիա:

Նա ներգրավված է եղել Փարիզի խաղաղության կոնֆերանսի նախապատրաստական աշխատանքներին, կազմել ու հեղինակել է պատմական և ապագա Հայաստանի տարածքներին վերաբերող մի շարք քարտեզներ (օրինակ՝ **Général Nazarbékian**, République de l'Arménie, Délégation à la Conférence de la paix, 1919 ; **Khanzadian Z.**, Arménie, Délégation nationale arménienne, 1919): Ղեկավարել է Ֆրանսիայի ռազմածովային ուժերի քարտեզագրական ծառայությունը: Եղել է Ֆրանսիայի ծովակալ և գլխավոր քարտեզագիր, Ֆրանսիայի ռազմածովային ուժերի ակադեմիայի պրոֆեսոր, ամբիոնի վարիչ, առաջին աստիճանի նավապետ: Մինչ Երկրորդ աշխարհամարտի սկսվելը զբաղեցրել է Ֆրանսիայի գլխավոր քարտեզագրի պաշտոնը: Երկրորդ աշխարհամարտի տարիներին նա եղել է Ֆրանսիական դիմադրական շարժման մասնակից: Ֆրանսիայի Հանրապետությանը մատուցած առանձնահատուկ ծառայությունների համար արժանացել է Ֆրանսիայի բարձրագույն՝ Պատվո Լեգեոն շքանշանի (ֆր.՝ Ordre national de la Légion d'honneur):

Ֆրանսիայում հիմնադրել է «Խանզադյան աշխարհագրական ինստիտուտ»-ը, իսկ 1967 թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ արտասահմանյան անդամ: Նա կազմել և հրատարակել է բազմաթիվ քարտեզագրական աշխատություններ և աշխարհագրական ատլասներ. օրինակ՝ Atlas de Géographie Économique de Turquie, L. de Bertalot, Paris, 1924 ; Atlas de Géographie Économique de Syrie et du Liban, L. de Bertalot, Paris, 1926 ; Atlas de Géographie Générale de la Parestine, Paris, 1932:

¹ Տե՛ս **Khanzadian Z.**, Atlas géographie historique de l'Armenie, 15 rue Mandraa-Courbevoie (Seine), 1960:

² Տե՛ս **Բաղդասարյան Ա. Բ.**, Հայկական սովետական սոցիալիստական ռեսպուբլիկայի ատլաս, Երևան-Մոսկվա, 1961:

³ Տե՛ս **Խաչատրյան Մ. Մ.**, Միջնադարի ձվածիր հայերեն քարտեզը, Բնագիտության և տեխնիկայի պատմությունը Հայաստանում, Գիտական աշխատությունների ժողովածու, VI, Երևան, 1976, էջ 213-239:

ղանուններին առնչվող որոշ հարցեր, իսկ հոդվածի վերջում կատարել է հետևություններ և եզրահանգումներ: Ըստ հոդվածագրի՝ «պատմական բոլոր իրադրությունները, ժողովուրդների տեղաբաշխումը, քաղաքների ժամանակագրական տեղեկությունները հաստատում են, որ աշխարհի հայերեն ձվածիքը քարտեզը կազմված է XII դարում Կիլիկիայում, խաչակրաց արշավանքների ժամանակաշրջանում»¹:

2004 թ. Ռ. Գալչյանը հրատարակում է «Հայաստանի պատմական քարտեզները, քարտեզագրական ժառանգություն» շքեղ հավաքածուն, որը փոքր հավելումով վերահրատարակվում է հայերեն և ռուսերեն՝ «Հայաստանը համաշխարհային քարտեզագրության մեջ» ու «Армения в мировой картографии» վերտառություններով²: Հեղինակը փորձել է ընդգրկել անցյալ դարերի քարտեզագրական հայտնի ստեղծագործությունները, ուր առկա է Հայաստան անվանումը: Աշխատանքում ներկայացված է քարտեզագրության համառոտ պատմությունը: Քարտեզների բաժինն սկսվում է Աշխարհի Բաբելոնյան քարտեզով (Ք. ա. VI դ.) և վերջանում Հայաստանը պատկերող տիեզերական նկարի ցուցադրմամբ (2002 թ.): Քարտեզները դասակարգված են ըստ ժամանակագրական կարգի և ուղեկցվում են բացատրական տեքստերով՝ քարտեզագրի, քարտեզի չափի, աղբյուրի ու պատրաստման թվականի մասին տեղեկությամբ: Այնուհետև դրան հաջորդում են հեղինակի՝ «Կովկասից հարավ երկրները միջնադարյան քարտեզներում. Հայաստան, Վրաստան և Ադրբեջան», «Հորինված պատմություն. Հայաստան և Ադրբեջան. կեղծիքներ և փաստեր», «Պատմությունների բախում Հարավային Կովկասում. Հայաստանի, Ադրբեջանի և Իրանի քարտեզների վերաձևում», «Հայացք դեպի Հայաստանի պատմությունը՝ ըստ քարտեզագրական աղբյուրների» խորագրերը կրող աշխատանքները³:

2004 թ. հրատարակվում է Պ. Թեքեյանի «Հայաստանը աշխարհի հնագույն քարտեզներում»⁴ քարտեզների հավաքածուն, որը Հայաստանի հին քարտեզների հավաքածու է՝ պարզ նկարագրությամբ:

2004–2012 թթ. Բ. Հարությունյանը հրատարակում է եռահատոր «Հայաստանի պատմության ատլասը»¹: Ատլասի յուրաքանչյուր հատորն ունի

¹ Նույն տեղում, էջ 237-239:

² Տե՛ս **Galichian R.**, *Historic Maps of Armenia the Cartographic Heritage*, Tauris I.B., London & NY, 2004, *նույնի՝* Հայաստանը համաշխարհային քարտեզագրության մեջ, Երևան, 2005, *նույնի՝* *Армения в мировой картографии*, Ереван, 2005:

³ Տե՛ս **Galichian R.**, *Countries South of the Caucasus in Medieval maps, Armenia, Georgia and Azerbaijan*, Printinfo Art Books, London, 2007, *նույնի՝* *The Invention of History. Armenia, Azerbaijan and the Showcasing of Imagination*, London, Yerevan, 2009, *նույնի՝* *Clash of Histories in the South Caucasus. Redrawing the Maps of Armenia, Azerbaijan and Iran*, London, 2012, *նույնի՝* *A Glance into the History of Armenia through Cartographic Records*, London, 2015:

⁴ Տե՛ս **Tekeyan B. A.**, *Armenia in Ancient Maps of the World*, Quebec-Canada, 2004:

պատմական քարտեզների պատճենների ցուցադրման համար նախատեսված էջեր՝ «Հայաստանը հին և միջնադարյան քարտեզներում», «Հայկական պատմական քարտեզներ», «Հայաստանը նորագույն շրջանի քարտեզներում» վերնագրերով: Այս քարտեզների պատճենները չունեն բացատրական տեքստեր: Անշուշտ, նշվածներից զատ կան նաև այլ աշխատանքներ, որտեղ հին պատմական քարտեզներն օգտագործվել են որպես լրացուցիչ ցուցադրական նյութ:

Վերը շարադրվածից կարելի է եզրահանգել, որ հին քարտեզներին և դրանց ուսումնասիրությանն առնչվող աշխատությունների շարքում Հայաստանին վերապահվում է շատ համեստ տեղ: Ընդամենը հրատարակվել են հին քարտեզների մի քանի հավաքածու և դրանց առնչվող մեկ ուսումնասիրություն, այն դեպքում, երբ պատմական սկզբնաղբյուրի տեքստով մեզ է հասել քարտեզագրական հարուստ, սակայն դեռևս անտիպ ժառանգություն: Ի դեպ, այդ առումով քիչ երկրներ կարող են հպարտանալ և համեմատվել մեզ հետ:

Մեր երկրում հին քարտեզների ուսումնասիրության հարցում ստեղծված նման իրավիճակը պայմանավորված էր մի շարք հանգամանքներով. պատմական հայտնի իրողությունների հետևանքով մեր երկրում ստեղծվել էր այնպիսի վիճակ, երբ բոլոր հայատառ քարտեզները՝ սկսած «Համատարած աշխարհացոյցից»², տպագրվել էին Հայաստանի սահմաններից դուրս: Բնականաբար նոր քարտեզների կազմման կամ պատմական քարտեզների ուսումնասիրության մասին նման պայմաններում խոսելն ավելորդ էր, իսկ խորհրդային իշխանությունների օրոք ավելանում է նաև քաղաքական գործոնը: Այդ նկատառումներից ելնելով՝ ԽՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր «Գեոդեզիայի և քարտեզագրության գլխավոր վարչությունը»՝ նպատակահարմար չէր գտել ՀԽՍՀ-ում զարգացնել քարտեզագրությունը՝ խոչընդոտելով նաև մասնագետ կադրերի պատրաստման հնարավորությունը:

Գտնում ենք, որ վաղուց ի վեր ժամանակն է՝ արագ լրացնենք բացթողումները: Հարկ է ի մի բերել մեր պատմական հայրենիքի քարտեզագրված տարածքների եթե ոչ բնօրինակները, ապա թեկուզ դրանց պատճենները: Անհրաժեշտ է ակտիվ աշխատանքներ իրականացնել տարբեր երկրների գրադարաններում և արխիվներում՝ ցրված հարուստ նյութը հավաքելու ու հրատարակելու ուղղությամբ՝ գիտական շրջանառության մեջ դնելով նոր քարտեզ-փաստաթղթեր:

¹ Տե՛ս **Հարությունյան Բ.**, Հայաստանի պատմության ատլաս, Ա մաս, Երևան, 2004, *նույնի՛* Բ մաս, Երևան, 2008, *նույնի՛* Գ մաս, Երևան, 2012:

² «Համատարած աշխարհացոյց» (առաջին անգամ հայերեն տպագրված կիսագնդերի քարտեզ – Վ. Մ.), աշխատություն և հրատարակություն Վանանդեցիների, Ամստերդամ, 1695:

Հարկ ենք համարում հավելել, որ այսօր հին քարտեզների հավաքածուների և քարտարանների հրատարակումը մեզ համար ունի ոչ միայն ճանաչողական ու գիտական, այլև քաղաքական մեծ նշանակություն:

Вардан Мхитарян – *Краткий очерк истории исследования и публикации старых карт*

В основе исторических исследований часто используются картографические данные, дошедшие до нас с древнейших времен. В историю картографии, в исследование и распространение картографических памятников прошлого большой вклад внесли европейцы, в работах которых, по сути, не затрагиваются вопросы изучения старых карт, связанных с нашим регионом.

В отечественной истории изучению армянских и региональных карт уделяется очень скромное место, при том, что до нас дошло богатое наследие в виде картографических исторических источников. Следует отметить, что в этой связи мало стран могут похвастаться и сравниться с нами. А потому уже давно настало время для того, чтобы быстро восполнить имеющиеся упущения. Отметим также, что публикация сборников старых карт и картотек имеет для нас не только познавательно-научное, но и большое политическое значение.

Vardan Mkhitaryan – *A Brief Overview of the History of Publication and Study of the Old Maps*

Historical research is often based on actual cartographic data, which have reached to the present day from the ancient times. Europeans had a major contribution to the history of cartography and the study and dissemination of the cartographic monuments of the past, whose works, in fact, did not touch upon issues related to the study of the old maps of our region.

In the Patriotic historiography a very modest place is given to the study of Armenian and regional maps despite the fact we have got a rich heritage of the historical source of cartography. It should be noted that in this regard few countries can boast and compete with us. So, it is high time we came to fill the existing gap. Note also that the publication of the old collections of maps and files has not only cognitive and scientific but also political significance.

**LE ROYAUME ARMÉNIEN DE CILICIE ET LES ORDRES RELIGIEUX-
MILITAIRES DE RECRUTEMENT OCCIDENTAL. GRANDS TRAITS
D'UNE HISTOIRE PARTAGÉE**

Mots-clefs – ordres religieux-militaires, templiers, hospitaliers, teutoniques, royaume arménien de Cilicie, relations diplomatiques, politique intérieure, défense, spiritualité, chevalerie, confraternité, commanderies

Introduction

L'installation d'une diaspora arménienne sur la frontière orientale de l'Empire byzantin et, particulièrement en Cilicie, précéda de plusieurs décennies l'arrivée de la première croisade venue d'Occident, en 1098.

C'est à l'époque de ces « pèlerinages en armes » que l'on assiste à l'émergence d'un nouveau type d'ordres monastiques dans les États latins d'Orient : les ordres religieux-militaires. Ces institutions furent créées afin de répondre aux nécessités et aux conditions particulières suscitées par l'installation des Francs en Terre sainte. L'ordre du Temple, composé de chevaliers ayant consacré leur vie à Dieu, fut fondé en 1120 pour garder les Lieux saints mais aussi les routes empruntées par les pèlerins et protéger les fidèles. L'Hôpital de Saint-Jean de Jérusalem était, quant à lui, à l'origine, une institution hospitalière, dans la seconde moitié du XI^e siècle, donc avant même l'arrivée de la croisade. Dès 1113, cet hôpital devint un ordre religieux ; il ne se militarisa que plusieurs décennies plus tard, entre les années 1130 et 1150. Le troisième ordre important, celui de Sainte-Marie des Allemands – ou ordre teutonique – eut un parcours relativement comparable à celui de l'Hôpital puisqu'il s'agissait également, au départ, d'une institution hospitalière. Cet établissement de recrutement national devint un ordre militaire entre septembre 1197 et février 1198, au moment de l'arrivée des Allemands à Acre pendant la troisième croisade.

Plusieurs problèmes ont découlé de l'installation des ordres militaires sur le territoire arménien : pourquoi et comment ces institutions furent-elles établies en Arménie cilicienne et pour quelles raisons les dirigeants arméniens finirent-ils par les accepter ? De quelle manière les ordres s'investirent-ils politiquement en Arménie et quelle résonance leur mode de vie et leurs valeurs eurent-ils auprès des rois d'Arménie ?

Nous allons tenter d'apporter des éléments de réponse à ces questions en nous intéressant dans un premier temps aux circonstances de l'implantation des ordres militaires en Cilicie, puis à la politique différenciée de chacun d'eux envers les souverains arméniens avant d'évoquer brièvement quelques domaines où l'influence des frères a pu s'exercer sur la noblesse arménienne.

I. LES CIRCONSTANCES DE L'INSTALLATION DES ORDRES MILITAIRES EN CILICIE

L'installation brutale des templiers

L'arrivée des templiers en Arménie se fit de façon abrupte, mais pour en comprendre les raisons, il faut garder en mémoire le fait que, pendant une grande partie du XII^e siècle, la Cilicie fut tour à tour, et parfois de façon concomitante, aux mains des Arméniens, des Byzantins et des Francs. Certaines régions étaient donc revendiquées par ces différents protagonistes, en particulier les zones frontalières comme celle des montagnes de l'Amanus, âprement disputée entre les princes roubéniens et les princes d'Antioche. Dans les années 1155-1156, le seigneur d'Antioche Renaud de Châtillon engagea le combat contre l'Arménien T'oros II dans le but de livrer aux templiers des forteresses autrefois possédées par les Francs. C'est l'empereur byzantin Manuel Comnène qui avait incité le prince d'Antioche à affronter T'oros. L'issue de la bataille, favorable à Renaud, aboutit à la remise des forteresses de l'Amanus aux frères du Temple¹.

Pendant l'année qui suivit leur implantation en Cilicie, les templiers apportèrent leur soutien militaire à Stép'anê, frère de T'oros II, lors d'une intrusion des Turcs. Un des officiers du sultan, surgit dans l'Amanus avec trois mille hommes, mais les forces coalisées des templiers et de Stép'anê, en conjonction avec une maladie qui affecta les chevaux, prit les Turcs de court et eut raison d'eux. Les templiers avaient dû prendre appui sur certaines de leurs nouvelles forteresses, telles que Baghrâs et Darbsâk, pour lancer leur offensive².

La lente progression des hospitaliers en Cilicie

La présence des hospitaliers en Cilicie fut plus précoce que celle des templiers. Déjà à l'époque où l'Hôpital n'était pas encore militarisé, l'ordre reçut des territoires dans la plaine cilicienne. Ces donations, dont le but initial était uniquement charitable, étaient le fait des princes d'Antioche qui dominaient la région. Ces concessions ont pu débuter dès les années 1100-1112, lorsque Bohémond de Tarente, puis Tancrede, détenaient le pouvoir dans la principauté d'Antioche. Leurs domaines étaient dispersés

¹ *The chronography of Gregory Abû'l Faradj*, E. A. Wallis Budge (trad. angl.), Londres, 1932, p. 283 (désormais **Bar Hebraeus**) ; *Chronique de Michel le Syrien, patriarche jacobite d'Antioche (1166-1199)*, J.-B. Chabot (éd. et trad. fr.), t. III, Paris, 1905, réimpr. anastatique, Bruxelles, 1963, p. 314 (désormais **Michel le Syrien**, éd. Chabot) ; **Boase T. S. R.**, *The History of the Kingdom* // **Boase T. S. R.** (dir.), *The Cilician Kingdom of Armenia*, Edimbourg et Londres, 1978, p. 12 ; **Chevalier M.-A.**, *Les ordres religieux-militaires en Arménie cilicienne. Templiers, hospitaliers, teutoniques et Arméniens à l'époque des croisades*, Paris, 2009, p. 60-62.

² **Grigor Yerets** dans **Matt'êos d'Ourha**, *Chronique*, éd. de Jérusalem, 1869, p. 511-515 (en arménien), trad. fr. // *Chronique de Matthieu d'Édesse (962-1136) avec la continuation de Grégoire le Prêtre jusqu'en 1162*, Édouard Dulaurier (trad. fr. et notes), Paris, 1858, p. 337-339, et trad. angl. dans *Armenia and the Crusades, 10th to 12th centuries, The Chronicle of Mathew of Edessa*, Ara Edmond Dostourian (introduction, commentaire et trad. angl.), Lanham-New York-Londres, 1993, p. 262-264 ; **Bar Hebraeus**, p. 281 ; **Chevalier M.-A.**, op. cit., p. 63-64.

dans l'ensemble du territoire recouvert alors par la principauté d'Antioche. Parmi ceux qui étaient situés en Cilicie, on trouvait le casal de Chourar dans le territoire de Hârouînÿâ et celui de Sarata sur le territoire de Mamistra¹.

Le profil des donations réalisées en faveur de l'Hôpital pendant les années 1100-1130 ne divergeait pas de celui des « aumônes » faites aux ordres religieux traditionnels. On n'y trouvait encore aucune cité ayant une quelconque importance stratégique ni aucune forteresse, ce qui ne sera plus le cas au début du XIII^e siècle.

Les donations arméniennes au profit des hospitaliers et des teutoniques

C'est pendant le règne de Lewon I^{er} que le souverain arménien prit conscience des avantages qu'il pourrait tirer de la présence des hospitaliers et des teutoniques sur les marches de son royaume. D'une part, les frères pouvaient constituer un rempart solide face aux vellétés d'invasion ou de raids des ennemis du pays et, d'autre part, le fait de favoriser ces ordres permettrait à Lewon de s'attirer les bonnes grâces du pape et de l'empereur germanique, sans oublier celles des ordres eux-mêmes dont l'influence était loin d'être négligeable auprès des princes du Proche-Orient et d'Occident. C'est ainsi que, entre 1209 et 1216, il fit un certain nombre de donations de terres, de casaux, de villes, de ports et de forteresses à ces deux institutions militaro-hospitalières. Parmi les plus importants sites concédés, on trouvait Séleucie, Castellum Novum, Camardias, Vaner, Dcheker et Laranda pour l'Hôpital de Saint-Jean de Jérusalem, et Cumbethfor, Ayun et Amouta pour celui de Saint-Marie des Allemands².

Son successeur Hét'oum I^{er} et sa fille la reine Zapêl poursuivirent sa politique en confiant la ville de Hârouînÿâ, ainsi que plusieurs abbayes et casaux à l'ordre teutonique le 22 janvier 1236³.

¹ *Cartulaire général de l'Ordre des Hospitaliers de Saint-Jean de Jérusalem (1100-1310)*, Joseph Delaville le Roulx (éd.), Paris, 1894-1906, I, p. 38, n° 45 (désormais *Cart. Hosp.*) ; analyse dans **Röhrich R.**, *Regesta Regni Hierosolymitani (MXCVII-MCCXI)*, Innsbruck, 1893, p. 20, n° 86 (désormais *RRH*) ; **Chevalier M.-A.**, op. cit., p. 68-77.

² *Cart. Hosp.*, II, p. 115-116, n° 1344, p. 118-119, n° 1349-1351, p. 164-165, n° 1426, p. 165-166, n° 1427 ; **Strehlke E.** (éd.), *Tabulae Ordinis Theutonici ex tabulari regii berlinensis codice potissimum*, Berlin, 1869 (2^e éd., préface et ajouts de Mayer H. E., Jérusalem, 1975), p. 37-39, n° 46, p. 266-269, n° 298 ; **Forstreuter K.**, *Der deutsche Orden am Mittelmeer*, Bonn, 1967, p. 234 ; analyses dans *RRH*, p. 195, n° 732, p. 224-225, n° 841, p. 229-230, n° 859, p. 234-235, n° 869-870, additamentum, p. 55, n° 844, p. 57, n° 870 ; **Chevalier M.-A.**, op. cit., p. 194-228.

³ **Langlois V.**, *Le Trésor des Chartes d'Arménie ou Cartulaire de la chancellerie royale des Roupéniens*, Venise, 1863, p. 141-143 ; **Strehlke E.**, op. cit., p. 65-66, n° 83 ; **Forstreuter K.**, op. cit., p. 234-236 ; et analyse dans *RRH*, p. 277, n° 1060.

II. LA POLITIQUE DES ORDRES MILITAIRES ENVERS LES SOUVERAINS ARMÉNIENS AU XIII^e SIECLE

La division des ordres pendant la querelle d'Antioche

En 1195, la célébration d'une union matrimoniale entre les principautés d'Arménie et d'Antioche aurait dû lier à long terme les deux États. Au lieu de cela, elle les divisa pour plusieurs décennies. Il s'agit du mariage de Raymond, le prince héritier d'Antioche, et d'Alice, nièce du roi d'Arménie Lewon I^{er}. La mort précoce de Raymond attisa la convoitise de son frère cadet, Bohémond, déjà comte de Tripoli, aux dépens du fils posthume de Raymond et d'Alice, Raymond-Roubên. Les droits à la principauté d'Antioche de celui-ci, encore enfant, furent défendus avec vigueur par Lewon I^{er}, son grand-oncle¹.

L'engagement des maîtres et des frères du Temple, de l'Hôpital et, dans une moindre mesure, des teutoniques fut permanent dans ce problème de succession. Leurs prises de position, hésitantes au début des hostilités, s'affirmèrent assez rapidement. Les templiers souhaitaient avant tout que Lewon I^{er} leur rende la forteresse de Baghrâs qu'il leur avait prise indûment. Comme le souverain arménien tergiversait afin de gagner du temps, les templiers finirent par offrir leur soutien au comte de Tripoli. Les hospitaliers et les teutoniques choisirent, quant à eux, d'appuyer les revendications de Raymond-Roubên qu'ils estimaient légitimes².

Le conflit entre Lewon I^{er} et Bohémond de Tripoli valut au roi d'Arménie d'être excommunié, aux templiers de perdre une grande partie de leurs domaines ciliciens, mais aussi certains de leurs membres, et aux hospitaliers et aux teutoniques, au contraire, d'accroître leurs biens fonciers en Arménie. En 1216, le roi arménien parvint à s'emparer d'Antioche (avec la complicité des hospitaliers) qu'il remit à son petit-neveu. C'est à cette occasion que la forteresse de Baghrâs fut rendue aux templiers, après une attente de plus de vingt-cinq ans ; une réconciliation s'amorça alors. Ce furent même les templiers qui avertirent le roi Lewon que Raymond-Roubên fomentait un complot contre lui, lui sauvant ainsi la vie³.

Vers une normalisation des relations ?

À la mort du roi Lewon I^{er}, en 1219, trois candidats potentiels à sa succession firent valoir leurs droits : Zapêl, sa fille cadette, choisie dès sa naissance par Lewon I^{er} pour lui succéder sur le trône arménien, la majorité des barons lui avaient prêté serment ; Raymond-Roubên, désigné comme son successeur par Lewon jusqu'en

¹ Chevalier M.-A., op. cit., p. 146.

² *Ibid.*, p. 147-163 ; *idem* : La correspondance entre les élites arméniennes et la papauté pendant le règne de Lewon premier // Denise Aigle, Michele Bernardini et Jürgen Paul (éd.), *Correspondances diplomatiques et traités de chancellerie* // « Eurasian Studies », XI, 2013, p. 229-256.

³ *La Continuation de Guillaume de Tyr (1184-1197)*, Ruth-Morgan M. (éd.), Paris, 1982, p. 96, § 93 ; *L'Estoire de Eracles empereur et la conquête de la terre d'Outremer* // Recueil des Historiens des Croisades, Historiens Occidentaux, Paris, 1859, II, p. 137, chap. 25 ; Bar Hebraeus, p. 370 ; Ibn Shaddad, *Description de la Syrie du Nord*, A.-M. Edde-Terrasse (trad. fr. et notes), Damas, 1984, p. 265 ; Chevalier M.-A., *Les ordres religieux-militaires en Arménie cilicienne*, p. 164-167.

1216 ; et Rita, fille aînée de Lewon et épouse du roi de Jérusalem Jean de Brienne. Certains d'entre eux avaient la faveur des membres des ordres militaires¹.

Raymond-Roubên bénéficiait du soutien d'un certain nombre de seigneurs. Il parvint à s'emparer de plusieurs villes arméniennes lorsque Kostandin, régent de Zapêl, intervint et le pourchassa jusqu'à la ville de Tarse. C'est alors que les hospitaliers entreprirent un voyage depuis l'Égypte, où se déroulaient les opérations de la Cinquième Croisade, pour tenter de le secourir, mais ne purent arriver à temps pour le sauver. Ainsi, les frères, dont le candidat favori avait été défait, se trouvaient en mauvaise posture².

Cinq ans plus tard, les membres de l'Hôpital furent impliqués, malgré eux, dans une autre affaire de politique intérieure arménienne, qui les mettait de nouveau en porte-à-faux vis-à-vis du bayle Kostandin : la reine Zapêl, à qui l'on avait fait épouser le prince Philippe d'Antioche et qui se retrouvait veuve après que Kostandin ait fait emprisonner puis assassiner son mari, s'était réfugiée dans la forteresse de Séleucie que son père avait donné à l'Hôpital. Les hospitaliers ne pouvaient pas remettre la reine au régent sans être déshonorés, mais s'ils persistaient dans leur résistance au dirigeant effectif du royaume arménien, ils risquaient de perdre tous leurs biens dans cet État. À la suite d'importantes pressions, ils finirent par vendre Séleucie, avec la reine à l'intérieur, à Kostandin³.

Après cet événement, les ordres militaires entrèrent parfois en opposition avec les souverains d'Arménie, mais de façon plutôt marginale. La menace que faisaient peser les Mamelouks sur l'ensemble des États chrétiens d'Orient et l'arrivée des Mongols eurent, au contraire, pour effet de rapprocher les templiers et les hospitaliers des dirigeants arméniens.

Les ordres militaires dans l'entourage et au service du roi d'Arménie

À diverses reprises, les chroniqueurs et voyageurs médiévaux remarquèrent la présence de membres des ordres militaires aux côtés du roi d'Arménie ; les cérémonies religieuses étaient l'une de ces occasions. Lors de la célébration de la fête de l'Épiphanie, le 6 janvier 1212, dans la capitale du royaume arménien, les deux des plus hauts représentants des ordres militaires présents à ce moment-là dans le pays y participaient : le maître des teutoniques, Hermann de Salza, et le châtelain hospitalier de Séleucie. Ils chevauchaient, avec leurs hommes, aux côtés du souverain. Ces

¹ **Chevalier M.-A.**, op. cit., p. 169-170.

² *Estoire de Eracles*, p. 347 ; **Chevalier M.-A.**, op. cit., p. 170-171.

³ *Colophons de manuscrits arméniens (XIII^e s.)*, A. S. Mat'evosyan (éd.), Erevan, 1984, p. 587, n° 474, p. 166, n° 122 (en arménien) ; **Kirakos de Gandzak**, *Histoire d'Arménie*, Mélik'-Ohandjanyan (éd.), Erevan, 1961, p. 187-190 (en arménien), trad. Brosset M.-F. // *Deux historiens arméniens*, Saint-Pétersbourg, 1870, p. 93 ; *La chronique attribuée au Connétable Smbat*, G. Dédéyan (trad. partielle du manuscrit de Venise), Paris, 1980, p. 95-96 (désormais **Smbat**, trad. Dédéyan) ; **Het'oum L'Historien**, *Chronique* // Hakobyan V. A. (éd.), *Chroniques Mineures*, t. II, Erevan, 1956, p. 64 (en arménien) ; **Het'oum II**, *Annales* // Hakobyan V. A. (éd.), *Chroniques Mineures*, t. I, Erevan, 1951, p. 80 (en arménien) ; **Bar Hebraeus**, p. 381, 389-390 ; *Lignages d'Outremer*, Nielen M.-A. (éd.), Paris, 2003, p. 138-139 ; **Alichan L.**, *Zapêl // Souvenirs de la patrie arménienne* (en arménien), 2 vol., Venise, Saint-Lazare, 1920, t. I, p. 128-131 ; **Chevalier M.-A.**, op. cit., p. 172-177.

dignitaires assistèrent également au couronnement du jeune Raymond-Roubên¹. Étant donné la considération dont les hospitaliers et les teutoniques bénéficièrent auprès de Lewon I^{er} et de ses successeurs, il y eut probablement une représentation permanente des ordres à la cour du souverain.

Les ordres religieux-militaires furent à diverses reprises étroitement liés aux politiques successorales et matrimoniales du royaume arménien, en particulier lors des mariages de Rita, fille de Lewon I^{er}, avec Jean de Brienne, en 1214, et de Fimi, fille de Hét'oum I^{er}, avec Julien, seigneur de Sidon et de Beaufort, en 1252. Le maître de l'Hôpital intervint en personne pour favoriser leurs deux unions et aida financièrement le roi d'Arménie lors de ces événements².

Les ordres s'engagèrent également, sur le plan diplomatique, en faveur de la défense des intérêts arméniens puisqu'ils servirent à plusieurs reprises d'émissaires ou d'intermédiaires, en Occident comme en Orient.

La première intervention diplomatique des ordres religieux-militaires en faveur d'un dirigeant arménien fut celle des templiers qui, à l'automne 1158, aux côtés du roi de Jérusalem Baudouin III, implorèrent le basileus Manuel Comnène d'accorder son pardon à T'oros II et se portèrent garants de la loyauté future du prince arménien. L'entremise des chevaliers du Temple et du roi sauva le Roubênien qui se trouvait alors dans une position particulièrement délicate puisque l'empereur byzantin venait de conquérir toute la plaine cilicienne et voulait se venger des dévastations commises dans l'île grecque de Chypre par T'oros et son acolyte Renaud de Châtillon³.

Pendant la querelle de succession d'Antioche, un frère de l'Hôpital de Sainte-Marie des Teutoniques fut mandaté par Lewon I^{er} pour aller plaider la cause de Raymond-Roubên auprès du pape Innocent III. Le soutien officiel d'un frère venu défendre les intérêts du roi d'Arménie jusqu'à la Curie impliquait celui de l'ensemble de l'ordre⁴.

¹ **Wilbrandi de Oldenburg**, *Peregrinatio, iterum edita*, dans *Peregrinatores medii aevi quatuor*, Laurent J. C. M. (éd.), Leipzig, 1864, p. 178 ; **Wilbrand D'Oldenburg**, *Itinerarium Terrae Sanctae // De Sandoli S.* (éd. et trad. it.), *Itinera hierosolymitana Crucesignatorum* (Saec. XII-XIII), t. 3: *Tempore recuperationis Terrae Sanctae* (1187-1244), Jérusalem, 1980, p. 222 ; **Chevalier M.-A.**, op. cit., p. 402-403.

² **Paoli S.**, *Codice diplomatico del sacro militare ordine Gerosolimitano, oggi di Malta*, 2 vol., Lucques, 1733-1737, I, p. 104, n° 99, p. 105-106, n° 100, p. 134-135, n° 119 ; *Cart. Hosp.*, II, p. 164-165, n° 1426, p. 165-166, n° 1427, p. 718, n° 2581 ; analyse dans *RRH*, p. 234-235, n° 869, p. 235, n° 870, *additamentum*, p. 57, n° 869, 870 ; **Sembat**, trad. Dédéyan, p. 89 ; **Langlois V.**, op. cit., p. 146-147, n° 20 ; **Alichan L.**, *Sissouan ou l'Arméno-Cilicie, description géographique et historique*, 1885 [texte], 1899 [trad.], trad., p. 475, 492-493 ; **Chevalier M.-A.**, op. cit., p. 403-407.

³ **Grigor Yerets**, éd. de Jérusalem, p. 532-533 (en arménien) ; **Michel le Syrien**, éd. Chabot, p. 316 ; **Kinnamos J.**, *Chronique*, J. Rosenblum (trad. fr.), Nice, 1972, p. 123 ; *Willelmi Tyrensis archiepiscopi Chronicon*, R. B. C. Huygens (éd.), Turnhout, Brepols, 1986, l. 18, ch. 23-24, p. 844-845, 846-847 (désormais **Guillaume de Tyr**, éd. Huygens) ; **Alichan L.**, *Léon le Magnifique, premier roi de Sisouan ou de l'Arméno-Cilicie*, trad. par le P. G. Dayan, Venise-St Lazare, 1888, p. 46 ; **Magdalino P.**, *The Empire of Manuel I Komnenos, 1143-1180*, Cambridge, 1993, p. 67-71 ; **Chevalier M.-A.**, op. cit., p. 421.

⁴ Migne J.-P. (éd.), *Patrologiae cursus completus, sive Bibliotheca universalis, integra, uniformis, commoda, oeconomica, omnium SS. Patrum, Doctorum scriptorumque ecclesiasticorum qui ab aevo apostolico ad Innocentii III tempora floruerunt*, Series secunda, t. 214-217, Petit-Montrouge, 1855, 216, col. 54-56, n° 45 (désormais **Innocent III**, *PL*) (analyse de la lettre dans *RRH*, p. 323-324, n° 838) ;

Après la défaite de l'armée mongole – et de ses alliés arméniens – à Homs en novembre 1281, le roi d'Arménie se trouvait en mauvaise posture puisque sa participation à la prise d'Alep avait attisé les rancœurs des musulmans à son égard. C'est dans ce contexte délicat que Kalâwoûn décida de faire une nouvelle expédition en Arménie, provoquant des massacres et des dévastations considérables. Lewon II chercha en vain à obtenir une trêve avec les Égyptiens avant de faire appel aux templiers comme intermédiaires. Le maître du Temple, alors Guillaume de Beaujeu, intercédâ en faveur de Lewon et le commandeur templier d'Arménie remplit, de son côté, le rôle d'émissaire auprès du sultan qui accepta cette médiation. En échange de la trêve de dix ans, dix mois et dix heures signée le 6 juin 1285, le roi d'Arménie dut payer à l'Égypte un lourd tribut (un million de dirhems par an et livrer vingt-cinq « bons chevaux » et autant « d'excellentes mules », dix mille plaques de fer ainsi que divers objets précieux et étoffes)¹.

À diverses reprises, les hospitaliers intervinrent au début du XIV^e siècle pour aplanir les relations entre le roi d'Arménie et le souverain de Chypre, à la demande du pape². Pendant la seconde moitié de ce siècle, les missions diplomatiques qui leur furent confiées se firent plus rares. Cependant, tout au long de cette même période, l'Hôpital affréta des navires depuis Rhodes afin de porter secours à ses voisins arméniens³.

Chevalier M.-A., Les chevaliers teutoniques en Cilicie : « les Maccabées » du Royaume arménien // « Bizantinistica. Rivista di Studi Bizantini e Slavi », 2^{ème} série, 6, 2004, p. 142-143.

¹ См.: **Послыхалин А. Ю., Чернова Е. Е.**, указ. соч., с. 331-385. URL: http://www.schelcovo.ru/file/book_fryanovo.pdf (дата обращения 27.10.2016).

Մերգեյ Սայադով – Իվան Լազարի Լազարևը ռուս-հայկական հարաբերություններում

Հողվածում քննարկվում է Ի. Լ. Լազարևի դերը XVIII դարի ռուս-հայկական հարաբերություններում, ցույց է տրվում նրա՝ իբրև պետական և հասարակական գործչի, հայկական ազգային-ազատագրական շարժման ղեկավարներից մեկի կայացման գործընթացը, ինչպես նաև Ռուսաստանի հայկական համայնքում ծավալած գործունեությունը: Նա և արքեպիսկոպոս Հովսեփ Արղության-Երկայնաբազուկը ցարական կառավարության ներկայացուցիչների հետ քննարկում էին հայկական պետության վերականգնման նախագծերը: Ի. Լ. Լազարևը մասնակցել է Կովկասում Ռուսաստանի քաղաքականության մշակմանը, Ղրիմից Դոն հայերի տեղահանության կազմակերպմանը: Նրա ջանքերի շնորհիվ իշխանություններն օգնում էին տեղահանվածներին, այդ թվում նրանց ազատում հարկերից: Լինելով ժամանակի ամենահարուստ ձեռնարկատերերից մեկը՝ Ի. Լ. Լազարևը Մոսկվայում, Մանկտ-Պետերբուրգում և Ռուսաստանի հայկական բնակավայրերում իր միջոցներով կառուցել է եկեղեցիներ, դպրոցներ ու տպարաններ: Նա պատմության մեջ մտել է իբրև արևելյան լեզուների Լազարյան ինստիտուտի հիմնադիր, որը մեծ դեր է կատարել հայ ժողովրդի պատմությանը և մշակույթին ճանաչում տալու, ռուս-հայկական հարաբերությունների զարգացման գործում:

Sergey Sayadov – Ivan L. Lazarev's role in Russian-Armenian relations

The article discusses I.L. Lazarev's role in the Russian-Armenian relations of the XVIII century depicting the process of his establishment as a state and public figure, one of the leaders of the national liberation movement, as well as his activities as a representative of the Armenian community in Russia. He and Archbishop Joseph Arghutinski discussed the drafts of the restoration of the Armenian State with the tsarist government. He participated in developing a Russian policy in the Caucasus, in the organization of deportation of Armenians from the Crimea to Don. Thanks to his efforts the authorities helped the displaced, as well as freed them from paying taxes. Being one of the richest entrepreneurs of the time, I.L. Lazarev built churches, schools and publishing houses at his own expenses in Moscow, St. Petersburg and in the Armenian communities of Russia. He went down in history as the founder of Lazarev Institute of Oriental Languages, which played an important role in giving recognition to the history and culture of the Armenian people, as well as in developing Russian-Armenian relations.

**ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՐՄԱՐԾՈՒՄԸ
ԵԳԻՊՏՈՍԻ «ԱԶԱՏ ԲԵՄ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒՄ**

Բանալի բառեր – Լևոն Լարենց, Օսմանյան կայսրություն, արևմտահայություն, ազգային կուսակցություններ, «Ազատ բեմ», շաբաթաթերթ, ազատագրական շարժում

XIX դարի վերջին քաղաքական պայքարի թատերաբեմ մտած հայ ազգային կուսակցություններն իրենց գաղափարների քարոզչության համար լայնորեն օգտագործում էին մամուլը: 1880-1890-ական թթ. արդեն հրապարակի վրա էին «Հնչակը», «Դրոշակը» և այլ պարբերականներ:

Հնչակյանների ծրագրային գլխավոր կետերից մեկի՝ սոցիալիզմի հարցի շուրջ բախվելով նազարբեկյան թնի հետ և բաժանվելով՝ զուտ ազգայնական կողմնորոշմամբ ընդդիմադիրները, որոնք գլխավորապես արևմտահայեր էին, 1898 թ. Ալեքսանդրիայում ստեղծեցին վերակազմյալ հնչակյան կուսակցությունը: Որպես ինքնուրույն քաղաքական կազմակերպություն՝ այն գործեց մինչև 1921 թ. և միավորվելով Հայ սահմանադրական ռամկավարների հետ՝ դարձավ Ռամկավար-ազատական կուսակցության բաղկացուցիչ մասը:

Ձևավորումից հետո վերակազմյալներն իրենց տեղական կառույցները ստեղծեցին Եգիպտոսում, Ամերիկայում, Օսմանյան կայսրության տարբեր վայրերում (Կ. Պոլիս, Փոքր Հայք, Կիլիկիա): Նրանց առաջին պարբերականը Ա. Արփիարյանի կողմից Լոնդոնում հրատարակված «Մարտ» թերթն էր (1897), այնուհետև «Նոր կյանք» հանդեսը: Մի քանի տարի անց Բոստոնում սկսեց հրատարակվել «Ձայն Հայրենյացը»:

1903 թ. կուսակցության Եգիպտոսի մասնաճյուղը ձեռնամուխ եղավ «Ազատ բեմի» հրատարակությանը¹, որը որպես շաբաթաթերթ սկսեց լույս տեսնել Ալեքսանդրիայում: Նրա արտոնատերը Ջարեհ Գոչյանն էր, իսկ խմբագիրը՝ Լևոն Լարենցը, որի իսկական անունն Արսեն Քրիզյան էր:

¹ Որոշ տարակարծություն է առաջանում պարբերականի հրատարակության հիմնադրման թվականի շուրջ: Համարվում է, որ այն սկսել է հրատարակվել 1903 թվականից, սակայն մեզ չհաջողվեց գտնել 1903 թ. որևէ համար: Մյուս կողմից՝ «Ազատ բեմի» 1906 թ. հունվարի 6-ի համարում (թիվ 38) նշվում է, որ նրա հրատարակությունը սկսվել է 1904 թ. հունվարին: Բացի այդ, «Ազատ բեմի» գաղափարակից և վերակազմյալ հնչակյան կուսակցության մյուս օրգանի՝ «Ձայն Հայրենյացի» էջերում «Ազատ բեմի» հրատարակության մասին առաջին հարոդումը տպագրվում է միայն 1904 թ. սեպտեմբերի 21-ի համարում (թիվ 306):

Մինչև 1906 թ. հունիսը «Ազատ բեմը» հրատարակվել է Ալեքսանդրիայում, որից հետո՝ Կահիրեում (1906 թ. հուլիսի 25-ից): 1907 թ. պարբերականը լույս է տեսել շաբաթական երկու անգամ: Թեև դրա հրատարակության գործում գլխավոր դեր ունեցող անձինք՝ Գոչյանը, Լարենցը, Լ. Մկրտչյանը, վերակազմյալ հնչակյան կուսակցության անդամներ էին, սակայն «Ազատ բեմը» լույս չի տեսել «վերակազմյալ հնչակյան օրգան» վերտառությամբ, այլ սոսկ որպես գրական, ազգային ու քաղաքական շաբաթաթերթ: Սրանով հանդերձ՝ 1906 թ. հունվարի 18-ի համարում նշվում է պարբերականի «Նոր հնչակեան օրկան» լինելու հանգամանքը:

«Ազատ բեմի» շուրջն էին համախմբվել դարասկզբի հայ հասարակական-քաղաքական ու գրական կյանքի մի շարք ճանաչված դեմքեր: Իր «Պատմական ակնարկներով» շաբաթաթերթին աշխատակցել է Միհրան Սվազյանը, քրոնիկներով՝ Երվանդ Օտյանը (Երօտ), բանաստեղծություններով՝ Մարի Պեյլերյանը: Ազգային, քաղաքական ու գրական բնույթի խմբագրականներով ու հոդվածներով հանդես են եկել Զ. Գոչյանը, Լևոն Մկրտչյանը (Արմենիոս), Բարսեղ Օհանյանը, Օնիկ Թաշճյանը, Երվանդ Ամատունին: Պարբերականի ամենակտիվ աշխատակիցը, սակայն, եղել է նրա խմբագիր Լևոն Լարենցը:

«Ազատ բեմը» լուսաբանում էր միջազգային-քաղաքական անցուդարձը, եգիպտահայ համայնքի խնդիրները, կրթական, մշակութային ու բարեգործական մարմինների գործունեությունը, անդրադառնում էր պարսկահայերի դրությանը, հրապարակում Կովկասի հայության կյանքին վերաբերող նյութեր: Պարբերականը չէր սահմանափակվում միայն իր շուրջը համախմբված աշխատակիցների թղթակցություններով և իր էջերում հոդվածներ ու հաղորդումներ էր արտատպում արտասահմանում հայանպաստ գործունեություն ծավալած՝ համապատասխանաբար անցյերեն և ֆրանսերեն հրատարակվող «Armenia» (Բոստոն) և «Pro Armenia» (Փարիզ) լրագրերից: Վերջինիս խմբագիրը Պիեռ Քիառն էր, իսկ խմբագրական մարմնի կազմում էին Ժորժ Կլեմանսոն, Անատոլ Ֆրանսը, Ֆրանսիս դը Պրեսանսեն, Ժան Ժորեսը և Էժեն դը Ռոբերտին:

Փաստացի լինելով վերակազմյալ հնչակյան կուսակցության օրգանը՝ «Ազատ բեմը» պետք է արտահայտեր նրա՝ համաժողովրդական ապստամբության միջոցով թուրքական տիրապետությունից ազատագրվելու գաղափարի վրա խարսխված քաղաքական հայացքները: Դրա վկայությունը պարբերականի բազմաթիվ խմբագրականներն են, որոնք պատմական ակնարկների ձևով ներկայացնում են ֆրանսիական հեղափոխությունը, հունական ու արաբական ապստամբությունները: Սրանց նպատակը ժողովրդին ոգևորելն էր, ուրիշ ժողովուրդների օրինակներով ցույց տալ, որ ազգային ազատագրությունը ձեռք է բերվում պայքարի միջոցով: Շաբաթաթերթի 1906 թ. հունվարի 6-ի խմբագրականը հայտարարում է, որ «Ազատ բեմը» անփոփոխ մնում է առավելապես «յեղափոխական փրկարար գաղափարի տարածու-

մին նվիրում թերթ մը: Միմիայն օգտակար ըլլալու համար ազգային դատին, պատրաստել հայութիւնը աննախընթաց թափով մը կոտորելու-փշրելու համար ստրկութեան ամօթայի շղթան: Ահա՛ «Ազատ բեմի» ուղղութիւնը, ահա մեր միակ հաւատքը, միակ ծրագիրը»¹:

Պարբերականի 1907 թ. ապրիլի 17-ի խմբագրականում Լ. Լարենցը գրում է, որ «Ազատ բեմը» իր գործունէության ընթացքում պայքար է մղել երեք հակառակորդների դէմ՝ ազգային կուսակցությունների շարքերը «սպրդած յեղափոխական մակարոյծներուն», թրքամետ ազգային-պահպանողական ուժերի և «մայր երկրին մէջ տիրող զարհուրելի ռեժիմին դէմ» (1907, թիվ 1): Պարբերականն աշխատել է ցույց տալ համիդյան վարչակարգի կործանարար էությունը և համախմբել «աշխարհի հայերը, որ ազգովին ըմբոստանան բռնութեան դէմ» (նույն տեղում):

Արևմտահայության սոցիալ-տնտեսական ծանր վիճակը ներկայացվում էր «Կացութիւնը Հայաստանին մէջ» խորագրի ներքո, «Հայ յեղափոխական դեմքեր» շարքը նվիրված էր ազատագրական շարժման գործիչներին: Շաբաթաթերթը լուսաբանում էր թուրքահպատակ ժողովուրդների՝ հույների, մակեդոնացիների, բուլղարների, արաբների ապստամբություններն ու հայդուկային կռիւները: Պարբերականի «Թերթոն» բաժնում տպագրվում էին հայ և օտար գրողների ստեղծագործությունները:

Հայ ժողովրդի ազատագրական պայքարի կարևոր գրավականներից մեկը ազգային կուսակցությունների միության կամ համագործակցության խնդիրն էր: Լինելով այս գաղափարի ջերմ պաշտպանը՝ «Ազատ բեմը», հանդես է գալիս հոգուտ ազգային քաղաքական ուժերի համագործակցության, հանուն գերադաս շահի՝ «ազգային մահու կենաց խնդրի» (1904, թիվ 13): Բարձրացնելով այս հարցը՝ Լարենցը զգուշացնում էր այն վտանգների մասին, որոնց պատճառ կարող էր դառնալ հայ «յեղափոխական գործոն ուժերու միջև բացված վիհի ընդլայնումը» (1906, թիվ 58):

«Յեղափոխական կուսակցութեանց միութեան մեկ քանի արգելքները» խմբագրական հոդվածում Լարենցը մատնանշում է այն խոչընդոտները, որոնք թույլ չեն տալիս դրա իրականացումը: Դրանցից մեկը սոցիալիստական սկզբունքների գերակայությունն է հնչակյան կուսակցության մէջ, իսկ մյուսը՝ Կովկասում ՀՅԴ-ի ծավալած սոցիալ-դասակարգային պայքարը: Նա հասկանում է, որ «տաճկահայ յեղափոխութեան համար հաստատուած» կուսակցությունները իրենց գլխավոր նպատակից զատ կարող են նաև հայ կյանքից բխող այլ խնդիրների լուծմանը հետամուտ լինել, քանի որ, ինչպես նշում է, «Կովկասեան կենաքին օրվան պահանջքն է այդ» (1904, թիվ 64):

Սրանով հանդերձ Լարենցը գտնում է, որ հայ հեղափոխական միության գաղափարի «ճշմարիտ բարեկամները անոնք են, որոնք տաճկահայ ազա-

¹ «Ազատ բեմ», 1906, թիվ 38: Այսուհետ շարադրանքում՝ տարին և թվականը:

տագրման խնդիրը անադարտ և առանձին պահելով, կհետապնդեն միայն և միայն անոր իրականացման» (նույն տեղում): Պատահական չէ այն հանգամանքը, որ «Ազատ բեմը» ողջունեց «հայ հեղափոխական կոնգրես» գումարելու Մուրասի կոչը (նույն տեղում): 1907 թ. հունվարի 30-ի համարում շաբաթաթերթը հրապարակեց այս հարցի շուրջ վերակազմյալ հնչակյան կուսակցության դիրքորոշումը, ըստ որի վերակազմյալները հանդես են գալիս հոգուտ միության:

«Ազատ բեմը» բարձրացնում է նաև հայ ազգային կուսակցությունների և եկեղեցու փոխհարաբերությունների հարցը: Խմբագրական հոդվածում Լարենցն անդրադառնում է այն խնդրին, թե արդյոք ազգային կուսակցությունները պետք է միջամտեն հայ գաղթօջախների տեղական ազգային-եկեղեցական գործերին: Նա գտնում էր, որ թեև կրթական, եկեղեցական հարցերի կարգավորումը կուսակցությունների հիմնական խնդիրը չէ, սակայն բացառիկ դեպքերում, երբ այդպիսի խնդիրները տեղական նշանակությունից վեր են բարձրանում և համազգային նշանակություն ստանում, ազգի քաղաքական կազմակերպությունները պարտավոր են իրենց ձայնը բարձրացնել ու միջամտել: Որպես օրինակ Լարենցը բերում է 1903 թ. հունիսի 12-ի ցարական «ուկազը» (1906, թիվ 46):

«Ազատ բեմը» խիստ քննադատում է պատրիարք Մաղաքիա Օրմանյանին, որի գլխավորությամբ կայացած եպիսկոպոսական ժողովի ընդունած հայտարարության մեջ ասվում էր, թե հայ ազգը դարեր շարունակ օսմանյան պետության մեջ ապրել է ապահով ու երջանիկ, և միայն մի քանի խռովարարների արարքները չեն համապատասխանում նրա հավաքական ցանկությանը: Այս հայտարարության պաշտպանության հարցով ժողովը դիմել էր կաթողիկոս Մ. Խրիմյանին: Պարբերականն այն համոզմունքն է հայտնում, որ «հայութեան ցաւերուն գիտակից Խրիմեան կաթողիկոսը երբեք չպիտի փորձէ ջլատել յեղափոխականներու առողջ գործունէութիւնը» (1905, թիվ 25):

«Ազատ բեմը» խարազանում է հայ հոգևորականության շրջանում գոյություն ունեցող հոռի բարքերը՝ ազահությունը, տգիտությունը, փառասիրությունը (1904, թիվ 42): Այս հարցում առանձնանում են հատկապես Ե. Օտյանի քրոնիկները:

«Ազատ բեմը» բարձրացնում է հայ ազգային-քաղաքական կյանքում ունևոր խավերի մասնակցության հարցը: «Մեր հարուստները» խմբագրականում Լարենցը խարազանում է «թրքահայ հարուստներուն սառնասիրտ անտարբերութիւնը ազգին կենսական կարիքներուն ու խորունկ ցավերուն հանդէպ» (1904, թիվ 4): Իր մի շարք խմբագրականներում Լարենցը հարուստներին կոչ է անում ակտիվորեն մասնակցել Սասնո կտորածների հետևանքով ծանր դրության մեջ գտնվող հայությանը օգնելու համար կազմակերպված հանգանակություններին (1904, թիվ 23, 25, 26, 27, 1905, թիվ 27):

Պարբերականի էջերում Ե. Օտյանը սուր քննադատության է ենթարկում եգիպտահայ որոշ երևելիների հակազգային գործունէությունը, որի համար

թե՛ ինքը և թե՛ «Ազատ բեմի» խմբագրատունը ենթարկվում են հարձակման (1904, թիվ 47):

Պարբերականն անդրադառնում է նաև այդ շրջանում որոշ հայ մեծահարուստների աղմկահարույց սպանությունների հարցին և չնայած ունենալով խավերին ուղղված իր քննադատություններին՝ դատապարտում է այդ երևույթը՝ գտնելով, որ բռնության գործադրումը միայն բացասական հետևանքներ է ունենալու (1907, թիվ 45):

Հրատարակվելով Եգիպտոսում՝ «Ազատ բեմը» բնականաբար պետք է լայնորեն լուսաբաներ եգիպտահայ համայնքի կյանքը, բարձրացներ նրա առջև ծառայած խնդիրները, որոնք ներառում են կրթական, մշակութային, բարեգործական, կրոնական բազում հարցեր: Պարբերականը խրախուսում էր արևմտահայությանն օգնելու եգիպտահայերի բոլոր ձեռնարկումները (1905, թիվ 43, 44, 1907, թիվ 42): Այս բնույթի հոդվածներով ու հրապարակումներով հանդես են գալիս Միհրան Տամատյանը (1904, թիվ 25, 26), Միքայել Կյուրճյանը (1904, թիվ 36): Հատկապես մեծ տեղ էր տրվում մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործին: Շաբաթաթերթը լուսաբանում է Կահիրեի Գալստյան (1904, թիվ 24), Ալեքսանդրիայի Պողոսյան (1904, թիվ 38, 39, 1905, թիվ 10) վարժարանների գործունեությունը:

«Ազատ բեմը» լուսաբանում է նաև ազգային կյանքում գոյություն ունեցող կրոնադավանաբանական խնդիրները: «Եգիպտահայ հռոմեականները» հոդվածում արծարծում է ազգային խնդիրների հանդեպ Եգիպտոսի հայ կաթոլիկների վերաբերմունքի հարցը: «Ժամանակն է, որ ամեն հայ-հռոմեական, որ կըսիրէ իր ազգը և կըօնքը, հետաքրքրուի իր պատկանած համայնքին գործերով, բան մը, որ մարդկային տարրական պարտք մըն է», - գրում է պարբերականը (1907, թիվ 7): Ծավալվելով հարցի շուրջ՝ մատնացույց է արվում այն ցավալի և միաժամանակ վտանգավոր երևույթը, որ հայ կաթոլիկ համայնքն աստիճանաբար օտարանում է իր մայրենի լեզվից: «Երբ որևէ համայնքի քով լեզուն մեռած է, այդ համայնքը կրնա՞յ ապրիլ ու պահել իր ինքնությունը...», հռետորական, միաժամանակ իրատեսական հարց է բարձրացնում շաբաթաթերթը (նույն տեղում):

«Ազատ բեմը» հանդես է գալիս աշխարհասփյուռ գաղթականության շահերի պաշտպանության դիրքերից: Ներկայացնելով հայ գաղթականության ծանր դրությունը՝ պարբերականը առաջադրում է նոր կազմակերպություն ստեղծելու հարցը, կարծիք հայտնում, որ պետք է ստեղծվի մեկ մարմին՝ Գործադիր ժողով, որի կենտրոնը կարող է լինել Փարիզը կամ Լոնդոնը: Այն կարող է գումարվել տարին մեկ անգամ: Գործադիր ժողովը պիտի կազմի գործողությունների ծրագիր, որի նպատակն է լինելու գաղթական հայությանը «մեկ մարմին» դարձնելը և նրա հավաքական կամքն արտահայտելը (1904, թիվ 19):

Կնոջ դերի հարցը շաբաթաթերթում լուսաբանում է Մարի Բեյլերյանը «Կնոջ դերը յեղափոխութեան մէջ» հոդվածաշարով: «Ազատ բեմի» հրապար-

րակումներում առանձնակի տեղ է հատկացվում Հայկական հարցին և եվրոպական պետությունների ու Թուրքիայի փոխհարաբերություններին: Պարբերականը մեկ առ մեկ անդրադառնում է այս հարցում եվրոպական պետությունների դիրքորոշումներին և ցույց տալիս նրանց քաղաքականության գիշատիչ էությունը: Թուրքիայի վրա Գերմանիայի աճող տնտեսական ազդեցության առնչությամբ՝ Բեռլին-Բադեն երկաթուղու օրինակով ցույց է տրվում Գերմանիայի ձգտումը տեղական շատ էժան աշխատուժի շահագործման միջոցով իր ձեռքում կենտրոնացնելու Օսմանյան կայսրության հսկայական բնական հարստությունները (1907, թիվ 18): Մեկ այլ հրապարակման մեջ նշվում է գերմանա-թուրքական օրըստօրե ծավալվող ռազմաքաղաքական ու տնտեսական համագործակցության մասին: «Գերմանացիք մենաշնորհի ստացած են Թուրքիայի զինվորական պետքերը հայթայթելու գործին մեջ» (1906, թիվ 39),- գրում է պարբերականը՝ նկատելի անհանգստության ու տագնապի շեշտադրումով:

Լուսաբանելով ֆրանսիական կառավարությունում Սասնո կոտորածների քննարկումների հարցը՝ «Դիվանագիտությունը» խմբագրականում Լարենցն ընդգծում է «ծանոթ հայասեր երեսփոխան Բրեսանսեի» վճռական դիրքորոշումը և ընդհակառակը՝ կառավարության կեղծ հայասիրական դիրքորոշումն իր անորոշ ու խուսափողական պատասխաններով: Հեղինակը հեզմանքով է խոսում այն պաշտոնական հայտարարության մասին, թե ֆրանսիական կառավարությունն իր պարտքը կատարել է, և սուլթանը «հարկ եղած հրահանգները տուած է, որպեսզի այս խորապես ցավալի դեպքերը չկրկնուեն» (1904, թիվ 9):

Իր հիասթափությունն արտահայտելով կառավարության այս դիրքորոշման կապակցությամբ՝ Լարենցը գրում է, որ սուլթանական այդ հրահանգների արժեքն իրենց քաջ ծանոթ է: Ըստ այդմ նա հանգում է կարևոր հետևության. «Արդյո՞ք տասն և հինգ տարիներ է ի վեր չսորունեցանք, թե թուրքը ջարդելու համար եվրոպացիներու ներկայութենեն երբեք չխրտչիր, և հիուսատուսի մը ներկայութիւնը չէ, որ պիտի զսպեր Ելղըզի մարդասպանին գիշատիչ գայլերը» (1904, թիվ 13):

Լարենցը շատ դիպուկ է բնորոշում այն իրողությունը, որ եվրոպական կառավարությունների հայասիրական դիրքորոշումը պայմանավորված է ոչ թե հայության «աղերսարկուի դերով կամ հայասեր երեսփոխաններու հարցապնդումներով, այլ ուղղակի Եվրոպայի տնտեսական ու քաղաքական շահերուն վտանգման սարսափով», հանգամանք, որի առջև «երբեք չեն ընկրկիր եվրոպական դահլիճները» (նույն տեղում):

Միննույն ժամանակ նա հակված չէ անտեսելու վերջինիս դերը և գտնում է, որ առանց եվրոպական միջամտության «չենք կրնար որևէ կերպով մեր ազատագրումը ձեռք ձգել» (1904, թիվ 9): Այս առումով ուշագրավ է «Ազատ բեմի» բանավեճը «Մուրճի» հետ: «Յեղափոխական ուղղութիւններ» խմբագրականում Լարենցը մերժում է «Մուրճի» խմբագիր Լևոն Սարգսյանի

պաշտպանած այն սկզբունքը, ըստ որի հայ ազատագրական շարժումը պետք է հրաժարվի եվրոպական միջամտությունից և, հարելով Օսմանյան կայսրության մյուս ժողովուրդներին, նախապատրաստվի համընդհանուր ապստամբության սուլթանական վարչակարգի դեմ:

Նախ և առաջ Լարենցը գտնում է, որ իր շահադիտական նպատակներով հանդերձ՝ Հայկական հարցում եվրոպական դիվանագիտությունն ունեցել է զգալի դերակատարություն և դեռ պիտի ունենա հետագայում, իսկ Օսմանյան կայսրության մյուս ժողովուրդների հետ հայերի դաշինքն ընդդեմ սուլթանական վարչակարգի նա առնվազն «երևակայությին» է համարում՝ համոզված լինելով այն բանում, որ քուրդ, լազ, չերքեզ և մյուս մուսուլման ժողովուրդները և հատկապես պանիսլամիզմով տոգորված թուրք ժողովրդի առաջնորդները բոլորովին այլ նպատակներ են հետապնդում և մուսուլմանությանը հայությունից գատ ուրիշ ճանապարհ ցույց տալիս (1906, թիվ 61):

Մեծ պետությունների վարած քաղաքականության լուսաբանման հարցում «Ազատ բեմ» առանձնակի ուշադրություն է դարձնում Ռուսաստանին: Դա պայմանավորված էր թե՛ Հայկական հարցում նրա ունեցած դերակատարության և թե՛ Ռուսաստանի տիրապետության տակ գտնվող Արևելյան Հայաստանի հանգամանքով: Բարձրացված խնդիրների շարքում առանձնանում են ռուս-ճապոնական պատերազմին, ռուսական հեղափոխությանը, ցարիզմի ներքին քաղաքականությանը և այդ համատեքստում հայ ժողովրդի ազգային խնդիրների նկատմամբ նրա դիրքորոշմանն առնչվող հարցերը:

Պարբերականի մի շարք հոդվածներ ու խմբագրականներ նվիրված են XX դարի սկզբին արևելահայերի ազգային կյանքում մեծ իրարանցում առաջացրած հայ եկեղեցու գույքի բռնագրավման մասին ցարական կառավարության 1903 թ. հունիսի 12-ի հրամանագրին: «Տխուր տարեդարձը՝ խմբագրականում Լարենցը դատապարտում է Ռուսաստանի ցարին՝ «Մեծ ավազակին», «ամոթալի ուկազը» ստորագրելու համար: Նա մեծ ոգևորությամբ է գրում արևելահայերի համազգային ընդվզման մասին: Նշելով այդ հրամանագրի հետևանքով ազգի կրած կորուստները՝ հոդվածագիրը միաժամանակ կարևորում է այն հանգամանքը, որ «կովկասահայութեան մեջ արթնացավ ինքնապահպանումի և ազատագրումի ոգին, որն անդառնալիորեն հետաձգեց հայութեան ձուլումը ռուսական զանգուածին մեջ» (1904, թիվ 8):

«Կովկասի հայերուն ապագան» խմբագրականում Լ. Մկրտչյանը, անդրադառնալով հայ եկեղեցու գույքի վերադարձի մասին 1905 թ. օգոստոսի 14-ի ցարական հրամանագրին, նրանում հեռահար քաղաքական նպատակներ է տեսնում: Ըստ հեղինակի՝ դա Ռուսաստանի քաղաքականության մեջ որոշակի փոփոխությունների հետևանք է, որը կարևոր նշանակություն ունի ոչ միայն Կովկասի, այլև Թուրքիայի հայության համար, քանի որ դրանով ցարը անուղղակի կերպով սուլթանին հասկացնում է, թե ինքն

այլևս Թուրքիայի վարած հայաջինջ քաղաքականության հետ համակարծիք չէ:

«Օգոստոսի 14-ի ուքազը,– գրում է Մկրտչյանը,– յայտարար նշան մըն է, որ Ռուսիա-հայկական բարենորոգմանց չպիտի հակառակի, երբ այդ խնդիրը մօտերս եւրոպական դահլիճները զբաղեցնէ» (1905, թիվ 20):

«Կովկասի հայերուն ապագան» վերնագրով հոդվածաշարում բարձրացված մյուս կարևոր խնդիրը XX դարի սկզբին Կովկասում արագորեն ծավալվող սոցիալիստական գաղափարախոսությունն էր, որը քաղաքական կազմակերպությունների ձև էր ընդունում և իր սուր ծայրով ուղղվում ռուսական կայսրության դեմ: Այդ շարժման մեջ հայերի ներգրավումը դառնում է «Ազատ բեմի» մտահոգության առարկան: Հոդվածներից մեկում «ռուս ընկերվարականների ծայրահեղ գաղափարներն ու գործունեությունը իրաւամբ վնասակար նկատուած են ռուս ժողովուրդին իրական շահերուն» (1905, թիվ 21): Նշվում է, որ հարաբերությունների մեջ մտնելով ռուս սոցիալիստների հետ՝ հայերն առաջացնում են ռուսական կառավարության թշնամանքը, և այդ հանգամանքը վտանգում է ոչ միայն կովկասահայությանը, այլև Հայկական հարցը: «Ռուս ընկերվարականները խոսում են մտքի ու խղճի ազատությունից, բայց իրենց գաղափարներով ու գործունեութեամբ այդ նույն մտքի ու խղճի ամենամեծ բռնաբարիչներն են»,– ընդգծում է հոդվածագիրը (նույն տեղում): Լ. Մկրտչյանը կոչ է անում հեռու մնալ ռուս սոցիալիստներից: Նրա համոզմամբ հայերի փրկությունը «ազգայնական ըլլալուն մեջն է և ո՛չ երբեք ընկերվարական» (նույն տեղում):

«Ազատ բեմի» «Կովկասյան լուրեր» բաժնում լուսաբանվում են արևելահայության ազգային կյանքի հուզող հարցերը: Այդ շարքում շարաթաթերթը բարձրացնում է ռուսական տարածքում քրդերի սանձարձակությունների խնդիրը, որն ուղղակիորեն առնչվում է հայությանը: Գաղթական հայերի մի խմբի օրինակով, որը, թուրքական ճնշումներից խուսափելով, Իզմիրի մոտ անցել էր ռուս-թուրքական սահմանը ու ռուսական տարածքում ենթարկվել քրդերի հարձակմանն ու թալանին, պարբերականը բարձրաձայնում է, որ սա եզակի դեպք չէ, երբ ռուսական պետության ներսում քրդերն անպատիժ խժոժություններ են կատարում: «Ազատ բեմի» եզրակացությունն իմաստացած է անցյալի պատմական փորձով. «Յայտնի է, որ քուրդը ոչ թե օրէնքի այլ զինուած ոյժին առաջ միայն կարող է խոնարհիլ» (1906, թիվ 51):

Շարաթաթերթը հրապարակումներ ունի նաև ռուսական պետական դումայի մասին, որոնցից մեկում դատապարտում է ինքնակալությանը՝ III պետական դումայի ցրման կապակցությամբ (1907, թիվ 24):

XX դարի սկզբին ցարիզմի հակահայկական քաղաքականության ցայտուն դրսևորումներից մեկը հայ-թաթարական (ադրբեջանական) կոնֆլիկտն էին, որոնք լայնորեն լուսաբանվեցին «Ազատ բեմի» էջերում: Իր բազմաթիվ հրապարակումներում շարաթաթերթը ընդգծում է այն իրողությունը, որ Կովկասի ռուսական իշխանությունը՝ ի դեմս իշխան Գոլիցինի, խիստ բա-

ցասական դեր է կատարել: Մյուս կողմից ցույց է տրվում նաև Թուրքիայի դերակատարությունը:

Պարբերականի 1905 թ. սեպտեմբերի 16-ի համարում Լ. Մկրտչյանը գրում է. «Անկասկած է, որ իշխան Գոլիցինի քաղաքականությունը, որ կը կայանար թաթարները հայերուն դեմ գործածելու մեջ, պատճառ եղած է ցեղային և կրոնական ասելությունները գրգռելու» (1905, թիվ 22): Նա ցույց է տալիս կազակային զորամասերի ու ժանդարմների շատ դեպքերում բռնած կրավորական դիրքը: Խոսելով ռուսական իշխանությունների հակահայկական տրամադրությունների մասին՝ պարբերականը գրում է, որ Գանձակի գեներալ-նահանգապետ Բաուերի հրամանով 1906 թ. սեպտեմբերին խուզարկություն է կատարվել Շուշիի հայկական եկեղեցում, և բռնագրավվել են ինքնապաշտպանության համար կուտակված աննշան գեներալի և զինամթերքը, և ձերբակալվել են մի խումբ հոգևորականներ (1906, թիվ 55):

«Օգնություն» խմբագրականում Լ. Մկրտչյանը նշում է, որ «թաթարների ապստամբությունը խնամքով կազմակերպուած էր», որում մեծ դեր են խաղացել թուրք գործակալները: «Մահմեդական խոռվարարներու պետերը նոյնիսկ կարմիր ֆես կը կրեն, ցոյց տալու համար, որ իրենք Ստամպոլի խալիֆային զորքերն են» (1905, թիվ 22),– գրում է հեղինակը: Բաքվում հայերի վրա հարձակվող թաթարների մոտ թուցիկներ են եղել «Կեցցե իսլամությունը», «Կոտորենք գեավորներին» վերնագրով (նույն տեղում): Հողվածի վերջում նա կոչ է անում հանգանակություն կազմակերպել և օգնել Բաքվի հայությանը, որին ակտիվ մասնակցություն է ունենում «Ազատ բեմը» (1905, թիվ 23):

Պարբերականը հստակ դրսևորում է իր դիրքորոշումը այդ տարիներին լայն թափով ծավալվող երիտթուրքական շարժման նկատմամբ: «Երիտասարդ թուրքերը կուզեն, որ երկրեն թիզ մը հող իսկ չբաժնուի, այլ Թուրքիայի ամբողջությունը պահպանուի»,– գրում էր պարբերականը (1905, թիվ 70): Այնուհետև թերթն անդրադառնում է նաև այն հարցին, որ տարիներ առաջ նրանց հետ «համերաշխ գործելու» նպատակով հայ քաղաքական տարբեր ուժերը հանդիպումներ են ունեցել և քննարկել Հայաստանի ինքնավարության հարցը՝ «թագավոր ճանաչելով միշտ Թուրքիոյ սուլթանը, այնպես, ինչ դիրք որ ունի Հունգարիան Աւստրիայի մեջ, բայց երիտասարդ թուրքերը հակառակեցան այս ծրագրին և միացումը ջուր ինկալ» (նույն տեղում): «Հայերը զենքով, կոխով և արեան գինով միայն կրնան ձեռք բերել իրենց ազատությունը, ոչ թե ասոր, անոր չոր խոստումներուն վրայ յոյս դնելով» (նույն տեղում),– եզրակացնում է հոդվածագիրը:

1907 թ. «Ազատ բեմի» հրատարակությունը դադարեցվեց: Լ. Լարենցը և շաբաթաթերթի շուրջը համախմբված հասարակական-քաղաքական և մշակութային ճանաչում ունեցող գործիչները (Լ. Մկրտչյան, Ե. Օսյան, Մ. Սվազյան և ուրիշներ) իրենց հրապարակախոսական գործունեությունը շարունակեցին «Չայն հայրենյացում» և այլ պարբերականներում:

Վերակազմյալ հնչակյան կուսակցությունը թեև հայ ժողովրդի ազգային-քաղաքական կյանքում ունեցած իր ազդեցությամբ զիջում էր սոցիալ-դեմոկրատ հնչակյաններին և դաշնակցությանը, այնուհանդերձ իր քառորդ-դարյա գործունեությունը նպատակաուղղեց հայ ժողովրդի ազգային ազատագրության, ինչպես նաև կրթամշակութային զարգացման գործին: Այդ նպատակին ծառայեցին նաև կուսակցության մամուլի օրգանները, և այս առումով իր դերակատարությունն ունեցավ նաև «Ազատ բեմը»:

Անուրանալի է մեկ հանգամանք ևս. «Ազատ բեմի» և ընդհանրապես վերակազմյալ մյուս պարբերականների նշանակությունն արժևորվում է ոչ միայն հայ ազատագրական շարժման մեջ ունեցած ներդրումով, այլև հայ մամուլի, հրապարակախոսության և հասարակական-քաղաքական մտքի պատմության մեջ թողած ուրույն հետքով:

Гегам Оганисян – *Обсуждение армянских национальных и политических проблем в египетской газете «Азат бем»*

Армянские политические партии, вышедшие на арену политической борьбы, в конце XIX века широко пользовались печатными органами для пропаганды своих идей. Реорганизованная партия гнчакистов с 1903 по 1907 гг. издавала в Египте газету «Азат бем», редактором которой был известный публицист и деятель этой партии Левон Ларенц. «Азат бем» поднимала проблемы, которые волновали общественно-политическую жизнь армянского народа. Среди этих проблем ключевое место занимала проблема освобождения западных армян от турецкого ига.

Gegham Hovhannisyan – *Armenian National and Political Issues in Egyptian Periodical «Azat Bem»*

At the end of the XIX century Armenian national parties, which had started a political struggle, used media widely for the propaganda of their ideas. In the period between 1903-1907 the «Verakazmyal Hnchakyan» party (reorganized as «Hnchakyans») was publishing the periodical «Azat Bem» in Egypt, the editor of which was Levon Larents. This periodical was discussing the questions that worried Armenians at the beginning of the XX century, in which the main issue was the liberation of the Western Armenians from the Turkish domination. «Azat Bem» was reflecting the point of view of Hnchakyan Party about a wide range of questions concerning the Armenian liberation movement at the beginning of the XX century.

1918 Թ. ՏՐԱՊԻԶՈՆԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ.
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԱՐԾԱՐԾՈՒՄՆԵՐԸ

Բանալի բառեր – Թուրքիա, Թուրքիայի պատվիրակություն, Տրապիզոնի հաշտության խորհրդատու, Անդրկովկասի խաղաղարար պատվիրակություն, Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիր, Հայկական հարց

Անդրկովկասի կառավարության հետ դիվանագիտական բանակցություններ վարելու և հաշտության դաշնագիր կնքելու առաջարկ անողն ու նախաձեռնողը Օսմանյան կառավարությունն էր, ինչը պատահական չէր: Հետագա դեպքերը ցույց տվեցին, որ այդ ամենը Թուրքիայի դեկավարության կողմից նախապես մշակված, ծրագրված ռազմաքաղաքական մարտավարություն էր, որով նա փորձում էր անդրկովկասյան ժողովուրդներին (բացառությամբ ցեղակից և կրոնակից կովկասյան թաթարների) փակուղի մղելով՝ իրականացնել իր ռազմավարական նպատակները և տարածքային ազդեցության գոտիներով ապահովագրել իր անվտանգությունը Ռուսաստանից: Ըստ այդմ՝ Թուրքիան ձգտում էր իր ռազմական հաջողությունները բանակցող կողմերին պարտադրելու ճանապարհով դիվանագիտական բանակցությունների նժարը իր օգտին թեքելու քաղաքականություն վարել: Դիվանագիտական բանակցային գործընթացների մարտավարությունը մղելով առաջին պլան՝ նա փորձում էր նախ շեղել, մոլորության մեջ գցել, ապա թուլացնել Անդրկովկասի կառավարության և ժողովուրդների, մասնավորապես հայության զգոնությունը և դիմադրական ոգին: Թուրքերը ձգտում էին նաև հաշտության, որպեսզի միաժամանակ ժամանակ շահեին և կենտրոնացնեին իրենց ռազմական ուժերը «գորք ուղարկելու Անգլիա»¹ և այլուր:

Թուրքիան իր որդեգրած ավանդական քաղաքականությունը կիրառեց Տրապիզոնի թուրք-անդրկովկասյան դիվանագիտական բանակցային գործընթացների թե՛ նախօրեին, թե՛ ընթացքում և թե՛ հետագայում: Թուրքերը մի կողմից բանակցում էին, իսկ մյուս կողմից ակտիվորեն շարունակում զենքի ուժով պարտադրել և ամրագրել իրենց անօրինական պահանջները: Այդ առիթով Ալ. Խատիսյանը գրում է. «Բոլոր պարագաներուն ալ թուրքերու գործելակերպը նոյնն էր, բանակցիլ և միաժամանակ պատերազմիլ իրենց կամքը լիովին պարտադրելու համար: Թէ որքան ծանր կերպով անոնք (թուրքական

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 123, թ. 11:

ռագմական արշավանքները – Գ. Պ.) կանդրադառնային միաժամանակ տեղի ունեցող հաշտութեան մեր բանակցութեանց (Տրապիզոնի – Գ. Պ.) վրայ: Նոյն պատմութիւնը յետագային ինձ հետ կրկնուեց երկու անգամ եւս նոյն թուի մայիսին Պաթումի մէջ եւ 1920 թ. նոյեմբերին Ալեքսանդրապոլի մէջ»¹:

Անդրկովկասի խաղաղարար պատվիրակությունը՝ փետրվարի 23-ի (մարտի 8-ի) երեկոյան հասավ Տրապիզոնի նավահանգիստ, իսկ թուրքական պատվիրակությունը միտումնավոր ձգձգում էր իր մեկնումը, և դեռևս հայտնի չէր, թե երբ է ժամանելու: Նրա նպատակն ակնհայտ էր. մինչև թուրք-անդրկովկասյան դիվանագիտական բանակցությունները սկսելը մի կողմից հնարավորինս շատ տարածքներ զավթել, իսկ մյուս կողմից բարոյահոգեբանական ճնշում գործադրել Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության վրա: Թուրքերի որդեգրած այդ ավանդական քաղաքականությունը շարունակական եղավ Տրապիզոնի դիվանագիտական բանակցային ողջ գործընթացներում:

Ստեղծված իրավիճակում Անդրկովկասի խաղաղարար պատվիրակությունը իրավունք չունէր անգամ ասի իջնել և ստիպված էր չորս օր մնալ իրենց փոխադրող ռումինական «Կառլոս թագավոր» հաճանավի վրա՝ մինչև թուրքական պատվիրակության ժամանումը Կոստանդնուպոլսից²: Այդ առընչությամբ Լեոն (Հայկական հարցի գծով խորհրդական) գրում է. «Իսկ վորքան ստորացում ամբողջ պատվիրակության համար: Որեր են անցնում, թուրք պատվիրակությունը չկա ու չկա, իսկ մեր Կարլուշկայի մէջ արդէն սով է սկսվում: Վո՛չ ասի ենք իջնում, վոչ հետ ենք գնում: Ասի իջնողները միայն մեր թուրք (կովկասյան թաթարներ – Գ. Պ.) ընկերակիցներն են: Գնում են,

* Պատվիրակությանը տեղափոխում էր ռումինական «Կառլոս թագավոր» հաճանավը: Նրա կազմը բազմանդամ էր՝ 40 հոգի: Նրանցից 11-ը պատվիրակության անդամներ էին, իսկ 29-ը՝ խորհրդականներ, քարտուղարներ, պատմագետներ, ռագմական գծով սպաներ և այլն: Այս ամենից բացի՝ նրանց ուղեկցում էր նաև Անդրկովկասի տարբեր ազգերի 50 ներկայացուցիչներից կազմված պահակախումբը: Փաստորեն պատվիրակությունը և նրան ուղեկցող ներկայացուցիչների քանակը հասնում էր 90-ի: Պատվիրակության նման մեծաքանակ կազմը վկայում էր այնտեղ ընդգրկված Անդրկովկասի երեք գլխավոր ազգերի ներկայացուցիչների միջև սուր հակասությունների և միմյանց նկատմամբ փոխադարձ անվստահության մասին և այլն: Թուրքերից մեկը Տրապիզոնում հեզնել էր. «Եթե «բանակցային կողմի» ամբողջ ազգաբնակչությունն է եկողը՝ շատ քիչ է, իսկ եթե միայն պատվիրակությունն է՝ շատ շատ է»: Տե՛ս **Авалов З.**, Независимость Грузии в международной политике 1918-1921 гг., воспоминания. Очерки, Paris, 1924, с. 34:

Տրապիզոնում պատվիրակությանը հատկացվել էր հարուստ հույն Թերֆիլատիսի տունը: Խորհրդաժողովի աշխատանքները ընթացել են թուրքական պատվիրակության տանը: Հաշտության խորհրդաժողովում տեղի են ունեցել վեց լիակատար նիստեր և ոչ պաշտոնական փոխադարձ այցելություններ, ինչպես նաև մասնավոր զրույցներ: 38 օրվա ընթացքում Անդրկովկասի խաղաղարար պատվիրակությունը ունեցել է 46 նիստ:

¹ «Հայրենիք», 1924, ապրիլ, էջ 83:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 100:

ամբողջ որը մնում, յերեկոյան վերադառնում ուրախ ու գոհ, ինչպես ավետ-
յաց յերկրից»¹:

Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության՝ Տրապիզոն ժամա-
նելու պահին քաղաքն արդեն գրավված էր թուրքական զորքերի կողմից: Այն
այլևս չեզոք քաղաք չէր, այլ թուրքական, նրանք «զգում էին իրենց իբրև
իրենց տանը, դրության տերեր»²:

Երկու օր անց՝ փետրվարի 25-ին (մարտի 10-ին), հետևեցին Մեհմեդ Վե-
հիբ փաշայի երկու հայտնի սպառնալից հեռագրերը, որոնցով նա Անդրկով-
կասի կառավարությունից պահանջում էր զորքերը անհապաղ դուրս բերել
Կարսից, Արդահանից և Բաթումից:

Պատվիրակությունը մեկուսացվել էր արտաքին աշխարհից, և այդ դրու-
թյունը գրեթե պահպանվեց Տրապիզոնի ամբողջ դիվանագիտական բանակ-
ցությունների ընթացքում: «Արտաքին պայմանները, – գրում է Լեոն, – գնալով
ավելի ու ավելի աննպաստ էյին դառնում մեր պատվիրակության համար:
Ամենից առաջ հենց այն վոր մեր Կարլուշկան, մնալով անփող ու անպարեն:
...Մեզ համար, հարցն, ի հարկե, այդ դեպքերը չէյին, այլ այն, վոր մենք մնա-
ցինք աշխարհից կտրված, գերիներ թյուրքերի ձեռքին: ...Մենք մեզ զգում
էյինք անտանելի դրության մեջ: ...Գլխավորն այն էր, վոր մենք ռադիո հեռա-
գիր չունէյինք և չէյինք կարողանում վոչ լուր՝ ուղարկել, վոչ ստանալ»³:

Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության ընդհանուր նիստը
լսեց և քննարկեց ստեղծված իրավիճակի և հետագա անելիքների մասին
հարցը: Երկար քննարկումներից հետո որոշվեց, որ հաջորդ օրը՝ փետրվարի
27-ի (մարտի 12-ի) առավոտյան, պատվիրակությունը վերադառնա Բաթում,
քանի որ թուրքական պատվիրակության հետ հարաբերությունները իսպառ
բացակայում էին, և դեռևս հայտնի չէր, թե նա երբ է ժամանելու Տրապիզոն⁴:
Սակայն նիստի ավարտից քիչ անց թուրքական կողմը գրավոր տեղեկաց-
րեց, որ Կոնստանդնուպոլսից արդեն Տրապիզոն է ժամանել հինգ հոգուց
բաղկացած պատվիրակությունը՝ Օսմանյան կայսրության ռազմածովային
ուժերի շտաբի պետ Հուսեյն Ռաուֆ-բեյի (ծագումով՝ չերքեզ) նախագահու-
թյամբ: Անդրկովկասի խաղաղարար պատվիրակությունը վերանայեց իր
որոշումը, իսկ թուրքերը թույլատրեցին նրանց հաձանավից ցամաք իջնել:
Նույն օրը պատվիրակությանը հայտնի դարձավ, որ թուրքերը գրավել են

¹ Լեո, Անցյալից, Հուշեր, Թղթեր, Դատումներ. Հայոց հարց. – Հայ հեղափոխական դաշ-
նակցություն. – Համաշխարհային պատերազմ. – Հեղափոխություն, Թիֆլիս, 1925, էջ 381:

² Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.): Փաստաթղթերի և նյութերի
ժողովածու: Կազմ.՝ Ա. Վիրաբյան, Գ. Ավագյան, Ռ. Գրիգորյան, Ա. Կիրիմյան, պատ. խմբ. Ա.
Վիրաբյան, Երևան, 2004, էջ 310:

³ Լեո, նշվ. աշխ., էջ 383-384:

⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 100:

Էրզրումը¹: «Փողոցով անցնող թուրք գորաբաժինների յերգերի մեջ,- գրում է Լեոն,- բարձրաձայն շեշտվում էր «ալլեման-ոսմանի» յեղբայրությունը: Մեր պատվիրակությունը կուչ էր յեկել, զգում էր ծանրացած մթնոլորտի ճնշումը: Իսկ մեր թուրք ընկերակիցները փայլում էին ուրախությունից, շարունակ կանգ էին առնում Թուրքիայի մեծ քարտեզի առաջ»²: Այդպիսի բարոյահոգեբանական լարվածության և փոխադարձ անվստահության պայմաններում իր աշխատանքը սկսեց Տրապիզոնի հաշտության խորհրդածողովը (փետրվարի 27-ից (մարտի 12-ից), որը տևեց մինչև ապրիլի 1-ը (14-ը):

Թուրքական պատվիրակության ժամանումից հետո Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության նախագահ Ա. Չխենկելին այցելեց Հուսեյն Ռաուֆ-բեյին: Վերջինս կեղծ ու երեսպաշտ հաճոյախոսությունից հետո նրան առաջարկեց քննարկել հաշտության բանակցությունների տեխնիկական և կազմակերպչական ձևաչափի հարցերը: Նա նախ կտրուկ բացառեց ռուսերենի օգտագործումը իբրև բանակցային ընդհանուր լեզու, այնուհետև պահանջեց բացատրություն, թե ինչու է ռուս գեներալ Ե. Լեբեդինսկին (Կովկասյան ռազմաճակատի հրամանատար) ընդգրկված Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության կազմում: Ա. Չխենկելին հակադարձեց ասելով, որ «գեներալ Ե. Լեբեդինսկին ենթարկվում է միայն Անդրկովկասյան սելմին: Թուրքերը դրանով բավարարվեցին»³: Հուսեյն Ռաուֆ-բեյն առաջարկեց նաև, որ հաշտության խորհրդածողովի նախագահողը պետք է լինի իրենց պատվիրակությունից, քանի որ այն տեղի է ունենալու թուրքական տարածքում, իսկ Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության անդամներն ընդամենը իրենց հյուրերն են: Իրականում թուրքերը խստիվ բացառեցին Ա. Չխենկելու հաշտության խորհրդածողովի աշխատանքները հերթով նախագահելու առաջարկը: Հարցը չսրելու նպատակով պատվիրակությունը ընդունեց թուրքերի առաջարկը, սակայն գրավոր հայտնեց իր բողոքը⁴:

Նույն օրը կայացան երկու պատվիրակությունների ներկայացուցիչների փոխայցելությունները և մասնավոր զրույցները, որոնց ընթացքում «այնուամենայնիվ միշտ,- գրում է Ալ. Խատիսյանը,- զգացվում էր թուրքերի հետ մեր հարաբերությունների անորոշությունը»⁵: Այդ ժամանակ թուրքական կողմը հասկացնել տվեց, որ լուրջ մտադրություն չունի դիվանագիտական բանակցություններ վարելու Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության հետ: Հայտնի դարձավ նաև, որ նրանք Տրապիզոն են եկել ոչ թե հաշտություն, այլ ընդամենը տնտեսական, առևտրական ու այլ դաշնագրեր

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 100:

² Լեոն, նշվ. աշխ., էջ 385:

³ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 101:

⁴ Տե՛ս Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, Тифлис, 1919, с. 140-141:

⁵ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 102:

կնքելու համար: Թուրքական պատվիրակությունը Տրապիզոնի հանդիպումը ներկայացնում էր որպես հաշտության խորհրդածոցով և ոչ թե դիվանագիտական բանակցություններ: Նրա անդամները պնդում էին, որ հարցի լուծումը ամրագրվել է Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրում, և բոլորովին անհրաժեշտություն չկա դիվանագիտական բանակցություններ վարել: Փոխարենը Անդրկովկասի պատվիրակությունը պետք է անվերապահորեն և անհապաղ Թուրքիային հանձնի Արդահանը, Բաթումը, Կարսը՝ իրենց գավառներով, հակառակ պարագայում թուրքական բանակը հարկադրված կլինի դաշնագրով համաձայնեցված սահմաններին հասնելուց հետո ռազմական ուժով շարունակել առաջխաղացումը դեպի Անդրկովկաս: Այդ առիթով Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության քարտուղար Մ. Թումանյանը գրում է. «Թուրքերը բնաւ չեն ուզեր մեր ժողովն անուանել «հաշտութեան կոնֆերանս», այնպէս, որ մեզի համար հաշտութիւն՝ անոնց համար կոչի է, այս պատճառով ալ անոնք միշտ կաշխատեն անուանել պարզաբար «Տրապիզոնի կոնֆերանս»¹:

1918 թ. մարտի 1-ին (14-ին) տեղի ունեցավ Տրապիզոնի հաշտության խորհրդածոցովի պաշտոնական բացումը: Նիստը նախագահող Հուսէյն Ռաուֆ-բէյը քաղաքավարական ձևերի տակ թաքնված երկդիմի, կեղծ, առերես սիրալիրությամբ ողջունեց Անդրկովկասի խաղաղարար պատվիրակությանը՝ հայտարարելով, որ թուրքական կառավարությունն անկեղծ ցանկություն ունի բարիդրացիական հարաբերություններ հաստատելու Անդրկովկասի՝ ձևավորվելիք հանրապետության հետ²: Նենգափոխելով պատմական իրողությունը և ճշմարտությունը՝ Հուսէյն Ռաուֆ-բէյը հայտարարեց. «Թուրքիայի և Անդրկովկասի ժողովուրդների բոլոր ռազմական գործողությունները ցարիզմի դեմ երկու հարյուր տարվա ընդհանուր փառապանծ պատմության ընթացքում ավելի են կապել այդ ժողովուրդներին: Այդ ժողովուրդները կապող շղթա են ոչ միայն պատմական և աշխարհաքաղաքական հարաբերությունները, այլ ավելի շատ ազգակցական կապերը, որոնք բխում են մեր ընդհանուր անցյալից: Հենց այդ պատճառով անդրկովկասյան և թուրք ժողովուրդները կազմված են այժմ նույն կրոնից ու ազգություններից և ունեն գրեթե միանման պատմություն»³: Փաստորեն թուրքական պատվիրակության նախագահը, նենգափոխելով ամբողջ պատմական ճշմարտությունը, վիրավորում էր Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության ոչ կրոնակից և ոչ ցեղակից հայերի ու վրացիների ազգային արժանապատվությունը, որը «բնականաբար,- գրում է Ալ. Խատիսյանը,- շփոթութիւն է

¹ **Աստվածատուր Խաչատրյան**, Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները, Հայաստանի ազգային արխիվ, Երևան, 2010, էջ 73:

² Տե՛ս **Հ. Ավետիսյան**, Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997, էջ 114:

³ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 101: Տե՛ս նաև նույն տեղում, գ. 9, թ. 61-65, արձանագրություն թիվ 19:

տհաճութիւն պատճառեցին մեզ»¹: Նա փորձում էր իբր ապացուցել անցյալում անդրկովկասյան ու Օսմանյան կայսրության ժողովուրդների ճակատագրերի պատմական ընդհանրությունը:

Այնուհետև մարտի 2-ի (15-ի), 3-ի (16-ի) և 4-ի (17-ի) հաշտության խորհրդաժողովի նիստերում Հուսէյն Ռաուֆ-բէյը արել է այնպիսի հայտարարություններ, որոնք այլևս անհնարին էին դարձնում Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության հետ դիվանագիտական բանակցություններ վարելու հնարավորությունը: Նա, խորամանկորեն շրջանցելով հաշտության դաշնագիր կնքելու լիազորությունների և պայմանների մասին, պատվիրակության անդամներին հայտարարել է, որ դիմում է նրանց ոչ թե իբրև պետության պատվիրակների, այլ ընդամենը Օսմանյան կայսրության՝ մայր երկրի գիրկը վերադարձող անջատված տարածքների ժողովուրդների ներկայացուցիչների² (նկատի ունենալով Բաթումի, Արդահանի և Կարսի հանձնումը Թուրքիային):

Հուսէյն Ռաուֆ-բէյը հաշտության խորհրդաժողովի նիստում հրապարակայնորեն հայտարարեց, որ Թուրքիայի կառավարությունը չի ճանաչում Անդրկովկասը որպէս ինքնուրույն պետություն և առաջարկեց Անդրկովկասի խաղաղարար պատվիրակությանն անել որոշակի հայտարարություն առ այն, թե որն է իրենց հանրապետության ձևի, քաղաքական ու վարչական կազմակերպության էությունը³, արդյոք առկա՞ են այն բոլոր պայմանները, որոնք պահանջում է միջազգային իրավունքը պետություն կազմելու համար: Անշուշտ միամտություն կլինի կարծել, թե թուրքական պատվիրակությունն իրազեկ չէր, որ միջազգային իրավունքի չափանիշներին համաձայն՝ Անդրկովկասն իր անկախության մասին դեռևս հայտարարություն չէր արել: Սակայն թուրքական կողմը, խախտելով նույն միջազգային իրավունքի նորմերը, առաջարկել էր հաշտություն կնքել Անդրկովկասի հետ: Այդ ամենն արվում էր այն պայմաններում, երբ Անդրկովկասը թեև ձևականորեն, սակայն իրավական առումով դեռևս Խորհրդային Ռուսաստանի մասն էր կազմում, և թուրքական կառավարությունը Գերմանիայի հետ միասին Բրեստ-Լիտովսկում հաշտության բանակցություններ էր վարում Խորհրդային Ռուսաստանի հետ⁴:

Մարտի 7-ին (20-ին) Տրապիզոնի հաշտության խորհրդաժողովի 4-րդ նիստում Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության նախագահ Ա. Զիւենկելին, ի պատասխան թուրքական կողմի հայտարարությունների, նշեց, որ Ռուսաստանում բոլշևիկյան հեղաշրջումից հետո Անդրկովկասում

¹ Տե՛ս Ալ. Խատիսեան, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Աթենք, 1930, էջ 32:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 101:

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, թ. 74:

⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 7, թ. 179-180:

ստեղծվել է ինքնուրույն նոր կառավարություն, որն այժմ պատասխանատու է սեյմի առջև, և Անդրկովկասը փաստորեն մի պետություն է, որն արդեն մուտք է գործել միջազգային հարաբերությունների ոլորտ: Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության նախագահը շեշտեց, որ Թուրքիայի կառավարությունն ինքն է առաջարկել առանձին բանակցություններ վարելու և կնքելու հաշտության դաշնագիր, հետևաբար նա ճանաչել է Անդրկովկասի ինքնուրույն իշխանության գոյությունը, որը ներկայացնում է պետություն¹: Այնուհետև Ա. Չխենկելին հաշտության խորհրդաժողովի նիստում, ի պատասխան Ռաուֆ-բեյի, պաշտոնապես հայտարարեց, որ Անդրկովկասի խաղաղարար պատվիրակությունը չի ճանաչում բոլշևիկյան Ռուսաստանի իշխանությունը և մարտի 3-ին ստորագրված Բրեստ-Լիտովսկի դաշնագրի Կովկասին վերաբերող դրույթները, քանի որ այն իրավական ոչ մի հիմք չունի և կնքվել է առանց իրենց գիտության և համաձայնության, ուստի ոչ մի պարտավորեցնող ուժ չունի միջազգային իրավունքի տեսանկյունից: Ա. Չխենկելին նաև հայտարարեց, որ Տրապիզոնի հաշտության խորհրդաժողովը նույնպես միջազգային-իրավական բնույթի ակտ է, չնայած Անդրկովկասը պաշտոնապես չի հռչակել իր անկախությունը և տերություններին դեռևս նոտաներ չի հղել այդ մասին², սակայն պետականության կարգավիճակ է ձեռք բերել, ու այդ գործընթացը սկսված է:

Առարկելով Ա. Չխենկելուն՝ Հուսեյն Ռաուֆ-բեյը հանդես եկավ պաշտոնական նոր հայտարարությամբ. կտրուկ պահանջեց, որ մինչև Տրապիզոնի հաշտության խորհրդաժողովի ավարտն Անդրկովկասի կառավարությունը հրապարակայնորեն հռչակի իր անկախությունը միջազգային իրավունքի սկզբունքներին համապատասխան և միջոցներ ձեռնարկի, որպեսզի մյուս պետությունները ճանաչեն իրեն³: «Մենք էլ ձեզ կճանաչենք սուվերեն պետություն, – հայտարարում է Հուսեյն Ռաուֆ-բեյը: – Մենք մեծ ուրախությամբ կաջակցենք ձեզ սեփական պետություն կազմելու, որը մեր շահն է ընդդեմ Ռուսաստանի: Դրա փոխարեն մենք ձեզ կօգնենք ինչպես կամենաք, օրինակ՝ զորքեր ուղարկենք ձեզ համար ընդդեմ բոլշևիկների: Դա պետք է նաև Հայկական հարցի համար. կօգնենք հայկական տերիտորիայի կազմումին (իմա՝ պետության – Գ. Պ.) Կովկասի սահմանում»⁴: Ավելի ուշ՝ ապրիլի 1-ին (14-ին), Տրապիզոնում Հուսեյն Ռաուֆ-բեյը Ալ. Խատիսյանի հետ մասնավոր գրույցի ժամանակ հայտնում է. «Մենք չենք ուզում հայկական շահերը լրիվ անտեսել: Մենք չենք ուզում Կովկասը բաժանել երկու մասի, այլ երեք մասի: Սրան դուք կարող եք վստահել միանգամայն»: Անշուշտ Հուսեյն Ռաուֆ-բեյի

¹ Տե՛ս ՀՄԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, թ. 159:

² Տե՛ս ՀՄԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, թ. 180-181:

³ Տե՛ս ՀՄԱ, ֆ. 200, ց. 1, գ. 7, թ. 178-181:

⁴ Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.), էջ 310:

ոչ անկեղծ հայտարարությունը բխում էր Թուրքիայի շահերից, որն ուներ խորքային լուրջ դրդապատճառներ, ինչն առանձին հողվածի նյութ է:

Այնուհետև Հուսեյն Ռաուֆ-բեյը մարտի 7-ի հաշտության խորհրդածո-ղովի 4-րդ նիստում վերապահում է անում՝ հայտարարելով, որ երբ կնքվում էր Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը, Անդրկովկասը Խորհրդային Ռուսաստանից չէր անջատվել, և այդ իսկ պատճառով հաշտության այդ դաշնագիրը պարտադիր է Անդրկովկասի համար, և եթե վերջինս այսօր հոչակի իր անկախությունը, ապա այդ փաստը հետագարձ ուժ չի ունենա, ուստի Անդրկովկասը իրավունք չունի վիճարկելու դրա օրինականությունը¹: Դրանով թուրքական կողմը պարզորոշ հասկացնել տվեց, որ անգամ Անդրկովկասն անկախ հոչակելու դեպքում Բաթումը, Արդահանը և Կարսը իրենց գավառներով իրավականորեն չեն կարող երկրամասի մասը կազմել: Փաստորեն Անդրկովկասի խաղաղարար պատվիրակությունը հայտնվեց դիվանագիտական փակուղու առջև. թուրքական կողմը կտրուկ մերժեց Բրեստ-Լիտովսկի դաշնագրի՝ Կովկասին վերաբերող դրույթները չճանաչելու՝ Ա. Չիսենկելու մարտի 7-ի հայտարարությունը:

Ակնհայտ է, որ Անդրկովկասն անկախ հոչակելու թուրքական պատվի-րակության ակնհայտ պնդումները և ճնշումները ունեին Թուրքիայի շահե-րից բխող՝ զավթողական նկրտումներով պայմանավորված, լուրջ դրդա-պատճառներ: Երկու պատվիրակության նախագահների մասնավոր զրույց-ների ժամանակ Հուսեյն Ռաուֆ-բեյը Ա. Չիսենկելուց չթաքցրեց, թե ինչով է պայմանավորված Անդրկովկասի անկախության հոչակման Թուրքիայի վճռականությունը: Ինչպես նա փաստել է. «Թուրքիան ատելի է Ռուսաստա-նի համար, և նրան (Թուրքիային – Գ. Պ.) անհրաժեշտ է Կովկասի անկախու-թյունը որպես բուֆեր Ռուսաստանի դեմ: Եթե Կովկասը կարող է այդ դերը կատարել, ապա կարելի է խոսել ամրոցները (Բաթում, Կարս – Գ. Պ.) նրան վերադարձնելու մասին: Սակայն հարց է, թե արդյոք կարող է Կովկասը դառ-նալ ամուր ինքնուրույն միասնություն (իմա՝ պետություն – Գ. Պ.), և երկ-րորդ՝ կարելի՞ է վստահ լինել, որ հավատարմորեն կպաշտպանի Թուր-քիայի շահերը:

...Կովկասն անկախ պետք է լինի, որովհետև երկյուղում ենք, թե հար-մար առիթի դեպքում Կովկասը դարձյալ կշրջվի Ռուսաստանի կողմը: Չէ՞ որ Ռուսաստանը մի 20 տարի հետո նորից կհառնի: Եվ մի՞ թե Ռուսաստանը կարող է հրաժարվել ողջ երկիրը վառելիքով ապահովող Բաքվից»²:

Անտարակույս թուրքերն ունեին մտավախություն, թե արդյոք անկախու-թյան հոչակումից հետո կարող էր ստեղծվել Անդրկովկասի ինքնուրույն միասնական ամուր պետություն, որը կարող էր ծառայել իբրև բուֆերային

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 101:

² ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 101:

պետություն՝ պատնեշ Թուրքիայի և Ռուսաստանի միջև վերջինից պաշտպանվելու համար: Սակայն այդպիսի հավանականությունները քիչ իրատեսական էին, որովհետև պայմանավորված էին մի շարք լուրջ հանգամանքներով և խոչընդոտներով: Օսմանյան կայսրությանը քաջ հայտնի էին այդ երկրամասի երեք գլխավոր ազգերի միջև առկա խոր հակասությունները և հակամարտությունները, որի գլխավոր պատճառը նրանց քաղաքական տարբեր կողմնորոշումներն էին ու ազգային-տարածքային սահմանների վեճերը, որոնք երբեմն վերածվում էին ազգամիջյան արյունալի բախումների: Թուրքերին հայտնի էր նաև վրացիների և կովկասյան թաթարների բացահայտ հակառուսական դիրքորոշումը, (անվիճելի էր կովկասյան թաթարների թուրքական կողմնորոշումը), սակայն նրանք վստահ չէին, թե արդյոք վրացիները կարող են թուրքական կողմնորոշում որդեգրել: Թուրքերին հայտնի էր նաև հայերի ավանդական ռուսական կողմնորոշումը, և նրանք մտավախություն ունեին, որ Արևելյան Հայաստանը կարող է Ռուսաստանի մաս կազմել, որը լիովին հակասում էր իրենց շահերին: Վերջապես, նման իրադրության պայմաններում թուրքերը վստահ չէին, որ վրաց-թաթարական հակառուսական կողմնորոշումը կարող է բավարար չափով նպաստել Անդրկովկասին սեփական ուժերով պաշտպանվելու Ռուսաստանից: Հետևաբար, առկա խոչընդոտները չէին կարող երաշխիք լինել Թուրքիայի անվտանգությանը հարևան Ռուսաստանից: Այդ ամենը կանխելու համար թուրքերը վճռական էին տրամադրված Բաթումը, Արդահանը և Կարսը որպես ռուսներից պաշտպանվելու ամրոցներ պահելու հարցում: Ավելի ուշ՝ Հուսեյն Ռաուֆ-բեյը Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության նախագահի հետ մասնավոր գրույցի ընթացքում, դարձյալ կրկնում է նույն միտքը. «10-20 տարի հետո Ռուսաստանը ամրապնդվելուց հետո վերադառնալու է Կովկաս, հետևաբար Անդրկովկասը պետք է հասկանա Թուրքիային և նրան ընդառաջ գնա»¹: Թուրքիան, օգտվելով նման նպաստավոր պահից, ձգտում էր տարածքային զավթումներով վերջնականապես ապահովել իրեն Ռուսաստանից սպասվող վտանգից, որը ոչ հեռավոր ապագայում կարող էր իրական սպառնալիք դառնալ իր սահմանների համար: Այդ իսկ պատճառով նա հայտարարում էր, որ Կարսը, Արդահանը և Բաթումը պետք է մնան իր տիրույթում իբրև ռազմական ամրոցներ²: Թուրքերը հենց դրանով էին պատճառաբանում Կարսը և Բաթումը զավթելու անհրաժեշտությունը. Կարսը՝ Էրզրումի պաշտպանության համար, իսկ Բաթումը՝ որպես ռազմական ուժեղ բազա Սև ծովում Ռուսաստանի և Բուլղարիայի դեմ, որը սպառնալիք էր Կոստանդնուպոլսին: Խ. Կարճիկյանը գրում է. «Կովկասի գրավումը

¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 104:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 123, թ. 5:

քաղաքական մի ծրագիր է և անհրաժեշտություն Տաճկաստանի համար: Բաթումի ու Կարսի գրավումն առաջին փուլն է՝ դյուրացնելու այդ»¹:

Այսպիսով, Թուրքիայի ակնհայտ նպատակն էր Անդրկովկասն անկախ հռչակելով վերջնականապես փաստացի և իրավականորեն կտրել Ռուսաստանից և թույլ, անօգնական այդ երկրամասը զավթելով՝ այն ներառել իր ազդեցության ոլորտը և այսպիսով ապահովել իր անվտանգությունը Ռուսաստանից:

Եվ պատահական չէր, որ մարտի 7-ի (20-ի) Տրապիզոնի հաշտության խորհրդաժողովի 4-րդ նիստում թուրքական պատվիրակությունը պաշտոնապես մերժեց նաև Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության պահանջները Արդահանի, Բաթումի և Կարսի գավառների նկատմամբ: Հուսեյն Ռաուֆ-բեյը հայտարարեց, որ հաշտության դաշնագիր կնքելու համար դիվանագիտական բանակցությունները կարող են սկսվել միայն այն ժամանակ, երբ Անդրկովկասի խաղաղարար պատվիրակությունը հրաժարվի այդ երեք գավառների նկատմամբ հավակնություններից: Պատվիրակության թաթար ներկայացուցիչ Մ. Հաջինսկին, պաշտպանելով թուրքական կողմի պնդումները, հայտարարել է. «Ինձ համար մի բան պարզ է, որ թուրքերի համար կարևորը մեր անկախության հռչակումն է, միայն մեր անկախությունը կտա հնարավորություն բանակցությունների համար: Բրեստի հաշտությունը նրանց համար անխախտելի է. հաշտություն կնքելու համար հարկավոր է անկախության հռչակումը (Անդրկովկասի – Գ. Պ.) և Կարսից, Արդահանից, Բաթումից հրաժարվելը: Եվ ուրիշ ոչինչ»²:

Չուշացան Տրապիզոնում թուրքերի հետ դիվանագիտական բանակցությունների ընթացքում քննարկված մի շարք այլ հարցերի շուրջ Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության (բացառությամբ պատվիրակության կովկասյան թաթարների ներկայացուցիչների) հակադարձումների ու անհամաձայնությունների ծանր հետևանքները: Անդրկովկասի կառավարությունը իր պատվիրակությանը հղած հեռագրում տեղեկացնում էր, որ «թուրք զորքերը մտան Կովկասի սահմանները, հաշտութեան բանակցութիւն չի կարելի այսպիսի պայմաններում. երկդիմի դրութիւն մը կստեղծուի, պէտք է կեցնել զօրքի առաջ խաղացումը»³: Տրապիզոնի հաշտության խորհրդաժողովում իրենց այդ անօրինական, անարդարացի և զավթողական պահանջները պարտադրելու նպատակով թուրքերը մի կողմից բանակցում էին, իսկ մյուս կողմից Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության վրա բարոյահոգեբանական ճնշում գործադրելու և խուճապի մատնելու նպատակով շարունակում էին իրենց ռազմական գործողությունները վիճելի տարածքները

¹ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 122, թ. 1:

² ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, թ. 101:

³ **Աստվածատուր Խաչատրյան**, նշվ. աշխ., էջ 73-74:

գրավելու համար: «Ֆրոնտից եկած ամեն մի վատ լուր,- գրում է Ալ. Խատիսյանը,- ուժ էր տալիս թշնամուն»¹:

Այդպիսին էր թուրքական դիվանագիտության երկդիմի մարտավարությունը Տրապիզոնի հաշտության խորհրդաժողովում: Այդ առիթով Ալ. Խատիսյանը գրում է. «Ես գտնում եմ, որ նման պայմաններում այլևս անհնար է շարունակել բանակցությունները, և անհրաժեշտ է դուրս գալ դժխային պայմաններից»²: Իսկ պատվիրակության նախագահ Ա. Չխենկելին Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության համար ստեղծված դրությունը բնութագրեց որպես բանտի պայմաններ³:

Ստեղծված աննպաստ և փոխադարձ անվստահության պայմաններում Անդրկովկասի խաղաղարար պատվիրակությունը Տրապիզոնում ձգտում էր ուղիներ որոնել՝ շարունակելու դիվանագիտական բանակցությունները թուրքերի հետ: «Նախ որովհետև,- գրում է Ա. Խաչատրյանը,- Չխենկելին և իր ընկերները գիտեին, որ «Ճակատի դրությիւնը շատ գեշ է: Մեր զորքն ու հրամանատարներն իրենց պարտականութեան բարձրութեան վրայ չեն: Երկիրն անիշխանութեան մատնուած է, կռուել չեն կարող»: Երկրորդ Չխենկելին կը խոստովանէ – «Չոս եկանք շատ անպատրաստ կերպով: Մեր տկարությիւնը մեր մեջէն միութեան բացակայութիւնն է»:

Եւ, իրաւ է, ինչ կը ներկայացնէր Կովկասի պատւիրակութիւնը՝ կովկասեան ցեղերու խառնուրդ մը, որոնք միայն ցեղային ասեղութիւն ունէին իրարու դէմ միայն իբր պատմական փաստ յիշելով, այլ իրենց ազգային ձգտումներով ու շահերով տրամագծօրէն իրարու հակառակ էին: Եւ թուրքերը շատ մօտէն գիտէին այս բանը, ուստի առանց կարևորութիւն տալու զանազան դիմումներուն՝ յառաջ խաղացումը կասեցնելու՝ Կովկասի սահմաններում բռն ուժով յառաջ կը տանէին իրենց նուաճումը, միւս կողմէն, անուշ և երկդիմի խօսքերով կզբաղցնէին պատւիրակութիւն, աշխատելով միշտ աւելի խորացնել անոնց միջև եղած արդէն բացած ճեղքը»⁴:

Այսպիսով, Տրապիզոնի հաշտության խորհրդաժողովում դիվանագիտական աճող ճնշմամբ և տարածքային ռազմական զավթումներով թուրքական պատվիրակությունը շարունակում էր պարտադրել իր ամենագլխավոր պահանջները՝ Անդրկովկասը հանդիսավորությամբ հռչակել անկախ, անվերապահորեն ընդունել Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը, անհապաղ Օսմանյան կայսրությանը հանձնել Բաթումը, Արդահանը, Կարսը իրենց գավառներով:

Այդուհանդերձ, Անդրկովկասի խաղաղարար պատվիրակությունը ստեղծված հակամարտ տրամադրությունների և ձգտումների պայմաններում

¹ Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.), էջ 310:

² ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 7, թ. 100-101:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ **Աստվածատուր Խաչատրյան**, նշվ. աշխ., էջ 74:

րում փորձում էր դուրս գալ դիվանագիտական փակուղուց ու շարունակել բանակցությունները և հաշտության խոհրդածողովի օրակարգ մտցնել Անդրկովկասի սեյմի հաստատած՝ Թուրքիայի հետ հաշտության 3-րդ և 4-րդ գլխավոր դրույթները:

Մինչ այդ Հուսեյն Ռաուֆ-բեյի հանձնարարությամբ երկու պատվիրակությունների փոխայցելությունների և մասնավոր գրույցների ժամանակ շոշափվեց Անդրկովկասի սեյմի փետրվարի 16-ի (մարտի 1-ի) հաստատած 4-րդ հիմնադրույթը, որում ամրագրված էր, որ պատվիրակությունը կողմ է Արևելյան Անատոլիայի ինքնորոշմանը, մասնավորապես՝ Արևմտյան Հայաստանի ինքնավարությանը թուրքական պետության շրջանակներում¹: Հուսեյն Ռաուֆ-բեյը և թուրքական պատվիրակության առաջին քարտուղար Իսմայիլ Համի-բեյը Ալ. Խատիսյանի և Հ. Քաջագնունու հետ մասնավոր գրույցների ժամանակ ներկայացրին Հայկական հարցի «լուծման» իրենց առաջարկը: Հուսեյն Ռաուֆ-բեյը առաջարկում էր Թուրքիայի և Անդրկովկասի բնակչության փոխանակություն: Թուրքական կողմը պնդում էր, որ Արևմտյան Հայաստանի 300 հազար հայ փախստականներին հարկ է թողնել Արևելյան Հայաստանում, իսկ նրանց փոխարեն Արևմտյան Հայաստան մշտական բնակչության տեղափոխել նույնքան մուսուլմանների²: Դա նշանակում էր, որ թուրքական կողմը մերժում էր Հայկական հարցի լուծման պահանջը: Բնականաբար, Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության հայ անդամներ Ալ. Խատիսյանը և Հ. Քաջագնունին կտրուկ մերժեցին, «որովհետև ան,- գրում է Ալ. Խատիսյանը,- կը գրկեր մեզ իրաւունքէ պահանջել Թրքահայաստանը, որ թուրքերը կուզէին տեղաւորել Անդրկովկասէն տարւած մահմեդական տարրեր»³: Հուսեյն Ռաուֆ-բեյը հայ պատվիրակների առարկության առիթով պաշտոնապես հայտարարեց. «հայերը չհամաձայնեցին իրենց (թուրքերի – *Գ. Պ.*) պահանջներին, նրանք՝ ռուսահայերը (արևելահայերը – *Գ. Պ.*), նույնպես կարող են երթարկվել կոտորածի, ինչպես տաճկահայերը (արևմտահայերը – *Գ. Պ.*)»⁴: Ի դեպ, Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարության պատվիրակության նախագահի այդ պաշտոնական հայտարարությունը մեկ անգամ ևս փաստում է, որ Արևմտյան Հայաստանում և այլ հայաբնակ վայրերում ցեղասպանություն և հայրենազրկում է կատարվել: Օսմանյան կառավարությունը, դեռևս XIX դարի կեսերից սկսած, Արևմտյան Հայաստանի բնակչության ժողովրդագրական (էթնիկական) կազմը հիմնովին փոխելու հեռահար նպատակով պարբերաբար հետևողականորեն իրականացնում էր իր որդեգրած ավանդական քաղա-

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, թ. 43: Տե՛ս նաև՝ «Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии», с. 84:

² Տե՛ս **Ալ. Խատիսյան**, նշվ. աշխ., էջ 32:

³ Նույն տեղում:

⁴ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 123, թ. 1:

քականությունը, այն է՝ բացառել ոչ միայն ցեղասպանության պատճառով հայրենազրկված արևմտահայ փախստականների վերադարձն իրենց հայրենի օջախներ, այլև Արևմտյան Հայաստանում բնակեցնել Անդրկովկասի և այլ երկրամասերի մուսուլման բնակչությանը և միջազգային հանրությանը հրամցնել, թե Արևմտյան Հայաստանում չկա մի տարածք, որտեղ հայերը մեծամասնություն են: Թուրքիայի ղեկավարությունը հուսադրում էր քրդերին, որ Արևմտյան Հայաստանը հայկական տարրերից իսպառ մաքրելուց հետո իրական պայմաններ կստեղծվեն քրդական ինքավարություն ստեղծելու համար: Քրդերը, հրապուրված պետականություն ունենալու հեռանկարով, Արևմտյան Հայաստանում և հայաշատ այլ վայրերում դարձան Հայոց ցեղասպանության և հայերի հայրենազրկման ամենագործուն մեղսակիցները: Թուրքերի հետ մեկտեղ նրանք տիրեցին Արևմտյան Հայաստանի տարածքում ապրող հայության ողջ ունեցվածքին: Ցեղասպանության և հայրենազրկության «հետևանքով» գրում է Վ. Բայբուրդյանը,– Արևմտյան Հայաստանի տարածքում քրդական էթնիկական տարրը ձեռք բերեց գերակշիռ դիրք և կազմեց մեծամասնություն: Կարծես թե իրականանում էր երիտթուրքերի կողմից քրդերին խոստացած ինքնավար Քրդստան ստեղծելու գաղափարը: Սակայն, իրականում հենց այդ ժամանակվանից սկսած, թուրքական պետության համար օրակարգի անհետաձգելի հարց էր դառնում նաև «քրդական պրոբլեմի» լուծումը: Նկատի ունենալով Օսմանյան կայսրության մեջ բնակվող քրդական տարրը, «Միասնություն և առաջադիմություն» կոմիտեի ղեկավարներից մեկը գրել է, որ «մեր երկիրը պետք է մաքրել ոչ թուրք տարրերից»¹:

Այսօր, ինչպես բուներանգ, ցեղասպանության սպառնալիքը ուղղվել է մասնավորապես Արևմտյան Հայաստանում բնակվող քրդերի դեմ, որոնք այդ տարածքը համարում են իրենց «հայրենիքը» և ձգտում հասնել ինքնավարության:

Տրապիզոնում երկու պատվիրակությունների փոխադարձ այցելությունների և մասնավոր գրույցների ժամանակ թուրքական կողմը չէր թաքցնում Օսմանյան կառավարության պաշտոնական դիրքորոշումը. «Այլևս թույլ չեն տա հայերին վերադառնալ Թուրքահայաստան»²: Նրանք հայտարարեցին նաև, որ Հայկական հարցը «Թուրքիայի համար բացարձակապես ընդունելի չէ, և նույնիսկ ավելորդ է Թուրքահայաստանի ինքնավարության մասին խոսելը. այնտեղ (Արևմտյան Հայաստանում – Գ. Պ.) հայեր չկան և չեն լինի, քանզի որտեղով անցնում է թուրք զինվորը, այնտեղ այլևս հայ չի մնա»³: Դրա համար թուրքերը խորհուրդ էին տալիս Անդրկովկասի խաղաղարար

¹ Վ. Բայբուրդյան, Քրդերը, Հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո, Երևան, 2008, էջ 227:

² ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 103:

³ Նույն տեղում:

պատվիրակության վրաց և թաթար անդամներին այլևս չբարձրացնել Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը, այլ կարծում էին, որ նրանք պետք է «լեզու գտնեն և գործեն համերաշխ առանց հայերի»¹:

Հուսեյն Ռաուֆ-բեյը և նրա պատվիրակության անդամներն անզիջում ու վճռական էին իրենց բոլոր անարդար և անօրինական պահանջներում: Տրապիզոնի մարտի 8-ի (21-ի) հաշտության խորհրդաժողովի 5-րդ նիստում նա կտրուկ մերժեց և անթույլատրելի համարեց Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության առաջարկը՝ Անդրկովկասի սեյմի հաստատած 4-րդ գլխավոր հիմնադրույթը՝ Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը, օրակարգ մտցնելու և այն պաշտոնապես որակեց «միջամտություն թուրքիայի ներքին գործերին»²: Նա զայրույթով հայտարարեց, որ «վերջին դարերի թուրքական պատմության ամբողջ ընթացքում մեծ պետությունները թուրքիային խեղդել են այդ հարցով (Հայկական – Գ. Պ.)»³: Այնուհետև Հուսեյն Ռաուֆ-բեյը գրավոր վերջնագիր ներկայացրեց՝ Ա. Չխենկելուց պահանջելով պատասխանել ամենակարճ ժամկետում՝ 3-4 օրվա ընթացքում⁴: Այդ առիթով Ալ. Խատիսյանը գրել է. «Այս հայտարարությունը ուժեղ ազդեցություն գործեց պատվիրակության վրա: Հարցի լրջության պատճառով հայտարարվեց, որ անհրաժեշտ է մեծ ընդմիջում՝ հետագա քայլերի մասին սեփական կառավարություններին հարցում անելու համար»⁵:

Տրապիզոնում ժամանակավորապես ընդհատվեցին հաշտության խորհրդաժողովի դիվանագիտական բանակցությունները, սակայն շարունակվեցին Հայկական հարցի շուրջ երկու պատվիրակությունների փոխադարձ այցելությունները և մասնավոր զրույցները, որոնց ընթացքում թուրքական կողմը դարձյալ շարունակում էր համառորեն մերժել Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը և վճռականորեն պնդել իր գլխավոր պահանջները: Փաստորեն, Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը շարունակեց մնալ երկու պատվիրակությունների մասնավոր զրույցների շրջանակներում: Հ. Քաջագունու հարցադրմանը Ա. Չխենկելին պատասխանեց. «Մասնավոր զրույցների (Հուսեյն Ռաուֆ-բեյ հետ – Գ. Պ.) ժամանակ ամեն անգամ ստանում եմ նույն ձևական պատասխանը՝ դա թուրքիայի գործն է»⁶: Ալ. Խատիսյանի հետ զրույցի ժամանակ Հուսեյն Ռաուֆ-բեյը վրդովված հիշեցրել է, որ «ամեն մի հայի մեջ նստած է եղել մի ռուս

¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 103:

² ՄԵ – (21) -00007-00004-009 (Թուրքիայի կառավարությանը կից օսմանյան արխիվ): Շնորհակալություն ենք հայտնում թուրքագետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արսեն Ավագյանին՝ թուրքական (օսմանյան) արխիվներից մեզ նյութեր տրամադրելու համար:

³ «Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии», с. 143.

⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 102:

⁵ Նույն տեղում:

⁶ «Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии», с. 142.

լրտես»¹, «հայերը դավաճանել են Թուրքիային, որ մինչև պատերազմը (Առաջին աշխարհամարտը – Գ. Պ.) թուրքերն առաջարկել են (հայերին – Գ. Պ.) իրենց հետ միության մեջ լինել ռուսների դեմ, այնքան էին նրանց վստահում: Բայց հայերը փախչում էին բանակից, գնում էին Ռուսաստան և կռվում էին թուրքերի դեմ: Նրանց (հայերի – Գ. Պ.) մոտ գտնում էին ռումբեր, արկեր, թնդանոթներ և ծածկագրեր՝ Անգլիայից ու Ֆրանսիայից, որ դարձյալ բերվում էին Ուրֆայով (Կիլիկիա): Եթե թուրքերը հայերի դեմ միջոցներ չձեռնարկեին, ապա ռուսներն արդեն Կոստանդնուպոլսում և Ալեքսանդրեթում կլինեին»²:

Նույն օրը՝ մարտի 8-ի (21-ի) երեկոյան, կայացան Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության մի քանի ընդհանուր նիստեր: Ա. Չիսենկելու առաջարկությամբ ստեղծվեց հատուկ մի հանձնախումբ՝ կազմված պատվիրակության 17 անդամներից՝ Հ. Քաջազնունու, Գ. Լասխիշվիլիի և Ի. Հայդարովի գլխավորությամբ, նրանց Թիֆլիս գործուղելու՝ Սեյմին և կառավարությանը հաշտության խորհրդաժողովում ստեղծված երկու պատվիրակությունների առձակատումների, անհամաձայնությունների մասին զեկուցելու և նրանցից նոր լիազորություններ և հանձնարարականներ ստանալու՝ ընդհատված թուրք-անդրկովկասյան բանակցությունները շարունակելու համար: Մակայն հատուկ հանձնախումբը «իր կողմից, – գրում է Ալ. Խատիսյանը, – ոչ մի հանձնարարական կամ գաղափար չի ուղարկում, այլ միայն ներկայացնում է գործի սեփական միակ կողմը»³:

Հաջորդ օրը՝ մարտի 9-ին (22-ին), հատուկ հանձնախումբը մեկնեց Թիֆլիս: Մարտի 12-ին (25-ին) Թիֆլիսում հրավիրված Անդրկովկասի սեյմի նախագահության, կառավարության և խմբակցությունների ներկայացուցիչների միացյալ ժողովում հատուկ հանձնախմբի ղեկավարներ Հ. Քաջազնունին, Գ. Լասխիշվիլին և Ի. Հայդարովը ներկայացրին Տրապիզոնում կայացած հաշտության խորհրդաժողովի հինգ նիստերի արձանագրությունները, դիվանագիտական բանակցային գործընթացներում ստեղծված անհամաձայնությունները և հակամարտությունների ամբողջ պատկերը⁴: Նրանք հաղորդեցին նաև, որ Անդրկովկասի խաղաղարար պատվիրակությունը իր հանձնախմբի անդամներին «հանձնարարել է սեյմին տեղեկացնել բանակցությունների իրավիճակի մասին, իսկ պատվիրակությունն ինքը (հատուկ հանձնախումբը – Գ. Պ.) չունի ընդհանուր կարծիք այն մասին, թե ինչ փոփոխություններ կարելի է մտցնել սեյմի հաստատած դրույթներում»⁵: Իրազեկումից հետո միացյալ ժողովում ծավալվեց մտքերի փոխանակություն երկու

¹ Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.), էջ 311:

² ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 105:

³ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 102:

⁴ Տե՛ս ԿՅ (21) -00007-00003-001-005:

⁵ Նույն տեղում, 001-003:

հարցերի շուրջ. Անդրկովկասի անկախության հռչակման և սեյմի՝ փետրվարի 16-ին (մարտի 1-ին) հաստատած 3-րդ և 4-րդ հաշտության գլխավոր հիմնադրույթները վերանայելու, ինչպես նաև Թուրքիային որոշ զիջումներ անելու մասին:

Առաջին հարցի քննարկման ժամանակ սեյմի բոլոր խմբակցությունները, բացառությամբ «Մուսաֆաթի», մուսուլմանական սոցիալիստական դաշինքի (բլոկի) և Ռուսաստանի մուսուլմանների կուսակցության, արտահայտվեցին Անդրկովկասն անհապաղ անկախ հռչակելու դեմ՝ առաջարկելով, որ այն առանձին հատուկ կետով պետք է ամրագրել ապագա հաշտության դաշնագրում¹: Մուսուլմանական խմբակցության ներկայացուցիչ Մ. Մեհտի-նը, պաշտպանելով Թուրքիայի պահանջը, հայտարարում է, որ եթե Անդրկովկասն անկախ չհռչակվի, ապա իրենց խմբակցությունը կհրաժարվի սատարել Տրապիզոնի հաշտության բանակցությունները²:

Միացյալ ժողովում հնչեցին սեյմի նախագահության, կառավարության անդամների՝ Ի. Օերեթեյի, Խ. Կարճիկյանի, հատուկ հանձնախմբի ղեկավարներ Հ. Քաջագունու, Գ. Լասիխշվիլիի և այլոց կարծիքներն Անդրկովկասի անկախության անհապաղ հռչակման պարագայում երկրամասում սպասվող տարածքային սահմանների, քաղաքական, ռազմական, տնտեսական և այլ առճակատումների ու դժվարությունների լրջագույն հետևանքների մասին: Ի. Օերեթեյին, դեմ արտահայտվելով Անդրկովկասի անկախության անհապաղ հռչակմանը, նշեց, որ «անկախություն հռչակելու ժամանակ ստիպված կլինենք որոշել Անդրկովկասի պետության տարածքային սահմանները, և քանի որ այդ սահմաններում կներառվեն վեճի առարկա երեք մարզերը (Բաթում, Արդահան, Կարս – Գ. Պ.), ո՛չ Թուրքիան, ո՛չ դաշնակցային այլ տերություններ չեն ճանաչի մեր անկախությունը, և մեր առաջարկությունը կդիտեն որպես վերջնագիր»³:

Այնուհետև երկրորդ հարցի վերաբերյալ սկսվեց բանավեճ Թուրքիային զիջումներ անելու առավելագույն և նվազագույն չափը որոշելու համար, որպեսզի հնարավորություն ստեղծվի Տրապիզոնում թուրքական պատվիրակության հետ շարունակելու ընդհատված դիվանագիտական բանակցությունները: Սակայն սեյմի անդամ Ի. Օերեթեյի առաջարկով միաձայն ընդունվեց մի որոշում, որով նպատակահարմար չհամարվեց զիջումների հարցը քննարկել և որոշում կայացնել միացյալ ժողովում, այլ Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության նախագահ, արտաքին գործերի նախարար Ա. Չխենկելիին լիազորել լայն իրավունքներով, իսկ պատվիրակության մյուս անդամներին ներկայացնել իբրև նրա խորհրդականների: Նրան իրավունք էր վերապահվում իր իսկ պատասխանատվությամբ անհրաժեշտու-

¹ Տե՛ս ՄԵ (21) -00007-00003-001-003:

² Տե՛ս «Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии», с. 145:

³ ՄԵ – (21) -00007-00003-003:

թունից ելնելով ինքնուրույն քայլեր կատարել այս կամ այն զիջումների համար, իսկ ավելի կարևոր խնդիրների դեպքում՝ հարցում անել սեյմին և կառավարությանը: Որոշվեց նաև, որ Տրապիզոնի հաշտության խորհրդածո-ղովի պաշտոնական քայլերը արվելու են Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության անդամների ընդհանուր նիստերում նախապես քննար-կելուց հետո¹: Ա. Չխենկելուն իրավունք վերապահվեց հաշտության դաշնա-գիր ստորագրել Թուրքիայի հետ: Սակայն հետագա պատմական դեպքերը մեկ անգամ ևս համոզեցին, թե սեյմի՝ մեծամասնություն կազմող վրացական ներկայացուցիչները մարտի 13-ին (26-ին) ինչու ընդունեցին կողմնակալ որոշում՝ Ա. Չխենկելուն լիազորելով միանձնյա արտակարգ իրավունքներ: Իրականում Ա. Չխենկելին և նրա պատվիրակությունը ոչ թե նպաստեցին կանխելու Անդրկովկասին սպառնացող վտանգը, այլ ընդամենը, շրջանցելով հայկական խնդիրները, պաշտպանեցին վրացական շահերն ամբողջ դիվա-նագիտական բանակցությունների ընթացքում, որը ցավալի հետևանքներ ունեցավ ոչ միայն հայերի, այլև իրենց՝ վրացիների համար:

Մարտի 16-ին (29-ին) հատուկ հանձնախումբը վերադարձավ Տրապի-զոն: Նույն օրը հրավիրվեց Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության 39-րդ ընդհանուր նիստը, որտեղ լսվեց հատուկ հանձնախմբի անդամների զեկույցները Թիֆլիսի միացյալ ժողովում և սեյմում քննարկված հարցերի և ընդունված որոշումների մասին²: Իսկ երեկոյան Ա. Չխենկելիի հետ մաս-նավոր գրույցի ժամանակ Հուսեյն Ռաուֆ-բեյը Անդրկովկասի խաղաղարար պատվիրակությունից պահանջեց մինչև մարտի 21-ը (ապրիլ 3-ը) տալ պա-տասխան³:

Մարտի 18-ին (31-ին) Տրապիզոնում Անդրկովկասի խաղաղարար պատ-վիրակության ընդհանուր նիստում (նախագահող՝ Ա. Չխենկելի) քննարկվեց սեյմի հաստատած 3-րդ և 4-րդ հաշտության հիմնադրությունների վերանայման և Թուրքիային որոշ զիջումներ անելու հարցը: Այն իր աշխատանքը սկսեց սեյմի 4-րդ գլխավոր դրույթի՝ Արևմտյան Հայաստանի ինքնավարությունը թուրքական պետականության շրջանակներում հարցի քննարկումից, որտեղ նոր տարաձայնություններ առաջացան խաղաղարար պատվիրակության անդամների միջև:

Ընդհանուր նիստում Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցի շուրջ հանգամանալից, փաստարկված զեկուցումներով հանդես եկան Ալ. Խատիսյանը և Հ. Քաջագնունին: Ալ. Խատիսյանը նախ ներկայացրեց հարցի համառոտ պատմությունը, այնուհետև 1915 թ. ցեղասպանությանը և հատ-կապես Տրապիզոնում կատարված ոճրագործությունների մասին մանրա-մասներ, ապա կարևորեց Արևմտյան Հայաստանի ինքնավարության հիմնա-

¹ ՎԵ – (21) -00007-00003-003:

² Տե՛ս նույն տեղում, 003-005:

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 104:

խնդրի լուծման անհրաժեշտությունը: Տարածքների մասին խոսելիս նա նշում է, որ Արևմտյան Հայաստանում հայերը հետապնդում են ինչպես էթնիկ, այնպես էլ քաղաքական, տարածքային նպատակներ. «Մա նկատի առնելով՝ մենք պետք է հասնենք այն բանին, որ որոշվի անգամ նվազագույն տարածք՝ խիստ որոշարկված սահմաններով, որտեղ հայ բնակչությանը և Թուրքիայի՝ այդտեղ բնակվող մյուս ժողովուրդներին պետք է տրվեն ինքնավար (ինքնավարության) իրավունքներ: Այդպիսի տարածք կարող է լինել Բայազետի սանջակը, Էրզրումի վիլայեթը, Մուշի սանջակը և Բիթլիսի վիլայեթի հյուսիսային մասը՝ առանց Բատմանսուի (Տիգրիսի վերին հոսանք – Գ. Պ.) հարավային շրջանի»¹: Վերջում Ալ. Խատիսյանը հայտնում է, որ հայերի ցանկությունն է իրենց հայրենիքում ստանալ մի անկյուն, ուր կարող են ապրել ինքնավար կյանքով, բայց թուրքական կառավարության հովանու ներքո: Եզրափակելով իր խոսքը՝ զեկուցողը նշում է. «Վանա լիճը՝ Մուշի, Ալաշկերտի և Վանի երեք դաշտավայրերով, հայ ժողովրդի ուշադրության կիզակետն է: ... Իր ներքին գործերը վարելու համար այդ շրջանի բնակչությունը պետք է օգտվի ինքնակառավարման իրավունքներից՝ օրենսդիր ներկայացուցչական ժողովով և ընտրովի կենտրոնական գործադիր մարմնով: Նրան է տրվում ինքնակառավարվող տարածքում բնակվող բոլոր ժողովուրդների ներկայացուցիչներից միլիցիա կազմավորելու իրավունքը: ... Հայ-թուրքական հարաբերությունների ամենամոռայլ պայմաններում հայերի շրջանում անջատողականության գաղափար անգամ չէր ծագում: Ինքնակառավարվող Հայաստան՝ Թուրքիայի սահմաններում. այսպիսին էր թուրքահայերի մշտական կողմնորոշումը»²:

Ալ. Խատիսյանը կարևորել է նաև Հայոց ցեղասպանության պատճառով հայրենագրված արևմտահայ փախստականների վերադարձը իրենց հայրենի օջախներ. «Այժմ ես և իմ ընկեր Քաջագունին էլույթ ենք ունենում ռուսահայերի անունից՝ որպես Անդրկովկասի սեյմի անդամ պատվիրակներ, մենք գիտենք մեր եղբայրների ցանկությունները, և մենք նաև գիտենք, որ առանց Թուրքիայում Հայկական հարցը լուծելու անհնար է Անդրկովկասում կարգուկանոն հաստատելը. Անդրկովկասը և այնտեղ բնակվող ժողովուրդները չեն կարողանա վերացնել ներքին տարաձայնությունները միմյանց միջև, եթե հայերին Թուրքիայում տեղավորելու հարցը և հայ փախստականների՝ տուն վերադառնալը չստանան իրենց դրական լուծումը: Այսպիսին են Արևելյան Անատոլիայի հայերին տեղավորելու գործի հիմնական դրույթները: Ցավոտ հարցի լուծման այս միջոցը ամենավճռական ձևով, ի դեպ, կլուծի Անդրկովկասում բնակվող թուրքահայերի՝ հայրենիք հանգիստ վերադառնալու հույժ կարևոր հարցը»³: Այնուհետև որոշ դրույթներ լուսաբանելու

¹ YB – (21) -00007-00004-001:

² YB – (21) -00007-00004-002: Տե՛ս նաև **Հ. Ավետիսյան**, նշվ. աշխ., էջ 128-129:

³ YB – (21) -00007-00004-005:

համար Ալ. Խատիսյանը բերում է վիճակագրական ընդհանուր տվյալներ Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթների մասին, հայերի քանակի մասին՝ ըստ վիլայեթների և սանջակների: Այդ տվյալները քաղված են 1914 թ. Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության հրատարակած «Դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու»-ից և 1913 թ. Յ. Լեփսիուսի հրատարակած տվյալներից: Ըստ դրանց՝ Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթներում ընդհանուր բնակչությունը կազմում էր 2 600 000, որոնցից հայերի թիվը հասնում էր 1 034 400-ի¹: Եզրափակելով իր խոսքը՝ Ալ. Խատիսյանը նշում է, որ ներկայացված հիմնավորումները էական հիմք են, որով կարելի է թափանցել հիմնահարցի մանրամասների մեջ. «Ինչ վերաբերում է հայերի պահանջները կենսագործելու միջոցին, ապա պետք է հուսալ, որ Թուրքիայի և Անդրկովկասի համար ընդունելի պատվավոր խաղաղությունը կնքելու գործն իր ձեռքը վերցրած անդրկովկասյան ժողովրդավարությունը, հատկապես Վրաստանի և մուսուլմանների ժողովրդավարությունը կանեն այն, ինչ առաջ չէր հաջողվում միջազգային դիվանագիտությանը, և թուրքահայերի պատմության մեջ կբացվի լուսավոր նոր էջ»²:

Ա. Չխենկելին, արձագանքելով Ալ. Խատիսյանի զեկուցմանը, հիշեցնում է ընդհանուր նիստի մասնակիցներին. «Մենք ունենք Օսմանյան պատվիրակության՝ մարտի 8-ի պատասխանը, որը վերաբերում է հայկական հարցին (կարդում է): Մենք Սեյմում ունենք այս հարցի հայտնի դրվածքը, որն արտահայտված է մեր 4-րդ թեզիսում: Առաջարկում եմ պատվիրակությանը հարցի դրվածքը փոխելու հնարավորության պաշտոնական քննարկմամբ զբաղվել»³: Կարծես թե Ա. Չխենկելին ուղղորդում էր պատվիրակության անդամներին քննարկումը եզրափակել՝ 4-րդ հիմնադրույթը հանելու օրակարգից: Իսկ Շ. Քաջազնունին, հակադրվելով Ա. Չխենկելուն, շարունակեց Ալ. Խատիսյանի զեկույցի տրամաբանական շարունակությունը, նշելով, որ խաղաղության պայմանագրի ստորագրման հետ միաժամանակ սուլթանը հատուկ հավատամք (կրեդո) է հայտարարում Արևմտյան Հայաստանի ինքնավարությունը սուլթանի իշխանության (ինքնավարության) ներքո: Ինքնավար Արևմտյան Հայաստանը սուլթանին ամենամյա տուրք է վճարում՝ ունենալով սեփական կառավարություն և միլիցիա: Արևմտյան Հայաստանի տարածքի սահմանների, այդ տարածքները բնակեցնելու, հայտարարված ինքնավարության փաստացի իրագործման երաշխիքների մասին հարցերը կձևակերպվեն, «Եթե լինի օսմանյան պատվիրակության սկզբունքային պատասխանը՝ քննարկման և համաձայնության հարց դարձնել Թուրքահայաստանի հիմնախնդիրը վերը նշված ուղղությամբ:

¹ YB – (21) -00007-00004-007:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, 008:

Թուրքիայի կողմից պարտավորության ձևը և հայտարարության ձևը դիվանագիտական տեխնիկայի հարց են, ինչին մենք էական նշանակություն չենք տալիս»¹:

Սակայն վրաց և թաթար պատվիրակության անդամները իրենց ելույթներում Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցում դրսևորեցին մերժողական կեցվածք: Գ. Լասխիշվիլին իր ելույթում նշում է. «Մենք հնարավորություն չունենք հայկական հարցի լուծմանը հասնելու: Այդ պատճառով ես կարծում եմ, որ Սեյմի դրույթներից 4-րդ կետը պետք է հանել: Մենք պետք է բացատրենք թուրքերին, որ սա միջամտություն չէ իրենց գործերին, որ Անդրկովկասը չի կարող հանգիստ ապրել և ազատ զարգանալ, եթե Թուրքիայի սահմաններում հայկական հարցը լուծում չստանա: Ես կարծում եմ, որ Թուրքիայի հետ պետք է կնքվի հատուկ համաձայնագիր համաներման և փախստական հայերի՝ Թուրքիա՝ իրենց լքած գավառները վերադառնալու մասին: Մրանից ավելի, դժբախտաբար, մենք ոչինչ անել չենք կարող»²: Խաղաղարար պատվիրակության անդամ Խաս-Մամեդովը, պաշտպանելով թուրքերի պահանջները, իր ելույթում հայտարարել է. «Այժմ ես կխոսեմ ոչ թե որպես խաղաղարար պատվիրակության անդամ, այլ որպես անդրկովկասցի, որպես հասարակական և քաղաքական գործիչ: Ես նույնպես կարծում եմ, որ այն ձևը, որով շարադրվել էին Սեյմի պահանջները Հայաստանի վերաբերյալ, ոչ այլ ինչ է, քան միջամտություն Օսմանյան պետության ներքին գործերին»³: Իսկ պատվիրակ Գ. Գվազավան, մերժելով Արևմտյան Հայաստանի ինքնավարության հիմնադրույթը, խորհուրդ է տալիս. «Միակ բանը, որ հնարավոր է, համընդհանուր համաներման պահանջն է փախստականների... և այլոց նկատմամբ: Մա հսկայական նշանակություն կունենա հայ փախստականների համար: Այդ պատճառով ես առաջարկում եմ ամբողջովին հանել 4-րդ կետը»⁴: Մ. Հաջինսկին, հակադրվելով Հ. Քաջազունու առաջարկներին, այն որակեց ավելի վերջնագրային, քան նույնիսկ Սեյմի պահանջների 4-րդ հիմնադրույթն է, և առաջարկեց հարցը դնել «գոնե պատերազմող կողմերի քաղաքացիների համար համաներման և հայ փախստականների՝ Թուրքիա վերադառնալու ձևով»⁵: Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցի շուրջ գրեթե նույն մերժողական ելույթները հնչեցին խաղաղարար պատվիրակության մյուս անդամների կողմից, և արդյունքում հիմնախնդիրը տեղափոխվեց «համաներման» դաշտ, որը նույնպես մերժվեց Թուրքիայի կողմից:

¹ YB – (21) -00007-00004-008:

² Նույն տեղում, 009:

³ Նույն տեղում, 0015:

⁴ Նույն տեղում, 0014:

⁵ Նույն տեղում, 009:

Ալ. Խատիսյանը իր եզրափակիչ ելույթում, առարկելով նախորդ բանախոսներին, մեկ անգամ ևս համառոտ ներկայացրեց հիմնախնդրի քաղաքական, տնտեսական, ժողովրդագրական, անվտանգության խիստ կարևորությունը ոչ միայն հայերի, այլ նաև Անդրկովկասի ժողովուրդների համար: Ալ. Խատիսյանը, չհամաձայնելով նախորդ բանախոսների հետ, «առաջարկում է ցույց տալ Օսմանյան պատվիրակությանը, որ Անդրկովկասի պատվիրակությունը նկատի չի ունեցել հատուկ դիպչել Օսմանյան կայսրության ներքին գործերին, և նշել այն հիմքերը, որոնցով Հայկական հարցը կարգավորելու համար մտավ Անդրկովկասի պատվիրակության առաջ քաշած դրույթների մեջ: Մենք պետք է մեր պատասխանում առաջին հերթին նշենք Անդրկովկասն ու Օսմանյան կայսրությունը բնակեցնող ժողովուրդների բարեկամ հարաբերությունները, և երկրորդ հերթին այն, որ Անդրկովկասի սահմաններում մի քանի հարյուր հազար թուրքահպատակ հայ փախստականներ կան, որոնց հետագա ճակատագիրը անքակտելիորեն կապված է Անդրկովկասի երկրամասի պարենային, տնտեսական և այլ շահերի հետ, և Թուրքիայում Հայկական հարցի այս կամ այն լուծումից է կախված Անդրկովկասի ներքին կյանքի հանգիստ կազմակերպումը: Ես համաձայն չեմ Գ. Գվազավայի հետ, որը առաջարկություն մտցրեց 4-րդ կետը հանելու մասին, քանզի այս կամ այն կետը կարող է հանել միայն Սեյմը: Սեյմի տված նոր լիազորությունները մեր նախագահին իրավունք չեն տալիս հիմնադրույթներից այս կամ այն կետը հանելու: Եթե մեզ առաջարկում են, ինչպես դա արեց Գ. Լասխիշվիլին, Հայկական հարցի լուծումը հետաձգել մինչև համաշխարհային նոր խորհրդածողովը, ապա, իմ խորին համոզմամբ, այդ ժամանակ Հայկական հարցի լուծումը կարող է ավելորդ լինել, որովհետև եթե բանակցությունները չհանգեցնեն ցանկալի արդյունքների, ապա դա կարող է հանգեցնել հայերի նոր ջարդերի»¹: Փաստորեն, Արևմտյան Հայաստանի ինքնավարության հիմնահարցը շարունակեց մնալ երկու պատվիրակությունների անպտուղ քննարկումների թեմա:

Այսպիսով, ստեղծված պայմաններում ակնհայտ էր, որ Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության երկու հայ անդամներ Ալ. Խատիսյանը և Ն. Քաջազնունին չէին կարող դիվանագիտական դաշտում որևէ դեր խաղալ և քիչ թե շատ ազդեցություն գործել բանակցային գործընթացների վրա: Այնուամենայնիվ, հայ պատվիրակները փորձեցին բարձրացնել Արևմտյան Հայաստանի ինքնավարության հիմնահարցը, որը թուրքերի և խաղաղարար պատվիրակության որոշ անդամների կողմից որակվեց որպես միջամտություն Թուրքիայի ներքին գործերին: Երկու պատվիրակությունների մասնավոր գրույցների ժամանակ թուրք պատվիրակները բացահայտ հայտարարեցին, որ իրենց պայմանները չընդունելու պարագայում իրենք ոչ միայն

¹ YB – (21) -00007-00004-0021:

Կկոտորեն Թուրքիայի տարածքում բնակվող շուրջ 200 հազար հայերին, այլև չեն խնայի կովկասահայերին: Այսքանով ավարտվեց Արևմտյան Հայաստանի ինքնավարության հիմնահարցի քննարկումը Տրապիզոնում:

**Гегам Петросян - Трапезундская мирная конференция 1918 г.: обсуждение
Армянского вопроса**

На Трапезундской мирной конференции 1918 г. была четко сформулирована воинственная и захватническая политика, разработанная Османской империей по отношению к народам континента для того, чтобы застраховать свою безопасность от территориальных претензий России. Турецкая делегация при помощи дипломатического давления и территориальной военной агрессии продолжала навязывать здесь свои самые главные требования: торжественно объявить о независимости Закавказья, безоговорочно признать Брест-Литовский мирный договор, незамедлительно передать Османской империи Батум, Ардаган, Карс со своими провинциями. На конференции турки отвергли вопрос о самоуправлении Восточной Армении, квалифицировав его как вмешательство во внутренние дела Турции.

Gegham Petrosyan - Trabzon Peace Conference of 1918: Raising the Armenian Question

The Trabzon peace conference of 1918 clearly outlined the militaristic and expansionist policy of the Ottoman Empire against the nations living in that region for the sake of securing its safety from Russia's territorial claims. Through diplomatic pressure and regional military occupations the Turkish delegation continued to impose its main demands, that is to solemnly declare Transcaucasia independent, to implicitly accept the Brest-Litovsk peace treaty, to immediately hand over Batumi, Ardahan, Kars with their provinces to the Ottoman Empire. During the conference the Turks rejected the autonomy of Western Armenia, considering it as interference in the internal affairs of Turkey.

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ՌԱՖԱՅԵԼ ԼԵՄԿԻՆԻ
«ՎԵՐՋ ՏԱԼ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՅԺՄ» ՀՈՂՎԱԾՈՒՄ**

Բանալի բառեր – Ռաֆայել Լեմկին, Նյուրնբերգ, Հայոց ցեղասպանություն, միջազգային հանցագործություն, ցեղասպանության կոնվենցիա, Օսմանյան կայսրություն

Հրեական ծագմամբ լեհ իրավաբան Ռաֆայել Լեմկինի (1900-1959) հետազոտություններում հատուկ տեղ է զբաղեցնում Հայոց ցեղասպանության թեման: Դրանց մեջ կան բավականին նյութեր, որոնք ցայսօր ուսումնասիրված կամ հրապարակված չեն: Այս առումով ուշագրավ է Լեմկինի գրչին պատկանող «Վերջ տալ ցեղասպանությանն այժմ» (Stop Genocide Now) խորագիրը կրող, յոթ էջանոց հոդվածը: Ի թիվս նրա չհրապարակված բազմաթիվ հոդվածների և նյութերի՝ այն ևս պահվում է Նյու Յորքում գտնվող Ամերիկայի հրեական պատմական ընկերակցության՝ «Ռ. Լեմկինի հավաքածուում»¹: Նրա արխիվային նյութերը հիմնականում պահվում են ձեռագրերի 12 պահոցներում, որոնցից յոթերորդ պահոցի թիվ երրորդ թղթապանակում ամփոփված է վերոնշյալ անտիպ ձեռագիր հոդվածը²:

Ի սկզբանե փաստենք, որ նշված չէ, թե երբ է այն գրվել, սակայն կարելի է ենթադրել, որ Լեմկինն այն հավանաբար թղթին է հանձնել 1947 թ. երկրորդ կեսին, երբ «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի նախագիծը քննարկման փուլում էր: Սույն հոդվածում ամփոփված դրույթները մենք կքննարկենք Լեմկինի՝ Հայոց ցեղասպանությանը նվիրված հետազոտությունների ծիրում: Նա այստեղ

¹ Guide to the Raphael Lemkin (1900-1959) Collection, P-154 (<http://digifindingaids.cjh.org/?pID=109202>): Նշենք, որ Լեմկինի աշխատությունների մեծ մասը չի հրատարակվել նրա կենդանության օրոք: Այդ մասին տե՛ս **Jacobs S. L.**, The Papers of Raphael Lemkin: A First Look // “Journal of Genocide Research”, 1999, vol. 1, n° 1, p. 105-114: Տե՛ս նաև **Elder T.**, What You see Before Your Eyes: Documenting Raphael Lemkin’s Life by Exploring His Archival Papers, 1900-1959 // “Journal of Genocide Research”, 2005, vol. 7, n° 4, p. 469-499: 2008 թ. «Center for Armenian Remembrance» (CAR) կազմակերպության կողմից «Ռաֆայել Լեմկինի դույնն Հայոց ցեղասպանության մասին» գրքում հրատարակվել է Լեմկինի «Հայկական կոտորածների մասին գրքաչափ ձեռագիրը»: Այդ մասին տե՛ս Paphael Lemkin’s Dossier on the Armenian Genocide: Turkish Massacres of Armenians: (Manuscript from Raphael Lemkin’s Collection, American Jewish Historical Society), Center for Armenian Remembrance, Vartkes Yeghianyan, Glendle, 2008, p. 1-100:

² Տե՛ս Raphael Lemkin Collection, P-154, Unpublished Papers, Box 7, folder 3, Stop Genocide Now (<http://digifindingaids.cjh.org/?pID=109202>):

վերլուծում է ցեղասպանությունն իբրև հանցագործություն կանխարգելելու անհրաժեշտությունը և դրա իրագործման համար պատասխանատվության ենթարկելու հետ կապված հիմնահարցերը:

Նախընթաց ցեղասպանությունների շարքում Լեմկինը հատուկ հիշատակում է Հայոց ցեղասպանության մասին՝ նշելով, որ այն միտումնավոր իրականացված քաղաքականության հետևանք էր: Նա մասնավորապես գրում է. «Ավելի քան 10 մլն մարդ զոհվել է վերջին պատերազմի ընթացքում այն պատճառով, որ նրանք պատկանում էին մի ռասայի, կրոնի կամ ազգության, որը հավանության չէր արժանանում մարդասպանի կողմից: Այս հարյուրամյակի սկզբում՝ մինչև Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը, միտումնավոր քաղաքականության զոհ դարձան շուրջ մեկ միլիոն հայեր: Համանման ճակատագրի արժանացան նաև քրիստոնյա ասորիներն Իրաքում: Սա ցեղասպանություն է: Պատմությունը լի է ցեղասպանության դեպքերով»¹:

Այնուհետև նա ներկայացնում է ցեղասպանության՝ իբրև միջազգային հանցագործության ճանաչման գործընթացը՝ նշելով, որ Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում Ուիլսոն Չերչիլը ցեղասպանությունն անվանում էր «անանուն հանցագործություն», իսկ մարդկային խմբերի ամբողջական կամ մասնակի ոչնչացումը որպես ցեղասպան հանցագործություն ձևակերպվեց Նյուրնբերգի դատավարության մեղադրական եզրակացությունում²:

«Գերմանացի պատերազմական հանցագործները Նյուրնբերգում պատժվեցին երեք տեսակի հանցագործությունների համար՝ զավթողական պատերազմի հանցագործության, պատերազմական, այն է՝ ռազմակալված տարածքներում իրականացված հանցագործությունների, մարդկության դեմ ուղղված հանցագործությունների, որոնք զավթող պետությունն իրականացնում է իր քաղաքացիների դեմ պատերազմի ընթացքում, և որոնք պայմանավորված են պատերազմով»³, - նշում է Լեմկինը: Այնուհետև նա ընդգծում է, որ իրավական տեսանկյունից այս հանցագործությունները կապված են պատերազմի հետ և ոչ մի դեպքում կիրառելի չեն պատերազմում չընդգրկված երկրի համար, իսկ Նյուրնբերգում առաջընթաց է գրանցվել միայն պատերազմական իրավունքի հարստացման ասպարեզում: Սակայն Լեմկինը բավարար չէր համարում Նյուրնբերգյան դատավարությունը⁴, ուստի, նրա

¹ Նույն տեղում, էջ 1:

² Տե՛ս նույն տեղում, էջ 2:

³ Նույն տեղում:

⁴ 1947 թ. «Միջազգային իրավունքի ամերիկյան ամսագրում» («American Journal of International Law») Լեմկինն իր մեկ այլ հետազոտությունում այս առիթով նշում է, որ Նյուրնբերգյան դատավարությունը լիակատար աջակցություն է ցուցաբերել ցեղասպանության հայեցակարգին, սակայն միջազգային ռազմական տրիբունալը իր կանոնադրության

կարծիքով, առանցքային էին ցեղասպանության հանցագործության ընդունումն ըստ միջազգային իրավունքի և համապատասխան կոնվենցիայի մշակումը:

1946 թ. դեկտեմբերի 11-ին ՄԱԿ-ն ընդունել էր մի բանաձև, որում ըստ միջազգային իրավունքի՝ ցեղասպանությունը բնորոշվում էր իբրև հանցագործություն, իսկ դրան առնչվող կոնվենցիան առաջադրելու էր ՄԱԿ-ի սոցիալական և տնտեսական խորհուրդը, որը ներկայացվելու էր ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեային՝ ապահովելու պետությունների համագործակցությունն այդ սարսափելի հանցագործությունը պատժելու և կանխարգելելու համար: Սոցիալական և տնտեսական խորհուրդը որոշել էր, որ այդ կոնվենցիան կազմվելու է գլխավոր քարտուղարը՝ քրեական և միջազգային իրավունքի փորձագետների աջակցությամբ: 1947 թ. հունիսին կոնվենցիան¹ արդեն պատրաստ էր, իսկ մեկ ամիս անց այն շրջանառվում էր ՄԱԿ-ի անդամ պետությունների կառավարություններում²:

Կոնվենցիայի ընդունման անհրաժեշտությունը Լեմկինը պայմանավորում է այն հանգամանքով, որ մարդկային խմբերը պետք է դրվեն միջազգային պաշտպանության տակ, ինչը ցեղասպանությունը կդարձնի միջազգային պատասխանատվության հարց: Նրա բնորոշմամբ՝ «կոնվենցիայի նախագիծը ապահովում է ռասայական, ազգային, կրոնական, լեզվական և քաղաքական խմբերի պաշտպանությունը»³:

Լեմկինը մի շարք մտավախություններ ուներ՝ կապված կոնվենցիայի ընդունման խնդրի հետ: Բանն այն է, որ 1933 թ. Մադրիդում գումարված քրեական իրավունքի հիմնահարցերին նվիրված 5-րդ միջազգային կոնֆերանսի ժամանակ նա, իր աչքի առջև ունենալով Հայոց ցեղասպանության անարգել և անպատիժ իրականացման փաստը, առաջին անգամ առաջարկել էր ստեղծել բազմակողմ կոնվենցիա, սակայն նրա առաջարկը մերժվել էր: Նա փորձում էր ցույց տալ միջազգային կոնվենցիայի ընդունման հրատապությունը և բերում դրա անհրաժեշտության լրացուցիչ փաստարկներ:

Քննարկվող հոդվածում Լեմկինը ցեղասպանության բնույթի և էության մասին ներկայացնում է կարևոր դիտարկումներ. «Ցեղասպանությունը իր բնույթով հանցագործությունների հանցագործություն է, որն ուղղված է

մեջ նեղ մեկնաբանություն է տվել այդ հարցին և որոշել է, որ նախքան պատերազմի բռնկումը տեղի ունեցած գործողությունները պատժելի հանցագործություններ չեն: Տե՛ս **Lemkin R.**, Genocide as a Crime under International Law // “American Journal of International Law”, 1947, vol. 41 (1), p. 147-158, <http://www.preventgenocide.org/lemkin/ASIL1947.htm>):

¹ 1947 թ. ապրիլ-մայիս ամիսներին ֆրանսիացի իրավաբան Դոնադյե դը Վաբրի և ռումինացի իրավական փորձագետ Վեսպասիան Պելայի հետ միասին Ռ. Լեմկինը մասնակցել է Ցեղասպանության կոնվենցիայի նախագծի մշակմանը:

² Տե՛ս Raphael Lemkin Collection, P-154, Unpublished Papers, Box 7, folder 3, Stop Genocide Now (<http://digifindingaids.cjh.org/?pID=109202>):

³ Նույն տեղում, էջ 4:

քաղաքակրթության հիմքերի և ժողովուրդների ընտանիքի շահերի դեմ: Այն խախտում է մեր քաղաքակրթության հիմնական սկզբունքը, թե կյանքը սուրբ է: Մի ամբողջ մարդկային խմբի ոչնչացումը մարդկային հասարակության մեջ առաջացնում է վակուում, քանի որ հետագայում ոչնչացված խմբերի կողմից ո՛չ մշակութային և ո՛չ տնտեսական կամ որևէ այլ ներդրումներ չեն կարող լինել»¹: Լեմկինը փորձում է ներկայացնել, որ մարդկանց որոշակի խմբի ոչնչացումը մարդկությանը զրկում է տարբեր ոլորտներում նրա ձեռքբերումներից օգտվելու հնարավորությունից:

Տնտեսական ոլորտի առումով նա բերում է Օսմանյան կայսրության հայ բնակչության և Զմյուռնիայի (Իզմիրի) հույների ոչնչացման օրինակը. «Հարկ է հիշել, որ Օսմանյան կայսրությունում հայերի և Զմյուռնիայի հույների ոչնչացումը Մերձավոր Արևելքի հետ առևտրի անկման պատճառ դարձավ: Մա ապացուցում են ամերիկյան հյուպատոսական զեկուցագրերը»²:

Լեմկինը կարևորում է պահը բաց չթողնելու և ցեղասպանության կանխարգելման ու պատժի համար համապատասխան մեխանիզմի ընդունման անհետաձգելիության հարցը, այն հիմնավորում Հայոց ցեղասպանությունն իրականացրած անձանց անպատժելիության հանգամանքով: «Գործողության հոգեբանական ժամանակը չպետք է բաց թողնվի, – գրում է նա: – Անրի Բերգսոնը³ հավատում էր, որ մարդիկ օժտված են մոռացության գեղձերով, և այժմ աշխարհի բարկությունը սկսել է մարել: Թուրքիայում հայերին կոտորելուց հետո՝ պատժելուն առնչվող նրանց (հայ ժողովրդին բնաջնջողներին – Ն. Պ.) տրված խոստումներն Առաջին համաշխարհային պատերազմից հետո շուտով մոռացվեցին: Մենք չպետք է թույլ տանք մոռացությունը»⁴:

Հողվածը Լեմկինն ավարտում է հետևյալ հարցադրմամբ. «Ինչպե՞ս կարող է ՄԱԿ-ը գոյատևել, եթե նրա բաղկացուցիչ մասերին թույլատրվի բնաջնջել միմյանց»⁵:

«Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» միջազգային կոնվենցիայի ընդունման անհրաժեշտությունը Լեմկինը պայմանավորում է պատմության ընթացքում ցեղասպանության հանցագործության անարգել իրագործմամբ և որպես XX դարի առաջին կեսին իրականացված դաժան ցեղասպանության օրինակ ներկայացնում է Հայոց ցեղասպանությունը: Նա փաստում է, որ միջազգային հանրությունն այն ժամանակ հետամուտ չեղավ հասնելու դրա պատասխանատուներին պատժելուն առնչվող խոստումների իրականացմանը, ուստի դա չի նշանա-

¹ Նույն տեղում:

² Նույն տեղում, էջ 4-5:

³ Անրի Բերգսոն (1859-1941) – ֆրանսիացի փիլիսոփա, ինդիվիդուալիզմի և կյանքի փիլիսոփայության ներկայացուցիչ:

⁴ Նույն տեղում, էջ 6:

⁵ Նույն տեղում, էջ 7:

կում, որ կարելի է մոռանալ այդ մասին: Այլ կերպ ասած, նրա համոզմամբ՝ Հայոց ցեղասպանության և ընդհանրապես ցեղասպանությունների իրագործումը չպետք է թողնել անպատիժ:

Нарек Погосян – *Тема Геноцида армян в статье Рафаэля Лемкина «Остановить геноцид сейчас»*

В статье проанализирована статья Рафаэля Лемкина «Остановить геноцид сейчас» (Stop Genocide Now), в которой он излагает свои мысли по вопросам предотвращения геноцида и призыва к ответственности за его осуществление, в ряду проведенных геноцидов Лемкин отмечает и Армянский геноцид. Лемкин придает важное значение необходимости принятия Международной конвенции о предотвращении геноцида и наказания за его осуществление. На примере Геноцида армян он доказывает, что это преступление не должно остаться безнаказанным.

Narek Poghosyan – *The issue of the Armenian Genocide in Raphael Lemkin's "Stop Genocide Now"*

The article analyzes Raphael Lemkin's article "Stop Genocide Now" in which the author pointed out his views on the issues of prevention of genocide and holding accountable for the crime of genocide, in particular mentioning the Armenian Genocide. Lemkin highlighted the need for the adoption of the International Convention on the Prevention and Punishment of Genocide. On the example of the Armenian Genocide he proved that the crime should not be left unpunished.

ԷԶՄԻԱԾԻՆ-ԱՆԹԻԼԻԱՍ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
1988-1990 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ.
ՀԱՅ ԱՌԱՔԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՄԻԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԸ

Բանալի բառեր – Հայ Առաքելական եկեղեցի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսություն, Էջմիածին-Անթիլիաս հարաբերություններ, Հայ Առաքելական եկեղեցու վերամիավորման հարց

1988 թվականը, որը կարևոր էր ոչ միայն Հայաստանի ներքին քաղաքական կյանքում, այլև նշանակալից էր հայ ժողովրդի համար, սկզբնավորեց նաև Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների նոր փուլը: Երկու կարևոր իրադարձություններ՝ փետրվարին մեկնարկած Արցախյան շարժումը և դեկտեմբերյան ավերիչ երկրաշարժը, նոր թափ հաղորդեցին հայ ժողովրդի ազգային գիտակցության զարթոնքին, ինչպես նաև Սփյուռքի համար Հայրենիքի հետ հարաբերություններ ստեղծելու նոր պատճառ կամ նոր առիթ դարձան: «1988-ը հայոց պատմության մեջ էս կըմբռնեմ որպես ամենեն ծանր և միանգամայն ամենեն որոշադրիչ, ամենեն վճռադրոշմ տարիներեն մեկը»¹, – այսպես էր բնութագրում 1988 թվականը Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ կաթողիկոսը Էջմիածնի Մայր տաճարում արտասանած իր քարոզում: Բնականաբար Ղարաբաղյան շարժման նկատմամբ չէր կարող անտարբեր մնալ նաև հայկական Սփյուռքը: Արցախի հիմնահարցի արդարացի լուծման պահանջով դեռևս 1988-1990 թթ. Խորհրդային Հայաստանում կազմակերպվում էին հարյուրավոր ցույցեր ու հանրահավաքներ, որոնց ընթացքում պարբերաբար հնչում էր նաև Սփյուռքի հետ հարաբերություններ հաստատելու անհրաժեշտության հարցը: Այդ ժամանակ դեռևս միայն Սփյուռքում իրենց գործունեությունը ծավալող հայկական ավանդական կուսակցությունները, ինչպես նաև մյուս կազմակերպությունները, տարբեր երկրների հայկական համայնքները, անհատ գործիչներն արտահայտում էին իրենց դիրքորոշումը Ղարաբաղյան շարժման վերաբերյալ և փորձում էին իրենց ներդրումն ունենալ խնդրի կարգավորման հարցում²: Համահայկական այդ պայքարում իրենց ավանդն էին ներդնում նաև հայկական հոգևոր-կրոնա-

¹ «Էջմիածին», 1988, թիվ ԺԱ-ԺԲ, էջ 28:

² Տե՛ս **Հովհաննիսյան Է.**, Սփյուռքահայ համայնքների և օտարերկրյա լրատվամիջոցների դիրքորոշումը Ղարաբաղյան շարժման նկատմամբ (1988) (փաստաթղթերի հավաքածու) // «Բանբեր Հայաստանի արխիվների», 2013, թիվ 1, էջ 126-152:

կան կազմակերպությունները, մասնավորապես Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը¹: Սպիտակի ավերիչ երկրաշարժը, որն ընկալվեց որպես համազգային աղետ, Արցախյան շարժումից հետո նոր ազդակ էր հաղորդելու Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների սերտացմանը և միասնական ջանքերով համազգային խնդիրները լուծելու ջանքերին:

Այդ ծանր օրերին հասարակական-քաղաքական օրակարգ մուտք գործեցին Հայրենիք-Սփյուռք հարաբերություններին առնչվող մի շարք կնճռոտ հարցեր, որոնց թվում էին 1956-1957 թթ. իրադարձություններից հետո գրեթե խզված Էջմիածին-Անթիլիաս առնչությունները: Հայտնի է, որ Հայ Առաքելական եկեղեցու 1956 թ. բաժանման հիմքում «ոչ թե դավանական տարաձայնություններն էին, այլ քաղաքական ուժերի տարբեր դիրքորոշումները Խորհրդային Հայաստանի հանդեպ», և 1956 թ. Հայ Առաքելական եկեղեցու պառակտումով, Է. Մելքոնյանի ձևակերպմամբ, «ավարտվեց Սփյուռքի քաղաքական սահմանագատման ինստիտուցիոնալ ձևակերպումը: Խոսքը նախ և առաջ երկու նույնանման կառուցվածքով քաղաքական-եկեղեցական համակարգերի մասին է»²: Ռամկավար ազատական կուսակցությունը (ՌԱԿ) կողմ էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գլխավորությամբ Հայ Առաքելական եկեղեցու միասնականության պահպանմանը և առաջնորդվում էր «Մեկ ազգ, մեկ եկեղեցի» կարգախոսով: ՌԱԿ-ն իր մամուլի օրգաններով մշտապես քարոզել է Էջմիածնի գերագահության գաղափարը՝ միաժամանակ պայքարի մեջ լինելով այն շրջանակների հետ, որոնք կարևորում էին Կիլիկիո կաթողիկոսության դերակատարությունը և սփյուռքահայության շրջանում առաջնորդության իրավունքը վերապահում Անթիլիասին: Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունը (ՄԴՀԿ) ևս առավելությունը տալիս էր Էջմիածնի հետ համագործակցությանը և ընդունում վերջինիս գերակա դիրքը հայկական մյուս եկեղեցական կազմակերպությունների նկատմամբ, սակայն միաժամանակ, ի տարբերություն ռամկավարների, դեմ չէր որոշակի հարաբերությունների հաստատմանը նաև այլ հայկական եկեղեցիների, մասնավորապես Կիլիկիո կաթողիկոսության հետ: Ի տարբերություն ՄԴՀԿ-ի և ՌԱԿ-ի՝ եկեղեցու հետ կապված հարցերում հակադիր մոտեցում ունեւ Հայ հեղափոխական դաշնակցությունը (ՀՅԴ), որը 1957 թ. հետո իր ազդեցությունը տարածեց Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության վրա: ՀՅԴ-ն սկսեց հետևողականորեն շրջանառության մեջ դնել «Սփյուռքը Անթիլիասին, Հայաստանը Էջմիածնին» թեզը, որի իրականացման համար կատարվեցին մի շարք գործնական քայլեր, մասնավորապես սկսվեց Էջմիածնապատկան թեմերի զավթման և զուգահեռ թեմերի ստեղծման մի

¹ Տե՛ս «Հասկ», 1988, թիվ 3-4, էջ 151-154, 1990, թիվ 8-12, էջ 649-651:

² **Մելքոնյան Է.**, Հայաստան-Սփյուռք հարաբերությունների փոխակերպումը 20-րդ դարում. քաղաքական իշխանության խնդիրը: Սփյուռքի հեռանկարները գլոբալացվող աշխարհում, միջազգային գիտաժողով, զեկուցումների ժողովածու, Երևան, 2012, էջ 108:

գործընթաց, որի արդյունքում Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության թեմերի թիվը, որը մինչև 1957 թ. պառակտումը երեքն էր, հասավ տասի¹, իսկ ներկայումս տասներկուսն է: Սուր պայքարը Սփյուռքի քաղաքական կազմակերպությունների և Էջմիածնի ու Անթիլիասի միջև շարունակվում էր տասնամյակներ, մինչև որ 1988 թ. տեղի ունեցած մի շարք իրադարձություններ հարաբերությունների վերանայման հնարավորություն ընձեռեցին՝ սակայն վերջնական լուծում չտալով մի շարք կնճռոտ հարցերի:

Համահայկական հասարակական-քաղաքական շրջանակներում տարածված միասնականության և համատեղ ջանքերով գործելու տրամադրություններին անմասն չմնացին նաև հայկական երկու նվիրապետական աթոռները՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը և Կիլիկիո կաթողիկոսությունը: Սկսվեց ակտիվ երկխոսություն երկու եկեղեցական կառույցների միջև, որն առաջին հերթին միտված էր տասնամյակներով կուտակված խնդիրների լուծմանը:

Դեռևս 1986-1987 թթ. մեկնարկած բանակցություններն Էջմիածնի և Անթիլիասի միջև 1988 թ. վերսկսվում են նոր թափով: 1956 թ. Հայ Առաքելական եկեղեցու պառակտումից ի վեր բանակցությունները և վերամիավորմանն ուղղված ջանքերը հայկական երկու եկեղեցիների միջև, որոշակի ընդամիջումներով, պարբերաբար ընթացել են: Մասնավորապես նման բանակցություններ տեղի ունեցան 1979 թ. հոկտեմբերի 4-ից 10-ը Ս. Էջմիածնում Ամենայն Հայոց և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսների ներկայացուցիչների միջև: «Պատմական» որակված այդ ժողովում առաջին անգամ պառակտումից ի վեր արձանագրված «դրական արդյունքներն» այդպես էլ կյանքի չկոչվեցին: 1979 թ. բանակցությունների ժամանակ երկու եկեղեցիները սկզբունքային համաձայնության էին հանգել երկու կետերի շուրջ, նախ Էջմիածնի Ամենայն հայոց կաթողիկոսը ճանաչվում էր որպես «Ընդհանրական Հայրապետ՝ Գլուխը Հայաստանեայց Եկեղեցույ», իսկ երկրորդ պայմանավորվածությունը վերաբերում էր նախկին Էջմիածնապատկան թեմերի վերադարձին, ըստ որի՝ «յետագային երկու կաթողիկոսները պետք է գործնական ճամբաները գտնեին իրականացնելու այդ որոշումը»²: Սակայն մինչ ձեռք բերված պայմանավորվածություններն ի կատար ածելու նպատակով անհրաժեշտ գործնական քայլերի կատարումը շուտով Էջմիածին է հասնում Գարեգին Բ-ի նամակը, որտեղ վերջինս, անդրադառնալով վերը նշված երկու կետերի շուրջ ձեռք բերված պայմանավորվածություններին, գրում էր, թե «նոր իրադրությանց ինչ-որ լոյսի տակ անոնք վերաքննելի են»³:

¹ Տե՛ս **Եղիայեան Բ.**, Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914-1972, Անթիլիաս, 1975, էջ 896:

² «Ձարթոնք», 1986, 28 հուլիսի:

³ Նույն տեղում:

1984 թ. հունիսի 12-ից 15-ը Փարիզում տեղի է ունենում Վազգեն Ա-ի և Գարեգին Բ-ի հերթական հանդիպումը, որը կրկին ավարտվեց առանց որևէ գործնական արդյունքի: Դրանից երկու տարի անց անհաջողության մատնվեցին նաև Հայ առաքելական եկեղեցու՝ վերամշակված մեկ ընդհանուր կանոնադրություն¹ ստեղծելու ջանքերը: Վազգեն Ա-ի նախաձեռնած այդ քայլերը «Հայրենիք» օրաթերթը բնութագրեց որպես «դաւեր», որոնց իրագործման նպատակով «ծուղակներ կը լարուին որպեսզի սփիւռքը անգլուխ մնայ»²: 1986 թ. հուլիսին Էջմիածնում գտնվող Անթիլիասի պատվիրակներ Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանը, Արամ եպիսկոպոս Քեշիշյանը³ և Ոսկեբերան Արզումանյանը⁴ իրենց կարծիքը հայտնեցին Կիլիկիո կաթողիկոսության տեսակետը մշակվող ընդհանուր եկեղեցական կանոնադրության վերաբերյալ. «Մեր Եկեղեցին կազմական կանոնադրութեամբ մը օժտելու գաղափարը ցանկալի չէ եւ ոչ ալ գործադրելի»⁵: Վերջիններս Մայր Աթոռում

¹ Առաջին համաշխարհային պատերազմից հետո հայտնի իրադարձությունների պատճառով, փաստորեն, դադարել էին գործել հայ եկեղեցական կյանքը կարգավորող երկու կարևոր փաստաթղթերը՝ թե՛ 1836 թ. ընդունված «Պոլոժենիեն» և թե՛ 1863 թ. ընդունված «Ազգային Սահմանադրությունը»: Հետևաբար անհրաժեշտություն էր առաջացել ունենալ նոր՝ ժամանակի պահանջներին համապատասխանող եկեղեցական կանոնադրություն: 1920-1930-ական թթ. և՛ Սփյուռքում, և՛ Խորհրդային Հայաստանում հայոց եկեղեցին գտնվում էր այնպիսի ծանր պայմաններում, որ հնարավոր չէր միասնական կանոնադրություն մշակելու հարցը լուծել այդ շրջանում: Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում, երբ խորհրդային իշխանությունների վերաբերմունքը որոշակիորեն փոխվեց դեպի Հայ Առաքելական եկեղեցին, 1945 թ. հնարավոր եղավ հրավիրել Ազգային եկեղեցական ժողով, որի քննարկմանը Գերագույն հոգևոր խորհուրդը ներկայացրեց մի «Եկեղեցական Սահմանադրություն», որը, սակայն, չընդունվեց, և որոշվեց ստեղծել մի հանձնաժողով՝ հետագայում այդ փաստաթուղթը մշակելու և ավելի կատարելագործելու նպատակով: Սակայն Գևորգ Չորեքյան կաթողիկոսին չհաջողվեց իրականացնել եկեղեցական ընդհանուր կանոնադրության ստեղծման հարցը: Նրան փոխարինած Վազգեն Առաջին կաթողիկոսը իր գահակալության ամբողջ ընթացքում բազմաթիվ փորձեր կատարեց այդ կանոնադրությունը վերջնական և Հայ Առաքելական եկեղեցու բոլոր նվիրապետական արժանի կողմից ընդունելի տեսքի բերելու ուղղությամբ: Նշենք, որ Հայ Առաքելական եկեղեցու մեկ միասնական կանոնադրության հարցը մշտապես եղել է Էջմիածին-Անթիլիաս հարաբերությունների հիմնական փորձաքարերից մեկը և վերջիններիս միջև պարբերաբար ընթացող բանակցությունների առանցքային հարցերից: Կիլիկիո կաթողիկոսությունը մշտապես փորձում էր խուսափել նման փաստաթուղթ ունենալուց, որտեղ անշուշտ կսահմանվեր Էջմիածնի գերագահությունը: Նշենք նաև, որ Կիլիկիո կաթողիկոսությունը շարունակում էր առաջնորդվել «Ազգային Սահմանադրության» դրույթներով և 1941 թ. ընդունված ու 1965 թ. վերամշակված սեփական կանոնադրությամբ (տե՛ս **Եղիայեան Բ.**, նշվ. աշխ., էջ 881-886):

² «Հայրենիք», 1986, 4 հուլիսի և 10 հուլիսի:

³ Արամ եպիսկոպոս Քեշիշյանն այդ ժամանակ Լիբանանի հայոց թեմի առաջնորդն էր, իսկ հետագայում՝ 1995 թ.՝ Կիլիկիո Գարեգին Երկրորդ կաթողիկոսի Ամենայն հայոց կաթողիկոս ընտրվելուց հետո, նա դարձավ Կիլիկիո նոր կաթողիկոսը:

⁴ Ոսկեբերան Արզումանյանը այդ ժամանակ զբաղեցնում էր Անթիլիասի Ազգային Կենտրոնական վարչության ատենադպիրի պաշտոնը:

⁵ «Դրոշակ», 1986, սեպտեմբեր:

գտնվելու ժամանակ անգամ ցանկություն չունեցան մասնակցելու հանձնա-
ժողովի աշխատանքներին, այլ ուղղակի հանդիպեցին Վազգեն Վեհափառին
և ներկայացրին Կիլիկիո կաթողիկոսության դիրքորոշումը հարցի վերա-
բերյալ: Մակայն, այնուամենայնիվ, նախորդ տասնամյակների համեմատ,
երկու աթոռների միջև նկատվում էին հարաբերությունների սերտացման
որոշ միտումներ: 1987 թ. Անթիլիասում Գարեգին Բ-ի գահակալման տասնե-
րորդ տարեդարձի առիթով կազմակերպված միջոցառման ժամանակ վեր-
ջինս իր ելույթում նշում էր, թե «Հայոց եկեղեցոյ միութիւնը չէ խախտած. Եւ
ան որ կ ըսէ թէ խախտած է, սուտ կը խօսի Աստուծոյ եւ պատմութեան
առջեւ»¹: Նոյն 1987 թ. Նյու Յորքում սփյուռքահայության հետ հանդիպման
ժամանակ Վազգեն Ա-ն, խոսելով երկու աթոռների միջև ընթացող երկխո-
սության մասին, նշում է, որ «մեր աթոռներու միջեւ տեղի կունենան բանակ-
ցութիւններ, հանդիպումներ, թղթակցութիւններ», ապա շարունակում.
«Ճշմարիտ է որ միութեան հարցի շուրջ կան լուրջ տարակարծութիւններ
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ Կիլիկեան Աթոռի միջեւ. սակայն վերջին տա-
րիներուն բարեացակամութիւն կայ երկու կողմէն ալ»²:

Մոտենում էր 1988 թվականը, որի ընթացքում տեղի ունեցած մի շարք
իրադարձություններ բախտորոշ դարձան հայության համար: Գարեգին Բ-ն
1988 թ. հոկտեմբերին Ղարաբաղի հարցով Անթիլիասում ունեցած իր
ելույթում նշում էր. «Այս տարին, 1988ը, համայն հայութեան կեանքին մէջ
պատմականօրէն հարուստ եւ հիմնականօրէն յեղափոխիչ տարի մըն է»³:
Նոր իրողությունները փոխել էին երկու հովվապետերի մոտեցումները այդ
կարևոր հարցի նկատմամբ: Դիրքորոշումների փոփոխությունը արտա-
հայտվում էր նախ և առաջ վերջիններիս հրապարակային ելույթներում:
Մասնավորապես Գարեգին Բ-ն 1988 թ. հունիսին Հյուսիսային Ամերիկայի
Արևմտյան թեմ կատարած հովվապետական այցելության ընթացքում
հավատացյալների հետ հանդիպման ժամանակ, խոսելով Ռուսաստանի
քրիստոնեության ընդունման 1000-րդ տարեդարձի ժամանակ հայ եկեղեցու
նվիրապետական չորս աթոռների գահակալների մասնակցության և միաս-
նականության մասին, ոգևորությամբ նշում է. «Եկէք բոլորս ալ մեր մէջ
գօրացնենք այդ ամբողջական, մէկ հայութեան եւ մէկ եկեղեցիին ապրումը,
*մեր կողմէ շօշափելի կերպով անոր իւրացումը ու մեր կեանքին մէջ անոր
արտայայտումը եւ ոչ թէ հռետորական ճառերով եւ ուրիշ տեսակ էական ու
պարագայական եղանակներով անոր մասին վկայութիւնը*»⁴: Այսինքն
ակնհայտ էր, որ Կիլիկիո գահակալը հակված էր եկեղեցական միասնակա-

¹ «Ազդակ», 1987, 10 հունիսի:

² «Զարթոնք», 1987, 10 դեկտեմբերի:

³ «Զարթոնք», 1988, 1 հոկտեմբերի:

⁴ «Հասկ», 1988, թիվ 6-7-8, էջ 283:

նության վերականգնմանն ուղղված հոետորաբանությունից անցնելու գործնական քայլերի:

Բանակցությունների հերթական փուլը երկու նվիրապետական աթոռների միջև տեղի ունեցավ Սուրբ Էջմիածնում 1988 թ. հունիսի 30-ից հուլիսի 3-ը¹: Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը ներկայացնում էին Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանը, Արամ արքեպիսկոպոս Քեշիշյանը, Զարեհ եպիսկոպոս Ազնավուրյանը, ինչպես նաև աշխարհիկ ներկայացուցիչներ Երվանդ Փամբուքյանը և Ոսկեբերան Արզումանյանը: Բնականաբար բանակցությունների գլխավոր առանցքը եկեղեցիների վերամիավորման խնդիրն էր: Ըստ արխիվային մի փաստաթղթի՝ բանակցությունների ժամանակ քննարկվում էր չորս հարց.

1. «Համընդհանուր հայկական եկեղեցու կաթողիկոսության և համընդհանուր հայկական կաթողիկոսի դրությունը:
2. Կիլիկիո կաթողիկոսի և կաթողիկոսության դրությունը:
3. Կիլիկիո կաթողիկոսությանը միացված թեմերի և համայնքների Էջմիածնին վերադարձման հարցը մինչ 1956 թ. դրությունը:
4. Հայկական առաքելական եկեղեցու միասնականության ամրապնդման միջոցների մասին»²:

Բանակցությունների ընթացքում մի շարք հարցերի շուրջ հաջողվում է զիջումային որոշումներ կայացնել, իսկ հրաժեշտի ճաշկերույթի ժամանակ Վազգեն Վեհափառը զոհունակություն է հայտնում բանակցությունների արդյունքներից՝ այն համարելով քայլ առաջ, միաժամանակ փաստելով, որ բոլոր հարցերը չեն լուծված, և որ «պետք է աշխատիլ մրցակցութեան ուղիէն դուրս գալ եւ գործակցութեան լծուիլ»³: Սակայն վերը նշված փաստաթուղթը վկայում է, որ ի սկզբանե Անթիլիասը ներկայացնող պատվիրակության կողմից հայտարարվել էր, որ բանակցությունների արդյունքները կունենան գուտ «ցանկության կարգավիճակ»⁴: Այսինքն պարզ է դառնում, որ ի սկզբանե այդ բանակցություններն ակնկալվող վերջնաարդյունքին հանգել չէին կարող: Թեև Անթիլիասի պատվիրակության մեջ ընդգրկված էին ՀՅԴ-ի ներկայացուցիչներ, այնուամենայնիվ նման կարևոր հարցերում վերջնական որոշումը վերապահված էր Դաշնակցության վերին ղեկավար մարմիններին, որոնք, բնականաբար, ցանկություն չունեին հրաժարվելու իրենց ազդեցությունը սփյուռքահայ լայն շրջանակների վրա պահպանելու հարցում այնպիսի կարևոր միջոցից, ինչպիսին էր եկեղեցին: Այնուամենայնիվ երկու նվիրապետական աթոռների միջև նկատվում է հարաբերությունների զգալի ջերմացում, որի դրսևորումներից էր նաև երկարամյա ընդմիջումից հետո՝

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 413-415:

² ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 17, թթ. 4-5:

³ «Հասկ», 1988, թիվ 6-7-8, էջ 415:

⁴ ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 17, թ. 5:

1988 թ. հոկտեմբերին, Հուսիկ արքեպիսկոպոս Սանթուրյանի և Մերովբե արեղա Իսախանյանի՝ որպես Մայր Աթոռի պատվիրակների, մասնակցությամբ Անթիլիասում տեղի ունեցած մյուռոնօրհներին: Մա Կիլիկյո կաթողիկոսության Լիբանանում հաստատվելուց հետո թվով յոթերորդ մյուռոնօրհներն էր, որի ժամանակ արտասանած քարոզում Գարեգին Բ-ն, խոսելով Հայ Առաքելական եկեղեցու միասնականության մասին, մասնավորապես նշեց. «Այնքան ատեն որ մենք ունինք երկու Կաթողիկոսություններ, պիտի ունենանք միշտ մեկ եկեղեցի: Ան որ Միւռոնով կօծուի անոր համար էջմիածնական կամ անթիլիասական չկայ, անոր համար թե՛ էջմիածնական կայ եւ թե՛ անթիլիասական, որովհետեւ մե՛կ է հայ եկեղեցին»¹: Կիլիկիո կաթողիկոսը էջմիածնից ժամանած հոգևորականների միջոցով տասը միլիոն լիբանանյան ոսկի² է նվիրում Վազգեն Վեհափառին «Ատրպեյճանի այլազան շրջաններէն եւ Սումկայիթէն թե՛ Ղարաբաղի մէջ եւ թե՛ մանաւանդ Խորհրդային Հայաստանի մէջ գաղթական եկող եւ հաստատուող ազգակիցների կարիքները հոգալու համար»³: Կիլիկիո կաթողիկոսը «հոգեկան անհուն գոհունակութեամբ եւ բարձրագոյն աստիճանի գնահատութեամբ»⁴ ողջունում է նաև սփյուռքի երեք ավանդական կուսակցությունների՝ ՀՅԴ-ի, ՄԴՀԿ-ի, ՌԱԿ-ի, 1988 թ. հոկտեմբերի 1-ի համատեղ հայտարարությունը միասնականության և Ղարաբաղյան հիմնախնդրի վերաբերյալ: Այս հայտարարությունը աննախադեպ էր Հայկական Սփյուռքի պատմության մէջ, երբ տասնամյակներ շարունակ միմյանց դեմ պայքարող երեք ազգային քաղաքական ուժերը հանդես են գալիս համախմբվելու և միահամուռ ուժերով համընդհանուր խնդիրները լուծելու պատրաստակամությամբ: Խորհրդային Հայաստանի և Սփյուռքի միջև փոխվստահության առաջացմանը և հարաբերությունների ջերմացմանը որոշակի նպաստեց նաև ՀԽՍՀ Գերագույն խորհրդի 1989 թ. նոյեմբերի 22-ի ընդունած օրենքը «Օսմանյան Թուրքիայում հայերի 1915 թ. Ցեղասպանության դատապարտման վերաբերյալ»: Նմանատիպ ազդեցություն ունեցավ նաև Գերագույն խորհրդի նախագահության ընդունած մեկ այլ հրամանագիր ևս, որով մայիսի 28-ը ճանաչվում էր «Հայկական պետականության վերականգնման օր», իսկ Եռագույնը՝ «հայկական ազգային խորհրդանիշ»⁵:

1988 թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժը նոր ազդակ հանդիսացավ Սփյուռքի համար՝ միավորելու ջանքերը ավերիչ բնական աղետի հետևանքները վերացնելու ուղղությամբ: Արցախի հարցը, Սումգայիթի ջարդերը,

¹ «Զարթոնք», 1988, 15 հոկտեմբերի:

² Տասը միլիոն լիբանանյան ոսկին ժամանակի փոխարժեքով կազմում է 25 հազար ամերիկյան դոլար:

³ «Զարթոնք», 1988, 21 հոկտեմբերի:

⁴ «Հասկ», 1988, թիվ 9-10, էջ 440:

⁵ «Խորհրդային Հայաստան», 1989, 27 մայիսի:

Մայիտակի երկրաշարժը պատճառ դարձան Սփյուռքում հայրենասիրական զգացումների աննախադեպ բարձրացման, Հայրենիքի շուրջը համախմբվելու և նրան անհրաժեշտ օգնություն ցուցաբերելու համար: Այսպիսին էր համահայկական մթնոլորտը, երբ երկրաշարժից անմիջապես հետո՝ 1988 թ. դեկտեմբերի 15-ին, տեղի ունեցավ Գարեգին Բ-ի այցելությունը Խորհրդային Հայաստան¹: Նա որպես Կիլիկիո կաթողիկոս Հայաստան էր այցելում առաջին անգամ²: Նրան ուղեկցում էին Ջարեհ եպիսկոպոս Ազնավուրյանը և Կիլիկիո կաթողիկոսության Ազգային Կենտրոնական Վարչության Քաղաքական ժողովի ատենապետ, Լիբանանի խորհրդարանի պատգամավոր Խաչիկ Պապիկյանը: Այցի ընթացքում երկու կաթողիկոսները հանդիպեցին ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահ Ֆադեյ Սարգսյանի հետ, եղան աղետի գոտում, իսկ դեկտեմբերի 18-ին Սուրբ Էջմիածնում համատեղ հոգեհանգստյան պատարագ մատուցեցին: Էջմիածնում արտասանած քարոզի ժամանակ Գարեգին Բ-ն առաջին անգամ շնորհակալության և դրվատանքի խոսքեր ուղղեց խորհրդային իշխանությունների հասցեին³: Թեև Կիլիկիո կաթողիկոսի այցը անմիջականորեն կապված էր երկրաշարժի հետ⁴, սակայն վերջինիս՝ Խորհրդային Հայաստան այցի փաստը, արտասանած մտքերը խորհրդային իշխանությունների և հայ առաքելական երկու եկեղեցիների հարաբերությունների վերաբերյալ թույլ են տալիս ենթադրել, որ այս այցը կարելի է դիտարկել որպես երկու աթոռների միջև դեռևս նախորդ ամիսներին մեկնարկած բանակցությունների և առկա պառակտումը վերացնելուն

¹ 1988 թ. հունիսին Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ-ն Ռուս ուղղափառ եկեղեցու պատրիարքի հրավերով այցելում է նաև Մոսկվա՝ մասնակցելու Ռուսաստանում քրիստոնեության ընդունման հազարամյակի տոնակատարություններին: Այդ միջոցառումներին մասնակցում էին նաև Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը, ինչպես նաև Երուսաղեմի հայոց պատրիարք Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանը և Պոլսո հայոց պատրիարք Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանը (տե՛ս «Հասկ», 1988, թիվ 7-8-9, էջ 236-275):

² Գարեգին Բ-ին նախորդած Կիլիկիո Ջարեհ Ա Փայասելյան և Խորեն Ա Բարոյան կաթողիկոսներն իրենց գահակալության տարիներին երբևէ չեն եղել Էջմիածնում: Կիլիկիո գահակալներից միայն Գարեգին Ա Հովսեփյանն էր, որը 1945 թ. այցելել է Հայաստան՝ մասնակցելու կաթողիկոսական ընտրություններին: Վերջինիս ձեռքով կատարվել է նորընտիր Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Չորեքյանի օծումը: Գարեգին Բ-ն մինչ 1988 թ. այցը Էջմիածնում եղել է 1966, 1968 և 1969 թվականներին, երբ դեռ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս չէր: Նա կաթողիկոս է ընտրվել 1983 թ., իսկ մինչ այդ՝ 1977 թվականից, աթոռակից կաթողիկոս էր Խորեն Ա Բարոյանի կաթողիկոսության շրջանում: Փաստորեն Գարեգին Բ-ի այս այցելությունը Կիլիկիո կաթողիկոսների Սուրբ Էջմիածին կատարած պաշտոնական երկրորդ այցելությունն էր:

³ Տե՛ս «Էջմիածին», 1988, թիվ ԺԱ-ԺԲ, էջ 29-33:

⁴ Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ-ն երկրաշարժի հետևանքների վերացման հարցում իր կարևոր դերակատարության համար 1990 թ. ՀԽՍՀ Գերագույն խորհրդի և Նախարարների խորհրդի կողմից պարգևատրվում է մեդալով, որը նրան է հանձնում Լիբանանում ԽՍՀՄ դեսպան Գենադի Իլիչևը: Տե՛ս «Հասկ», 1990, թիվ 8-12, էջ 67:

ուղղված գործընթացի շարունակություն¹: «Թերևս աղետը սթափեցնի՝ հարց տալու, թե ու՞ր ենք տանում մեր ժողովրդին Հայրենիք-Սփյուռք անջրպետը խորացնելով, որ կարող է մի օր կուլ տալ մեր բոլոր ազգային երազանքներն ու իդեալները»², - գրում է «Էջմիածնի» խմբագրականը Գարեգին Բ-ի Էջմիածին կատարած այցին նվիրված անդրադարձում: Այցի ընթացքում Կիլիկիո կաթողիկոսը եղավ աղետի գոտում, հանդիպեց հավատացյալների հետ, ինչպես նաև 100 հազար ամերիկյան դոլար նվիրաբերեց Մայր Աթոռին Գյումրու Սուրբ Աստվածածին եկեղեցու ավերված զանգակատան վերանորոգման համար³: Գարեգին Բ-ն Էջմիածնի Մայր տաճարում արտասանած քարոզից հետո երկրաշարժի հետևանքների վերացման համար նվիրաբերում է նաև իրեն՝ Կիլիկիո կաթողիկոս դառնալուց հետո տրված հայրապետական երկզլխանի ոսկե արծիվը՝ «որպես խմոր ապագա նվիրահավաքության»⁴: Պատարագից հետո Վեհաբանում կազմակերպված ընդունելության ժամանակ գրեթե բոլոր ներկաները՝ թե՛ Սփյուռքից և թե՛ Հայաստանից, իրենց ելույթներում այդ օրը համարում էին «մեր ժողովրդի ներկայ ազգային եկեղեցական պատմության համար բացառիկ նշանակություն ունեցող պատմական օր», որը «ներկայ ճակատագրական հանգրուանին սահմանուած է նոր էջ մը բանալու մեր ժողովրդի կեանքին մէջ»⁵:

Մեկնարկած այս գործընթացի հաջորդ քայլն արդեն 1989 թ. երկու կաթողիկոսների «պատմական տարողութեամբ մեծապես նշանակալից եւ իր տեսակին մէջ աննախընթաց»⁶ այցն էր ԱՄՆ: 1989 թ. փետրվարի սկզբին Վազգեն Ա-ն և Գարեգին Բ-ն ժամանում են Նյու Յորք⁷, որտեղ փետրվարի 3-ին հայկական Սուրբ Վարդան եկեղեցում տեղի է ունենում երկու կաթողի-

¹ Նշենք նաև, որ 1989 թ. Վազգեն Ա-ի հրավերով նախատեսված էր Գարեգին Բ-ի պաշտոնական այցը Սուրբ Էջմիածին, որն արագացրեց երկրաշարժը:

² «Էջմիածին», 1988, թիվ ԺԱ-ԺԲ, էջ 26:

³ Հետաքրքիր է, որ նույնքան գումար Վազգեն Վեհափառը նվիրաբերել էր Անթիլիասին Լիբանանի քաղաքացիական պատերազմի օրերին հայ համայնքի առջև ծառայած խնդիրները լուծելու նպատակով:

⁴ «Էջմիածին», 1988, թիվ ԺԱ-ԺԲ, էջ 33:

⁵ «Հասկ», 1988, թիվ 11-12, էջ 551:

⁶ «Հասկ», 1989, թիվ 1-2, էջ 26:

⁷ Սա Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի չորրորդ այցելությունն էր ԱՄՆ: Առաջինը տեղի էր ունեցել 1960 թ., երկրորդը՝ 1968 թ.: 1989 թ. ԱՄՆ կատարված այցելությունը նախորդել էր 1987 թ. այցը, որի ընթացքում նա Սփյուռքի հայկական կազմակերպությունների ներկայացուցիչների և հայ հավատացյալների հետ բազմաթիվ հանդիպումներից բացի հանդիպել է նաև ԱՄՆ-ի նախագահ Ռոնալդ Ռեյգանի, ինչպես նաև Նյու Յորքի քաղաքապետ Էդուարդ Քոչի, Կալիֆոռնիայի հայազգի նահանգապետ Ջորջ Դուքմեջյանի, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Խավիեր Պերես դե Կուելյարի հետ, որը կաթողիկոսին պարգևատրել է ՄԱԿ-ի «Խաղաղության մեդալով»: Վազգեն Ա-ի 1987 թ. ԱՄՆ կատարած այցի մասին ավելի մանրամասն տե՛ս «Ամենայն Հայոց կաթողիկոս Ս.Տ. Վազգեն Ա հայրապետի հովվապետական այցելությունը Ամերիկայի Միացյալ Նահանգներ», Ս. Էջմիածին, 1988:

կոսների դիմավորման արարողությունը: Տիրում էր աննախադեպ ոգևորության և միասնականության մթնոլորտ, ինչպիսին եղել էր նաև փետրվարի 5-ին անգլիական St. John The Divine տաճարում երկու կաթողիկոսների՝ ավելի քան քսանհինգ հազար հայ հավատացյալների համար մատուցած հայրապետական պատարագի ժամանակ. «Այդ օրը առաջին անգամ կողք կողքի աղոթքի էին կանգնել հայ ժողովրդի զավակները՝ միասնական աղերսով առ Աստված. չկար էջմիածնական և Անթիլիասական, չկային տարբեր կուսակցությունների առանձնացյալ ներկայացուցիչներ, չկային տարբեր հարանվանությունների, քաղաքական, բարեսիրական և եկեղեցական զանազան կազմակերպությունների ներկայացուցիչներ, այլ կար միական, իրարահաղորդ, համագգային համագործակցության պատրաստ հայ ժողովուրդ»¹: Մուրբ Վարդան հայկական եկեղեցում տեղի ունեցած հանդիսության ժամանակ Վազգեն Ա-ն, խոսելով Հայ Առաքելական եկեղեցու միավորման մասին, ուղղակի նշում է. «Կհավատամ, որ մեր երկուքի ներկայությունը և գործակցությունը պիտի ստեղծե նոր մթնոլորտ, որը պիտի առաջնորդե մեզ մինչև երկու եկեղեցիներու վերամիավորում: ...Բոլորս պիտի սպասենք վերամիավորման լրումի պահին»: Գարեգին Բ-ն արձագանքում է. «Պատմությունը անցյալի հետ կնույնացնենք, այս պահուն սակայն մենք պատմություն կկերտենք», և ապա դիմելով Վազգեն Վեհափառին՝ շարունակում է. «Վեհափառ, ...եկեք միասին գործենք, չսպասենք, հիմա է պահը: Տարակարծություններ ունեցած ենք պատմության ընթացքին, որոնք դարմանված են: Հիմնականը Ազգն է, հիմնականը Եկեղեցին է: Կոչ կընեմ բոլորին, կղերականներուն և հավատացյալներուն, ոչ մեկ խտրություն դրեք, զացեք այն եկեղեցիները, որոնք էջմիածնական են»²: Հիրավի աննախադեպ իրավիճակ էր ստեղծվել երկու հայկական աթոռների միջև հարաբերություններում: Կարծես թե սատույցը հալվում էր: Առաջին անգամ երկու կաթողիկոսները իրենց հավատացյալներին կոչ էին անում չդնել խտրականություն և այցելել թե՛ էջմիածնապատկան և թե՛ անթիլիասապատկան եկեղեցիներ: Սակայն վերջիններիս նույն այդ կոչից պարզ էր դառնում, որ այդ եկեղեցիները պատկանելության կամ ենթակայության հարցը դեռևս շարունակում էր պահպանել նախկին դրությունը:

ԱՄՆ կատարած այս այցի ընթացքում երկու կաթողիկոսները մի շարք հանդիպումներ են ունենում նաև Ամերիկայի հայկական համայնքի և սփյուռքյան կառույցների ներկայացուցիչների հետ: Փետրվարի 6-ից 7-ը Նյու Յորքի Մուրբ Վարդան Մայր տաճարում տեղի է ունենում հավաք, որին մասնակցում են ԱՄՆ ժամանած երկու կաթողիկոսները, Հայ Ավետարանական և Կաթողիկե եկեղեցիների պատասխանատուները, ինչպես նաև հայ-

¹ «Էջմիածին», 1989, թիվ Բ-Գ, էջ 33:

² Նույն տեղում, էջ 31:

կական կուսակցությունների, սփյուռքյան բարեգործական ու մշակութային կազմակերպությունների և հայրենակցական միությունների՝ շուրջ 37 հայկական կազմակերպությունների ներկայացուցիչներ¹: Հանդիպման հիմնական թեման երկրաշարժից ավերված Ստեփանավան քաղաքի՝ սփյուռքի ջանքերով վերաշինման գործի կազմակերպումն էր: Խոսելով այդ հավաքի մասին՝ Վազգեն Ա-ն նշում է. «Մեծ համազգային ժողով էր, որի նմանը երևի տեղի չէր ունեցած գոնե այս վերջին 50-60 տարիների ընթացքում: Հենց այդպիսի ժողովի գումարումը հայ ազգային կյանքի հաղթանակներից մեկն էր հանդիսանում Սփյուռքի տարածքի վրա: Մեկ սկզբունք դեկավարում էր մեզ բոլորիս, որ աշխարհի բոլոր հայերը, Հայաստանից սկսյալ մինչև հեռավոր անկյունները Սփյուռքի, կազմում են *մեկ Եկեղեցի, մեկ ազգություն և մեկ Մայր Հայրենիք*»² (ընդգծումը մերն է – Է. Հ.): Այս այցելության ընթացքում Վազգեն Ա-ն և Գարեգին Բ-ն հանդիպումներ են ունենում ոչ միայն Սփյուռքի ազդեցիկ կառույցների ներկայացուցիչների, այլև ԱՄՆ-ի դեկավար շրջանակների, Նյու Յորքի քաղաքագլուխ Էդուարդ Քոչի, ինչպես նաև ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշ ավագի հետ³: Իսկ ԱՄՆ-ի Ներկայացուցիչների պալատի փետրվարի 9-ի նիստը մեկնարկում է Վազգեն Վեհափառի աղոթքով⁴: ԱՄՆ կատարած այցի վերջին օրը Վազգեն Ա-ն առաջին անգամ այցելում է անթիլիասական թեմին պատկանող Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցի: Սա 1933 թ. հայտնի իրադարձություններից⁵ հետո առաջին անգամն էր, որ Ամենայն հայոց կաթողիկոսը և Մայր Աթոռի միաբանության անդամ հոգևորականներն այցելում էին Կիլիկիո կաթողիկոսության հովանու ներքո գործող եկեղեցի: Այստեղ Վազգեն Ա-ն իր հնչեցրած պատգամի մեջ նշում է. «Էջմիածին և Անթիլիաս հարց չունին իրենց միջև»⁶: Կիլիկիո կաթողիկոսության պաշտոնաթերթ «Հասկն» այդ առիթով գրում է. «Նոր էջ մը կը բացուեր հայ ժողովուրդի ու յատկապես Ամերիկայի հայորդիներու ազգային եկեղեցական կեանքին մէջ»⁷: Երկու կաթողիկոսների էլույթներից միանգամայն պարզ է դառնում, որ նրանք ակտիվ բանակցել են նաև եկեղեցու միավորման հարցի շուրջ, և տպավորություն է ստեղծվում, որ առանցքային հարցերի շուրջ եկել են նախնական համաձայնության: Համենայն դեպս պարզ է մի բան՝ հարաբերությունները երկու հայկական նվիրապետական աթոռների միջև այլևս նախկինը չէր, և Գարեգին Բ-ի բնորոշմամբ «Ոսկի է կամուրջ մը

¹ «Ասպարեզ», 1989, 8 փետրվարի, էջ 1:

² «Էջմիածին», 1989, թիվ Բ-Գ, էջ 16, 53-54:

³ ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 46, թ. 7:

⁴ «Ասպարեզ», 1989, 14 փետրվարի, էջ 7:

⁵ Տե՛ս **Մելկոնյան Զ.**, *Армянская апостольская церковь во взаимоотношениях Армении и Диаспоры. Религия и политика на Кавказе. Материалы международной конференции, Ереван, 2004*, с. 34-35:

⁶ «Ասպարեզ», 1989, 15 փետրվարի, էջ 1:

⁷ «Հասկ», 1989, թիվ 1-2, էջ 53:

նետուեցաւ Էջմիածնէն դէպի Անթիլիաս»¹: Սակայն այդ «ոսկէ կամուրջը» այդուհանդերձ չնպաստեց երկու կաթողիկոսների կողմից ակնկալվող «նոր էջի» բացմանը:

ԱՄՆ կատարած այս այցն առաջին հեթին նպատակ էր հետապնդելու համախմբել Ամերիկայի հայկական սփյուռքի ջանքերը երկրաշարժի հետևանքները վերացնելու համար: Այդ մասին դեռևս այցից առաջ Էջմիածնում տեղի ունեցած հանդիպման ժամանակ Վազգեն Վեհափառը հայտնել էր ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահ Նիկոլայ Ռիժկովին², որը 1988 թ. երկրաշարժից անմիջապես հետո ժամանել էր Հայաստան: Սակայն իրականում, բացի այդ կարևոր գործի կազմակերպումը, երկու կաթողիկոսների միաժամանակ Ամերիկայում գտնվելու փաստը կրկին վկայում է երկու եկեղեցիների միջև հարաբերությունների խորացման մասին: Բնականաբար այս պատմական այցը հայտնվել էր ամբողջ Սփյուռքի ուշադրության կենտրոնում: Հայկական Սփյուռքի թերթերը ողողված էին այցը լուսաբանող և երկու կաթողիկոսների հետագա քայլերը մեկնաբանող հրապարակումներով³: Վազգեն Ա-ն այցի իր հարցազրույցներից մեկում, պատասխանելով լրագրողի՝ հայ առաքելական եկեղեցու վերամիավորման վերաբերյալ հարցին, նշել է, որ երկու հայրապետների միջև երկխոսությունը սկսվել էր դեռևս երկրաշարժից առաջ, սակայն աղետը ավելի էր սերտացրել հարաբերությունները. «Մենք արդեն եղբայրներ ենք: Սակայն կային խնդիրներ, որոնք լուծումի կը կարօտեն: Միասնաբար, համաձայնած ենք, որ քայլեր առնենք գործակցութիւն ստեղծելու համար»⁴:

Երբ համեմատում ենք Վազգեն Ա-ի նախորդ՝ 1987 թ. ԱՄՆ ու Կանադա և երկու կաթողիկոսների ԱՄՆ կատարած այցերը, ակնհայտ է դառնում, թե Արցախյան շարժումն ու Սպիտակի երկրաշարժն ինչպիսի ազդեցություն էին թողել երկու եկեղեցիների փոխհարաբերությունների բարելավման վրա: Բավական է նշել, որ 1987 թ. այցելության ընթացքում Վազգեն Վեհափառը որևէ պաշտոնական հանդիպում չունեցավ Կիլիկիո Աթոռի ներկայացուցիչների հետ, իսկ տեսակցությունները, ըստ նրա հավաստման, տեղի ունեցան «անպաշտոն կերպով, կարճատև տեսակցութեան ձևի տակ»⁵: Այցի ընթացքում հակաէջմիածնական շրջանակները Վազգեն Ա-ի դեմ լայնորեն իրականացնում էին հակաքարոզչություն: Մամուլում տպված զանազան քննա-

¹ Նույն տեղում, էջ 62:

² ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 33, թ. 7:

³ Այս այցի վերաբերյալ ԱՄՆ-ի հայկական անգլիալեզու մամուլի հրապարակումների մասին ավելի մանրամասն տե՛ս **Чальян М.**, Освещение вопроса объединения двух армянских апостольских церквей в англоязычной армянской прессе США // Հայոց պատմության հարցեր, Երևան, 2003, էջ 149-159:

⁴ «Ամենայն Հայոց կաթողիկոս Տ.Տ. Վազգեն Ա հայրապետի հովվապետական այցելությունը Ամերիկայի Միացյալ Նահանգներ», Ս. Էջմիածին, 1988, էջ 77:

⁵ «Հայրենիքի ձայն», 1988, 7 փետրվարի:

դատող և պարսավող հողվածներից բացի՝ Լոս Անջելեսի էջմիածնապատկան հաստատությունների, դպրոցների, անգամ եկեղեցիների և առաջնորդարանի պատերին փակցվում էին թռուցիկներ Վազգեն կաթողիկոսի պատկերով, որոնցում փորձում էին կաթողիկոսին ներկայացնել ոչ թե որպես հոգևորականի, այլ խորհրդային կուսակցական գործչի: Օրինակ՝ թռուցիկներից մեկում պատկերված էր Վազգեն Ա-ն, որի վեղարի խաչը փոխարինված էր մուրճ ու մանգաղով, և բացի դրանից՝ նշված էր հետևյալ գրությունը. «Բարի չեկաք, ազատ հայեր պետք ունին Գարեգին Բ-ին»¹:

1989 թ. երկու կաթողիկոսների՝ ԱՄՆ կատարած այցի ընթացքում նման դրսևորումներ տեղի չունեցան, այլ ընդհակառակը, չնայած որոշ դեպքերում առանձին զսպվածությանն ու զգուշավորությանը՝ գրեթե ամբողջ սփյուռքյան մամուլը լի էր միասնականության և հայրենասիրական ոգով տոգորված հրապարակումներով: Ամբողջ հայությունը ուղղակիորեն խոսում էր երկու հայկական եկեղեցիների վերամիավորման հրատապության մասին, իսկ շատերը կարծիք էին հայտնում, որ այդ միավորումը տեղի կունենա մոտ ապագայում, քանզի դրա համար ստեղծված են բոլոր նպաստավոր պայմանները:

Էջմիածնի և Անթիլիասի միջև «լուրջ երկխոսությունը եկեղեցու միավորման կենսական հացերի շուրջ»² շարունակվեց նաև 1989 թ. ապրիլի 21-ից 29-ը, երբ Վազգեն Ա-ի հրավերով Հայաստանում էր գտնվում Գարեգին Բ-ն: Այստեղ նրան ուղեկցում էին Կիլիկիո կաթողիկոսության Արևելյան Ամերիկայի թեմի առջնորդ Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանը, Արևմտյան Ամերիկայի թեմի առաջնորդ Տաթև արքեպիսկոպոս Սարգսյանը, Հալեպի թեմի առաջնորդ Սուրեն Քաթարոյանը, գավազանակիր Բաբկեն արեղա Չարյանը, ինչպես նաև աշխարհիկ գործիչներ՝ Կիլիկիան արթուրի Ազգային կենտրոնական վարչության անդամներ Ոսկերեքան Արզումանյանը և Երվանդ Փամպուրյանը: Նշենք, որ վերջիններս ՀՅԴ-ի ղեկավար կազմի ներկայացուցիչներ էին, իսկ Երվանդ Փամպուրյանը նաև այդ կուսակցության Բյուրոյի անդամ էր: Երկու կաթողիկոսներին ապրիլի 22-ին ընդունում է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Հ. Ոսկանյանը: Ապրիլի 23-ին Էջմիածնի Մայր տաճարում Գարեգին Բ-ն մատուցում է պատարագ: 1441 թ. Ամենայն հայոց կաթողիկոսության էջմիածին տեղափոխվելուց հետո Գարեգին Բ-ն Տանն Կիլիկիո առաջին կաթողիկոսն էր, որ պատարագ էր մատուցում Մայր տաճարում: Ապրիլի 24-ին երկու կաթողիկոսները այցելում են Ծիծեռնակաբերդ, այնուհետև իրենց ուղեկցող պատվիրակությունների հետ՝ նաև Եղեգնաձորի, Սիսիանի և Գորիսի շրջաններ՝ պատմաճարտարապետական հուշարձանները դիտելու և հավատացյալների հետ հանդիպելու:

¹ «Չարթունք», 1987, 29 դեկտեմբերի:

² ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 33, թ. 217:

նպատակով: Նրանք ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահի տեղակալ Լ. Սահակյանի հետ քննարկում են երկրաշարժի հետևանքների վերացման ու վերաշինության հետ կապված հարցերը¹: Այցի վերջում նրանք ստորագրում են հայտարարություն, որտեղ, երկրաշարժի հետևանքների համատեղ ուժերով վերացման ջանքերից բացի, նշվում է երկու աթոռների միջև առկա խնդիրների կարգավորման մասին: Գարեգին Բ-ի Խորհրդային Հայաստան կատարած այս երկրորդ այցելությունը չափազանց կարևորվում է երկու աթոռների միջև տասնամյակներ շարունակ առկա խնդիրների և պատկանման հարցի լուծման առումով: Հատկանշական է, որ խորհրդային իշխանության առանձին մարմիններ, որոնք ուշիուշով հետևում էին երկու աթոռների միջև տեղի ունեցող գործընթացներին, այս այցելության հիմնական նպատակը համարել են ոչ թե երկրաշարժի հետևանքների վերացման ուղղությամբ համատեղ աշխատանքների համակարգումը, այլև դրանց միջև մեկնարկած բանակցությունների շարունակականությունը²:

Այս այցի մանրամասների քննությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ընդհանուր ողբերգությունը և համահայկական խնդիրները հաշտեցրել էին երկու՝ միմյանց նկատմամբ, մեղմ ասած, ոչ բարյացակամ տրամադրված հայոց երկու եկեղեցիներին, որոնց՝ կրկին վերամիավորվելու հեռանկարը դառնում էր ավելի իրական: Ապրիլի 23-ին Սուրբ Էջմիածնում մատուցված պատարագի ժամանակ Գարեգին Բ-ն առաջին անգամ ջերմ օրհնության խոսքեր արտասանեց Խորհրդային Հայաստանի և այն ղեկավարող կազմակերպության՝ կոմունիստական կուսակցության հասցեին՝ ուղղակի նշելով. «Թող Աստված օրհնի մեր հարազատ պետությունը՝ Հայաստան աշխարհը, իր բոլոր *կազմակերպություններով և հիմնարկություններով* (ընդգծումը մերն է, իմա՝ նաև Հայաստանի կոմունիստական կուսակցությունը – Է. Հ.) և ժողովրդի բոլոր շերտերով»³: Եթե հաշվի առնենք նախկինում Կիլիկիո կաթողիկոսի և կաթողիկոսության մյուս ներկայացուցիչների ելույթների ժամանակ և մամուլում տեղ գտած բազմաթիվ սուր քննադատական խոսքերը՝ ուղղված Խորհրդային Հայաստանի և այն ղեկավարող քաղաքական ուժի դեմ, իսկապես այս խոսքերը կարելի է համարել աննախադեպ: Հատկանշական է մեկ հանգամանք ևս. Գարեգին Բ-ն իր ելույթում Վազգեն Ա-ի հասցեին գովեստի խոսքեր հնչեցնելուց հետո նշեց, որ վերջինս հայ եկեղեցու պատմության մեջ կմնա որպես «Հայոց Վերածնունդի Կաթողիկոս»⁴: Ավելորդ չէ նշել, որ նախկինում՝ 1957 թ. բաժանումից և հատկապես 1964 թ. հետո Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը ուղղակի փորձում էր վիճարկել անգամ Էջմիածնի գերագահության հարցը, իսկ Կիլիկիո կաթողիկոսները իրենց

¹ ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 46, թ. 7:

² ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 33, թ. 212:

³ ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 33, թ. 213-214:

⁴ «Էջմիածին», 1989, թիվ Դ-Ե-2, էջ 20, նաև՝ «Հասկ», 1989, թիվ 4-5, էջ 199-200:

կոչման մեջ սկսել էին օգտագործել «Ամենայն հայոց» տիտղոսը¹: Փաստորեն, Հայաստան կատարած այս այցից հետո Գարեգին Բ-ն հրաժարվեց վերը նշված տիտղոսից և հրապարակայնորեն ընդունեց Վազգեն Ա-ի՝ ամբողջ Հայ Առաքելական եկեղեցու ղեկավար լինելու հանգամանքը²: Այս առումով բնութագրական են Էջմիածնի Վեհաբանում կազմակերպված ճաշկերույթի ժամանակ Գարեգին Բ-ի Վազգեն Ա-ին պաշտոնապես Անթիլիաս հրավիրելու ժամանակ հնչեցրած խոսքերը. «Իմ ցանկությամբ է եւ հրաւերս է որ դուք ըլլաք եւ տեսնէք տասնեակ հազարներով մեր ժողովուրդը, որ պիտի ընդունի Ձեզ իբրեւ իր հարազատ *Ամենայն Հայոց Կաթողիկոսը*» (ընդգծումը մերն է – Է. Հ.)³: Իսկ այդ ճաշկերույթին ներկա Միլվա Կապուտիկյանը, խոսելով այս պատմական այցի մասին, ուղղակի հայտարարել է. «Երկար բաժանումից հետո մեր երկու Աթոռները վերամիավորվեցին»⁴: Այդ ճաշկերույթի ժամանակ Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Վեհափառի ելույթն ամբողջացնում է երկու աթոռների միջև առկա իրավիճակը, որտեղ իրական գնահատականներ է տալիս այն արդյունքներին, որին հանգել էին երկու կաթողիկոսները իրենց վերջին բանակցությունների ընթացքում: Նախ նա Կիլիկիո գահակալին բնութագրում է որպես «իրապետ անկեղծ ...համարձակ եւ հետեւողական»: Այնուհետև Վեհափառը, հիշատակելով Ս. Կապուտիկյանի նշված ելույթը, խոսում է հայաստանաբնակ հայերի քաղաքական որոշակի միասնության մասին՝ պարզաբանելով, որ հաճախ հնարավոր չի լինում մեկ քայլով լուծել տասնամյակներով և հարյուրամյակներով առաջացած խնդիրները, և որ ակնկալիքները պետք է լինեն իրատեսական: Ապա ներկայացնելով 1956-1957 թթ. հետո ստեղծված «սուր լարված վիճակը» երկու աթոռների միջև՝ անդրադառնում է վերջին երկու տարիների բանակցություններին՝ նշելով, որ «այդ ընթացքը փակուեց արդեն», ապա շարունակում է. «Յետ այսու գուցե անհարժեշտ կը լինին ոչ միայն խօսակցություններ, այլ բանակ-

¹ 1963 թ. հոկտեմբերին Երուսաղեմում տեղի էր ունեցել Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի և Կիլիկիո կաթողիկոս Խորեն Ա-ի հանդիպումը, որի ժամանակ ստեղծված ջերմ մթնոլորտը և «առանց պայմաններ դնելու» երկու աթոռների միջև հարաբերությունների շարունակման պայմանը շուտով խաթարվել էին: Ավելին, 1964 թ. փետրվարին Խորեն կաթողիկոսը Կիլիկիո աթոռը հռչակեց Էջմիածնի աթոռին «հաւասարագօր»: Դրանից հետո Կիլիկիո կաթողիկոսները սկսեցին ոչ միայն օգտագործել «Ամենայն հայոց» տիտղոսը և միջեկեղեցական հարաբերություններում հանդես գալ որպես առանձին եկեղեցի, այլև գործնական քայլեր ձեռնարկեցին Էջմիածնապատկան հայոց եկեղեցական թեմերը Անթիլիասին միացնելու ուղղությամբ: Մասնավորապես Կիլիկիո աթոռի նոր կանոնադրության 32-րդ կետով Պարսկաստանի, Հունաստանի և ԱՄՆ-ի հայոց թեմերը հռչակվեցին որպես անթիլիասական, իսկ Միլանի հայոց թեմի առաջնորդ նշանակվեց Անթիլիասի միաբաններից Արտավազդ Եպիսկոպոսը՝ առանց Էջմիածնի համաձայնության:

² ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 46, թ. 7:

³ «Հասկ», 1989, թիվ 4-5, էջ 203:

⁴ Նույն տեղում, էջ 263:

ցութիւններ որոշ թեմական հարցեր լուծելու, եւ այլն»¹: Այսինքն՝ առկա խնդիրները դեռևս իրենց ամբողջական լուծումը չէին ստացել, բայց, այնուամենայնիվ, սա վճռական քայլ էր դեպի առաջ, ինչը Վազգեն Վեհափառին թույլ է տալիս եզրակացնել. «Մեր երկու աթոռների այս մերձեցումը, համերաշխումը եւ գործակցութիւնը իմաստատուուէց նաեւ ոչ միայն եկեղեցական մակարդակի վրայ, այլ նաեւ համազգային, նույնիսկ քաղաքական»²:

Երկու կաթողիկոսությունների միջև հարաբերությունների նոր փուլի մեկնարկի, առկա խնդիրների լուծման պատրաստակամության ոգով էր շարադրված նաև այցի ավարտին երկու կաթողիկոսների ընդունած հայտարարությունը³:

Այցից հետո ևս Գարեգին Բ-ն մշտական կապի մեջ էր Վազգեն Ա-ի հետ, որից փորձում էր տեղեկանալ Արցախի շուրջ և Հայաստանում ծավալվող իրադարձությունների ընթացքին և միաժամանակ իր գորակցությունն էր հայտնում վերջինիս: 1989 թ. հոկտեմբերին նրան հղած գրության մեջ Կիլիկիո կաթողիկոսը գրում էր. «Մոտեն կհետևինք այս օրերուն Ղարաբաղի և Հայաստանի մեր ժողովրդի կրած ահավոր զրկանքներուն, վտանգալից նեղություններուն, ճնշումներուն և անարդարություններուն: ...Ձեզի հետ ենք աղոթքով, մտածումով և կամքով: Պատրաստ ենք մեր գերագույն կարելին ի գործ դնելու գորավիզ կանգնելու Ձեզի և մեր անընկճելի ժողովուրդին»⁴:

Երկու կաթողիկոսների հաջորդ հանդիպումը տեղի է ունենում 1990 թ. մայիսին Բրյուսելում, երբ Վազգեն Ա-ի հրավերով Գարեգին Բ-ն մասնակցում է նորակառույց Սուրբ Մարիամ Մագդաղենացի եկեղեցու օծմանը: Սա ևս աննախադեպ և հենց երկու կաթողիկոսների կողմից «պատմական» համարված իրադարձություն էր, երբ Ամենայն հայոց կաթողիկոսն ու Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսը միասին օծում էին էջմիածնապատկան եկեղեցին: Երկու կաթողիկոսների ելույթներում կրկին ընդգծվում էր այն գաղափարը, որ «չկան այլևս անթիլիասական կամ էջմիածնական եկեղեցիներ. կայ մէկ հայոց եկեղեցի բոլորի՛ն համար»⁵: Այցելության ընթացքում նրանք հանդիպում են Բրյուսելի քաղաքապետին, կարդինալին, Եվրոպայի խորհրդի նախագահին, որին շնորհակալություն են հայտնում 1987 թ. հունիսին ընդունված՝ Հայոց ցեղասպանությունը ճանաչվող բանաձևի համար: Բրյուսելում համայնքի ներկայացուցիչներին ուղղած իր խոսքում Գարեգին Բ-ն նշում է. «Անձնական տեսակցութիւններով մենք կրցանք մեր մէջ ստեղծել եւ մեր մէջէն ջանալ մեր ժողովուրդին փոխանցել միութեան պատգամը

¹ Նույն տեղում, էջ 269-272:

² Նույն տեղում, էջ 270:

³ «Էջմիածին», 1989, թիվ Դ-Ե-Ձ, էջ 27-29, նաև՝ «Հասկ», թիվ 4-5, 1989, էջ 273-275:

⁴ Հղումը ըստ՝ Պետրոսյան Բ., Հայրենիք-Մփյուռք հարաբերությունները 1988-2001 թվականներին, Երևան, 2011, էջ 171:

⁵ «Հասկ», 1990, թիվ 5-6-7, էջ 368:

ն՝ չ ձեռնարկել ճանաչումը յատուկ միասնականության իմաստով, այլ՝ հաւատ-
քով եւ համոզումով: Եկեղեցին եղած է, կը մնայ ու պիտի մնայ մէկ եկեղեցի,
մէկ ազգ, այլապէս մենք չենք կրնար ըլլալ տոկուն, յառաջացող եւ ապագա-
յին յաղթանակող ազգ»¹: Այս խոսքերը ևս մէկ անգամ ցույց են տալիս, որ
երկու նվիրապետական այրոնների միջև մերձեցումն ընթանում էր երկու վե-
հափառների անկեղծ ջանքերի շնորհիվ, և նրանք իրապէս ցանկանում էին
գործնական քայլեր կատարել այդ ուղղությամբ: Բրյուսելում մի քանի օր
մնալուց հետո երկու կաթողիկոսները մեկնում են Փարիզ, որտեղ Գարեգին
Վեհափառի խոսքերով՝ «շատ գործեր չունինք գաղութին հետ կապուած.
մենք այնտեղ միասին պիտի նստինք, պիտի ծրագրենք, պիտի խորհրդակ-
ցինք, ապագայի նոր անելիքներու մասին»²: Փաստորէն այն հինգ օրը, որ եր-
կու վեհափառները նախատեսում էին անցկացնել Փարիզում³, հիմնակա-
նում նվիրելու էին դեռևս երկու տարի առաջ մեկնարկած բանակցություննե-
րի շարունակմանը: Փարիզում Վազգեն Վեհափառը համայնքի ներկայացու-
ցիչների հետ հանդիպման ժամանակ ուղղակիորէն հայտարարում է. «Մէկ
անձ եղան երկու Աթոռները՝ Մայր Աթոռի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթո-
ղիկոսութեան ժողովրդի հաւատացեալներով», իսկ Գարեգին Բ-ի խոսքերը
հիրավի աննախադէպ էին, երբ վերջինս, Վազգեն Ա-ին Անթիլիաս այցելելու
հրավեր հղելով, ասում է. «Գաք այցի եւ Անթիլիասի մէջ բազմիք Կիլիկիան
Աթոռի Կաթողիկոսի գահին վրայ»⁴: Երկու կաթողիկոսներին, բացի եկեղե-
ցական հարցերից, հուզում էին նաև համահայկական բնույթի խնդիրները:
Վերջիններս համատեղ հուշագիր ստորագրեցին Հայոց ցեղասպանության
75-րդ տարելիցին նվիրված, որն ուղարկվեց Միացյալ ազգերի կազմակեր-
պության գլխավոր քարտուղարին, երկու կաթողիկոսները Ղարաբաղյան
խնդրի արդարացի լուծման պահանջով նամակ ուղարկեցին նաև ԽՍՀՄ
առաջին նախագահ Միխայիլ Գորբաչովին: Վեհափառները Փարիզում հան-
դես եկան նաև հայ ժողովրդին ուղղված միասնականության կոչով:

Այս կարևոր և պատմական այցի ընթացքում ևս, չնայած ելույթներին,
առկա պառակտումը վերացնող հստակ գործնական քայլեր չձեռնարկվեցին:
Հատկապէս անդրադարձ չեղավ պառակտման հիմնական պատճառին՝
Միջուկում գործող էջմիածնական և անթիլիասական եկեղեցական թեմերի
հարցին: Եթէ երկու կաթողիկոսների մակարդակով մերձեցման ջանքերը և
ցանկությունը ակնհայտ էին, ապա ավելի ցածր օղակներում այդ միտումնե-
րը գրեթէ չէին նկատվում, և անգամ ընդհակառակը՝ առկա էր ներքին դի-
մադրություն երկու եկեղեցիների միավորմանը միտված այս գործընթացի

¹ Նույն տեղում, էջ 378:

² Նույն տեղում, էջ 379:

³ 1985 թ. հենց Փարիզում էր տեղի ունեցել երկու վեհափառների առաջին անձնական
հանդիպումը որպէս Սուրբ Էջմիածնի և Կիլիկիո գահակալներ:

⁴ «Հասկ», 1990, թիվ 5-6-7, էջ 386, 390:

դեմ: Էջմիածնի և Անթիլիասի վերջնական վերամիավորմանը կամ ավելի ճիշտ կլինի ասել պառակտման վերացմանը չէին նպաստում նաև այն քաղաքական կազմակերպությունները, որոնց ազդեցության ներքո էին գտնվում հայկական երկու նվիրապետական աթոռները: ՀՅԴ-ն կարծում էր, որ եկեղեցիների միավորմամբ կուսակցությունն ամբողջությամբ կկորցնի իր ազդեցությունը Կիլիկիո կաթողիկոսության վրա՝ դրանով հայկական սփյուռքի մի որոշ մասի վրա քաղաքականություն կիրառելու կարևոր միջոցը զիջելով գաղափարական և քաղաքական հակառակորդ երկրին և կոմունիստական կուսակցությանը: Խորհրդային Հայաստանում երկրի քաղաքական իշխանությունները ձգտում էին որոշակիորեն նպաստել միավորման գործընթացին՝ դրանով նպատակ հետապնդելով մեծացնել իրենց ազդեցությունը Սփյուռքում: Սակայն, այնուամենայնիվ, Խորհրդային Հայաստանի քաղաքական իշխանությունները որոշակի զգուշավորություն էին ցուցաբերում եկեղեցիների միավորման հարցում: Խորհրդային Միության ամբողջ տարածքում սկիզբ առած ժողովրդավարացման գործընթացների և Հայաստանում վերելք ապրող Արցախյան շարժման ետնախորքի վրա երկու հայ եկեղեցիների վերամիավորումը Էջմիածնի գլխավորությամբ զգալիորեն կմեծացներ Մայր Աթոռի՝ առանց այն էլ վերջին տարիներին անընդհատ աճող հեղինակությունը, և որ ամենակարևորն է՝ կաճեր Հայ Առաքելական եկեղեցու քաղաքական ազդեցությունը, որից զգուշանում էին երկրի քաղաքական իշխանությունները: Այդ մասին Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտկոմ հղած զեկուցագրերում ուղղակի ակնարկում էին նաև Խորհրդային Հայաստանի անվտանգության համապատասխան մարմինները¹:

Խորհրդային Հայաստանի պետական անվտանգության կոմիտեի (ՊԱԿ) ղեկավար Վ. Բադամյանը ՀԿԿ Կենտկոմ ներկայացրած զեկուցագրերից մեկում, անդրադառնալով Հայ Առաքելական երկու եկեղեցիների վերամիավորման գործընթացին, այն համարում է ոչ միայն զուտ եկեղեցական հարաբերությունների դրսևորում, այլև քաղաքական անհրաժեշտ հարց՝ հաշվի առնելով եկեղեցու կարևոր դերը Սփյուռքի հետ հարաբերություններում: Կարևորելով այդ գործընթացը՝ նա, սակայն, ճիշտ է գնահատում ստեղծված իրավիճակը. «Երկու աթոռների դիրքորոշումների մերձեցման սկսված գործընթացը արտաքինից տեղի է ունենում փոխադարձ, միահամուռ միասնականության ձգտման ֆոնի վրա, սակայն խորքում այն իր մեջ թաքցնում է շատ անորոշություններ կապված *գաղափարական բնույթի խնդիրների* (ընդգծումը մերն է – Է. Հ.) գործնական լուծումների հետ»²: «Գաղափարական բնույթի խնդիրներ» ասելով Վ. Բադամյանը առաջին հերթին նկատի ուներ

¹ ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 47, թ. 70-71:

² ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 34, թ. 44:

ՀՅԴ-ի վերաբերմունքը Խորհրդային Հայաստանի հանդեպ և հակառակը՝ Խորհրդային Հայաստանի վերաբերմունքը նրա նկատմամբ, որին խորհրդային իշխանությունները չէին դիտում որպես «հայրենասիրական և առաջադիմական» ուժ և մշտապես դասում էին հակախորհրդային կառույցների շարքում: Նման քաղաքական անվստահության պայմաններում էին ընթանում երկու աթոռների միջև բանակցությունները, և որքան էլ որ առանձին եկեղեցական գործիչներ ու սփյուռքյան շրջանակներ անկեղծորեն ձգտում էին հանգել երկու հայկական առաքելական եկեղեցիների միջև առկա սուր հակասությունների լուծմանը, այն ի սկզբանե դատապարտված էր ձախողման, քանի դեռ լուծված չէին այդ պատակտումը պայմանավորող քաղաքական պատճառները:

Անհրաժեշտ է նշել նաև, որ, բացի երկու եկեղեցիների հարաբերություններին առնչվող քաղաքական բնույթի խնդիրներից, առկա էր նաև ներքին ընդդիմություն՝ ուղղված երկու վեհափառների ջանքերին: Եթե երկու կաթողիկոսները իրենց քայլերում անկեղծ էին և իրապես ցանկանում էին հասնել հնարավոր միասնականության վերականգնմանը և փորձում էին գործնական քայլեր ձեռնարկել, ապա իրենց ենթակա շատ թեմերում նկատելի էր ընդգծված դժգոհություն այդ ամենի նկատմամբ, որը սուր էր հատկապես ամերիկյան թեմերում¹: Հանդիպումներից մեկի ժամանակ Վազգեն Ա-ն անդրադառնում է այդ հարցին. «Ճշմարիտ է որ կան նաեւ անորոշ հարցեր, գուցէ եւ մտահոգութիւններ եւ տեղ-տեղ դժգոհութիւններ... Ես կակնարկեմ յատկապէս Միացեալ Նահանգներու կացութեն... Պէտք է խոստովանեմ, որ այնտեղ կացութիւնը բարդ է, գուցէ շատ բարդ», ապա չկորցնելով հույսը ակնկալվող արդյունքի վերաբերյալ՝ Վեհափառը դրանք համարում է «տեղական երեւոյթներ», որոնք «առաջին շրջանի համար գուցէ բացատրելի եւ հասկանալի են»: Այնուհետև, խոսելով իր և Գարեգին Երկրորդի եկեղեցական հարցում ունեցած դիրքորոշման մասին, նա նշում է. «Մեր յարաբերութիւններու մակարդակին վերայ կարծեմ ամէն ինչ յստակ է եւ վերջնական» և ապա հույս հայտնում, որ «թեմական մակարդակներու վրայ այդ մտահոգութիւնները կը վերանան, անորոշութիւնները կը յստականան եւ նաեւ այդ շրջաններուն մէջ մէկ եկեղեցին կը դառնայ մէկ անձ, մէկ մարմին, մէկ նպատակ հետապնդող»²: Սփյուռքյան թերթերին տված հարցազրույցներից մեկում նույն մտահոգությունն է հայտնում նաև Գարեգին Բ-ն, որը թեև

¹ Էջմիածնապատկան և անթիլիասապատկան եկեղեցական թեմերի միջև հակասություններն այնքան խորն էին, որ անգամ ամերիկյան նույն քաղաքում գործող երկու թեմերը համազգային նշանակություն ունեցող Հայոց ցեղասպանության տարելիցը նշում էին առանձին-առանձին: 1990 թ. առաջին անգամ Էջմիածնապատկան և անթիլիասապատկան թեմերը ԱՄՆ-ում այդ կարևոր տարելիցը նշեցին համատեղ, որի առիթով Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ-ն իր հատուկ ուղերձով ողջունեց այդ քայլը: Տե՛ս «Հասկ», 1990, թիվ 2-3, էջ 177:

² «Հասկ», 1990, թիվ 5-6-7, էջ 386:

երկու աթոռների միջև ստեղծված գործակցությունը համարում է «հիմնական, կենսական և անդառնալի ճանապարհ», միաժամանակ մատնանշում է առկա խնդիրները՝ նշելով՝ «Բնականօրեն կան տակալին որոշ հարցեր կարգ մը թեմերու հետ առնչուած»¹: Այն, որ եկեղեցական խնդիրը հեռու է իր վերջնական լուծումը ստանալուց, վկայում է նաև այն փաստը, որ 1990 թ. մայիսին երկու վեհափառների Փարիզում տեղի ունեցած աննախադեպ ջերմ մթնոլորտում անցած հանդիպումից անմիջապես հետո Կիլիկիո գահակալը մեկնում է ԱՄՆ, որտեղ վերջինս պետք է մասնակցեր անթիլիասապատկան նորակառույց երեք եկեղեցիների օծմանը²: Այն է՝ երկու եկեղեցիների հարաբերություններում հիմնաքարային նշանակություն ունեցող թեմական հարցը շարունակում էր մնալ չլուծված, ավելին՝ անթիլիասական թեմերը ավելի էին ընդլայնում իրենց գործունեությունը ԱՄՆ-ում:

Նշենք նաև, որ երկու աթոռների միջև հարաբերությունների ջերմացման այս գործընթացը չէր վրիպել նաև Թուրքիայի ուշադրությունից, որտեղ որոշակի անհանգստացած էին այս գործընթացից: «Երկու օձի գլուխները (նկատի ունեն երկու վեհափառներին – Է. Հ.) քով քովի եկան եւ ասիկա վտանգաւոր կացութիւն ստեղծեց մեզ համար»³, – ահա այսպես է բնութագրում երկու կաթողիկոսությունների միջև ստեղծված ջերմ հարաբերությունները թուրքական հեռուստատեսություններից մեկը՝ Հայոց ցեղասպանության ժխտմանը նվիրված իր հեռուստատեսողադարձներից մեկում:

Հայաստանի անկախացումից հետո երկու հայ եկեղեցիների համար ստեղծվեցին հետագա համագործակցության նոր պայմաններ, հակասությունների լուծման նոր հնարավորություններ, ինչպես նաև քաղաքական նոր իրավիճակով պայմանավորված՝ նոր խնդիրներ: Մակայն այս իրավիճակը, ի հեճուկս սպասումների, չնպաստեց հին խնդիրների լուծմանը: 1993 թ. սփյուռքյան թերթերից մեկին տված հարցազրույցում դեռևս Գարեգին Բ-ն Էջմիածնի և Անթիլիասի միջև «միասնականութեան ոգին եւ գործակցութիւնը» պայմանավորում է այն բանով, որ «երբ փոխադարձ վստահութեան մթնոլորտը վերաշինուի, եւ գոյութիւն ունեցող թիրիմացութիւնները փարատին, աւելի լայն կարելիութիւններ կը ստեղծուին դեռ առկախ մնացած հարցերու աստիճանական լուծման համար»⁴: Ինչպես տեսնում ենք, փոխվել էր Կիլիկիո կաթողիկոսի հռետորաբանությունը, որը խիստ տարբերվում էր այն ելույթներից, որոնք վերջինս ունենում էր 1988-1990 թթ.: Շատերը կարծում էին, որ Հայաստանի անկախությունից և խորհրդային կարգերի տապալումից հետո այլևս կվերանան եկեղեցական պառակատման բուն պատճառները: «Մեր օրերին Հայաստանի Հանրապետութեան պայմանները

¹ Նույն տեղում, էջ 343, 346:

² Նույն տեղում, էջ 402-452:

³ Նույն տեղում, էջ 356:

⁴ «Նոր աշխարհ» (Նիկեա), 1993, 16 մարտի:

րում այլևս որեւէ այժմէութիւն չունեն չայ Սփյուռքում սովետական կարգերի շրջանում ստեղծուած կացութիւններն ու գործելակերպը, ի մասնաւորի հայ եկեղեցական կեանքի մակարդակի վրայ եւ Մայր Աթոռիս և Տանն Կիլիկիոյ Աթոռի յարաբերութիւններում: Պարզ է բոլորիս, որ այդ կացութիւններն ու գործելակերպը առաջ էին եկել միմիայն սովետական կարգերի առկայութեան հետեւանքով չայաստանում»¹, – այսպէս էր արտահայտվում Վազգէն Ա-ն իր հայրապետական խոսքում 1993 թ.: Սակայն, փաստորեն, պառակտման պատճառներն ավելի խորքային էին և կամ այդպիսին էին դարձել անցած տասնամյակների ընթացքում, իսկ վերականգնված անկախութունը ի գորու չէր լուծելու այդ թնջուկը: Անկախութեան հռչակումից հետո՝ 1991 թ. սեպտեմբերի վերջին, Սուրբ Էջմիածնում տեղի ունեցած մյուռնօրհներքին² մասնակցելու առիթով սփյուռքայան թերթերից մեկին տված հարցազրույցում Գարեգին Բ-ն, խոսելով Էջմիածնի և Անթիլիասի հարաբերութունների մասին, նշում է. «Տակալին կան որոշ հարցեր, որոնք բոլորովին չեն հարթուած, պէտք է անկեղծ ըլլալ եւ ճշմարտութիւնը տեսնել ինչպէս որ է»³: Իսկ այդ տարաձայնութունները հիմնականում վերաբերում էին եկեղեցական թեմերի պատկանելութեան կամ ենթակայութեան հարցին:

Ինչպէս հայտնի է, եկեղեցական պառակտման խնդիրը հետագայում փորձեց լուծել ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, երբ Վազգէն Ա-ի մահից հետո՝ 1995 թ., նախագահի միջամտութեամբ Ամենայն չայոց կաթողիկոս ընտրվեց Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ-ն⁴: Սակայն, ինչպէս գիտենք, այդ քայլը ոչ միայն չլուծեց միավորման հարցը, այլև ընդհակառակը՝ ավելի սրեց հակասութունները երկու աթոռների միջև, որին նպաստեցին նաև չայաստանում տեղի ունեցած մի շարք այլ ներքաղաքական իրադարձութուններ⁵: Շուտով՝ 1995 թ. հունիսի 28-ին, Անթիլիասում Մեծի Տանն Կիլիկիո 42-րդ գահակալ ընտրվեց Լիբանանի թեմի առաջնորդ Արամ Քեշիշյանը: Կիլիկիո կաթողիկոսի ընտրութուններին Էջմիածնից ժամանած պատվիրակութեան հետ մասնակցում էր նաև արդեն Ամենայն չայոց կաթողիկոս Գարեգին Առաջինը⁶:

¹ «Զարթոնք», 1993, 28 հունվարի:

² Օրհնված այս մյուռնը Վազգէն Առաջին Վեհափառի կողմից կոչվեց «անկախութեան մյուռն»:

³ «Զարթոնք», 1991, 12 նոյեմբերի:

⁴ Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ-ի Ամենայն չայոց կաթողիկոս դառնալու հավանական պատճառների մասին ավելի մանրամասն տե՛ս **Мелконян Э.**, *Армянская апостольская церковь во взаимоотношениях Армении и Диаспоры. Религия и политика на Кавказе. Материалы международной конференции, Ереван, 2004*, с. 49:

⁵ Տե՛ս **Մելքոնյան Է.**, չայաստանի Երրորդ հանրապետութեան և Սփյուռքի քաղաքական փոխհարաբերութունների հարցի շուրջ // Սփյուռքագիտութուն, Տարեգիրք, Երևան, 2012, էջ 105-107:

⁶ «Զարթոնք», 1995, 29 հունիսի:

Ստեղծված նոր հանգամանքները՝ մասնավորապես Հայաստանի անկախացումը, նորանկախ հանրապետության ներքին քաղաքական զարգացումները, ինչպես նաև Էջմիածնում և Անթիլիասում նոր կաթողիկոսների գահակալումը, երկու հայկական եկեղեցիների միջև ոչ միայն հարաբերությունների խորացման նոր հնարավորություններ, այլև միաժամանակ նոր խնդիրներ առաջացրին, որը քննարկման այլ նյութ է:

Այսպիսով, չնայած 1988-1990 թթ. Էջմիածնի և Անթիլիասի միջև հարաբերությունների աննախադեպ ջերմացմանը՝ հերթական անգամ չհաջողվեց հաշտեցնել երկու եկեղեցիներին և հաղթահարել Հայ Առաքելական եկեղեցու պառակտումը ծնող պատճառները: Խնդրի վերջնական լուծմանը չնպաստեց նաև համահայկական միասնականության աննախադեպ ոգին, որն այդ ժամանակ տիրում էր ամբողջ հայության շրջանում:

Էդգար Օգանյան – *Взаимоотношения между Эчмиадзином и Антилиасом в 1988-1990 гг.: вопрос воссоединения Армянской Апостольской церкви*

В 1988 г. взаимоотношения между Первопрестольным Святым Эчмиадзином и Католикосатом Великого Дома Киликии достигли такого уровня, что их можно было назвать “беспрецедентно теплыми”. В основном это было связано с началом Арцахского движения и разрушительным спитакским землетрясением. Эти события, имеющие важное всеармянское значение, послужили причиной того, что Католикос Всех Армян Вазген Первый и Католикос Великого Дома Киликии Гарегин Второй предприняли шаги для решения существующих проблем, возникших между двумя армянскими церквями еще до их раскола в 1957 г. В период с 1988 по 1990 гг. оба католикоса встретились четыре раза. Эти встречи имели целью не только сплочение усилий всего армянства для справедливого решения Арцахского вопроса и устранения последствий землетрясения. В ходе этих встреч продолжались переговоры по решению проблем, существующих между двумя церквями. Однако все усилия по восстановлению единства Армянской Апостольской церкви в очередной раз, в основном по политическим причинам, не увенчались успехом, поскольку оба престола в своей деятельности не обладали полной свободой и действовали в условиях определенного политического и партийного влияния.

Если советская власть, проявляя определенную осторожность, была за воссоединение церквей с целью увеличения влияния на Диаспору, то Армянская Революционная Партия выступала против этого процесса, проявляя обеспокоенность из-за перспективы ограничения своего влияния в Диаспоре. Таким образом, несмотря на беспрецедентно теплые отношения между Эчмиадзином и Антилиасом в 1988-1990 гг., в очередной раз не удалось разрешить церковный узел.

Edgar Hovhannisyan – *The Relations between Etchmiadzin and Antelias in 1988-1990: the issue of Reunion of Armenian Apostolic Church*

In 1988 the relations between the Mother See of Holy Etchmaidzin and the Great House of Cilicia became unprecedentedly warm. This was mainly due to the beginning of the Artsakh Movement and the devastating earthquake in Spitak. These events of great Pan-Armenian importance led His Holiness Vazgen the First, the Catholicos of All Armenians and His Holiness Garegin the Second, the Catholicos of the Great House of Cilicia to take some steps

to solve the existing problems between the two Armenian churches before they split in 1957. During 1988-1990 the two Catholicoses met four times. One of the meetings took place in the USA, two of them were in the Soviet Armenia. Not only did these meetings intend to unite the efforts of all the Armenians for fair solution of Artsakh Movement and for elimination of the consequences of the earthquake, but also negotiations were held for solving the problems existing between the two Churches. However, all efforts to restore the unity of the Armenian Apostolic Church failed once again mainly due to political reasons. The main reason of the failure was the fact that both Catholicoses did not have total freedom in their actions and were subject to certain political and party influence. If the Soviet authorities were in favor of the reunification of the churches with the purpose of increasing their impact on the Diaspora, the Armenian Revolutionary Party opposed this process, showing concern for the prospects of limiting their influence in the Diaspora. Thus, despite the unprecedentedly warm relations between Echmiadzin and Antelias in 1988-1990, once again the attempt to solve the problem between the two churches failed.

**ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԵՐԱԿԱ
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(1960-ական թվականներից մինչև օրս)

Բանալի բառեր – Հայրենիք-Սփյուռք հարաբերություններ, սփյուռքահայություն, հայապահպանություն, ազգային ինքնություն, նախարարություն, կոմիտե, մասնագիտական ներուժ, հայրենադարձություն, հայեցակարգ

Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները հատկապես սերտացել ու բազմաբնույթ են դարձել երկու շրջափուլերում, որոնցից առաջինն ընդգրկում էր 1960-1980-ական թթ., իսկ երկրորդը՝ սկզբնավորվել է 2008 թ.: Հարաբերությունների սերտացումը հիմնականում պայմանավորված էր Հայկական ԽՍՀ-ում և Հայաստանի երրորդ Հանրապետությունում գործող՝ Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների զարգացմանը միտված կառույցների, համապատասխանաբար՝ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի¹ և ՀՀ սփյուռքի նախարարության գործունեությամբ, որոնց ստեղծումը պետական իշխանության՝ Սփյուռքի նկատմամբ հատուկ քաղաքականության որդեգրման նպատակ էր հետապնդում, այն է՝ խորությամբ ուսումնասիրել Սփյուռքի խնդիրները և դրանք կյանքի կոչել համապատասխան ծրագրեր մշակելով: Ուստի Հայրենիք-Սփյուռք հարաբերություններում օրինաչափորեն ներդրվեցին գործակցության ամենակարևոր նպատակներն ու խնդիրները՝ փոխադարձ բազմակողմ ճանաչողություն, կապերի սերտացում, հայապահպանություն, Սփյուռքի մասնագիտական ներուժի բացահայտում՝ ի շահ Հայրենիքի և Սփյուռքի այն կիրառելու հեռանկարով, և հայրենադարձությանը նպաստում:

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն (այսուհետև՝ Կոմիտե) ստեղծվել է ՀԽՍՀ մինիստրների խորհրդի 1964 թ. մայիսի 26-ի թիվ 226 որոշմամբ: Այն պետք է կոչվեր «Արտասահմանյան հայրենակիցների հետ մշակութային կապերի հայկական կոմիտե»²: Բայց հունիսի 25-ին հիմնադիր համագումարում³ Մարտիրոս Մարյանի առաջարկությամբ այն անվանվեց «Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտե»⁴: ՀԽՍՀ

¹ Կոմիտեն շարունակել է գործել Հայաստանի երրորդ Հանրապետության առաջին տարիներին:

² Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 875, ց. 1, գ. 2, թ. 1-2:

³ Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 11, թ. 1-18:

⁴ Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 43, թ. 1:

մինիստրների խորհրդի հաջորդ՝ թիվ 227 որոշմամբ Կոմիտեի նախագահ Է նշանակվել Վարդգես Համազասպյանը¹:

Կոմիտեի կազմում գործում էին տարածաշրջանների հայ համայնքների հետ կապերի՝ Ասիայի ու Աֆրիկայի (Արևելյան երկրների), Եվրոպայի, Ամերիկայի և այլ բաժիններ: Այն համարվում էր ԽՍՀՄ-ի՝ Արտասահմանի հայրենակիցների հետ մշակութային կապերի խորհրդային ընկերության՝ «Ռոդինա»-ի կոլեկտիվ անդամը²:

Հիմնադիր համագումարում ընդունված կանոնադրության մեջ շարադրված էին Կոմիտեի գործունեության հետևյալ նպատակներն ու խնդիրները. հաստատել և զարգացնել կապերը Սփյուռքահայ գաղթօջախների հետ, գաղթօջախների հայությանը ծանոթացնել հայրենիքի կյանքի, ձեռքբերումների, գիտության ու մշակույթի հետ, գաղթօջախների հայության մեջ սերմանել հայրենասիրություն, ՀԽՍՀ-ի աշխատավորներին ծանոթացնել գաղթօջախների, առաջադիմական կազմակերպությունների, ձուլման դեմ պայքարի և Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների զարգացմանն ուղղված աշխատանքների հետ³:

Նշվածին հասնելու համար անհրաժեշտ էր. կապեր հաստատել առաջադիմական, ժողովրդավարական և հայրենասիրական կազմակերպությունների, բարեգործական ու մշակութային միությունների հետ, գաղթօջախներում տարածել հայրենիքի թերթերը և օգնել դրանց, գաղթօջախների հրավերով մեկնել արտասահման, ուղարկել տարբեր խմբեր, հայրենիք հրավիրել պատվիրակություններ գաղթօջախներից, աջակցել սփյուռքահայ տուրիստներին, կազմակերպել սփյուռքահայ նկարիչների ցուցահանդեսներ, ինչպես նաև կազմակերպել գրական երեկոներ և հրատարակել սփյուռքահայ գրողների ստեղծագործությունները⁴:

Ակնհայտ է, որ Կոմիտեի նպատակներն ու խնդիրները մեծապես ածանցվում էին Ժամանակաշրջանի գաղափարաքաղաքական իրողություններին: Առաջին հերթին առաջ քաշելով փոխադարձ ճանաչողության պահանջը՝ խորհրդահայ իշխանությունները մի կողմից հարկ էին համարում ամրապնդել կապերը Սփյուռքի հետ, իսկ մյուս կողմից Սփյուռքը ճանաչելի դարձնել Խորհրդային Հայաստանում և հակառակը: Կոմիտեի ամենակարևոր նպատակը, փաստորեն, Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդումն էր, որը կատարվում էր ամենատարբեր ծրագրերի իրականացմամբ⁵:

¹ Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 2, թ. 3:

² Տե՛ս նույն տեղում, ց. 16, գ. 1, թ. 1:

³ Տե՛ս նույն տեղում, թ. 1-3:

⁴ Տե՛ս նույն տեղում:

⁵ Հարկ է նշել, որ Կոմիտեի աշխատանքներն ընդհանուր առմամբ մանրամասնորեն ներկայացրել է Հ. Մելիքսեթյանը: Տե՛ս **Հ. Մելիքսեթյան**, Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980-ական թթ.), Երևան, 1985, էջ 366-446:

Մյուս կողմից՝ ակնհայտ է, որ գաղթօջախներին աջակցելու և այնտեղ հայրենասիրություն սերմանելու խնդիրները հետապնդելիս Կոմիտեն նպատակ ուներ նպաստելու հայապահպանությանը: Այդ իսկ պատճառով սփյուռքահայ երիտասարդության հետ այն աշխատանքներ է իրականացրել թե՛ հայրենիքում և թե՛ Սփյուռքում¹. կազմակերպել է սփյուռքահայ ուսուցիչների պարբերական վերապատրաստումներ Խորհրդային Հայաստանում², գաղթօջախներին է տրամադրել մեծաքանակ գրականություն (դասագրքեր ու գեղարվեստական գրականություն)³ և նյութական ու մեթոդական ծավալուն օգնություն տրամադրել գաղթօջախների դպրոցներին⁴:

Կոմիտեի աշխատանքներում զգալի տեղ էր հատկացվում նաև ՀԽՍՀ-ում կազմակերպվող համահայկական բնագավառային և մասնագիտական հավաք-համաժողովներին: 1969 թ. կայացած Սփյուռքի հայրենակցական միությունների ներկայացուցիչների հավաքից⁵ հետո անցկացվեցին Հայրենիք-Սփյուռք առաջին համաժողովը (1980)⁶, արտասահմանի լրատվամիջոցների խմբագիրների հավաքը (1981), սփյուռքահայ գրողների ու ժուռնալիստների հավաքը (1983), սփյուռքահայ մշակութային միությունների ղեկավարների հավաքը (1984) և սփյուռքահայ ռադիո-հեռուստաժամերի ներկայացուցիչների և մամուլի խմբագիրների հավաք-խորհրդակցությունը (1985)⁷:

Կոմիտեի գործունեությունը մեծապես առնչվում էր նաև նրա գոյության տասնամյակներին շարունակվող հայրենադարձության հետ: Թեև Կոմիտեն ուղղակիորեն չէր զբաղվում հայրենադարձության կազմակերպման և իրականացման գործերով, այդուհանդերձ սփյուռքահայության հետ աշխատանքներում լայնորեն զովագրում էր հայրենադարձությունը, դրա նշանակությունն ու հայրենիքում հայրենադարձների կյանքում դրական տեղաշարժերը՝ դրանով իսկ մեծապես նպաստելով նոր հայրենադարձությանը: Հետաքրքրական է, որ հայրենադարձվել ցանկացողները շատ հաճախ համապատասխան խնդրանքով դիմում էին հենց Կոմիտեին⁸, որը պետական կառավարման մարմիններին ներկայացնում էր երաշխավորություններ՝ առանձին համայնքներից հայրենադարձություն կազմակերպելու նպատա-

¹ Տե՛ս «Սովետական Հայաստան», 1971, թիվ 4, էջ 22-23, N 5, էջ 4: Տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 875, ց. 8, գ. 40, թ. 11 և այլն:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 6, գ. 34

³ Տե՛ս նույն տեղում, ց. 9, գ. 41, թ. 1-4:

⁴ Տե՛ս նույն տեղում, ց. 4, թ. 23:

⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 17, թ. 23:

⁶ Տե՛ս նույն տեղում, ց. 9, գ. 40, թ. 4-5:

⁷ Տե՛ս նույն տեղում, ց. 8, գ. 40, թ. 1-4, ց. 14, գ. 8, թ. 1-5, ց. 16, գ. 11: Տե՛ս նաև «Սովետական Հայաստան», 1980, թիվ 12, էջ 7-34:

⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, գ. 206, թ. 60:

կահարմարության վերաբերյալ¹: Կոմիտեի գործունեության շրջանում և հատկապես 1960-1970-ական թթ. հայրենիք է ներգաղթել ավելի քան 30 000 հայ²:

ՀՀ սփյուռքի նախարարությունը (այսուհետև՝ Նախարարություն) գործում է 2008 թ. հոկտեմբերի 1-ից՝ ըստ «ՀՀ կառավարության կառուցվածքի մասին» 2008 թ. հունիսի 17-ի օրենքի³: Մինչ այդ՝ սեպտեմբերի 11-ին, ՀՀ կառավարությունը հաստատել էր Նախարարության կանոնադրությունը⁴: Նախարարության կազմում ստեղծվում էին տարածաշրջանների հայկական համայնքների հետ կապերի (Ամերիկայի, Մերձավոր և Միջին Արևելքի, Եվրոպայի և Անկախ պետությունների համագործակցության), համահայկական, միջազգային և եկեղեցական կառույցների հետ կապերի, հայրենադարձության և հետազոտությունների, համահայկական ծրագրերի և այլ վարչություններ ու բաժիններ ⁵281-Ա ⁶:

Ի սկզբանե նշենք, որ փոխադարձ ճանաչողության սկզբունքը սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի ստեղծումից շուրջ 45 տարի անց՝ 2008 թ., դարձյալ դրվեց Նախարարության որդեգրած սկզբունքների շրջանակում⁷, ինչը բխում էր այն իրողությունից, որ նույնիսկ XXI դարում և անկախ պետականության պայմաններում հայության հայրենաբնակ և սփյուռքյան զանգվածները դեռ ամբողջությամբ ծանոթ չէին մեկմեկու:

Նախարարության գործունեության նպատակն է Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման քաղաքականության մշակման, իրականաց-

¹ Տե՛ս նույն տեղում, ց. 4, գ. 34:

² Տե՛ս **Ա. Ստեփանյան**, XX դարի հայրենադարձությունը հայոց ինքնության համակարգում, Երևան, 2010, էջ 277-279, տե՛ս նաև՝ Հավելված (աղյուսակ 3):

³ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության օրենքը Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքի մասին (ընդունված 2008 թվականի հունիսի 17-ին)», «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2008.06.25/40(630), հոդ. 651: Տե՛ս նաև <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=44544>

⁴ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը (11 սեպտեմբերի 2008 թվականի թիվ 1049-Ն) «Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» // «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2008.10.01/60(650), հոդ. 1025: Տե՛ս նաև <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=78354>

⁵ Տե՛ս նույն տեղում, IX, 54, I:

⁶ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագիրը Հ. Հակոբյանին Հայաստանի Հանրապետության Սփյուռքի նախարար նշանակելու մասին», «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2008.10.15/62(652), հոդ. 1049: Տե՛ս նաև <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=46747>

⁷ Տե՛ս «Հայրենիքն է կանչում. ՀՀ սփյուռքի նախարարությունը երեք տարեկան է», Երևան, 2011, էջ 7: Տե՛ս նաև «ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի ելույթը Սփյուռքի կազմակերպությունների ղեկավարների և ներկայացուցիչների համահայկական համաժողովին» (http://www.mindiaspora.am/am/Speeches_of_minister/1642) և այլն:

ման, համակարգման և արդյունքների գնահատման միջոցով նպաստել Հայաստանի Հանրապետության և Մփյուռքի գործակցության ապահովմանը և նրանց միջև կապերի ամրապնդմանը, հայ ժողովրդի հոգևոր միասնությանը, հայ կրթական, գիտական, մշակութային, տնտեսական, երիտասարդության, մարզական կյանքի զարգացմանը, «հայկական աշխարհ»-ի¹ ստեղծմանը²:

Նախարարության գործառույթները բխում են երկու կարևոր աղբյուրներից՝ նախարարության կանոնադրությունից (բուն գործառույթներ) և կանոնադրության 1-ին կետի պահանջով ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացված և 2009 թ. օգոստոսի 20-ին հավանության արժանացած «Հայաստան-Մփյուռք գործակցության զարգացման հայեցակարգ»-ից³ (աճանցյալ՝ Հայաստան-Մփյուռք գործակցության զարգացման ուղղությամբ վերապահված գործառույթներ):

Ըստ կանոնադրության՝ Նախարարության առջև դրված են ավելի քան մեկուկես տասնյակ խնդիրներ, որոնցից գլխավորը Հայրենիք-Մփյուռք կապերի ամրապնդման ուղղությամբ քաղաքականության իրականացումն է: Դրան միտված են Նախարարության հիմնական ծրագրերը:

Նախարարության մնացյալ խնդիրներն ընդհանուր առմամբ կարելի է բաժանել հետևյալ հիմնական բնագավառների.

1. *հայապահպանության խնդիրներ*, այդ թվում՝ ուժացումը կանխելու համատեղ ծրագրերի իրականացում, այլալեզու և այլադավան հայերի շրջանում ազգային ինքնության արմատավորմանը նպաստում, հայապահպանության ու հայկական համայնքների զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծում և այլն.
2. *Մփյուռքի ներուժի համախմբման խնդիրներ*, այդ թվում՝ Հայրենիք-Մփյուռք գործակցության մասնագիտական կազմակերպակառուցվածքային հենքի ձևավորում, ՀՀ-Մփյուռք համակարգող մարմնի ստեղծմանն աջակցություն, հայրենի պետության ամրապնդման գործում սփյուռքահայերի արդյունավետ մասնակցությանը նպաստում, համազգային նշանակության խնդիրների ձևակերպման ու լուծման նպատակով ՀՀ և Մփյուռքի քաղաքական, տնտեսական, մտավոր, գիտակրթական, հոգևոր-մշակութային կարողությունների և ջանքերի համախմբում, մասնագիտական հանձնախմբերի ձևավորմանը աջակցություն.
3. *հայրենադարձությանն առնչվող խնդիրներ*, այդ թվում՝ համապատասխան ծրագրերի մշակում, դեպի հայրենիք սփյուռքահայ երիտա-

¹ Այս եզրույթի սահմանումը մինչ այժմ ամբողջությամբ հստակեցված չէ:

² Տե՛ս «Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը (11 սեպտեմբերի 2008 թվականի թիվ 1049-Ն)», I, 7:

³ Տե՛ս «Հայաստան-Մփյուռք գործակցության զարգացման հայեցակարգ», Երևան, 2010: Տե՛ս նաև <http://www.gov.am/files/meetings/2009/3478.pdf>

սարդության ուխտագնացությունների կազմակերպում, հայոց պետականության ամրապնդման, ժողովրդագրության բարելավման և համազգային խնդիրների լուծման գործում սփյուռքահայերի մասնակցությունն ապահովելու համար բարենպաստ պայմանների ձևավորում¹:

Նման համակարգումը պատահական չէ, քանի որ ճիշտ նույն կերպ այն ձևակերպված է Նախարարության առջև ՀՀ նախագահի կողմից դրված երեք գերակա խնդիրներում՝ աջակցել հայապահպանությանը Սփյուռքում, հայտնաբերել ու համախմբել Սփյուռքի ներուժը, մշակել հայրենադարձությանը խթանող ծրագրեր, աջակցել ՀՀ-ում մշտական բնակություն հաստատելու ցանկություն հայտնաձև սփյուռքահայերին²:

Տարիների ընթացքում Նախարարությունը իրականացրել է ծավալուն աշխատանքներ գործունեության բոլոր գերակա ուղղություններով: Ընդհանուր առմամբ, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի և ՀՀ սփյուռքի նախարարության նպատակները և խնդիրներն ունեն զգալի հարազատություն՝ հայապահպանություն, ներուժի համախմբում և հայրենադարձության խթանում, ինչպես նաև կապերի ամրապնդում, տեղեկատվության փոխանակում և այլն:

Հայապահպանության ուղղությամբ Նախարարությունը կազմակերպել է սփյուռքահայ ուսուցիչների, կրթական ու համայնքային գործիչների ամենամյա ամառային դպրոցներ³, համայնքներին տրամադրել մեծաքանակ գրականություն (դասագրքեր և այլն)⁴ և նյութական ու մեթոդական ծավալուն օգնություն ցուցաբերել Սփյուռքի դպրոցներին⁵, հայրենիքում կազմակերպել հազարավոր հայ երիտասարդների հայրենաձանաչության «Արի տուն» ծրագիրը⁶, «Իմ Հայաստան» համահայկական մշակութային փառատոնը¹ և իրականացրել այլ կարևոր ձեռնարկներ:

¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը» (11 սեպտեմբերի 2008 թվականի թիվ 1049-Ն), I, 8:

² Տե՛ս «Հրանուշ Հակոբյանի ելույթը Լոս Անջելեսում «Հայաստան համահայկական հիմնադրամի» տարեկան ճաշկերույթի ժամանակ» (http://www.mindiaspora.am/am/Speeches_of_minister/652), «ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի ելույթը ՀՀ ԱԳՆ դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների ամենամյա հավաքին» (http://www.mindiaspora.am/am/Speeches_of_minister/18) և այլն: Տե՛ս նաև «ՀՀ սփյուռքի նախարարության գործունեության հինգ տարիները», Երևան, 2013, էջ 24:

³ Տե՛ս «ՀՀ սփյուռքի նախարարության գործունեության հինգ տարիները», էջ 142-146: Տե՛ս նաև ծրագրի պաշտոնական կայքը՝ www.dss.am

⁴ Տե՛ս «Հայրենիքն է կանչում. ՀՀ սփյուռքի նախարարությունը երեք տարեկան է», էջ 123, «ՀՀ սփյուռքի նախարարության գործունեության հինգ տարիները», էջ 333:

⁵ Տե՛ս «ՀՀ սփյուռքի նախարարության գործունեության հինգ տարիները», էջ 165-166:

⁶ Տե՛ս «Հայրենիքն է կանչում. ՀՀ սփյուռքի նախարարությունը երեք տարեկան է», էջ 102-103, «ՀՀ սփյուռքի նախարարության գործունեության հինգ տարիները», էջ 130-141: Տե՛ս նաև ծրագրի պաշտոնական կայքը՝ www.aritun.am

Սփյուռքի ներուժի համախմբման ուղղությամբ կազմակերպվել են համահայկական մասնագիտական համաժողովներ, որոնցից առավել ծավալուն են Ճարտարապետների համահայկական առաջին համաժողովը (2009), Իրավաբանների համահայկական առաջին համաժողովը (2009), Լրագրողների համահայկական համաժողովը (2010), Հայ բժիշկների համաժողովը (2011), Սփյուռքի կազմակերպությունների ներկայացուցիչների և համայնքների ղեկավարների համահայկական համաժողովը (2011)², Հայաստան-Սփյուռք հինգերորդ համաժողովը (2014)³ և այլն: Որպես կանոն, այդ համաժողովների արդյունքում ձևավորվել են համահայկական մասնագիտական ընկերակցություններ⁴:

Ինչ վերաբերում է հայրենադարձության գործընթացի խթանմանը, ապա Նախարարության կողմից մշակվել են «Հայրենադարձության գործընթացի կազմակերպման հայեցակարգ»-ի և «Հայրենադարձության մասին» ՀՀ օրենքի նախագծեր, որոնք համապատասխանաբար 2010 և 2011 թթ. արժանացել են ՀՀ կառավարության հավանությանը⁵: Բացի այդ, Նախարարությունը մեծապես աջակցել է ՀՀ-ում հաստատված իրաքահայերի և սիրիահայերի ինտեգրման խնդիրների լուծմանը՝ մշակելով առանձին ծրագրեր⁶:

Հարկ է նշել, որ Նախարարությունը հեռանկարում նախատեսում է հանդես գալ հայրենադարձության հարցերով հատուկ մարմնի՝ գործակալության ստեղծման առաջարկությամբ, որին փոխանցվելու է հայրենադարձության գործընթացի կազմակերպման գործառնությունը՝ Նախարարությանը վերապահելով ոլորտի օրենսդրության և հայրենադարձության խթանմանն ու

¹ Տե՛ս «ՀՀ սփյուռքի նախարարության գործունեության հինգ տարիները», էջ 157-161:

² Տե՛ս «Հայրենիքն է կանչում. ՀՀ սփյուռքի նախարարությունը երեք տարեկան է», էջ 133-150, «ՀՀ սփյուռքի նախարարության գործունեության հինգ տարիները», էջ 189-224:

³ Տե՛ս «Հայաստան-Սփյուռք 5-րդ համաժողով», (<http://www.mindiaspora.am/am/Conferences/3418>): Հետաքրքրական է, որ համաժողովը 5-րդ է կոչվել այն պատճառով, որ առաջինն է համարվել 1999 թ. տեղի ունեցած Հայաստան-Սփյուռք խորհրդաժողովը, որին հետևել են 2002 և 2006 թթ. երկրորդ և երրորդ համանուն խորհրդաժողովները: 2011 թ. Նախարարության կազմակերպած Սփյուռքի կազմակերպությունների ներկայացուցիչների և համայնքների ղեկավարների համահայկական համաժողովը համարվել է Հայրենիք-Սփյուռք 4-րդ համաժողով, ուստի 2014 թ. միջոցառումը դարձել է 5-րդ: Վերևում տեսանք, որ Հայրենիք-Սփյուռք առաջին համաժողովը տեղի է ունեցել 1980 թ.:

⁴ Տե՛ս «ՀՀ սփյուռքի նախարարության գործունեության հինգ տարիները», էջ 189:

⁵ Տե՛ս «Հայրենիքն է կանչում. ՀՀ սփյուռքի նախարարությունը երեք տարեկան է», էջ 126, «ՀՀ սփյուռքի նախարարության գործունեության հինգ տարիները», էջ 187-188, «Հայաստանի Հանրապետության օրենքը հայրենադարձության մասին» (<http://www.mindiaspora.am/am/Projects>):

⁶ Տե՛ս «ՀՀ սփյուռքի նախարարության գործունեության հինգ տարիները», էջ 178-188:

հայրենադարձների ինտեգրմանը միտված ծրագրերի մշակումը և իրականացման ընթացքի համակարգումը¹:

Սակայն կանոնադրային գործառույթներից բացի, ըստ «Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգ»-ի՝ Նախարարությանը վերապահված են այլ կարևոր գործառույթներ², որոնք ընդհանուր առմամբ արտաձված են Նախարարության կանոնադրային նպատակներից ու խնդիրներից:

Հայեցակարգը հինական շեշտադրումը կատարում է Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների զարգացման և գործակցության ամրապնդման վրա, որտեղ ամրագրված է. «Հայաստան-Սփյուռք գործակցությունը նպատակաուղղված է Հայրենիքում հաստատված կամ օտար երկրում բնակվող յուրաքանչյուր հայ մարդու՝ լեզվի, մշակույթի, դավանանքի, կրթության իրավունքների պաշտպանությանը..., նրա ինքնության պահպանությանը՝ հայապահպանությանը, ինչպես նաև Հայրենիքի ու Սփյուռքի միջև կապերի սերտացմանը»³:

Հստակեցված է նաև, թե Հայրենիք-Սփյուռք գործակցության զարգացման համար ինչ խնդիրներ պետք է իրականացվեն ՀՀ կառավարության կողմից.

1. *Հայ մարդու զարգացում*, որը նախատեսում է հայապահպանության քաղաքականության իրականացում, Սփյուռքի ներուժի հայտնաբերում և նպատակային կիրառում ի շահ Հայրենիքի ու Սփյուռքի, համահայկական միասնական տեղեկատվական միջավայրի ձևավորում, հայրենադարձությունը խթանող ծրագրերի իրականացում, արտերկրում հայկական կրթական համակարգի զարգացում.
2. *Սփյուռքի համայնքների զարգացում*, որը նախատեսում է նպաստել ու աջակցել տարբեր երկրներում հայկական համայնքների զարգացման համար բարենպաստ միջավայրերի ձևավորմանն ու զարգացմանը, համայնքների համախմբմանը, համայնքային ինքնակառավարման կառույցների ստեղծմանը և Հայրենիքի հետ կապերի ամրապնդմանը, ազգային մշակույթի ու ավանդույթների պահպանմանը, ինչպես նաև ներառել հայկական համայնքների շահերի պաշտպանության հարցերն այլ պետությունների հետ ՀՀ երկկողմ հարաբերությունների օրակարգում.
3. *Հայկական պետականության զարգացում*, որը նախատեսում է նպաստել առանձին պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ ՀՀ-ի նորանոր կապերի հաստատմանը և ամրա-

¹ Տե՛ս «Հայրենադարձության գործընթացի կազմակերպման հայեցակարգ», II, 2, 4; IV, 24, 11: Տե՛ս <http://www.mindiaspora.am/res/3.%20Iravakan%20akter/0.%20ALL/HayecakargHayren.Nor.doc>

² Տե՛ս «Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգ», էջ 23-26:

³ Նույն տեղում, էջ 19:

պնդմանը, հայկական պետականության ամրապնդման ու համագ-
գային խնդիրների լուծման հարցում սփյուռքահայերի արդյունավետ
մասնակցության միջավայրի ձևավորմանը, համախմբել ՀՀ-ի և
Մփյուռքի կարողություններն ու նպատակաուղղել համագգային
խնդիրների լուծմանը¹:

Ակնհայտ է, որ ՀՀ Մփյուռքի նախարարության գործառնությանը դաշտը
շատ ավելի հստակեցված է, ընդարձակ ու բազմակողմանի, որը բխում է
անկախ պետականության պայմաններում Մփյուռքի հետ աշխատանքների
կազմակերպման ազատությունից և երկուստեք կապերում գաղափարաբա-
նական ու քաղաքական սահմանափակումների բացակայությունից:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարող ենք արձանագրել, որ Հայրենիք-
Մփյուռք հարաբերությունների պատմության երկու կարևորագույն շրջա-
փուլերում այդ հարաբերությունները խարսխվել են համանման գերակա
նպատակների ու խնդիրների վրա, ինչպիսիք են դրանց աստիճանական ամ-
րապնդումն ու սերտացումը, Մփյուռքում հայապահպանությունը, մասնա-
գիտական ներուժի համախմբումը և հայրենադարձությունը խթանող միջո-
ցառումների իրականացումը:

**Арман Егиазарян – Приоритетные направления отношений
между Арменией и Диаспорой: от Комитета по культурным связям
с армянами Диаспоры до Министерства Диаспоры**

В истории взаимоотношений между Арменией и Диаспорой выделяются два основ-
ных периода: период деятельности Комитета по культурным связям с армянами Диаспо-
ры (основан в 1964 г.) и период деятельности Министерства Диаспоры Республики Ар-
мения (создано в 2008 г.). Основными задачами Комитета по культурным связям с армя-
нами Диаспоры были развитие отношений с Диаспорой, предоставление армянам
Диаспоры информации об образе жизни на Родине, о ее достижениях, науке и культуре,
распространение патриотизма в Диаспоре, предоставление гражданам Армении инфор-
мации о ситуации в общинах Диаспоры, об организациях и механизмах сохранения
национальной идентичности, а также о процессе развития отношений между Родиной и
Диаспорой. Основными же задачами Министерства Диаспоры Республики Армения
(создано в 2008 г.) являются развитие сотрудничества между Родиной и Диаспорой,
содействие идейному единству армян, содействие развитию образовательной,
научной, культурной, экономической и спортивной жизни Диаспоры, содействие фор-
мированию “Армянского мира”. Исследование показывает, что и Комитет, и Министер-
ство действовали в трех основных направлениях: сохранение национальной идентич-
ности среди армян Диаспоры; объединение профессионального потенциала Диаспоры;
осуществление проектов, способствующих репатриации.

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 19-21:

**Arman Yeghiazaryan – Priority directions of relations between
Armenia and the Diaspora from the Committee of cultural relations
with the Diaspora Armenians to the Ministry of Diaspora**

In the history of relations between Armenia and the Diaspora 2 main periods are featured: the activity period of the Committee for cultural relations with Diaspora Armenians (established in 1964) and the activity period of Ministry of Diaspora of the Republic of Armenia (established in 2008). The main objectives of the Committee for cultural relations with Diaspora Armenians were: developing the relations with the Diaspora, introducing the lifestyle of Homeland, its achievements, science and culture to the Diaspora Armenians, spreading patriotism in the Diaspora Communities, presenting the situation in the Diaspora communities to the citizens of Armenia, establishing institutions and mechanisms of preserving national identity, as well as the process of developing Homeland-Diaspora relations. The main objectives of RA Ministry of Diaspora are: developing cooperation between Armenia and the Diaspora, assisting the ideological unity of Armenians, contributing the development of educational, scientific, cultural, economic, youth and sportive life of the Diaspora, as well as promoting the formation of the “Armenian world”. The research shows that both the Committee and the Ministry acted in three main directions: preserving the national identity among Diaspora Armenians; uniting the professional potential of the Diaspora; implementing projects promoting repatriation.

ՀԱՅԱՆԶՈՒ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ

Բանալի բառեր – Ադրբեջան, տեղեկատվական անվտանգություն, հայալեզու լրատվություն, հակահայկական քարոզչություն, էլեկտրոնային լրատվամիջոցներ

Ժամանակակից «տեղեկատվական պատերազմ» հասկացությունը վերջին տասնամյակների «ձեռքբերում» է: Ամերիկացի մասնագետների կարծիքով, տեղեկատվական պատերազմը հնարավոր է դարձել «տեխնոլոգիական հեղափոխության» արդյունքում: Տեղեկատվական պատերազմի գործիքներն են տեղեկատվության մշակման մեթոդներն ու միջոցները¹, որոնք կիրառվում են հակառակորդի ռազմական և քաղաքացիական տեղեկատվական համակարգերի վրա լայնամասշտաբ, նպատակաուղղված, արագ և գաղտնի ազդեցություն թողնելու, ինչպես նաև հակառակորդի հասարակական գիտակցության և կարծիքի ձևավորման նպատակով:

Ադրբեջանի ներկայիս իշխանությունները Ղարաբաղյան հակամարտության հարցում մեծ նշանակություն են տալիս մեդիա ոլորտին և այն ակտիվորեն օգտագործում են իրենց հակահայկական գործունեության մեջ: Այս համատեքստում զանգվածային լրատվամիջոցները ժամանակակից տեղեկատվական պատերազմի իրականացման և դիմադրության ամենագորեղ միջոցներից են²: Սույն ոլորտի առյուծի բաժինը պատկանում է համացանցին: Հարկ է նշել, որ ադրբեջանական կողմի ջանքերն ուղղված են նաև հայկական տեղեկատվական սկզբնաղբյուրների հեղինակությունը նվազեցնելուն՝ միաժամանակ բարձրացնելով ադրբեջանական լրատվամիջոցների դերն ու «անաչառությունը»: Շատ հաճախ կարելի է լսել և կարդալ «ահաբեկչական», «ազդեցիկ», «զավթողական», «անհանդուրժող», «ազգայնական» և այլ նմանատիպ որակումներ հայերի և հայկական սկզբնաղբյուրների վերաբերյալ:

Ադրբեջանական քարոզչամեքենան ակտիվ գործունեություն է ծավալում բոլոր ասպարեզներում, սակայն այն ավելի շատ փորձում է տպավորություն ստեղծել, թե հասնում է որոշակի հաջողության: Ադրբեջանական քարոզչության հիմքում գերազանցապես խարսխված են կեղծիքը, հերյուրանքը, ան-

¹ Տե՛ս, **Гриняев С.**, Интеллектуальное противодействие информационному оружию, М., 1999, с. 10-11, <http://csef.ru/media/articles/1035/1035.pdf>

² Տե՛ս, **Դեմոյան Հ.**, «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի շուրջ քարոզչության և հակաքարոզչության կազմակերպման և իրականացման եղանակների մասին» // «Տարածաշրջան» տեղեկագիր, հատուկ թողարկում, Նորավանք ԳԿՀ, Երևան, 2005, էջ 52:

հիմն մեդադրանքները, ուռճացրած տվյալները և այլն, որոնք, ցավոք, արդեն դարձել են սովորական և վերածվել քարոզչության յուրահատուկ, ինքնատիպ «ոճի»: Այստեղ ակնհայտ զգացվում են հակահայկականություն, ատելություն, այլաստացություն, անհանդուրժողականություն: Ադրբեջանի իշխանությունները, գիտակցելով տեղեկատվության անասելի մեծ ազդեցությունը տարբեր հասարակությունների գիտակցության վրա, փորձում են բոլոր հնարավոր միջոցներով ազդել թե՛ իրենց հասարակության և թե՛ միջազգային հանրության վրա, ինչպես նաև հայ հասարակության առողջ գիտակցության վրա: Այս նպատակով նաև 2000-ական թթ. սկզբից Ադրբեջանում սկսեցին հիմնել հայալեզու կայքեր:

Ադրբեջանում հայերի և հայոց լեզվի վերաբերյալ հաճախ կիրառում են հետևյալ արտահայտությունը՝ «ընկերոջդ հետ մտերիմ եղի՛ր, իսկ թշնամուդ հետ ավելի մտերիմ եղի՛ր»: Այս կարգախոսով են առաջնորդվում հայոց լեզվին տիրապետելու կարևորության մասին բարձրաձայնող ադրբեջանցի հասարակական և քաղաքական գործիչները: Իրենք՝ ադրբեջանցիները ևս խոստովանում են, որ ամբողջությամբ չեն գիտակցում հայերենով տեղեկատվություն ապահովելու կարևորությունը: Սույն հարցի առջությամբ ադրբեջանական «ANN.az» կայքը փորձել է հարցում և ուսումնասիրություն իրականացնել անձամբ հեռուստատեսությունների ներկայացուցիչների շրջանում, թե արդյոք հեռարձակվում են հայալեզու հաղորդումներ, թե ոչ, քանի որ հեռուստատեսությունը և ռադիոն ևս կարևոր միջոց են տեղեկատվական պատերազմում:

Ադրբեջանական հեռուստաալիքների շարքում առաջիններից «ATV International»-ն է հայերենով հեռարձակել լրատվական հաղորդում¹: Այս հեռուստաալիքը, որն իր աշխատանքն սկսել է 2009 թ. հոկտեմբերի 5-ից, համարվում է «ATV» հեռուստաընկերության դուստր ընկերությունը: Ըստ նրա փոխնախագահ Նաթիգ Իբրահիմովի՝ հաղորդումները հեռարձակվելու էին վեց լեզվով, այդ թվում՝ հայերենով: Սկզբում հայտարարվում էր, թե հեռուստաընկերության ստեղծման նպատակն Ադրբեջանի ազգային փոքրամասնություններին իրենց լեզուներով հաղորդումներ ապահովելն է: Հետագայում արդեն ակնհայտ դարձավ, որ նրանց նպատակը տարբեր լսարաններում «հոգուտ Ադրբեջանի քարոզչություն իրականացնելն է»: Ներկայումս հեռուստաընկերությունը հայերեն հաղորդումներ չունի:

Հայերենով հեռուստահաղորդում հեռարձակող մյուս «Caspian International Broadcasting Company - CBC» հեռուստաալիքի գլխավոր տնօրեն Ազեր Խալիլովը հարցազրույց տալով «AzNews.az»-ին՝ հայտնել է, որ այն համարվում է Ադրբեջանի առաջին արբանյակային հեռուստաալիքը, որի թիրախն արտասահմանյան լսարանն է: Այն ստեղծվել է 2013 թ. ապրիլի 10-ին «ATV

¹ Azərbaycan tel ekanallarında erməni dilində veriliş , <http://ann.az/az/azerbaycan-telekanallarında-ermeni-dilində-veriliş/#.V0DSDvmLTIU>

International» հեռուստաալիքի հիման վրա և սկսել է իր հեռարձակումը որպես միջազգային ալիք: 2014 թ. մայիսի 9-ից հեռարձակվում է «ATV Plus» մալուխային հեռուստատեսության միջոցով: 2015 թ. օգոստոսի 9-ին եթեր է հեռարձակվել «CBC Sport» անվանումով դուստր ալիքը: Հայալեզու խմբագրության աշխատանքների հիմքում ընկած է «Հայաստանի կողմից Ադրբեջանի դեմ վարած զավթողական քաղաքականության վերաբերյալ իրական, անկողմնակալ և անաչառ տեղեկատվության ապահովումը»¹: Նրանց նպատակը հայալեզու լսարանին «արթնացնելն է խորը քննից» և «ճշմարտությունը» ներկայացնելը: Տնօրենը, անդրադառնալով հայալեզու հաղորդումների հետ կապված մի միջադեպի, հիշել է, որ դեռևս 2004 թ. մայիս ամսին զինադադարի համաձայնագրի տասնամյակի կապակցությամբ «BBC»-ի Կենտրոնական Ասիայի և Կովկասյան ծառայության կազմում ընդգրկված ռուսական խմբագրությունը ոչ ադրբեջանամետ հաղորդում էր պատրաստել, որի հեղինակն ազգությամբ հայ Մարկ Գրիգորյանն էր: Այն ժամանակ ըստ «ANS»-ի և «BBC»-ի միջև համագործակցության պայմանագրի, «BBC» ռադիոյի հաղորդումները վերահեռարձակվում էին: Հաղորդման եթեր դուրս գալուց հետո «ANS»-ը «BBC»-ին դիմեց, որպեսզի Մարկ Գրիգորյանին խմբագրությունից հեռացնեն: Մերժում ստանալով՝ «ANS»-ի կողմից կասեցվեց «BBC»-ի Կենտրոնական Ասիայի և Կովկասյան ծառայության ռուսական խմբագրության հաղորդումների հեռարձակումն Ադրբեջանում:

Արբանյակային հեռարձակում իրականացնող ադրբեջանական հեռուստաընկերություններից «Լիդերթիվի»-ն (Lider TV), «Խազարթիվի»-ն (Xazar TV), «Ազթիվի»-ն (AzTV), Հանրային հեռուստաընկերությունը երբեք չեն ունեցել հայերեն հաղորդումներ: Ավելին, «Խազարթիվի»-ի մամուլի խոսնակ Ազշին Քամալը նշում է, որ իրենց հեռուստաընկերությունն ունի առանձին հաղորդում արտասահմանյան նորությունների վերաբերյալ, որտեղ իրենք փորձում են տեղեկատվություն ապահովել կարևորագույն և թարմ իրադարձությունների մասին: Նա պնդում է, որ որևէ այլ լեզվով, հատկապես հայերենով հաղորդում հեռարձակվելու անհրաժեշտություն չկա, սակայն Հայաստանին վերաբերող լուրերը զգալի մաս են կազմում իրենց տեղեկատվական դաշտում: Իսկ Ադրբեջանի հանրային հեռուստաընկերությունում հայերեն հաղորդում չի եղել և հիմա ևս չկա:

Ադրբեջանական հեռուստաալիքներով հայերեն հաղորդումների հեռարձակումից տարիներ առաջ հայերեն հաղորդումներ հեռարձակվել են Ադրբեջանի պետական ռադիոյով՝ «Ադրբեջանի ձայնի» շրջանակներում: Հակիրճ անդրադարձ կատարելով հաղորդումների պատմությանը՝ նշենք, որ 1941 թ. օգոստոսի 18-ից Ադրբեջանական ԽՍՀ պետական ռադիոյով պարբերաբար հեռարձակվում էր «Բաքվի ձայն» հաղորդումը, իսկ 1950 թ. բացվել էր ար-

¹ CBC rəhbərindən Mirşahinə etiraz: “Azərbaycanlıları erməni dilində təbliğ edirik”, <http://www.aznews.az/index.php?c=news&id=54828>

տասահմանյան հաղորդումների խմբագրություն: Սկզբում այն հեռարձակվում էր ամեն օր և միայն ադրբեջաներենով՝ արտասահմանում բնակվող ադրբեջանցիների համար: 1959 թ. Ադրբեջանի ռադիոյով սկսեց հեռարձակվել նաև հաղորդում արաբերենով: Արդեն 1980-ական թթ. Ադրբեջանի՝ արտասահմանի համար հաղորդում հեռարձակող կառույցն ամեն օր հաղորդումներ էր հեռարձակում պարսկերեն, թուրքերեն, արաբերեն: 1992 թ. նոյեմբերի 26-ին խմբագրությունը վերանվանվում է «Ադրբեջանի միջազգային ռադիոյի», որը հաղորդումներ էր պատրաստում անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն, թալիշերեն, քրդերեն, լեզգիերեն, վրացերեն, ինչպես նաև հայերեն¹: Ներկայումս միջազգային ռադիոն ամեն օր եթեր է հեռարձակում մեկ ժամ տևողությամբ հայերեն հաղորդում, մինչդեռ, օրինակ, վրացերենով հաղորդումը հեռարձակվում է շաբաթը երեք անգամ՝ 20 րոպե տևողությամբ:

Ընդհանրապես, ադրբեջանական հասարակության մեջ հայոց լեզվով տեղեկատվություն ունենալու վերաբերյալ կարծիքները հակասական են: Կա կարծիք, որ հայալեզու լրատվական ծառայություն ունենալն այդքան էլ նպատակահարմար չէ, քանի որ հայերի մեծ մասը կարող է օգտվել ռուսալեզու կայքերից: Հարցը ժամանակ առ ժամանակ քննարկում են մեդիափորձագետները, տեղեկատվական կայքերի ղեկավարները, խմբագիրները:

Այսպես, «Trend» գործակալության գլխավոր տնօրենի տեղակալ Արզու Նադըրը հայտնել է, որ «ներկայումս ԼՂ տարածքում ապրող հայերի համար հասանելի են հեռուստաընկերությունները (ադրբեջանական – *Լ. Մ.*), ինչպես նաև սահմանակից շրջանների ռադիոալիքները»²: Նա խոստովանում է, որ «Trend»-ը մտադիր չէ հայերենով բաժին բացել, քանի որ արդեն ունի ռուսերեն ծառայություն, որից հայ հասարակությունը կարող է օգտվել: «Azadinform.az» կայքի գլխավոր խմբագիր Նիյազ Նիֆթիևը գտնում է, որ հայերենով կայքեր բաց անելն ինքնին դրական քայլ է: «Բայց կա մի հստակ փաստ. ես համաձայն չեմ այն կարծիքի հետ, որ հայալեզու կայքերի բացումից հետո հայերը ձեռք են բերելու ճշգրիտ տեղեկատվություն, որից ինչ-որ արդյունք կարող ենք ակնկալել: Սա սխալ մոտեցում է: Որքան մենք նրանց կհավատանք, նույնքան նրանք մեզ կհավատան»: Գրեթե նմանատիպ դիրքորոշում ունի նաև «Modern.az» կայքի գլխավոր խմբագիր Էլշադ Այվազլըն, որը պնդում է, որ այս հարցում պահանջվում են արհեստավարժ մասնագետներ, որպեսզի հայերի հետաքրքրությունը կայքի աշխատանքների հանդեպ մեծանա:

¹ https://az.wikipedia.org/wiki/Az%C9%99rbaycan_D%C3%B6vl%C9%99t_Radiosu

² http://www.sherg.az/site/id16946/Erm%C9%99nic%C9%99_x%C9%99b%C9%99r_yay%C4%B1m%C4%B1n%C4%B1n_%C3%BCst%C3%BCnl%C3%BCkl%C9%99ri_v%C9%99_probleml%C9%99ri...#.V2B7xLuLTIU

Հաշվի առնելով հայալեզու տեղեկատվական սկզբնաղբյուրների ստեղծման արդիականությունը և հասարակական հնչեղությունը՝ մի խումբ ադրբեջանցի մտավորականներ կազմակերպել են սեմինար-քննարկում, որին մասնակցում էին բուհերի դասախոսներ, լրագրողներ, մտավորականներ, ուսանողներ: Մասնակիցները փաստեցին, որ հայոց լեզվով հետաքրքրվողների կողմից ամենահաճախ հնչող հարցը հետևյալն է. «Ինչու էս սովորեմ հայերեն»: Երբեմն ծնողները թույլ չեն տալիս իրենց երեխաներին սովորել հայերեն: Հաճախ կարելի է լսել նաև հետևյալ արտահայտությունը՝ թշնամու լեզուն պետք է իմանալ:

Ադրբեջանցի մտավորականների մոտ արմատացած է այն կարծրատիպը, որ երբեք հայոց լեզուն չի կարելի սովորել «թշնամու հետ» հաշտվելու նպատակով, այլ ընդհակառակը. հայոց լեզվի իմացությունն անհրաժեշտ է ապագայում որևէ հնարավոր խոչընդոտի հանդիպելիս անհրաժեշտ հակահարված տալու համար:

Նշենք մի ուշագրավ փաստ. Բաքվի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի տարածաշրջանագիտություն բաժնում ուսանողներին հնարավորություն է ընձեռվում ընտրելու, թե որ լեզուն են ցանկանում ուսումնասիրել՝ հայերեն¹, թե՞ վրացերեն²: Ուսանողների մեծ մասը նախընտրում է սովորել վրացերեն, և դա կարելի է բացատրել մի քանի հիմնավորմամբ. նախ՝ ատելությունը հայերի հանդեպ երիտասարդների մոտ այնքան շատ է սերմանվել դեռ վաղ մանուկ հասակից, որ այն արգելակում է սովորել «թշնամու» լեզուն: Բացի այդ, շատերը չեն գիտակցում հայոց լեզվին տիրապետելու նպատակահարմարությունը և ավելորդ են համարում դրա վրա ժամանակ ու ռեսուրսներ վատնելը: Ոմանց համար նույնիսկ «ամոթ» է սովորել հայերեն:

Ադրբեջանի Միլլի մեջլիսի պատգամավոր Նիզամի Ջաֆարովը հայոց լեզվի մասնագետների առկայությունը համարում է անհրաժեշտություն. «Հայերեն սովորելու նպատակն անհրաժեշտ տեղեկություն ձեռք բերելն է, որոշակի հետազոտություններ անցկացնելը: Այս գործընթացը պետք է վաղուց սկսվեր: Խորհրդային շրջանում մասնագետները շատ էին: Կարծում եմ, որ եթե այս գործով արդյունավետ զբաղվենք, կունենանք արհեստավարժ մասնագետներ: Հայերի շրջանում շատ կան թյուրքական լեզուներին տիրապետողներ: Բացի այդ, շատ կարևոր է հայկական հնագույն սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը, որոնք հայերը աշխարհին աղավաղված են ներկայացնում»²:

Ուշագրավ է, որ ադրբեջանական «Analoq.az» կայքը սկսել է հատուկ ծրագիր, որով իր ընթերցողներին հայոց լեզու է սովորեցնում³: Կայքի խմբագիր Մավալան Թալբլըն խոստովանում է, որ հայերը փայլուն տիրապետում

¹ Qafqaz xalqlari tarixi kafedrası, http://history.bsu.edu.az/az/content/qafqaz_xalqlari_tarx_kafedrası

² <http://olaylar.az/news/siyaset/53118>

³ Gelin ermenice oyrenek, <http://analoq.az/armenian/2921-gelin-ermenice-oyrenek-ders-1.html>

են ադրբեջաներենին և իրենց դեմ կիրառում իրենց գիտելիքները¹: Ընդ որում, դասերը հեռարձակվում էին ամեն օր վերոնշյալ կայքով՝ սկսած 2016 թ. մայիսից:

Ադրբեջանում քննակվում է անգամ «Qarabağ TV» հեռուստաընկերության ստեղծումը, որի գաղափարն առաջին անգամ առաջ է քաշել պատգամավոր Ֆլորա Գասրմովան: Նա առաջարկում է այն հեռարձակել մի քանի լեզվով, այդ թվում՝ հայերեն, «քանի որ ներկայումս Հայաստանի երիտասարդ սերունդն անտեղյակ է Ղարաբաղի մասին իրականությանը»²: Մինչդեռ Ադրբեջանի Ազգային հեռուստատեսության և ռադիոյի խորհուրդն այս հարցում շտապողականություն չի ցուցաբերում: Խորհրդի մտտեցմամբ, ներկայումս Ադրբեջանում կան բազմաթիվ հեռուստատեսային և ռադիո ալիքներ, պարբերականներ, որոնք Ղարաբաղի մասին անհրաժեշտ տեղեկատվություն են ապահովում:

Ադրբեջանում հայերենի մասնագետների առկայության կարևորությունը գիտակցող ադրբեջանցի մտավորականներից առանձնացնենք նաև Հաթեմ Ջաբարլըին, ով հեղինակել է ադրբեջանցիների համար նախատեսված «Հայոց լեզու» դասագիրքը, որը լույս է ընծայել 2015 թ. Ադրբեջանի նախագահին կից Եվրասիայի անվտանգության և ռազմավարական հետազոտությունների կենտրոնը³: Այն բաղկացած է չորս բաժնից՝ հնչյունաբանություն, ձևաբանություն, բառակազմություն և շարահյուսություն: Գրքի խմբագրական կազմի գնահատմամբ, այն կարևորվում է Ադրբեջանի «անվտանգության տեսանկյունից, հայկական պնդումներին հստակ պատասխանելու, հայկական քարոզչությունը կանխելու, Հայաստանի ներքին քաղաքականության մասին լայնածավալ տեղեկություն տարածելու առումով⁴, գիրքը նաև հնարավորություն կտա օգտվելու հայկական լրատվամիջոցներից և հղում կատարել անհրաժեշտության դեպքում հենց հայկական կայքերին»⁵:

Ինչ վերաբերում է ադրբեջանական հայալեզու տեղեկատվական կայքերին, ապա մանրամասն անդրադարձ կատարելով դրանց՝ փաստենք, որ կարելի է դրանք բաժանել երկու խմբի՝ կայքեր, որոնց ադրբեջանական լինելն ակնհայտ է (Armenia.az, 1905.az, apa.az, cbc.az և այլն), և կայքեր, որոնք առա-

¹ Onlayn ermənicə dəsləri təşkil olunacaq, <http://karabakhmedia.az/main/5972-onlayn-ermenic-desrleri-teshkil-olunacaq.html>

² GECİKMİŞİK: “İDMAN AZƏRBAYCAN” OLSUN, NİYƏ “QARABAĞ TV” OLMASIN?
http://www.sherg.az/site/id-9856/Gecikmi%C5%9Fik:_%E2%80%9C%C4%B0dman_Az%C9%99rbaycan%E2%80%9D_olsun,_niy%C9%99_%E2%80%9CQaraba%C4%9F_TV%E2%80%9D_olmas%C4%B1n?#.V3bKAfmLTIU

³ Azərbaycanca ilk dəfə “Erməni dili” adlı tədris vəsaiti nəşr edilib, <http://metbuat.az/news/222081/azerbaycanda-ilk-defe-ermeni-dili-adli-tedris-vesaiti-nesr-e.html>

⁴ Azərbaycanca ilk dəfə “Erməni dili” kitabı nəşr edildi,
<http://ann.az/az/azerbaycanda-ilk-defe-ermeni-dili-kitabi-nesr-edildi/#.V3a-sPmLTIU>

⁵ <http://sam.az/articles/view/sam-azerbaycanda-ilk-defe-ermeni-dili-adli-tedris-vesaiti-nesr-etdirmis-dir/>

ջին հայացքից ադրբեջանական սկզբնաղբյուրի տպավորությունն չեն թողնում (hayatsk.info, www.virtualkarabakh.org (com/net/co.uk/az), www.karabakh-info.com և այլն): Սույն երևույթի ամենամեծ բացասական կողմն այն է, որ հաճախ հայկական սփյուռքի և ոչ միայն սփյուռքի ներկայացուցիչներն օգտվում են սույն կայքերից՝ տեղյակ չլինելով, որ դրանք ապատեղեկատվություն են տարածում և ունեն թաքնված հակահայկական ուղղվածություն: Հատկապես վերջին շրջանում ադրբեջանցիները կատարելագործել են իրենց հայերենի գիտելիքները և գրում են գրեթե առանց սխալների ու վրիպակների: Ի դեպ, հայկական հասցեով առաջին ադրբեջանական կայքը «khronika.am» կայքն էր, որը բավականին պասիվ էր, հաճախ չէր թարմացվում և, ի վերջո, հայկական կողմի ջանքերով փակվեց¹: Դրանից հետո երկար ժամանակ հայկական դոմենով կայքեր չէին գրանցվում:

Տեղեկատվական պատերազմում ընդհանրապես կարևորվում է օտար լեզուներով տեղեկություն տարածելը: Ադրբեջանի պարագայում օտար լեզուներով տեղեկատվություն ապահովելու հիմնական նպատակը «հայկական սփյուռքի հակաադրբեջանական սև փիարի դեմ» պայքարելն է, ինչպես նաև՝ միջազգային հանրությանը «ճշգրիտ, օբյեկտիվ» տեղեկություններ տրամադրելը: Այսօր արդեն Ադրբեջանում բազմալեզու կայքերի թիվն աստիճանաբար ավելանում է, որոնք ադրբեջաներենից բացի ունեն նաև ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, արաբերեն, պարսկերեն, հայերեն և այլ բաժիններ: Օրինակ, «Azertag.az»-ն իր նյութերը կայքում գետեղում է յոթ լեզվով, «Trend.az» տեղեկատվական գործակալությունը և «Azvision.az» պորտալը՝ վեց լեզվով, «Karabakhinfo.com» կայքը՝ տասը, «Apa.az»-ն՝ չորս լեզվով, «Report.az»-ը՝ երեք լեզվով և այլն:

Հայացք նետելով հայալեզու ադրբեջանական կայքերին՝ նախ ըստ ժամանակագրության անդրադառնանք «Armenia.az» կայքին, որն իր գործունեությունը սկսել է 2010 թ. մարտի 1-ից: Նրա ղեկավար «News.az» կայքի գլխավոր խմբագիր Էլնուր Բախմովը փաստում է, որ այս կայքը որևէ միջազգային կազմակերպության նախագիծը չէ, այլ իր սեփական նախաձեռնությունն է: Նա խոստովանում է, որ իրենք որոշել են հայերին տեղեկություն տրամադրել նրանց իսկ լեզվով՝ հաշվի առնելով, որ ռուսալեզու տեքստերը հասանելի են ոչ բոլոր հայերին, ինչը, ի դեպ, ադրբեջանցիների «հանդուրժողականություն» դրսևորումն է²: Ըստ Բախմովի, իրենց համար բավականին լուրջ խնդիր է եղել հայերենի իմացությամբ մասնագետներ գտնելը, քանի որ նրանց քանակը խիստ սահմանափակ է: Նա անգամ ծրագրել է մասնագետներ ներգրավել Հայաստանից՝ լրագրողներ, քաղաքագետներ և հիմնել իրենց թղթակցությունը նույնիսկ Հայաստանում: Ուշագրավ է, որ ներկայացնելով

¹ Ադրբեջանական կեղծ կայքերն ու մեդիաանվտանգության կանոնները, <http://armeniatv.am/hy/57524-57524>

² Azerbaycanda ermenice sayt, <http://mid.az/news/4335-azjrbaycanda-ermjini-saytd.html>

կայքի գործունեության նպատակը՝ շեշտը դրվում է ոչ թե ազգամիջյան ատելության վրա, այլ «երկխոսության» համար ուղիների որոնման. «Կարծում ենք, որ արդեն վաղուց է եկել հակամարտությունից երկխոսության անցնելու, երկու ժողովուրդների միջև մերձեցման ուղիներ փնտրելու ժամանակը»¹: «Armenia.az» կայքն ունի նաև ռուսերեն տարբերակ և բաղկացած է առանձին բաժիններից, սակայն այնտեղ գերակշռում են Հայաստանին, Լեռնային Ղարաբաղին վերաբերող նյութերը: Կայքը նախատեսել է բացել նաև հայալեզու համացանցային ռադիո, որն Ադրբեջանի վերաբերյալ տեղեկատվությունից բացի ադրբեջանական երգ ու երաժշտություն ևս կներկայացնի:

«Virtual Qarabağ» հաղորդակցության տեխնոլոգիաների կենտրոնը ստեղծվել է Իլհամ Ալիևի՝ 2011 թ. հուլիսին ստորագրած հրամանագրով հաստատված «Ադրբեջանի երիտասարդությունը 2011-2015 թթ.» ծրագրի շրջանակներում, որի նպատակներից մեկը Ղարաբաղի տարածաշրջանի վերաբերյալ «անաչառ» տեղեկատվության տարածումն է: Կենտրոնի պաշտոնական կայքը՝ «www.virtualkarabakh.az»-ն է, միաժամանակ՝ org/com/net/co.uk տարբերակներով²: Էլեկտրոնային սկզբնաղբյուրում տեղ են գտնում ֆոտո և տեսանյութեր, էլեկտրոնային գրքեր, փաստաթղթեր, վերլուծություններ, համացանցային խաղեր, ցուցահանդեսներ, այլ կերպ ասած՝ Ղարաբաղի վերաբերյալ գրեթե ամեն ինչ: Կայքը տեղեկություն է տարածում ադրբեջաներեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, թուրքերեն:

«Կարաբախ.ինֆո» (Karabakhinfo.com) միջազգային էլեկտրոնային ամսագրի նպատակը ևս Ղարաբաղն է: «Նպատակն է» դրդել 2012 թ. ապրիլի 10-ին Ադրբեջանում «Քաղաքացիական զարգացմանն աջակցող ասոցիացիայի» նախագահ, Ադրբեջանի խորհրդարանի պատգամավոր Էլիսան Սուլեյմանովին, որպեսզի նա հանդես գա վերոնշյալ միջազգային էլեկտրոնային ամսագրի ստեղծման նախաձեռնությամբ: Կայքը ներկայանում է տասը լեզվով՝ ադրբեջաներեն, անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն, իտալերեն, ռուսերեն, թուրքերեն, գերմաներեն, արաբերեն և հայերեն:

«Iravan.com» կայքը, բացի Ղարաբաղյան թեմաներից, ակտիվորեն անդրադառնում է նաև Հայաստանի ներքին հիմնախնդիրներին: Նրա լրգոն և անվանումը (խոսքը Երևան բառի մասին է «Իրավան» տարբերակով) արդեն վկայում են դրա ադրբեջանական լինելու մասին, որտեղ շեշտվում է ադրբեջաներենով ստտածիգ-«չմոռացանք» բառը: Այստեղ հստակ երևում են Բաքվի տարածքային նկրտումները նույնիսկ Հայաստանի մայրաքաղաք Երևանի նկատմամբ, որը նրանք ներկայացնում են որպես «պատմական ադրբեջանական տարածք»: Կայքի լեզուներն են ադրբեջաներենը, ռուսերենը, անգլերենը և հայերենը, բացի այդ ունի նաև առանձին բաժիններ՝ «Իրավան»,

¹ Armenia.Az. լուրեր Ադրբեջանից՝ հայերենով, <http://armenia.az/page/about/>

² Layihə haqqında, <http://www.virtualkarabakh.az/read.php?lang=1&id=53#.V3V8RfmLTIU>

քաղաքականություն, մշակույթ, փաստաթղթեր, գրադարան: Վերջինս հագեցած է հակահայկական քարոզչություն պարունակող գրքերով¹:

«Cbc.az» ադրբեջանական կայքը (համանուն հեռուստաընկերության մասին վերնում խոսվել է) ներկայանում է հինգ լեզվով՝ ադրբեջաներեն, անգլերեն, ռուսերեն, հայերեն, պարսկերեն: Այն բավականաչափ հարուստ լրատվություն ունեցող կայք է՝ առանձին բաժիններով և ենթաբաժիններով, որի առանձնահատկությունն այն է, որ ունի նաև տեսանյութեր, որոնք հեռարձակվում են նաև հայերենով, ինչպես նաև ունի առցանց ուղիղ հեռարձակում²:

«Azvision.az» ադրբեջանական կայքը, որն Ադրբեջանում համարվում է «անկախ» լրատվական կառույց, ունի իր առանձին բաժինները՝ քաղաքականություն, տնտեսություն, մշակույթ, գիտություն և այլն: Այն ունի հայերեն բաժին ադրբեջաներեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն, գերմաներեն բաժիններին զուգահեռ³:

Վերոշարադրյալ կայքերից իր ոճով տարբերվում է «1905.az» (1905.az) կայքը, որի անվանումն արդեն «խորհրդանշական է» և մատնացույց է անում ադրբեջանցիների «ցեղասպանության տարեթիվը»: Նրա գլխավոր էջում աչք է զարնում Հեյդար Ալիևի հետևյալ մեջբերումը. «Մեծ Հայաստան» ստեղծելու երազանքից ոգևորված հայ զավթիչները 1905-1907 թթ. Ադրբեջանցիների հանդեպ բացահայտ լայնածավալ արյունալի ակցիաներ են իրագործել: Հայերի Բաքվից սկիզբ առած գազանություններն ընդգրկել են Ադրբեջանը և ներկայիս Հայաստանի տարածքում եղած ադրբեջանական գյուղերը...»: Կայքի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ բացի ակնհայտ հակահայկական տրամադրությամբ լի ապատեղեկատվություն ապահովելուց, այնտեղ զետեղված են նաև առանձին փաստաթղթեր, քարտեզներ, հրատարակություններ, ինչպես նաև նկարագրված են Արցախի Հանրապետության վարչական տարածքները՝ ադրբեջանական անվանումներով: Սույն կայքը հարուստ է նաև իր լեզվական տարբերակներով՝ ադրբեջաներեն, գերմաներեն, արաբերեն, չինարեն, հայերեն, պարսկերեն, անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն, իսպաներեն, վրացերեն և թուրքերեն⁴:

2016 թ. ապրիլի սկզբին դարաբաղաադրբեջանական գորքերի շփման գծում Ադրբեջանի կողմից սանձազերծված լայնածավալ ագրեսիայի արդյունքում սկսված քառօրյա պատերազմն ավելի մեծացրեց և հրատապ դարձրեց տեղեկատվական դաշտում գրագետ մարտավարություն վարելու անհրաժեշտությունը: Իրենց շահերը յուրովի մեկնաբանող ադրբեջանական մամուլի ներկայացուցիչները որոշեցին ավելացնել իրենց հայալեզու կայքե-

¹ <http://iravan.com/books/index>

² <http://cbc.az/az/live>

³ Haqqımızda, <http://en.azvision.az/about.php>

⁴ <http://1905.az/hy/>

րի քանակը և հարստացնել դրանց բովանդակությունը: Այսպես, ապրիլի վերջին ադրբեջանական «APA» տեղեկատվական գործակալությունը բացեց հայերենով լրատվության ծառայություն՝ ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, արաբերեն տարբերակներին զուգահեռ: Այս նախաձեռնության նպատակն է «ներկայացնել Ադրբեջանում, Հարավային Կովկասում տեղի ունեցող իրադարձությունները, ինչպես նաև՝ Ադրբեջանի դեմ Հայաստանի վարած զավթողական քաղաքականությունը»¹, և որ ամենակարևորն է՝ ԼՂ հակամարտության վերաբերյալ ընթերցողներին հայերենով տրամադրել «ճշմարիտ» տեղեկություններ: Ըստ «APA Holding»-ի տնօրեն Վյուսալե Մահիրզադի՝ «ռազմաճակատում տեղի ունեցած վերջին դեպքերը մեզ ստիպեցին տեղեկությունները նաև հայերենով ներկայացնել: Հայերեն բաժին ստեղծելու գաղափարը վաղուց էր հասունացել, սակայն իրադարձությունների ընթացքն այդ արագացրեց»²: Նա փաստում է, որ այդ նպատակով Թուրքիայից մասնագետներ են ներգրավվել: «Ադրբեջանում հայոց լեզվին փայլուն տիրապետող ընդամենը մի քանի մասնագետ կա: Մենք նրանց հետ աշխատում ենք: Միաժամանակ մեզ հետ կհամագործակցեն նաև հայերենին այս կամ այն չափով տիրապետող լրագրողներ, հետազոտողներ, թարգմանիչներ»,- հավելել է նա: Նշենք, որ «APA Holding»-ին պատկանող «APA» տեղեկատվական գործակալությունը ստեղծվել է 2004 թ.³:

Ադրբեջանական հայալեզու կայքերից, թերևս, նորագույնը «Hayatsk.info»-ն է, որը ևս կարելի է համարել 2016 թ. ապրիլյան պատերազմական գործողությունների «արգասիքը»: Այն իր գործունեությունը սկսել է 2016 թ. հունիսի 7-ից: Կայքի հայերեն անվանումն արդեն վկայում է այն մասին, որ դրա գործունեության նպատակը հայ հասարակության կարծիքի և գիտակցության վրա ազդելն է առանց տեղեկացնելու կայքի՝ ոչ հայկական լինելու փաստի մասին: Այն համարվում է «Azvision» ծրագրի բաղկացուցիչ մասը, որի գլխավոր խմբագիր Վյուսալ Մամեդովը «Hayatsk.info»-ի հիմնումը մեկնաբանում է երկու տեսանկյունից. նախ՝ հայալեզու հայկական տեղեկատվական սկզբնաղբյուրները համարվում են «ապատեղեկատվություն», որոնք տարածում են բացառապես «սուբյեկտիվ, հակաադրբեջանական» լուրեր: Բացի այդ, ադրբեջանցիները հաշվի են առել այն, որ Ղարաբաղում ապրող հայերը «Ադրբեջանի քաղաքացիներ են, և նրանց համար ևս Ադրբեջանը պետք է ապահովի անաչառ տեղեկատվություն իրենց մայրենի լեզվով»:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ադրբեջանական հակահայկական տեղեկատվական գործունեությունը ընդլայնվում է ու զարգանում, և վերջին

¹ Azərbaycanca erməni dilində sayt fəaliyyətə başladı, <http://metbuat.az/news/435669/azerbaycanda-ermeni-dilinde-sayt-fealiyyete-basladi.html>

² BİZƏ LAZIMDIR Kİ..., http://www.sherg.az/site/id-16991/Biz%C9%99_laz%C4%B1md%C4%B1r_ki...#.V2B9CruLTIU

³ Azərbaycanca erməni dilində sayt fəaliyyətə başladı, http://axsam.az/site/?name=xeber&news_id=50533

շրջանում այն հարստացել է նաև ի հաշիվ հայալեզու լրատվամիջոցների: Անժխտելի է, որ այս ոլորտ են ուղղվում զգալի ֆինանսական և մարդկային ռեսուրսներ: Անհերքելի է նաև, որ ադրբեջանական տեղեկատվական համակարգը, մասնավորապես՝ հակահայկական քարոզչությունը ղեկավարվում է կենտրոնացված ձևով, վերահսկվում և ուղղորդվում է այդ երկրի նախագահի աշխատակազմի կողմից:

Այս ամենը հաշվի առնելով՝ ավելի են կարևորվում ադրբեջանական տեղեկատվական համակարգի բազմակողմանի, խոր ուսումնասիրությունը, մշտադիտարկումն ու վերլուծությունը: Ադրբեջանական իշխանությունները՝ հանձինս երկրի նախագահի և նրա շրջապատի, լրջագույնս վերահսկում են լրատվամիջոցների գործունեությունը՝ այն ծառայեցնելով բացառապես իրենց շահերին, միաժամանակ ատելություն սերմանելով հայերի և Հայաստանի նկատմամբ:

Лилит Мовсисян – Армяноязычные СМИ в Азербайджане

В статье представлены армяноязычные средства массовой информации в Азербайджанской Республике, в том числе теле- и радиопрограммы. Антиармянская пропаганда ведется в разных сферах общественной деятельности, в первую очередь в информационном поле. В последнее время особенно активны азербайджанские электронные СМИ на армянском языке, в которых антиармянская пропаганда носит особо острый характер. В статье анализируются цели и виды их деятельности. Деятельность СМИ в Азербайджане находится под непосредственным контролем азербайджанских властей, а в случае с армяноязычными СМИ этот контроль ощущается особенно сильно. В статье отдельно рассматривается реакция армяноязычных электронных СМИ на апрельские 4-дневные военные действия на линии соприкосновения карабахско-азербайджанских вооруженных сил.

Lilit Movsisyan – Armenian Mass Media in Azerbaijan

The article presents Armenian mass media in the Republic of Azerbaijan, including television and radio programs. Anti-Armenian propaganda is carried out in different fields of social activity, primarily in the field of information. Recently Azerbaijani electronic media are especially active in the Armenian language, where the objectives and the types of their activities are being analyzed. Media activity in Azerbaijan is under the direct control of the Azerbaijani authorities, and the control is even stronger on the Armenian media. The article particularly touches upon the response of Armenian electronic media about the April's four-day military operations along the contact line between Nagorno-Karabakh Defence Army and Azerbaijani Armed forces.

ԱՐՏԱՇԵՍ ԱԲԵՂՅԱՆ. ՄԵԾ ԲԱՆԱՍԵՐՆ ՈՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉԸ

Բանալի բառեր – Արտաշես Արեղյան, Գևորգյան ճեմարան, Ներսիսյան դպրոց, գիտամանկավարժական գործունեություն, Բեռլինի համալսարան, Գերմանա-հայկական ընկերություն, Երկրորդ համաշխարհային պատերազմ, Բեռլինի Հայոց ազգային խորհուրդ, Հայկական լեզու

Խորհրդային Միության փլուզմամբ և Հայաստանի Հանրապետության անկախության վերակերտմամբ ստեղծված բարենպաստ պայմանները հնարավորություն ընձեռեցին վերաարժևորել մշակութային և քաղաքական այնպիսի դեմքերի գործունեությունը, որոնք գործում էին վտարանդիության մեջ և խորհրդային գրաքննության ու տաբուների պատճառով հանիրավի մոռացության էին մատնվել հայրենիքում: Այդպիսին է նաև հասարակական գործիչ, բանասեր, մանկավարժ և թարգմանիչ Արտաշես Արեղյանը, որի ստեղծագործական և հասարակական-քաղաքական հսկայածավալ գործունեությունը դեռևս գիտական ուսումնասիրման և գնահատանքի չի արժանացել:

Արտաշես Գաբրիելի Արեղյանը ծնվել է 1878 թ. հունվարի 1-ին (հին տոմարով՝ 1877 թ. դեկտեմբերի 19-ին) Նախիջևան գավառի Աստապատ (Թագազյուղ, Թագաքենդ) գյուղում: Արեղյանները XIX-XX դդ. Նախիջևան գավառի նշանավոր տոհմերից էին¹: Ա. Արեղյանի հավաստմամբ՝ տոհմի նախահայրը եղել է Պետրոսը, որը հավանաբար ապրել է XVIII դարում և հենց այդ ժամանակ ստացել Ադրեղ մականունը կամ ծաղրանունը, քանի որ նրա ընչացքներից մեկը եղել է սև, իսկ մյուսը՝ սպիտակ (թուրքերեն՝ «ադ»): Դա նկատի առնելով՝ համազյուղացիները նրան անվանել են «Ադ-բեղ», իսկ գերդաստանը՝ «Ադբեղենք»: Այս անվանումը «բարեփոխվելով»՝ հետագայում ձևավորել է Արեղյան ազգանունը²:

1884-1887 թթ. ընկած ժամանակահատվածում Ա. Արեղյանը, որին մանուկ հասակում Մկրտիչ էին անվանում, սովորել է հայրենի գյուղի ծխական դպրոցում: Հետագայում նա գրել է. «Տարիներ հետո, երբ ինձ համար ծննդյան վկայական պիտի հանեինք, նոր երևաց, որ ինձ մկրտող քահանան Արտա-

¹ Տե՛ս Այվազյան Ա. Ա., Նախիջևան, պատկերագրող բնաշխարհիկ հանրագիտակ, Երևան, 1995, էջ 216-217:

² Տե՛ս Արեղեան Ա. Գ., Տոհմագրություն և ինքնակենսագրություն, գրի է առնվել 1945 թ., Ռոթվայլ, Վյուրթեմբերգ:

շես է մակագրել անունս իր մատյանում, իսկ ծնողներս Մկրտիչ են կոչել հանգուցյալ հորեղբորս պատվին»¹:

Աբեղյանների ընտանիքում կրթության հարգը գիտեին, և ինչպես Ա. Աբեղյանն է նշել, «ամենքը դպրոց հաճախած են, գրի սև ու սպիտակին ծանոթացած»²:

1887-1890 թթ. նա ուսումը շարունակել է Շուշիի թեմական դպրոցում: Ապագա բանասերի ու մանկավարժի կյանքում և մասնավորապես դաստիարակության գործում մեծ դեր է ունեցել նրա հորեղբայրը՝ մեծանուն լեզվաբան-գրականագետ Մանուկ Աբեղյանը, որին Արտաշեսի հայրը հանձնարարել էր հոգ տանել որդու ուսման մասին: Մ. Աբեղյանը, որն այդ տարիներին ուսուցիչ էր Թիֆլիսի Հովնանյան օրիորդաց դպրոցում, 1890 թ. պատանի Արտաշեսին ընդունել է տալիս Ներսիսյան դպրոց, որտեղ նա ուսանում է 1890-1895 թթ. և ընկերների հետ ստեղծում է «Հայկազյան ընկերություն» աշակերտական գաղտնի խմբակը: Այս կերպ սկիզբ են առնում նրա առնչություններն ազգային խնդիրներին:

Արդեն Գևորգյան ճեմարան տեղափոխված Մ. Աբեղյանը Ներսիսյան դպրոցը բարձր առաջադիմությամբ ավարտած եղբորորդուն հրավիրում է Էջմիածին: Հայաստանի ամենաերևելի կրթական հաստատությունում՝ Սուրբ Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, Ա. Աբեղյանը 1895-1899 թթ. աշակերտում է այնպիսի մեծությունների, ինչպիսիք էին Մ. Աբեղյանը (հայոց լեզու, հայ գրականության պատմություն), բանաստեղծ Հովհ. Հովհաննիսյանը (անտիկ, եվրոպական և ռուս գրականություն, ռուսաց լեզու), Գարեգին արեղա Հովսեփյանը (հայկական մատենագրություն), Ստ. Կանայանցը (հայոց պատմություն, համաշխարհային պատմություն, գերմաներեն), Պերճ Պռոշյանը, Ստեփան Մալխասյանցը և ուրիշներ: Գևորգյան ճեմարանի ուսումնառատ մթնոլորտը բարերար ազդեցություն է ունենում պատանի Արտաշեսի հետաքրքրությունների և անհատականության ձևավորման վրա, ինչն ակնառու է հետագայում լույս տեսած նրա մի շարք ստեղծագործություններում:

Գևորգյան ճեմարանն ավարտելուց հետո Ա. Աբեղյանին հրավիրում են Շուշի, որտեղ շուրջ մեկ տարի նա հայոց լեզու է դասավանդում թեմական դպրոցում: Ուսումնաստենչ և աշխատասեր զարմիկը հորեղբոր հետևությամբ զբաղվում է բանահավաքությամբ: 1899 թ. նա մոկաց և արարատյան բարբառներով գրի է առնում հայկական ժողովրդական էպոսի երկու տարբերակ, որոնք տպագրվում են նախ «Ազգագրական հանդեսում»³, այնուհետև՝

¹ Նույն տեղում:

² Նույն տեղում:

³ Տե՛ս **Աբեղեան Ա.**, «Մասնայ ծոեր» // «Ազգագրական հանդես», գիրք VII-VIII (Թիֆլիս), 1901, *նույնի՝* «Թլուստ Դաւիթ» // Նույն տեղում, գիրք IX, 1902:

առանձին գրքով¹: Նա, փաստորեն, հայկական էպոսի արարատյան բարբառով տարբերակի առաջին հրատարակիչն է²: Այս ժամանակաշրջանում նա գրի է առել նաև աշուղական և հայ ժողովրդական երգերի ու հանելուկների մի փունջ, որը տպագրվել է Թիֆլիսում հրատարակվող «Լուսն» ամսագրում³:

Այսուհանդերձ, իր ստացած կրթությունն Ա. Աբեղյանը թերի է համարել, ուստի 1900 թ. սեպտեմբերին Կարապետ Տեր-Մկրտչյանի միջնորդությամբ և մի քանի գերմանացի գիտնականների նյութական օժանդակությամբ մեկնել է Գերմանիա, ուսանել Մարբուրգի, Բեռլինի և Լայպցիգի համալսարանների պատմաաստվածաբանական և փիլիսոփայական մասնաճյուղերում (1900-1904 թթ.), որտեղ, բացի գերմաներենից, յուրացրել է նաև մի քանի արևելյան հին լեզուներ⁴:

Գերմանիայում ստացած ուսումնառության առնչությամբ նա իր ինքնակենսագրությունում հետագայում գրել է. «Գերման համալսարաններում աշակերտած եմ մի շարք յայտնի գիտնականների՝ Վունդտ, Դամպերլսե, Հառնակ, Ներման, Էդ. Մեյեր, Յուլիուսեր, Գուրե և այլն: Մասնակցած եմ ուսանողական ընկերությունների, յաճախած եմ պրոֆեսոր Ռադեի հաւաքոյթներին՝ իր տանը և ուրիշ համախմբումների»⁵:

1904 թ. Ա. Աբեղյանը ավարտել է Մարբուրգի համալսարանը՝ ստանալով փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան: Այդ ատենախոսությունը նվիրված էր Աստվածաշնչի հին հայերեն թարգմանությանը, որի առաջին մասն առանձին գրքով 1906 թ. լույս տեսավ գերմաներեն⁶: Այդ առնչությամբ Բոսթոնի «Հայրենիք» շաբաթաթերթը գրել է. «Այդ ամփոփ, բայց հմտալից գործով հեղինակը, խղճատորէն քննութեան կենթարկէ զանազան պարագաներն ու այդ օրուայ տարապայման կացութիւնը, որոնք ծնունդ տուած են մեր թարգմանական գրականութեան փառքը հանդիսացող գործին՝ հայերեն Աստուածաշունչին»⁷:

Գերմանիայում ուսանելու տարիներին Ա. Աբեղյանը շարունակում էր թղթակցել «Լուսն», «Արարատ» հանդեսներին՝ հրատարակելով գրախոսություններ և թարգմանություններ: Իր 20-ամյա հիմնավոր ուսումնառության վերաբերյալ նա հետագայում գրել է. «Էջմիածնի ճեմարանից յետոյ, ուր առել

¹ Տե՛ս **Աբեղեան Ա.**, Ժողովրդական վէպ, Թիֆլիս, 1902:

² Տե՛ս **Բախչինյան Հ.**, Արտ. Աբեղյան // **Գյոթե Յ. Վ.**, Թատերգություններ, թարգմանիչ՝ Արտ. Աբեղյան, Երևան, 1995, էջ 272:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս **Ղազարյան Խ.**, Բարենորոգչական նախաձեռնությունները Հայ Առաքելական եկեղեցում 19-րդ դարի վերջին քառորդին և 20-րդ դարի առաջին կեսին, Ս. Էջմիածին, 1999:

⁵ Տե՛ս **Աբեղեան Ա.**, Տոհմագրություն և ինքնակենսագրություն:

⁶ **Abeghian A.**, Zur Entstehungsgeschichte der altarmenischen Bibelübersetzungen, 1906, Marburg.

⁷ «Հայրենիք», 1955, մայիսի 18: Նշենք, որ այս շաբաթաթերթը հետագայում դարձավ օրաթերթ: Կա նաև նույնանուն ամսագիր:

եմ հիմնական կրթութիւնս, եւ որն իր խոր դրոշմն է դրել իմ դաստիարակութեան եւ բնավորութեան վրա, Ներսիսեան դպրոցը, ուր նախապէս սովորել եմ որոշ տարիներ և մանավանդ յետոյ պաշտօնավարել երկար ժամանակ, կազմում են իմ կեանքի գլխավոր հանգրուաններից մէկը: Գերմանիայում անցկացրած ուսանողական տարիներս, որ նմանապէս իրենց դրոշմը դրին ինձ վրայ, լրացրին եւ ամբողջացրին իմ ուսման եւ դաստիարակութեան գործը»¹:

Գերմանիայից Ա. Աբեղյանը մեկնել է Սանկտ Պետերբուրգ, որտեղ 1905 թ. հունվար-օգոստոս ամիսներին նշանավոր հայագետ Նիկողայոս Մառի ղեկավարությամբ և հանձնարարությամբ աշխատել է Ասիական թանգարանում: Այնուհետև նա վերադարձել է Թիֆլիս և լծվել մանկավարժական, բանասիրական, թարգմանչական և հասարակական գործին:

1905-1919 թթ. Ա. Աբեղյանը զբաղվել է ուսուցչությամբ և տարբեր պատասխանատու պաշտոններ վարել Ներսիսյան դպրոցում (1913-1915 թթ.՝ փոխտեսուչ), Հովնանյան օրիորդաց դպրոցում (հոգաբարձուների խորհրդի փոխնախագահ) և պետական գիմնազիաներում²: Այս հաստատություններում նրա մշակած կրթաեղանակով դասավանդվում են հայոց լեզու, գերմաներեն, կրոնի պատմություն և աշխարհագրություն: Ա. Աբեղյանն անդամակցում է նաև Կովկասի մի շարք հայկական կազմակերպությունների և ընկերությունների վարչական մարմիններին, «Նոր դպրոց» մանկավարժական հանդեսի խմբագրական կազմին (1908-1913), թղթակցում Թիֆլիսի «Ազգագրական հանդես», «Հառաջ», «Հորիզոն» (1905-1918) և այլ պարբերականների, հանդես գալիս նաև հրապարակային դասախոսություններով³:

1905 թվականից Ա. Աբեղյանն անդամակցել է Հայ հեղափոխական դաշնակցությանը, սակայն ժամանակակիցների վկայությամբ՝ եղել է «կուսակցության գործուն կյանքեն հեռու»:

Բեղուն է այդ տարիների նրա թարգմանչական, մանկավարժական և գիտական գործունեությունը: 1905-1906 թթ. նրա թարգմանությամբ Թիֆլիսում լույս են տեսել գերմանացի նշանավոր տնտեսագետ, սոցիոլոգ Վերներ Ջոմբարտի երկու ուսումնասիրությունները⁴, որոնցից մեկի կապակցությամբ «Մուրճի» թղթակիցը գրել է. «Պ. Արտաշէս Աբեղեան, ինչպես երևում է, թարգմանչական ձիրք ունի: Բնագիրը հայերէնացրած է, իսկ հայերէնը՝ կանոնաւոր»⁵:

¹ **Աբեղեան Ա.**, Տոհմագրութիւն և ինքնակենսագրութիւն:

² Տե՛ս Արտ. Աբեղյանի դատեր հեղինակված Արտ. Աբեղյանի կենսագրականը // Հայկականություն-Արիականություն, Երևան, 2001, էջ 107:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս **Ջոմբարտ Վ.**, Թե ինչո՞ւ մեր օրերում ամենքին հետաքրքրում են տնտեսական և սոցիալ-քաղաքական հարցեր, Թիֆլիս, 1905, *նույնի՛* Բանուորական հարց, Թիֆլիս, 1906:

⁵ «Մուրճ», 1905, թիվ 10, էջ 154:

1906 թ. Ա. Աբեղյանը Թիֆլիսում հրատարակել է նաև իր «Դեմոկրատական ընտրություններ» գրքույկը¹, որը Ռուսաստանի պատմության ամենաբախտորոշ ժամանակաշրջաններից մեկում, երբ ամեն գնով ճնշվում էր ռուսական առաջին հեղափոխությունը, ներկայացնում էր նոր կյանք կառուցելու հիմքը՝ ժողովրդավարությունը: Այսպես կատարված սա շատ համարձակ քայլ էր, եթե նկատի առնենք, որ Ռուսաստանը, ինչպես Ա. Աբեղյանն էր նշում, «արյունոտ ռեակցիայի մեջ էր»²:

1908 թ. Ա. Աբեղյանը ճամփորդել է Արևմտյան Եվրոպայում (Գերմանիա, Բելգիա, Հոլանդիա, Շվեյցարիա) և Թուրքիայում, իսկ Թիֆլիս վերադառնալուց հետո՝ 1909 թ. հունվարին, ամուսնացել ջալալօղլեցի (Ստեփանավան) կալվածատիրոջ դստեր՝ Նատալյա Իսրայելյանի հետ, ունեցել երկու զավակ՝ Վաչե և Ռուզան անուններով:

1909 թ. լույս է տեսել մոտավորապես 10 հազար բառ և ուղղագրական կանոններ պարունակող՝ Ա. Աբեղյանի կազմած «Ուղղագրական բառարանը» (որպես ուսումնական օժանդակ ձեռնարկ), որը դրվատանքի է արժանացել հայ մանկավարժության նահապետ Ղազարոս Աղայանի կողմից: Շահեկան որոշ դիտողություններ անելուց հետո նա հաջողություն է մաղթել իր երիտասարդ գործընկերոջը, որը, նրա կարծիքով, «ըստ ամենայնի ուղիղ շաղի վրայ է կանգնած մայրենի լեզվի ուսուցման վերաբերությամբ»³: Այս աշխատանքը չորս անգամ վերահրատարակվել է և մինչև այսօր չի կորցրել իր գործնական նշանակությունը: Նա Մ. Աբեղյանի և Մամբրե Մատենձյանի հետ մեկտեղ ձեռագիր տպատառերով կազմել և հրատարակել է «Գրագետ» վերնագրով ուղղագրական հոդվածների երեք պրակները⁴, որոնք հետագայում ունեցել են մի քանի հրատարակություններ:

1907-1914 թթ. Ա. Աբեղյանը լույս է ընծայել նաև աշխարհագրության դասագրքեր և ձեռնարկներ⁵: Աշխարհագրության բնագավառում Արտ. Աբեղյանի կատարած հսկայական աշխատանքը XIX դարավերջի և XX դարասկզբի հայ իրականության մեջ բացառիկ երևույթ էր, քանզի այդ ժամանա-

¹ 1917 այն վերահրատարակվել է «Ժողովրդավարական ընտրություններ» վերնագրով:

² Տե՛ս **Աբեղյան Ա.**, «Դեմոկրատական ընտրություններ», 1906 թ., Թիֆլիս:

³ «Մուրհանդակ», 1909, թիվ 27:

⁴ Տե՛ս **Աբեղյան Մ., Աբեղյան Ա., Մատենձյան Մ.**, Գրագետ: Ուղղագրական ձեռագիր յօդուածներ, Թիֆլիս, 1908:

⁵ Տե՛ս **Աբեղյան Ա.**, Աշխարհագրութեան դասագիրք (ըստ Բվանովի, Կրուբերի և ուրիշների), մաս 1-3, Թիֆլիս, 1907-1913, *նույնի՛* Հայրենագիտութեան ուսուցումը. ուղեցոյց դասատուների համար, Թիֆլիս, 1910, *նույնի՛* Աշխարհագրական գրոյցներ, Թիֆլիս, 1912, *նույնի՛* Հայաստանի աշխարհագրութիւն (այստեղ հեղինակը գուգակցել է Հայաստանի հին ու նոր պատմական աշխարհագրությունը, առաջին անգամ օգտագործել է գունավոր քարտեզներ), Թիֆլիս, 1914, *նույնի՛* Հայաստանի մեծադիր քարտեզ ըստ Լինչի և Օսվալդի (գունավոր տպագրությամբ), Թիֆլիս, 1914, *նույնի՛* Հայաստանի և դրացի երկրների քարտեզ ըստ Լինչի և Օսվալդի, Թիֆլիս, 1915:

կահատվածում մենք բավական սակավաթիվ աշխարհագրագետներ ենք ունեցել: Հայաստանի «Աշխարհագրության դասագիրքը» և «Հայաստանի մեծադիր քարտեզն ըստ Լինչի և Օսվալդի» բարձր գնահատականի են արժանացել մամուլում և ունեցել են հինգ հրատարակություն: Այդ մասին դրվատանքի խոսքեր է ասել հայ պատմագիտության ռահվիրան՝ Լեոն. «Այս քարտեզում նկատում է շատ ճաշակաւոր դասաւորում և նուրբ գննողական կարողութիւն, որը եւ տուել է մի շատ վայելուչ ամբողջականութիւն: Նա ամենալիակատարն է մինչեւ այժմ լոյս տեսածներից ունի իր մէջ շատ մանրամասնութիւններ: Այսպէսով՝ հայրենագիտութեան համար մենք մի գեղեցիկ ձեռնարկ ունինք, և որքան նա շատ տարածուի, այնքան այդ հանգամանքն ապացոյց կը դառնայ, թէ մենք աւելի պարտաճանանչ ենք դառնում մեր հայրենիքի վերաբերմամբ»¹:

1918 թ.՝ Հայաստանի անկախացումից հետո, Ա. Աբեղյանը Թիֆլիսից գալիս է Երևան՝ նպատակ ունենալով իր իմացությունը ծառայեցնել մանուկ հանրապետության ձևավորման և կայացման գործին²: Նա ընտրվում է Հայաստանի Հանրապետության խորհրդարանի անդամ, խորհրդարանի դաշնակցական պատգամավորական խմբի ղեկավար: Սակայն, էությունը գրչի մարդ լինելով, նա չէր կարող կտրվել գիտական և գրական աշխատանքից, ուստի շարունակում է հրապարակախոսական հոդվածներ տպագրել Երևանի «Հառաջ» պարբերականում: Ժամանակակիցներից Խոսրով Թյունջյանը «Ազդարար» հանդեսում հետագայում գրել է. «Ա. Աբեղյանի ներկայությունը քաղաքական ասպարեզի մէջ թյուրիմացություն մըն էր, և առաւել իր մասնակցութիւնը Երևանի արտակարգ դատարանի կազմին 1920-ի մայիսի բոլշեւիկեան խռովութիւնները զսպելու համար»³:

Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման օրը՝ դեկտեմբերի 2-ին, Ա. Աբեղյանը մի քանի ընկերների հետ միասին մեկնում է Թիֆլիս, առժամանակ հաստատվում այնտեղ, իսկ երբ 1921 թ. փետրվարի 25-ին խորհրդայնացվում է նաև Վրաստանը, Բաթումով անցնում է Կ. Պոլիս և կրկին լծվում մանկավարժական, գիտական և թարգմանչական աշխատանքին: Այնտեղ նա դասավանդում է Եսայան օրիորդաց վարժարանում (1921-1922 թթ.), դասախոսություններով հանդես գալիս Կեդրոնական վարժարանում՝ նյութ դարձնելով կովկասահայ զարթոնքը, թատրոնը, գրականությունը, ինչպես նաև Հայաստանի բնաշխարհն ու նրա հարստությունները, լուսաբանում է Դորպատի համալսարանի դերն ազգային վերածննդի գործում, անդրադառնում Խ. Աբովյանին, Մ. Նալբանդյանին, Ռ. Պատկանյանին, Ավ. Ահարոնյանին, Հովհ. Թումանյանին, Ավ. Իսահակյանին: Ժամանակակիցները ասում էին, որ «Կեդրոնականի նրա դասախոսություններին այնքան

¹ «Հորիզոն», 1914, թիվ 134:

² Տե՛ս **Բախչինյան Հ.**, նշվ. աշխ., էջ 276:

³ «Ազդարար» (Բեյրութ), 1955, թիվ 162:

մարդ էր ներկա լինում, որ ամենամեծ դահլիճը անգամ նեղություն էր անում»¹:

Կ. Պոլսում՝ Արևմտահայ մշակութային կենտրոնում, Ա. Աբեղյանն արևմտահայերենով վերահրատարակում է «Ընդհանուր աշխարհագրություն» և «Հայաստանի աշխարհագրություն» դասագրքերը, թղթակցում «Ճակատամարտ» թերթին, որի «Արծիվ գրատուն» տպարանում 1922 թ. լույս է ընծայում ռուս արձակագիր Ա. Կուպրինի «Սուլամիթ» վիպակի բարձրարժեք վարպետությամբ կատարված թարգմանությունը²:

1922 թ. աշնանն Ա. Աբեղյանն ընտանիքով վերջնականապես տեղափոխվում է Գերմանիա, բնակություն հաստատում Բեռլինի Շառլոտենբուրգ թաղամասում³ և իր գլխավոր առաքելությունը համարում գերմանացիներին ներկայացնել Հայաստանը, հայոց պատմությունը և հայ մշակույթը՝ իրավամբ ստանձնելով այն դերը, որը Ֆրանսիայում իրականացնում էր Արշակ Չոպանյանը:

Գերմանիայում բնակության առաջին տարիները այդքան էլ դյուրին չէին Ա. Աբեղյանի և նրա ընտանիքի համար, քանզի 1922-1923 թթ. Գերմանիան գտնվում էր տնտեսական լուրջ ճգնաժամի մեջ: Ա. Աբեղյանը փորձում էր իր սոցիալական ծանր վիճակը հարթել՝ թղթակցելով «Հայրենիք» թերթին: Հետագայում իր ինքնակենսագրությունում նա այսպես ներկայացրեց այդ իրավիճակը. «Հայրենիք» թերթից ստանում էի 15-20 դոլար: Եկամուտը թեև չնչին էր, սակայն հնարավոր էր ապրել»⁴:

Չնայած սոցիալ-տնտեսական ծանր պայմաններին՝ իր գործի անխոնջ նվիրյալ Ա. Աբեղյանը Գերմանիայում նոր թափով է շարունակում իր գիտական գործունեությունը: 1922-1924 թթ. նա վերապատրաստում է անցնում Բեռլինի իր ուսանած համալսարանում: 1925 թ. նա դիմում է Պրուսիայի կրթական նախարարին՝ առաջարկելով Բեռլինի համալսարանին կից Արևելյան լեզուների սեմինարում (Seminar für Orientalische Sprachen) բացել հայագիտության ամբիոն⁵: Նրա դիմումը պաշտպանում են մի քանի անվանի գիտնականներ: Դրական պատասխանը չի հապաղում, և Ա. Աբեղյանը նշանակվում է հայերենի դասախոս: Հարկ է նշել, որ 1926-1945 թթ.՝ Բեռլինի համալսարանում աշխատելու տարիներին, Ա. Աբեղյանի կողմից պատրաստվում են մի շարք գերմանացի հայագետներ, որոնք միաժամանակ հայամետ

¹ Բախչինյան Հ., նշվ. աշխ., էջ 276-277:

² Տե՛ս Կուպրին Ա., Սուլամիթ, ռուսերեն բնագրեն թարգմանեց Ա. Աբ., Կ. Պոլիս, 1922: Տե՛ս նաև երկրորդ հրատարակությունը՝ Սելանիկ, 1931:

³ Շառլոտենբուրգը մինչև 1920 թ. եղել է առանձին քաղաք, իսկ դրանից հետո դարձել է Բեռլինի թաղամաս և հայտնի է, որպես ռուսական վտարանդիության կենտրոն: Հենց այս թաղամասում է 1921 թ. Սողոմոն Թեհլերյանը վրեժխնդիր եղել հայ ժողովրդի դահլիճ Թալեաթից:

⁴ Աբեղյան Ա., Տոհմագրություն և ինքնակենսագրություն:

⁵ Տե՛ս Բախչինյան Հ., նշվ. աշխ., էջ 277:

և հայասեր մարդիկ էին (Գունտեր Ռայխենկրոն, Հայնրիխ Շեդեր, Եչկե և այլք):

Ա. Աբեդյանը մեծ հեղինակություն էր վայելում Գերմանիայի թե՛ հայկական և թե՛ գերմանական շրջանակներում, և հենց նրա դիմումի համաձայն՝ 1928 թ. Բեռլինի քաղաքային վարչությունը քաղաքի նորաբաց փողոցներից մեկը անվանակոչեց «Armenische Straße» («Հայկական փողոց»), որտեղ կենտրոնացված էին հայկական դպրոցները, տպարանները, հայ գաղութային միության և հայ մշակույթի կենտրոնները:

Ա. Աբեդյանը մեծ նվիրումով ու եռանդով ներգրավված էր Գերմանիայի հայ գաղութի կյանքում տեղի ունեցող իրադարձություններին և աշխատանքներին: Ժամանակակիցներից Արշակ Սարգսյանը գրում էր. «Պեռլին՝ Ա. Աբեդյանի փոքր բնակավայրը, հավաքատեղի մըն էր, կենտրոնավայր մը, այդ փոքրիկ գաղութին մեջ հայութեան ոգին վառ պահողը Աբեդյանն էր»¹: Ա. Աբեդյանը տարիներ շարունակ եղել է Գերմանիայի Հայ գաղութային միության վարչության անդամ կամ նախագահ: Նա նաև ջերմ հայասեր Յոհաննես Լեփսիուսի հիմնադրած Գերմանա-հայկական ընկերության փոխնախագահն էր, իսկ 1937-1944 թթ. դոկտոր Պաուլ Ռոհրբախի հետ միասին խմբագրել է այդ ընկերության՝ գերմաներեն հրատարակվող «Հայաստան» պարբերականը²:

Ա. Աբեդյանի մեծ հեղինակության վառ վկայությունն էր նաև նրա անդամակցությունը Գերմանիայի գրողների միությանը: Այդ տարիներին նա թղթակցել է գերմանական մի շարք ամսագրերի՝ գրելով հայ ժողովրդական ավանդությունների, բանահյուսության, երգահանների, հայ-գերմանական մշակութային հարաբերությունների մասին, ներկայացրել Հայաստանի գիտական հիմնարկները, գերմաներեն թարգմանել հայ գրականության լավագույն նմուշներից, որոնց մի մասը տպագրել է գերմանական մամուլում: Նա հայերենից գերմաներեն է թարգմանել և հրատարակել հայ հեղինակների արձակ գործերն ամբողջացնող «Armenische Erzählungen» («Հայկական պատմվածքներ») վերնագրով մի հատընտիր, որն առ այսօր անտիպ է: Գերմաներեն է թարգմանել նաև հայ ժողովրդական հեքիաթներն ամփոփող «Հայկական ժողովրդական բանահյուսություն» ժողովածուն, որում զետեղել է թե՛ հայ միջնադարյան բանահյուսությունը և թե՛ հեղինակային նմուշները, հեղինակել «Հայկական պատմվածքի անթոլոգիա» աշխատությունը: Այս մեծածավալ աշխատությունները ևս մնացել են անտիպ: Միաժամանակ, Ա. Աբեդյանը հայերեն է թարգմանել գերմանական գեղարվեստական գրականության որոշ լավագույն նմուշներ³:

¹ «Հայրենիք», 1955, մայիսի 18:

² Տե՛ս **Բախչինյան Հ.**, նշվ. աշխ., էջ 278:

³ Տե՛ս **Գյոթե Յ. Վ.**, Ընտիր երկեր, վեց հատոր, Կահիրե, 1953, *նույնի՛* Թատերգություններ, թարգմանիչ՝ Արտ. Աբեդյան, Երևան, 1995:

1936 թ. «Արևելյան լեզուների սեմինարի դասագիրք» շարքով գերմաներեն լույս է տեսել Ա. Աբեղյանի՝ «Նոր հայերենի քերականություն» ձեռնարկը, որը նախ համառոտ ներկայացնում է հայոց լեզվի և գրականության պատմությունը, ապա՝ արևելահայերենի և արևմտահայերենի (սեղմ՝ նաև գրաբարի) քերականությունը¹: Գիրքը, որտեղ զետեղված են նաև ծաղկաքաղ-ընթերցարան և հայերեն-գերմաներեն ընդարձակ բառարան, համարվել է «հայ լեզուի առձեռն համայնագիտակ»²: Սակայն, դժբախտաբար, այս գրքի տպաքանակի մեծ մասը, ինչպես նաև հայերեն-գերմաներեն երկհատոր ընդարձակ՝ հազար էջանոց բառարանը³, որի մեկ երրորդը նույնիսկ տպագրվել էր, այլ ձեռագրերի հետ մեկտեղ ոչնչացան Լայպցիգի և Բեռլինի օդային ուժերի թռիչքի ժամանակ: Այդուհանդերձ, Ա. Աբեղյանը չընկճվեց և շարունակեց ստեղծագործել և թարգմանել:

1940 թ. Բեռլինում գերմաներեն լույս տեսան Ա. Աբեղյանի «Հայ ժողովրդական էպոսը» և «Հայաստանը 1940 թ.» աշխատությունները⁴: Այդ տարիներին նա համագործակցում է նաև “F. A. Brockhaus” հրատարակչության հետ և Հայաստանին ու հայությանը նվիրված հոդվածներով հանդես գալիս համանուն նշանավոր հանրագիտարանի էջերում:

Ա. Աբեղյանի հասարակական-քաղաքական գործունեության ամենակարևոր փուլն առնչվում է Գերմանիայի պատմության այն ժամանակաշրջանին, երբ իշխանության դեկր նացիստների ձեռքում էր: Այս ժամանակահատվածում Ա. Աբեղյանի ծավալած գործունեությունը, որը բախտորոշ նշանակություն ունեցավ հայության մի ստվար զանգվածի համար, դեռևս պատշաճ գնահատանքի չի արժանացել: Նա և նրա համախոհները հսկայածավալ աշխատանքի միջոցով պատնեշեցին Գերմանիայում ծայր առած հակահայկական տրամադրությունները:

1933 թ. Գերմանիայում իշխանության եկած նացիոնալ-սոցիալիստների ծավալած հակահրեական լայնածավալ գործընթացներին զուգահեռ երկրում նաև հակահայկական շարժում սկսվեց⁵: Հերթական դեկրետը ծանուցեց, որ բոլոր ոչ արիական հավաքականությունները՝ գլխավորապես սեմական ժողովուրդները, այդ թվում՝ հայերը, որոնք, իբր թե, ցեղակցական ընդհանրություններ ունեն հրեության հետ, պետք է հեռանան Գերմանիայից:

Հակահայկական շարժումը սկսում էր թափ հավաքել: Տպագրվում էին բազմաթիվ հոդվածներ, որտեղ հայերը համարվում էին հրեական ծագում

¹ Տե՛ս **Abeghian A.**, Neuarmerische Grammatik, Lehrbücher des Seminars für orientalische Sprachen, Berlin-Leipzig, 1936 (2012 թ. այն վերահրատարակվել է Բոննի համալսարանի կողմից):

² «Բազմավեպ», 1937, թիվ 2-5, էջ 110:

³ Տե՛ս **Abeghian A.**, Deutsch-Armenisches Wörterbuch, Berlin, 1944:

⁴ Տե՛ս **Abeghian A.**, Das armenische Volksepos, Berlin, 1940, *idem* : Armenien 1940, Berlin, 1942:

⁵ Տե՛ս **Բախչինյան Հ.**, Արտաշես Աբեղյանի կյանքի ժամանակը // «Գարուն», 1995, թիվ 7, էջ 67:

ունեցող ոչ արիական ժողովուրդ, որը զգալի ներդրում է ունեցել համայնավարության տարածման և բոլշևիկյան վարչակարգի հաստատման գործում: Վկայակոչվում էին հայերի և հրեաների զանազան «ընդհանուր հատկանիշներ» և նույնիսկ նշվում էր նրանց պատմական ճակատագրերի միանմանության մասին¹: Եթե այդ տեսակետը հաստատվեր, ապա հրեաների նման հայերը ևս դատապարտված կլինեին ոչնչացման²:

Գերմանիայում բնակվող 5000-7000 հայերը, անակնկալի եկած, չգիտեին իրենց անելիքը: Առաջին քայլը ձեռնարկեց Ա. Աբեդյանը, ով, մոտ լինելով միջազգային ճանաչում գտած գերմանացի գիտնականների, պատմաբանների և մշակութային գործիչների հետ, օգտագործելով հայ-գերմանական կապերն ու մշակութային միությունների հնարավորությունները, անմիջապես կազմակերպեց հանդիպումներ՝ վիճարկելով հակազիտական այդ տեսակետը: Նման վտանգավոր մտայնության տարածման և խորացման առաջն առնելու համար «Գերմանական առաքելություն Արևելքում» կազմակերպության պարբերականներում մեկը մյուսի էտևից հրատարակվում էին ծավալուն ուսումնասիրություններ հայ ժողովրդի պատմական անցյալի և ազգաբանական, կրոնական ու լեզվամշակութային առանձնահատկությունների վերաբերյալ, որոնցով հիմնավորվում էր նրա պատկանելությունը արիական ռասային³: Զուգահեռաբար վկայակոչվում էին նաև անցյալի ականավոր գիտնականների՝ Կարլ Ֆրիդրիխ Նոյմանի, Հայնրիխ Հյուբշմանի, Յոզեֆ Մարկվարտի և այլոց հետազոտություններն ու տեսակետները հայ ժողովրդի մասին⁴: Այդ պարբերականներից մեկում լույս տեսած «Հայերը հրեաներ չեն» կոչում գերմանացի մի շարք հեղինակներ փաստում էին, որ հայերը հնագույն քրիստոնյա ժողովուրդ են և իրենց ծագումով հնդգերմանացիներ են: Նաև նշվում էր, որ ով պաշտպանում է այդ թյուր պնդումը, դրսևորում է պատմության անբավարար իմացություն և ստորացնում է մի ժողովրդի, որը դեռ համաշխարհային պատմական առաքելություն ունի Արևելքի ապագայի հարցում⁵:

Այլ գաղափարակից կազմակերպությունների, մասնավորապես Գերմանա-հայկական ընկերության հետ սերտ համագործակցությամբ ամիսներ շարունակ ծավալվող այդ գրապայքարը, որում ներգրավվեցին նաև գիտական, կրոնական և քաղաքական հեղինակություններ, այդ թվում Կ. Ֆ. Լեհման-Հաուպտը, Պ. Ռոհրբախը, Յ. Ռիխտերը, Մաքսոնիայի դուքս ֆոն Մաքսը, Յ. ֆոն Լեերսը և այլք, հասավ իր ցանկալի նպատակին. գերմանական լրատվամիջոցներում հայերի և հրեաների ռասայական նույնացմանը միտող

¹ Տե՛ս Die Armenier – keine Juden // “Orient im Bild”, 1933, S. 32:

² Տե՛ս **Балаян Д.**, 60 лет тому назад // «Юсисапайл», М., 2002, № 125, с. 6:

³ Տե՛ս **Հայրունի Ա.**, Յոհաննես Լեփսիուսի առաքելությունը, Երևան, 2002, էջ 463:

⁴ Տե՛ս Rassentum der Armenier // “Der Orient”, 1933, S. 65-66:

⁵ Տե՛ս Die Armenier – keine Juden, S. 32:

քարոզարշավը դադարեց, և 1933 թ. հուլիսի 3-ին Գերմանիայի ՆԳ նախարարի հրամանագրով, «Մասնագիտական ծառայության վերականգնման օրենքին համապատասխան»՝ հայ անունը (Armenien) զետեղվեց արիական ցեղերի անվանացանկում (ի դեպ՝ այբբենական կարգով գրավելով առաջին տեղը)¹: Այդ ցանկերը բաժանվեցին ոստիկանատներին և ներքին գործոց նախարարության հրամանով հայերին՝ որպես արիացիների, տրվեցին հատուկ վկայագրեր, որոնք անձեռնմխելիության երաշխիք դարձան²: Այս հրամանագրից հետո մամուլում դադարեց հակահայկական հողվածների լույսընծալը:

Այս հաղթանակը մեկընդմիջտ ապահովագրելու և հետագայում այլևայլ նենգափոխումների և կեղծումների հնարավորությունը բացառելու նպատակով 1934 թ. սկզբին Բեռլինի Գերմանա-հայկական ընկերությունը (նախագահ՝ Պ. Ռոհրբախ, փոխնախագահ՝ Ա. Աբեղյան) Պոտսդամում Ա. Աբեղյանի նախաձեռնությամբ և անմիջական ջանքերով գերմաներեն հրատարակեց «Armeniertum-Ariertum» («Հայկականություն-Արիականություն») ժողովածուն: Գիրքը բովանդակում է Եվրոպայի մի շարք նշանավոր գիտնականների և հանրային գործիչների (Հանս Հայնրիխ Շեդեր, Յոհաննես ֆոն Լեերս, Կառլ Ռոթ, քահանա Գերհարդ Քլինգե, Էվալդ Շթիռ, Եոզեֆ Ստրիժիգովսկի, ֆոն Մաքս, Ռիխարդ Շեֆեր, Պաուլ Ռոհրբախ) ուսումնասիրությունները՝ նվիրված հայ ժողովրդի և հայկական մշակույթի պատմությանը: Հողվածների հեղինակները տարբեր տեսանկյուններից հիմնավորում էին հայերի արիական ծագումը: Ինքը՝ Բեռլինի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ Ա. Աբեղյանը, այս ժողովածուում հանդես է եկել «Նորդիկ տիպեր Հայոց մեջ» հողվածով³: Գիրքն արագորեն տարածվեց Գերմանիայով մեկ և անմիջական ազդեցություն ունեցավ:

Բայց ահա մի քանի տարի անց՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի հենց սկզբին, հայերի արիական ծագումը կրկին կասկածի տակ դրվեց: Գերմանական շատ թերթեր արդարացնում էին 1915 թ. հայկական կոտորածները, նացիստական մարդաբանական գիտությունը հայերին նորից դատում էր ոչ արիական ժողովուրդների շարքում: Բեռլինում պաշտոնապես հայտարարում էին, որ հայերն անցել են Գերմանիայի թշնամիների կողմը և այլն: Վտանգված էր Գերմանիայի, ինչպես նաև նրա ռազմակալած երկրների շուրջ կես միլիոն հայության գոյությունը: Բուլղարիայում, Ռումինիայում և այլ երկրներում հակահայկական տրամադրություններ էին իշխում: Բուլղարական որոշ թերթեր և կազմակերպություններ կոչ էին անում հայերի հետ վարվել այնպես, ինչպես հրեաների, նրանց արտաքսել երկրից, իսկ

¹ Տե՛ս **Հայրունի Ա.**, նշվ. աշխ., էջ 464:

² Տե՛ս **Բախչինյան Հ.**, Արտաշես Աբեղյանի կյանքի ժամանակը, էջ 68:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 67-68:

Ռումինիայի վարչապետ Անտոնեսկուն հանձնարարել էր հայաշատ քաղաքներից տեղահանել հայերին:

Ա. Աբեղյանն իր գերմանացի համախոհների հետ կրկին գործի անցավ, «ամեն դուռ բխեց, խօսեցաւ, լուսաբանելով նացի ազդեցիկ շրջանակները, յօգուտ Հայութեան: «Դուռ բխել»-ը ըսելու ձև մըն է, որ սակայն նացիներու պարագային բոլորվին տարբեր, չարագուշակ բան մը կը նշանակէր յաճախ: Կրնայիր դուռէ մը ներս մտնել և ա՛լ դուրս չելլել»¹: Մասնավորապէս, 1939 թ. գերմանական իշխող կուսակցության “Der Völkischer Beobachter” պաշտոնաթերթի հակահայկական հոդվածին առաջինը նա ուժեղ հակահարված տվեց: Գերմանական ռասիզմի գլխավոր գաղափարախոսներից մեկի՝ Ալֆրեդ Ռոզենբերգի² ղեկավարությամբ հայերի ծագման և հայոց պատմության հարցերով սկսեց զբաղվել գիտնականներից բաղկացած մի խումբ³: Որոշ ժամանակ անց Ա. Ռոզենբերգը Հիտլերին հանձնեց մի զեկուցագիր, որտեղ, գիտական սկզբնաղբյուրների վրա հենվելով, փաստվում էր հայերի արիական ծագումը: Միաժամանակ նշվում էր, որ հայերենը հնդգերմանական լեզվաընտանիքին է պատկանում, իսկ հայերը հին «արիացիների» ուղղակի ժառանգներն են⁴:

1942-1943 թթ. Ա. Աբեղյանը կարողացավ Շտուտգարտում վերահրատարակել «Հայկականություն-Արիականություն» գրքույկը, որը մեծապես նպաստեց թնջուկի վերջնական լուծմանը և փրկության խարխախ նետեց պատերազմի ընթացքում Գերմանիայի գրաված տարածքներում ապրող շուրջ 500.000 հայությանը: «Հոս հարցնել հարկաւոր է,- գրում է դեպքերի ականատես Մանասէ Սևակը,- թե ի՞նչ պիտի ըլլար այս կէս միլիոն հայերուն ճակատագիրը, եթէ նախախնամական դեր մը կատարած չըլար պրոֆ. Աբեղեան, տոքթ. Ռորպախի հետ խեղդելով այդ հակահայ և թրքական ոխերիմ շարժումը իր օրրանին մեջ»⁵: Հիրավի, պատասխանը պարզ է: Եթէ Ա. Աբեղյանը մինչ այդ ոչինչ արած չլինէր և կամ այդուհետև ոչինչ չանէր իր ժողովրդի համար, ապա լոկ այդ սխրանքի համար, որի արդյունքը բազմահազար հայերի փրկությունն էր, արժէ նրա անունը դասել մեր ամենաերախտավոր ազգային գործիչների շարքը⁶:

Այսպէս՝ նացիստների իշխանության ժամանակահատվածում Գերմանիայում, բացի վերոնշյալ «Հայկականություն-Արիականություն» գրքույկից, հրատարակվեցին նաև տասնյակ այլ աշխատություններ՝ հայերի, նրանց արիական պատկանելության, Հայոց ցեղասպանության և հայոց պատմու-

¹ «Հայրենիք», 1975, մարտի 16:

² Նա հետագայում դարձավ ռազմակալված արևելյան տարածքների նախարարը:

³ Տե՛ս **Աբրամյան Զ. Ա.**, *Забывтый легион*, Ереван, 2005, с. 22-23:

⁴ Տե՛ս «Հայկականություն-Արիականություն», Երևան, 2001, էջ 24:

⁵ «Հայրենիք», 1955, հունիսի 10:

⁶ Տե՛ս **Բախիճյան Հ.**, Արտաշես Աբեղյանի կյանքի ժամանակը, էջ 68:

թյան մասին: Դրանց թվում էին «Գերմանական արիական պետության արևելյան դարպասների պահապանները», «Հայերը և Հայաստանը», «Նարեկացի», «Հայերը ընդհանուր պայքարում», «Զեյթուն», «Հայերի և գերմանացիների պատմական բարեկամությունը», «Քեզ վրա նայում են արիացիներ», «Մեր կամավորների պատմական դերը» և այլ գրքեր¹:

Կասկածից վեր է, որ հայերի արիական ծագման խնդիրն առավելաբար քաղաքական շահարկման առարկա էր, քան զուտ գաղափարախոսական իրողություն: Առավել ևս էթե նկատի ունենանք, որ բազմապիսի փաստեր ապացուցում են այդ հակահայկական քարոզչության ֆինանսավորումը և հրահրումը Թուրքիայի կողմից: Իսկ այդ գործում իրենց մեծ դերն էին կատարում Անկարայից գործուղված և նացիստների կողմից քաղաքական նկատառումներով գրկաբաց ընդունված թուրք գործակալները:

Ա. Աբեղյանը չէր կարող այդ ժամանակ միայնակ գործել և ջանում էր ընդլայնել համախոհների քանակը: Դոկտոր Ռոհրբախից նա տեղեկանում է Նժդեհի այդ շրջանի նախաձեռնումների մասին, նամակագրություն հաստատում նրա հետ: 1941 թ. դեկտեմբերի 4-ի թվակիր նամակում նա գրում էր նրան. «Շատ ուրախ եմ, որ իմ տպավորությունները լավ են ըստ ամենայնի, ժամանակները շատ լուրջ են և անհրաժեշտ է ուժերի համախմբում, սպասենք ու հուսանք, որ մեր սիրելի հայրենիքը, նաև մեր բնագավառ Նախիջևանը² լավ օրեր տեսնեն շուտով, և մենք արժանանանք նրանց տեսության»³:

Պատերազմի ամենաթեժ պահերին տարբեր ոլորտներում հայ-գերմանական համագործակցության համար ստեղծվում են մի շարք խմբեր և կազմակերպություններ⁴: 1942 թ. դեկտեմբերի 15-ին Արևելյան գրավյալ շրջանների նախարարության⁵ հովանավորությամբ Բեռլինում ստեղծվում է Հայ ազգային խորհուրդ, որը ներկայացնում էր Եվրոպայի հայության հետաքրքրությունները գերմանական ղեկավարության մոտ, և որի իրական ու գլխավոր նպատակը հայ գերիներին օգնելն էր և հայության ազգային շահերը պաշտպանելը: Հայ ազգային խորհրդի նախագահ է դառնում Ա. Աբեղյանը, իսկ խորհրդի աշխատանքների գործուն մասնակիցներն էին քաղաքական ու ռազմական հայտնի գործիչներ Դրաստամատ Կանայանը (Դրո), Գարեգին Նժդեհը, Աբրահամ Գյուլխանդանյանը (փոխնախագահ), Տիգրան

¹ Տե՛ս **Абрамян Э. А.**, նշվ. աշխ. էջ 23-24:

² Նժդեհը ևս ճնշված Նախիջևանից էր: Իսկ նրա ծննդավայր Կզնուտ գյուղը մի քանի կիլոմետր հեռավորության վրա էր գտնվում Ա. Աբեղյանի ծննդավայր Աստապատից:

³ Արտաշես Աբեղյանի անձնական արխիվ, նամակ՝ Գարեգին Նժդեհին:

⁴ Տե՛ս **Абрамян Э. А.**, նշվ. աշխ. էջ 24:

⁵ Այստեղ Հայ ազգային խորհրդի ներկայացուցիչն էր Ա. Աբեղյանի որդին՝ Վաչե Աբեղյանը:

Բաղդասարյանը, Վահան Փափազյանը, Դավիթ Դավիթխանյանը և ուրիշներ:

Հայ ազգային խորհուրդը մի քանի ամիս անց դարձավ Հայ ազգային կոմիտե, որն ուներ մի քանի բաժիններ: 1943 թ. գերմանական կառավարությունը Ազգային կոմիտեները վերածում է Ազգային կառավարությունների՝ այն նպատակով, որ Խորհրդային Միության պարտության պարագայում այդ կառավարությունները արդեն կազմ ու պատրաստ մեկնեին իրենց երկրները և իրականացնեին իրենց գործառույթները: Ա. Աբեղյանը ընտրվում է վտարանդի կառավարության նախագահ: Ըստ ֆոն Հիգենդորֆի վկայության՝ նա մինչև 1943 թ. մնում է Հայաստանի ապագա վարչապետի կարգավիճակում¹: Ըստ նացիստների ծրագրի՝ պատերազմում հաղթելուց հետո պետք է ստեղծվեր «Կովկաս» ռայխսկոմիսարիատը², որը, ըստ որոշ աղբյուրների, պետք է ղեկավարեր հայկական ծագումով և Շիկեդանց ազգանունով գերմանացի մի պաշտոնյա³:

Այդ տարիներին ստեղծվում էին նաև Ազգային լեգեոններ, որոնք պետք է պատերազմում մարտնչեին նացիստների կողմից, իսկ հաղթանակից հետո դառնային իրենց երկրների ապագա բանակների հիմքը: Հայկական լեգեոնի թվակազմը պատերազմի ընթացքում հասավ մինչև 20.000-ի, որի հիմնական մասը կազմում էին Կարմիր բանակի հայ զերիները⁴: Հայ լեգեոնականների գլխավոր նպատակը, սակայն, խորհրդային ուժերի դեմ պատերազմելը չէր: Նրանք այդ կերպ ընդամենը փրկում էին իրենց կյանքը և նույնիսկ հարմար առիթի դեպքում անցնում Կարմիր բանակի կողմը: Հայտնի են նաև դեպքեր, երբ նրանք անցել են պարտիզանական պայքարի շարքերը՝ ընդդեմ գերմանացիների: Ինչպես օրինակ՝ 1944 թ. մայիսին, երբ նրանք Ֆրանսիայում միացան Ֆրանսիական դիմադրական շարժմանը: 1943 թ. գերմանացիները Ազգային լեգեոնները դարձնում են Ազգային միավորյալ շտաբներ: Հայկական շտաբի ղեկավար է դառնում գնդապետ Վարդան Սարգսյանը⁵:

Որպես Հայ ազգային խորհրդի նախագահ՝ Ա. Աբեղյանը շարունակում է կրկին բախել գերմանացի բարձրաստիճան պաշտոնյաների դռները, անձնագոհաբար անցնել մի քաղաքից մյուսը և այդ կերպ հետամուտ լինել Եվրոպայում բնակվող հայության խնդիրների լուծմանը⁶: Ինչպես գրել է Խոսրով Ներսեսյանը «1943-ին, Վիեննա, Միսիթարեաններու վանքին մեկ սրահին մեջ

¹ Տե՛ս **Абрамян Э. А.**, Кавказская эмиграция в планах нацистского руководства Германии накануне войны // Вестник Военного университета Министерства обороны РФ, 2007, № 2, с. 88-94:

² Սակայն հետագայում որոշվում է, որ հաղթանակի դեպքում պետք է ստեղծվի «Հայաստան» անանձին ռայխսկոմիսարիատ:

³ Տե՛ս **Абрамян Э. А.**, Забытый легион, с. 24:

⁴ Տե՛ս **Балаян Д.**, նշվ. աշխ., էջ 6:

⁵ Տե՛ս **Абрамян Э. А.**, Забытый легион, с. 25:

⁶ **Բախչիկյան Հ.**, Արտաշես Աբեղյանի կյանքի ժամանակը, էջ 68:

կը լսեի զինքը, իբրև նախագահ Հայ Ազգային Խորհուրդին... Կը խոսեր այդ տխուր օրերուն մեջ հայկական յոյսեր վառ պահելու համար»¹:

Ա. Աբեղյանը անում էր հնարավոր ամեն ինչ Եվրոպայի հայությանը պատերազմի այդ ծանր ժամանակահատվածում աջակցելու համար: Նա այցելում էր տարբեր քաղաքներում գտնվող վիրավորներին, զինվորներին, գերիներին, փորձում որևէ օժանդակություն ցուցաբերել նրանց, հայանպաստ դիմումներով հեղեղում գերմանական ղեկավարությանը: Ավելորդ չէ փաստել, որ անտեսելով յուրաքանչյուր դժվարություն՝ հայ գերիների խնդիրների լուծման համար յոթանասունն արդեն բոլորած հայորդին անգամ Վարչավա է մեկնել²: Վստահաբար կարելի է ասել, որ այդ դժվարին տարիներին մշտաբար են եղել հոգևոր այն լիցքերը, որոնք նա ստացել էր Սուրբ Էջմիածնում ուսանելու տարիներին:

1943 թ. մայիսին Ա. Աբեղյանը ազատվում է Հայ ազգային խորհրդի (կոմիտե) ղեկավարի պաշտոնից և մեկնում Ֆրանսիա, որտեղ մեկ տարի շարունակ խմբագրում է հիմնականում Հայկական լեգեոնի համար լույս տեսնող «Հայաստան» և «Լեգեոնական լրատու» շաբաթաթերթերը:

Ա. Աբեղյանի և նրա համախոհների ազգանպաստ գործունեությունը փայլուն օրինակ է այն բանի, թե ինչպես է հնարավոր ամենաանբարենպաստ քաղաքական և ռազմական իրավիճակում անգամ հայանպաստ գործունեություն ծավալել և 100.000-ավոր կյանքեր փրկել: Ա. Աբեղյանը և նրա համախոհները գիտեին, որ վտանգավոր խաղի մեջ են ներգրավվել, այդուհանդերձ գործում էին վճռականորեն: Լինելով հակառակ ճամբարում՝ նրանք ցանկանում էին հայությանը նվազագույն կորստով կամ եթե հաջողվեր՝ նաև ձեռքբերումներով դուրս բերել այդ ավերիչ պատերազմից: Առավել ևս շատ լավ հայտնի է բոլորին, որ թուրքական 26 դիվիզիա, կազմ ու պատրաստ դիրքավորված լինելով Արաքսի երկայնքով, սպասում էին Ստալինգրադի անկմանը՝ Խորհրդային Հայաստան ներխուժելու համար: Սակայն քանի որ պատերազմի ելքը այդ ժամանակ դեռևս կանխորոշված չէր, իսկ պատերազմի սկզբում Գերմանիան հաղթանակ հաղթանակի հետևից էր տանում, ապա Եվրոպայում գտնվող հայ գործիչների գլխավոր մտահոգությունը հայ ժողովրդի նկատմամբ նոր ցեղասպանության կանխարգելումն էր: Իսկ այն, որ Թուրքիան նման հարմար առիթի էր սպասում դրան ձեռնամուխ լինելու համար, կասկածի տեղիք չէր տալիս:

Հայ գործիչների՝ հայանպաստ նպատակներ հետապնդող, այսպես ասած, «քաղաքական առևտուրը» նացիստների հետ խորհրդային պատմագրության կողմից ներկայացվել է որպես համագործակցություն ընդդեմ Խորհրդային Միության: Այնինչ հարյուր հազարավոր փրկված հայերի կյան-

¹ **Համբարձումեան Ռ.**, Նժդեհ, Երևան, 2012, էջ 115:

² «Արմենիա» (Բուենոս Այրես), 1955, մարտի 28:

քերը վառ ապացույցն են այն ամենի, որ խորհրդային պատմաբանների այս տեսակետը սին է և անհիմն:

Բեռլինի անկումից հետո Ա. Աբեդյանն անցնում է հարավային Գերմանիա և վեց տարի ապրում Վյուրթեմբերգի Ռոթվալլ, Թուրինգեն, ապա Շտուտգարտ քաղաքներում: Այստեղ նա մեծ աջակցություն է ցուցաբերում բազում հայ տարագիրների, որոնք իր նման ստիպված էին անցնել Գերմանիայի խորքերը¹:

Նացիստների պարտությունից հետո հայ գործիչներին հաջողվել էր նախկին ռազմագերիների մի մասին տեղափոխել երկրի արևմտյան մասերը, որոնք գրավել էին ԱՄՆ-ի զորամիավորումները՝ այդ կերպ նրանց ազատագրելով ստալինյան մոտալուտ հետապնդումներից: Ա. Աբեդյանը 1945-1946 թթ. Շտուտգարտի հայկական ռազմագերիների ճամբարի դպրոցի տնօրենն էր, իսկ նրա դուստրը՝ Ռուզան Աբեդյանը՝ ճամբարում թարգմանչուհի էր: Մեծ ջանքերի գործադրմամբ խորհրդային հաշվեհարդարից փրկված մոտ չորս հազար մարդու ԱՄՆ-ի իշխանությունների օժանդակությամբ հաջողվեց տեղափոխել Միացյալ Նահանգներ: Այս ամենում ևս Ա. Աբեդյանն իր մեծ ավանդն ունեցավ:

Հարկ է ուշադրությունը բնեռել նրա մեկ այլ հայրենանվեր արարքի վրա, որը ևս բավականաչափ գնահատանքի և լուսաբանման չի արժանացել: 1941 թ., երբ արդեն Ֆրանսիան անձնատվության (կապիտուլյացիա) էր ենթարկվել, Գերմանիայի քարոզչության նախարար Յոզեֆ Գեբելսի հրամանով թալանվում է Փարիզում Պոդոս Նուբարի հիմնած Նուբարյան մատենադարան-թանգարանը, որտեղ բարերարը պահ էր տվել բազում հոգևոր գանձեր՝ ավելի քան 300.000 միավոր նյութ: Լուրը ստանալուն պես Ա. Աբեդյանը մեկնում է Փարիզ և կարողանում կասեցնել թալանը, իսկ պատերազմից հետո հաջողվում է վերադարձնել հափշտակված մյուս ձեռագրերը²:

1951 թվականից մինչև կյանքի վերջը նա ապրել է Բավարիայի մայրաքաղաք Մյունխենում, որի համալսարանի փիլիսոփայության մասնաճյուղում դասավանդել է հայոց լեզու (գրաբար և աշխարհաբար): Այստեղ ևս նա, ինչպես գրեթե ամենուրեք, ապրել է թե՛ աշխատանքային, ստեղծագործական վերելքներով և թե՛ նյութական զրկանքներով, անգամ վտանգներով լի կյանքով³:

¹ Տե՛ս **Բախչինյան Հ.**, Արտաշես Աբեդյանի կյանքի ժամանակը, էջ 68:

² Տե՛ս **Բախչինյան Ա.**, Արտաշես Աբեդյանի նամակներն Արշակ Չոպանյանին // «Բանբեր Երևանի համալսարանի», 1998, թիվ 1, էջ 111:

³ Ա. Աբեդյանի կյանքի և գործունեության մասին լավագույն բնորոշումները նրա մահվանից օրեր անց ներկայացրեց ժամանակի սփյուռքահայ մամուլը: «Աբեդյան մասամբ կը նմաներ Պօղոս Առաքեալի. ինչպես որ Առաքեալը, ուր որ երթար, Քրիստոնեություն կը քարոզեր, նոյնպես Աբեդյան ալ ամեն պարագայի տակ, ամեն ատեն ու ամենուրեք կըլլար դասախօս, ըսէ՝ քարոզիչ հայագիտութեան» // «Հայրենիք», 1955, մայիսի 18: «Իր անհատական կեանքը լուրջ, պատկառագրու և խոնարհամիտ բնաւորութիւնը, իր վիճակէն, բախտէն միշտ գոհ,

Գերմանիայում Ա. Աբեդյանը երբևէ վայր չի դրել գրիչը, անընդմեջ շարունակել է գրականագիտական գործունեությունը: Նա լույս է ընծայել մենագրություններ¹, մշտապես թղթակցել Սփյուռքի գրեթե բոլոր նշանավոր՝ «Հայրենիք», «Հառաջ», «Հուսաբեր», «Արմենիա» և այլ պարբերականներին: Մամուլի էջերում նա տպագրել է նաև մի շարք արժեքավոր հոդվածներ, ինչպես օրինակ՝ «Միջնադարյան հայ առակագրություն» (ուսումնասիրություն և շուրջ 200 առակների արևմտահայերեն փոխադրություն), «Հովհաննես Թումանյան», «Իսրայել Օրի», «Հայ մշակույթի սկզբնավորությունը» և այլն:

Ա. Աբեդյանը վախճանվել է 1955 թ. մարտի 13-ին Մյունխենում՝ հայրենիքի կարոտը սրտում: Կահիրեի «Հուսաբեր» պարբերականը այս առումով գրել է. «Անձրևոտ ու փոթորկոտ, տխուր օր մը, Մինիխի մէջ, օտար հողին յանձնեցինք մեր սիրելիին՝ Արտաշես Աբեդեանի յոգնատանջ ու հայրենակարօտ մարմինը: Չունէինք բուռ մը հայրենի հողէն՝ իր դագաղին վրայ շաղ տալու համար: Իր տարաբախտ այրին Լոռիէն քիչ մը ծաղիկ բերած էր, զոր չորցած վիճակի մէջ կը պահէր: Այդ ծաղիկն էր, որ ցանեցին դագաղին վրայ, գէթ ասով իր տարագիր հոգին քիչ մը ջերմացնելու համար»²: Հիշարժան է նրան տված «Արևելքի» գնահատականը. «Արտաշես Աբեդեան ամեն ինչ ունէր իր երազները վերածելու համար գործի, տարաբախտօրէն միայն հայրենիքը չունեցավ իր ոտքերուն տակ, որպէսզի ամուր ու զօրաւոր խարիսխ մը ունեցած ըլլար, իր անսահման կարելիութիւնները առաւելագոյն համեմատութեամբ արժեցնելու համար»:

Այժմ՝ Արտաշես Աբեդեանի վախճանից տասնամյակներ անց, մենք պետք է, երախտագիտության խոր զգացումները մեր սրտերում, ըստ արժանավույն գնահատենք այդ մեծ հային, ուսումնասիրենք և արժևորենք նրա գործն ու թողած հարուստ հոգևոր ժառանգությունը, որպէսզի գալիք սերունդների առջև նա հառնի իր ամբողջ փայլով ու իրական մեծությամբ:

քիչով գոհացող, իր ապրելակերպը մեր հին վանականներու կեանքը յիշեցնող ճշմարիտ օրինակ մըն էր» // «Արմենիա», 1955, մարտի 28: «Արևելքի իր չարքաշուրթեան միացուցած էր գերմանական կարգապահութիւնը: Հայու ուշիմութեան և թափանցող մտքին միացուցած էր գիտականօրէն պրպտելու, բծախնդրօրէն համադրելու կիրքը: Համեստ, հաճոյակատար, հաւատաւոր» // «Արևելք», 1955, ապրիլի 17:

¹ **Աբեդեան Ա.**, Դորպատի հայ ուսանողութիւնը, Վիեննա, 1942, *նույնի՝* Քերովբե Պատկանեանը Դորպատում, Վիեննա, 1949, *նույնի՝* Ստեփանոս Նազարեան և Դորպատ, Բուենոս Այրես, 1953:

² «Հուսաբեր», 1955, մարտի 17:

**Арутюн Айрапетян – Арташес Абебян:
великий филолог и общественный деятель**

После установления в Армении советской власти многие общественные деятели, деятели культуры и науки покинули свою родину, став изгнанниками, в том числе и великий филолог, литературовед, политический деятель Арташес Абебян, который вынужден был продолжить свою научную и общественную деятельность в Германии. Он играл огромную роль в жизни армянской общины Европы и, в частности, Германии. Наиболее активный период его деятельности связан с приходом нацистов к власти. Именно в этот период Абебян, используя свой авторитет и политический вес, спас сотни тысяч армянских жизней, поскольку наряду с антисемитским движением в Германии также набирали обороты антиармянские движения, спровоцированные и финансируемые со стороны Турции.

В данной статье представлен жизненный путь Арташеса Абебяна, наполненный творческими взлетами, говорится о его ценных произведениях, статьях и других научных исследованиях. Отображается та значительная работа, которую проделали Арташес Абебян и его единомышленники в пользу армян Европы и армянских военнопленных в годы правления нацистов и в последующие годы.

Harutyun Hayrapetyan – Artashes Abeghyan: The Great philologist and public figure

After the establishment of Soviet power in Armenia, many public figures, scientists and artists left their homeland and became exiles, including the great scholar, literary critic, politician Artashes Abeghian, who was forced to continue his scientific and public activities in Germany. He played a great role in the life of the Armenian community in Europe and particularly in Germany. The most active period of his career is connected with the arrival of the Nazis to power. And it was during this period that Mr. Abeghyan using his authority and great influence saved the lives of hundreds of thousands Armenians, as along with the ongoing anti-Semitic movement in Germany anti-Armenian movement was also growing, which was provoked and financed by Turkey.

This article presents Artashes Abeghyan's life filled with creative takeoffs, his valuable works, articles and other scientific studies. It depicts the significant work done by Artashes Abeghian and his supporters for the Armenians in Europe and Armenian war prisoners during the years of the Nazi rule and in the subsequent period.

**ՉԱՅՆ - ԲԱՌ - ՏԵՔՍՏ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՐԳԸ, ԲԱՆԻ
(ՏԵՔՍՏԻ) ՏԵՔՍՏԱՅԻՆ ԱՐԺԵՎՈՐՈՒՄԸ**

*Բանալի բառեր – տեքստ, խոսք, ձայն, հնչյուն, արժեհամակարգ, լեզու, լեզվամտա-
ծողություն, մշակույթ, քաղաքակրթական*

Ամենակազմակերպված խոսքերից (տեքստերից) մեկը՝ բանաստեղծու-
թյունը, ինչ նպատակով էլ ստեղծվելիս ու վերստեղծվելիս լինի, խորքում
պահպանում է ձայնային իր սկզբի վերաբերյալ հիշողությունը՝ որպես կա-
րևորագույն հեծան, որին հենված են մարդկային մտածողությունն ու քաղա-
քակրթական գոյությունը: Այլապես հնարավոր չէ բացատրել խոսքում, մաս-
նավորապես հայ բանաստեղծության մեջ ձայնի՝ ֆիզիկական այդ երևույթի
(որ լեզվաբանական անվանմամբ հնչյունն է), և լեզվախոսքային այլ տար-
րերի ու իրողությունների գեղարվեստական-«կերպարային» տարածվածու-
թյունը, այդքան մեծ դերակատարությունը կամ հենց պարզապես համատա-
րած հիշատակումը և անընդհատական վերարտադրությունը:

Լեզվի ծագման կենսաբանական տեսությունները՝ բնաձայնական, ձայ-
նարկությունների և այլն, լեզվի ծագումը բացատրում են մարդու՝ ձայն ար-
տաբերելու ունակությամբ:

«Լեզուն անընդհատական գործունեությունն է հոգու, որը ձգտում է ձայ-
նը մտքի արտահայտություն դարձնելուն»¹, և «եթե ձայնն ընկած է առար-
կայի ու մարդու միջև, ապա լեզուն ամբողջությամբ գտնվում է մարդու ու
նրա վրա արտաքինապես ու ներքինապես ազդող բնության միջև: Մարդն իրեն
շրջապատում է ձայների աշխարհով, որպեսզի ընկալի և յուրացնի առարկա-
ների աշխարհը»²: Վ. Հումբոլդտը կարծում է, որ «մտավոր գործունեությունը
չի սահմանափակվում միայն դատողությամբ, բայց ազդում է մարդու վրա
ամբողջապես, իսկ ձայնի հնչյունը դրա մեջ մեծ դեր է կատարում: Այն առա-
ջանում է կրծքավանդակում, ինչպես հուզումնալից տոն-ձայներանգը, ինչ-
պես ինքը՝ լինելության շնչառությունը...»³, որ «լեզվի իրական նյութը մի կող-
մից ձայնն է ընդհանրապես, մյուս կողմից՝ զգայական տպավորությունների

¹ Гумбольдт В., О различии строения человеческих языков и его влиянии на духовное разви-
тие человеческого рода (извлечения) // Звегинцев В. А., История языкознания XIX-XX веков в
очерках и извлечениях. Часть I, М., 1960, с. 85-105, նաև http://destruction.narod.ru/gumboldt_astrojenye_jasykov.htm

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

և ոգու ակամա այն շարժումների ամբողջությունը, որոնք նախորդում են հասկացության կազմավորմանը, ինչը իրականանում է լեզվի օգնությամբ»¹: Դժվար չէ հասկանալ, որ մտածողության երկու հիմնապուններից մեկը Հումբոլդտը համարում է «ձայնն ընդհանրապես», այսինքն՝ ձայնն էական դերակատարություն ունի մարդու լեզվամտածողական ունակության կայացման մեջ, իսկ մարդուն տրված գեղարվեստական մտածողության մեջ (գրականություն, հատկապես պոեզիա, քանի որ վերջինիս կապը «ոգու» հետ առավել անմիջական է) ձայնին վերաբերող, ձայնը արժևորող, ձայնի վրա խարսխվող պոետական առկայծումների ահռելի քանակն ու ծավալը հումբոլդտյան տրամաբանության հավաստումներն են: Ձայնի ձեռք բերած ձևը, որը հենց ձայնի համար էլ դառնում է իմաստագատիչ դեր կատարելու պարտադիր պայման, Հումբոլդտը շղթայում է մտքի արտահայտման որոշակի նպատակադրմանը. «...Լեզվի մեջ բացարձակ իմաստով չի կարող գոյություն ունենալ չձևավորված նյութ, քանի որ նրա մեջ ամեն ինչ ուղղված է որոշակի նպատակի իրականացմանը՝ հենց մտքի արտահայտությանը, ընդ որում՝ այդ աշխատանքը սկսվում է լեզվի դեռ առաջնային տարրից՝ իմաստագատիչ ձայնից (կամ հնչյունից – թ. Տ.), որը այդպիսին է դառնում շնորհիվ իրեն տրված ձևի»²: Իսկ այս «իմաստագատիչ ձայնին» կամ հնչյունին (որ **հնչույթն** է), ըստ Հումբոլդտի, մարդը հասնում է իր հոգու մղմամբ: Հումբոլդտի գաղափարները զարգացնող նրա հետևորդներից մեկը՝ Հ. Շտեյնթալը, ձայնային (հնչունային) ձևը շաղկապում է լեզվական ձևին՝ ասելով. «Մենք իրավունք չունենք խոսելու լեզվական ձևերի մասին այնտեղ, որտեղ դրանց չի համապատասխանում ձայնային ձևի փոփոխությունը»³:

Ձայնի վերաբերյալ գաղափարներն իրենց արտացոլում են գտնում նաև 20-րդ դարի փիլիսոփայության ամենաազդեցիկ դեմքերից մեկի՝ Կարլ Փոփերի աշխատություններում. ճիշտ է, 20-րդ դարի մյուս նշանավոր դեմքը՝ լեզվաբան Ա. Ն. Խոմսկին, քննադատում է նրա՝ լեզվի առաջացման մասին տեսակետները, սակայն անուրանալի է ձայնի վերաբերյալ Կ. Փոփերի արտահայտած մտքերի կարևորությունը: «Փոփերը ապացուցում է, որ լեզվի զարգացումն անցել է մի քանի փուլով, մասնավորապես «ամենաստորին փուլով», երբ, օրինակ, հուզական վիճակն արտահայտելու համար օգտագործվում էին «ձայնավորված ժեստեր», և, երկրորդ, «բարձրագույն փուլով», երբ միտքն արտահայտելու համար... օգտագործվում էր իմաստագատիչ ձայնը»⁴:

¹ Гумбольт В., Избранные труды по языкознанию, М., 1984, с. 73
(<http://bookre.org/reader?file=615948&pg=74>).

² Նույն տեղում, էջ 72:

³ <http://www.vash-kursovnik.ru/kursovye/1061.htm>

⁴ Хомский А., Язык и мышление, М., 1972, с. 86.

Իսկ Վ. Հումբոլդտի գաղափարների շարունակողներից Ա. Ա. Պոտեբնյան կարծում է, որ լեզուն խոսողի անհատական հոգեբանությունը բացահայտելու միջոց է, այստեղից էլ՝ ձգտումը լեզուն ուսումնասիրելու իր իրական օգտագործման մեջ՝ հենվելով նախնառաջ հասարակական հոգեբանության, ժողովրդի բանահյուսության, միֆոլոգիայի, սովորույթների վրա, որ արտահայտվում են խոսքային ձևերում (ասացվածք, առած, հանելուկ և այլն) և ընդհանրապես ողջ մշակույթում:

Ահա թե ինչու կարծում ենք, որ նման խնդիրների անդրադառնալիս պետք է հենվել հատկապես ժողովրդի մշակույթի պսակը հանդիսացող բանահյուսական նյութի՝ մասնավորապես էպոսի, և անհատ-գրողների այնպիսի ստեղծագործությունների քննության վրա, որոնք անվերապահորեն ընդունվում և բարձր են գնահատվում հանրության, ժողովրդի մեջ, այսինքն՝ տվյալ մշակույթի մեկ հատվածն են:

Լեզվաբանությունը միշտ էլ զգայուն է եղել լեզվի և մշակույթի փոխադարձ մանավորվածության խնդրում, բայց անհրաժեշտ է խոստովանել, որ դրանց փոխադարձ անքակտելի կապը մեզանում պատշաճ կերպով չի ուսումնասիրվել: Ընդհանրապես լեզվի ու մշակույթի կապը վաղուց է գրավել գիտնականների ուշադրությունը, խնդիրն այս կամ այն նպատակադրմամբ արծարծվել է դեռևս 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին: Ներկայումս գիտնականները փորձում են այդ կապը առավել համակարգված ձևով ներկայացնել, ինչն էլ հիմք է դարձել նոր գիտակարգի՝ լեզվամշակութաբանության առաջացման համար:

Լեզվամշակութաբանությունը նախ փորձում է պարզել, թե տվյալ լեզվի մեջ ինչպես, ինչ միջոցներով են արտացոլվում ժողովրդի դավանած արժեհամակարգային իրողությունները, արժևորած գաղափարները, մշակութային, կենցաղային կարևորությունները, հանրային կյանքի վերաբերյալ հայացքները:

Լեզվամշակութաբանության ուսումնասիրության առարկան ազգային մշակութային տարրեր պարունակող լեզվական միավորներն են. այդպիսի միավորներ կարող են լինել հնչյուն-ձայնը, բառ-բառիմաստը, բառ-անունը, բառ-խորհրդանիշը, բառերից կազմվող խոսք-տեքստը, տեքստերի ամբողջությունը և այլն:

Մենք ասում ենք **լեզվամտածողական արժեհամակարգ**, որովհետև, մեր համոզմամբ, ժողովրդի արժեհամակարգը պարտադիր լեզվամտածողական է, քանի որ մշակույթի խարիսխը լեզուն է:

Եթե, օրինակ, դարձվածքն իրավամբ համարվում է տվյալ ժողովրդի մտածողության ու մշակույթի ամենավառ դրսևորումներից մեկը, և այն պատրաստի գործածվում է կոնկրետ խոսքային իրավիճակում, ապա, կարծում ենք, պարտադիր է դարձվածքի համար միջավայր հանդիսացող տեքստը ուսումնասիրել ոչ միայն որպես լեզվական, այլև մշակութային երևույթ: Իսկ մշակույթը նախ լեզվական է: Ինչպիսի՞ քառ-հասկացություններով,

ինչպիսի՞ բառ-անուններով, ինչպիսի՞ բառ-խորհրդանիշներով են հյուսվում տեքստերը, ինչպիսի՞ ներքին-մտածողական-արժեհամակարգային կապ ունեն իմաստով իրարից հեռու թվացող բառերը, ձևաիմաստային հոմանիշությունից, հականիշությունից, համանունությունից, հարանունությունից գատ, ուղղակի, նեղ իմաստից և փոխաբերական իմաստներից գատ, արդյոք բառերը և դրանցով կազմվող տեքստերը չունեն ներքին այլ առնչություններ ու կապեր, որոնք ապրում և անընդհատ վերարտադրվում են տվյալ լեզուն կրող ժողովրդի ստեղծած տեքստերում, խոսքարվեստում: Պետք է հնարավորին չափով պարզել լեզվատեքստային ամենակայուն տարրի՝ բառի մշակութային արժեքն ու ծանրաբեռնվածությունը, լեզվամտածողական-արժեհամակարգային բովանդակությունը և արծարծել այդ սկզբունքից բխող նոր հարցեր:

Բացի հնչյունաբանական, բառագիտական, քերականագիտական և ոճագիտական սկզբունքներից՝ մենք հնարավոր ենք համարում լեզվական նյութի դրսևորումների քննությունը միանգամայն այլ դիտակետից: Մեր համոզմամբ՝ կան լեզվական, լեզվատեքստային տարրեր, իրողություններ, երևույթներ, որոնք մեզանում մինչև օրս դուրս են մնացել լեզվաբանական, գրականագիտական, մշակութաբանական ուսումնասիրության դիտակետերից, այնինչ դրանք կարելի է ուսումնասիրել թե՛ լեզվաբանական, թե՛ գրականագիտական, թե՛ մշակութաբանական մեթոդներով ու այդ մեթոդների համադրմամբ (որոնց հենքը, այնուամենայնիվ, նախ լեզվաբանական է):

Հասարակական տեսությունները լեզվի ծագումը բացատրում են հանրային միջավայրում հաղորդակցվելու անհրաժեշտությամբ, ինչը, ի վերջո, մշակութային-քաղաքակրթական գոյության գրավականն է:

Մեր համոզմամբ՝ լեզվի ծագման վերաբերյալ կենսաբանական և հասարակական տեսությունները ոչ թե իրար բացառող, այլ փոխլրացնող գիտական համակարգեր են, ինչը հիմնավորվում է գեղարվեստական բարձրարժեք ստեղծագործությունների տարբեր շերտերում *ձայնի և լռության*՝ մեր հայտնաբերած *լեզվամտածողական հականիշության, ձայնի և կյանքի, լռության և մահվան լեզվամտածողական հոմանիշության*, ինչպես նաև *ձայնից* (որպես ընդհանրապես կենդանի գոյությունից) մինչև *խոսք* (ձայնի բարձրագույն կազմակերպված դրսևորում, քաղաքակրթական գոյություն և լինելություն) ընկած աստիճանակարգի *տեքստային օրինակներով*: Ընդ որում, եթե լեզվի ծագման վերաբերյալ կենսաբանական և հասարակական տեսությունները ոչ թե իրար բացառող, այլ փոխլրացնող գիտական համակարգեր են, ապա դա ամեննին էլ չի նշանակում, որ դրանց նույնիսկ համատեղումը «ծածկում» կամ սպառում է լեզվի առաջացման հիմնախնդիրը. ճիշտ է, լեզուն հաղորդակցվելու միջոց է, սակայն մարդկության մշակութային ողջ ժառանգությունը ստիպում է մտածել, որ այն նաև ինքնարտահայտման ուղի է և հնարավորություն, որովհետև, մեր համոզմամբ, մեղմ ասած, չի կարելի պնդել, թե Գրիգոր Նարեկացին իր «Մատյան ողբերգության» պոեմը գրել է

մարդկանց հետ հաղորդակցվելու նպատակով, ավելին՝ էթե այդ ստեղծագործության առումով խոսք կա հաղորդակցության վերաբերյալ, ապա այն տվյալ դեպքում վերաբերում է միայն Աստծու և մարդու հաղորդակցությանը: Այս մոտեցման ընկալմանը զգալիորեն կարող է օգնել լեզվաբանության մեջ հոգեբանական ուղղության հիմնադիր Հ. Շտեյնթալի կարծիքը, թե լեզուն հոգու գործունեության արտահայտությունը կամ դրսևորումն է: Շտեյնթալը պնդում է, որ լեզվագիտության առարկան կոնկրետ «լեզուն է կամ լեզուն ընդհանրապես, այսինքն՝ կապակցված ձայների հյուսվածքի միջոցով գիտակցված ներքին, հոգեկան և հոգևոր շարժումների, վիճակների և հարաբերությունների արտահայտությունը»¹:

Շտեյնթալը պաշտպանում է լեզվի և հոգու նույնության գաղափարը: Նրա այս տեսակետը նույնպես անչափ հետաքրքրական է, քանի որ լեզվական ձևերի (իսկ մենք խոսում ենք հայերենի լեզվամտածողական արժեհամակարգի մասին) ստեղծումը ներկայացվում է որպես հոգեբանական երևույթ՝ ձայնի, հնչյունի և մտածողության միջև փոխկապակցվածություն՝ հնչողության միջոցով: Շտեյնթալի կարծիքով՝ հնչյունի և մտածողության այս փոխկապակցվածությունն է դառնում հիմք լեզվական ձևերի համար: Շտեյնթալը պնդում է, որ լեզուն հոգեկան իրողություն է. «Քանի որ ժողովրդի ոգին ապրում է միայն անհատների մեջ և չունի այլ հատուկ գոյություն՝ անհատական ոգուց առանձին, ուրեմն և նրա, ինչպես որ վերջիններիս մեջ, բնականորեն իրականանում են միայն այն նույն հիմնական գործընթացները, որոնք ավելի մոտիկից բացատրում է անհատական հոգեբանությունը»²:

Ա. Վ. Չիչերինը գրում է. «Եթե բոլոր բառերը լինեն միայն առարկաներ նշանակող պայմանական նշաններ, ինչու՞ տավիղը բալալայկա, կադնին ուռենի, քարը փետուր չեն անվանվում... բոլոր այս դեպքերում զգացվում է ձայնի կապն իմաստի հետ»³: Է. Գ. Ավետյանը գրեթե նույն համոզմունքն ունի. «...Պարզ է, որ բառի ձայնային ձևավորումը նրա նշանակության հետ գտնվում է հայտնի հոգեբանական համապատասխանության մեջ»⁴: Իր հերթին Ա. Պ. Ժուրավյովը, մեջբերելով Չիչերինի և Ավետյանի այս տեսակետները, կատարում է մի էական դիտարկում. «...Ոչ միայն բառերը, այլև խոսքի հնչյունները իրենց մեջ կրում են ինչ-որ տեղեկություն, ինչ-որ թաքնված իմաստ»⁵: Յու. Վ. Ֆոմենկոն, սակայն, քննադատում է Ա. Պ. Ժուրավյովի՝ ձայնի (հնչյունի) և իմաստի փոխհարաբերության վերաբերյալ տեսակետներն այն պատճառով, որ վերջինիս չի հաջողվում տարանջատել հնչյունալին իմաստը («фонетическое значение») բառային իմաստից («лексическое

¹ <http://www.vash-kursovnik.ru/kursovye/1061.htm>

² <http://www.vash-kursovnik.ru/kursovye/1061.htm>

³ **Чичерин А. В.**, Идеи и стиль, М., 1965, с. 39-40.

⁴ **Аветян Э. Г.**, Природа лингвистического знака, Ереван, 1968, с. 71.

⁵ **Фоменко Ю. В.**, Мифы современной лингвистики, Новосибирск, 2010, с. 85.

значение»): Քննադատության հիմքն այն է, որ Ա. Պ. Ժուրավյովը ձայնային-հնչյունական իմաստն ավելի ընդհանուր է պատկերացնում, իսկ բառային իմաստը միշտ, ըստ Յու. Ֆոմենկոյի, կոնկրետ է և, հակառակ ձայնային-հնչյունային իմաստի, միշտ կապված է հասկացության հետ. «Ձայնային նշանակությունը կապված չէ հասկացության հետ, մենք չենք կարող բացատրել **Ջ** հնչյունի նշանակությունը, ինչպես դա բառարանում արվում է **տուն** բառի համար»¹:

Փաստորեն, Ֆոմենկոն Ժուրավյովին քննադատում է հստակ կերպով չտարրորոշելու համար այն սահմանը, որը գոյություն ունի ընդհանուր և կոնկրետ նշանակությունների միջև, մի բան, որ, թերևս, հնարավոր է այնքան, որքան հնարավոր է որոշարկել փաստորեն հարաբերականորեն կոնկրետ իմաստներ ունեցող և հասկացություններ հանդիսացող, օրինակ, *քամի* և *զեփյուռ* բառերի իմաստային սահմանները. ե՞րբ է *զեփյուռը քամի*, *քամին հողմ*, *հողմը փոթորիկ* դառնում, զեփյուռը կոնկրետ որքա՞ն պետք է ուժգնանա, որպեսզի «իրավունք ունենանք» այն *քամի* հասկացության մեջ «տեղավորելու» համար, և քամին էլ որքա՞ն պետք է ուժգնանա, որպեսզի այն սկսենք *հողմ* կոչել: Կա՞ այդ սահմանը, թե՞ *զեփյուռ* ասելիս մենք, հնարավոր է, միշտ սխալվում ենք տվյալ երևույթը կոչելու առումով: Այսինքն՝ ուզում ենք ասել, որ բառային իմաստը նույնպես իր հերթին կարող է ոչ կոնկրետ լինել, ինչպես հնչյունային-ձայնային իմաստը: Կարևորն այն է, որ ձայնային-իմաստային նշանակությունը, իրոք, գոյություն ունի և գոյություն ունի ոչ միայն ընդհանրական իմաստներով, այլև խոսքային կոնկրետ իրավիճակում կոնկրետ իմաստով: Ձայնի իմաստային նշանակությունը սկսում է ձևավորվել այն սահմանագծից, որտեղից հնչյունը սկսում է իմաստազատիչ դեր ստանձնել՝ կար – կոր – կեր և այլն, կալ – կար – կավ – կաթ – կաղ – կապ – կամ – կախ և այլն: Հնչյոթային մակարդակում ձայն-հնչյունն արդեն մասնակցում է ասելիքի տեքստային պարունակության ձևավորմանը, քանի որ իմաստը կա տեքստի (խոսքի) համար, ոչ թե բառի, ինչպես ընդունված է պատկերացնել: Բառն իմաստ ունի ոչ այն պատճառով, որ պարզապես բառ է, այլ այն ներուժով, որ դառնալու է տեքստային պարունակության մաս, տեքստային պարունակության կրող, և նույն բառի իմաստային-երանգային զանազան կիրառությունները դրա ապացույցն են:

Բայց ձայն-հնչյունը տեքստային պարունակություն կարող է ձևավորել ոչ միայն այլ ձայն-հնչյունների օգնությամբ, այլև միայնակ: Սրա օգտին է խոսում այն իրողությունը, որ հայերենում **ձայն** բառը, **հնչյուն** իմաստից զատ, ունի նաև **խոսք** իմաստը², այսինքն՝ հայերենում ձայնը նույնպես խոսք է: Ձայն-հնչյունի տեքստային պարունակության էական բնութագրական է

¹ Նույն տեղում:

² **Աճառյան Հր.**, Հայերեն արմատական բառարան, հ. 3, Երևան, 1971, էջ 144:

դառնում խոսքային հնչերանգը: Կոնկրետ խոսքային իրավիճակում «Ա՛»-ի տեքստային պարունակությունն է՝ «Հասկացա, սկսում եմ հասկանալ, ախ դուք դա՛ նկատի ունեիք», մեկ այլ կոնկրետ խոսքային իրավիճակում «Ա՛»-ի տեքստային պարունակությունն է՝ «Ձանձրացա՛, էլ չեմ ուզում, բավական է» և այլն, «Օ»-ի տեքստային պարունակությունն է՝ «Ինչ-որ չափով զարմանալի է, բայց հիասքանչ է» և այլն: Ուրեմն՝ նշանակության ոլորտում գուցե ինչ-որ սահման, իրոք, կա խոսքային-բառային իմաստի և ձայնային-հնչունական իմաստի միջև, սակայն այդ սահմանը եթե ինչ-որ չափով զգայելի, ապա առավելապես անորոշ է. Յու. Ֆոմենկոյի «հանձնարարականը» Ա. Ժուրավյովին՝ ցույց տալ այդ սահմանը, հակառակ դեպքում ընդունել, որ «ֆոնետիկական նշանակության» «հիպոթեզը հակադրվում է լեզվական բազմաթիվ փաստերին և ժամանակակից լեզվագիտության արսիտմաներին»¹, պարզապես նման է, պատկերավոր լեզվով ասած, հեքիաթի փոքր արքայազնին անմահական ջրի ուղարկելուն: Մի բան է նկատելի. որքան կարճ է բառը (բառ կարող է լինել նաև մեկ հնչյունը), այնքան ավելի մեծ է հավանականությունը, որ այն ավելի ընդհանրական իմաստ ունենա: Իսկ իմաստի գոյությունն արդեն իսկ տեքստային իրողություն է, և դժվար է արձանագրել, թե որտեղից է սկսվում իմաստը, և որտեղից՝ տեքստը, դժվար է որոշել հնչյունի տեքստային պարունակության և բառի տեքստային պարունակության միջև եղած սահմանը, եթե, իհարկե, այն կա:

Ա. Ժուրավյովի ուսումնասիրությունները ձայնի (հնչյունի) իմաստային ծանրաբեռնվածության վերաբերյալ² զգալի ներդրում են լեզվաբանության այն ուղղության մեջ, որի հիմնադիրը Վ. Հումբոլդտն է, իսկ շարունակողները՝ Հ. Շտեյնթալը, Ա. Պոտերնյան, Կ. Փոփերը, այլք:

Ձայնից (կամ **հնչյունից**) **խոսք** ընկած աստիճանակարգային միջավայրում բացահայտվում է այս կամ այն լեզուն կրող հանրության, ժողովրդի քաղաքակրթական մակարդակը, այսինքն՝ որևէ հանրության քաղաքակրթվածության մակարդակը որոշվում է նրա ստեղծած խոսքի բարձրագույն ձևով՝ բանաստեղծությամբ (և՛ լայն, և՛ նեղ առումներով): Այսինքն՝ ձայնի (կամ հնչյունի) իմաստավորման գործընթացի (խոսքավորման, տեքստավորման եղանակով) ուսումնասիրությունը, ինչպես և որպես խոսքային (տեքստային) բարձրագույն ձև՝ բանաստեղծության ուսումնասիրությունը, ապա նաև ընդհանրապես աշխարհի լեզուներով ստեղծված խոսքերի բազմակողմանի քննությունը կարող են օգնել մի փոքր ավելին հասկանալու ոչ միայն քաղաքակրթության «արշալույսը», այլև մինչև իսկ ընդհանրապես կենդանի գոյության սկզբի հիմնահարցը: Մենք ունենք այն վստահությունը, որ նման կերպ

¹ Фоменко Ю. В., նշվ. աշխ., էջ 86:

² Журавлев А. П., Звук и смысл: кн. для внеклас. чтения учащихся ст. классов», 2-е изд., М., 1991, с. 160, Содержательность фонетической формы знаков в современном русском языке, Саратов, 1974, с. 50.

տեքստերի լեզվաբանական ուսումնասիրությունն իրոք կարող է լրացուցիչ գիտականություն հաղորդել մինչև իսկ աշխարհի կամ գոնե տիեզերքի մեր հատվածի սկզբնավորման վերաբերյալ մոտեցումներին, քանի որ լեզվակիրառական իրողության՝ խոսքի (տեքստի) մեջ պահպանվում և շարունակում են ապրել կյանքի և մասնավորապես քաղաքակրթական կյանքի «արշալույսին» վերաբերող էական հիշողություններ: Այս հիշողությունների անգամ պատահականների ուսումնասիրությունը կարևորվում է ոչ միայն կյանքի ծագման, առաջացման, ձևավորման և զարգացման ընթացքը մի նոր դիտակետից նույնպես ուսումնասիրելու, այլև այդ հիշողությունները կրող ու պահպանող լեզուն, խոսքը, կոնկրետ այս կամ այն տեքստը, ընդհանրապես տվյալ լեզվամտածողական համակարգը ավելի ճիշտ ընկալելու և մեկնաբանելու առումով: Նման մոտեցմամբ հնարավորություն է ստեղծվում նաև գոյություն ունեցող տեքստերը նորովի քննելու, եղածներն ու ապագայում ստեղծվող տեքստերն ավելի ճիշտ ըմբռնելու համար: Իսկ տվյալ լեզվի տիրություն մտածողական կոնկրետ համակարգի բացահայտումը կհանգեցնի խոսքի, կոնկրետ տեքստի գիտական ընկալման նոր սկզբունքների, մեկնաբանման նոր մեթոդների որդեգրմանը:

Լեզվաբանական գիտությունը տեքստն ուսումնասիրում է այն կառուցելու լեզվական միջոցների, օրինաչափությունների, օրենքների, ոճական միջոցների գործադրման տեսանկյունից, իսկ գրականագիտությունը տեքստային նյութի բովանդակությունը, ձևը մեկնաբանում է գեղագիտական, նաև գաղափարական սկզբունքներով: Կարծում ենք՝ համադրելով այս երկու սկզբունքները՝ տեքստի ընկալումն ու ճանաչումը, դրա էության բացահայտումը կարելի է բարձրացնել որակական նոր մակարդակի: Նման մեթոդի կիրառումը պարտադրում է կոնկրետ տեքստը ընդհանրապես քաղաքակրթական ողջ մշակույթի և մասնավորապես այդ իսկ տեքստի հենք հանդիսացող կոնկրետ մշակույթի (ո՛չ միայն լեզվական) համայնապատկերի վրա դիտարկելու սկզբունք, ինչի դեպքում հնարավորություն կստեղծվի նաև նորովի բացահայտելու լեզվի և լեզվական-խոսքային (տեքստային) իրողության կարևոր դերակատարությունը մասնավորապես քաղաքակրթական կյանքի առաջացման գործընթացի մեկնաբանման, ընդհանրապես քաղաքակրթության գոյության և զարգացման մեջ:

Մարդկանց միավորումը, մարդու՝ մարդուց հեռացումը, մարդու և մարդու հաշտությունը քաղաքակրթական ընթացքի տարբեր հատվածներն են, որոնք կարող են յուրովի դրսևորվել (կյանք) և արձանագրվել (տեքստ) տարբեր արժեհամակարգեր ունեցող մշակույթներում: Իսկ թե ինչով են պայմանավորված այդ դրսևորումների յուրահատկությունները, նաև հնարավոր է բացահայտել կյանքի արձանագրման «շտեմարանների»՝ տեքստերի ուսումնասիրությամբ:

Այս առումով արժեքավոր են ոչ միայն, **առաջին**, այնպիսի տեքստերը, որոնցում պահպանված են լեզվական և լեզվաբանական տարբեր երևույթներ-

րի վերաբերյալ հիշողությունները, երբ լեզուն զբաղվում է իր «ինքնադիմանկարի», իր «կերպարի» շարունակական ստեղծմամբ, բնութագրմամբ, պահպանմամբ ու անընդհատական վերարտադրմամբ, այլև, **երկրորդ**, այնպիսիք, որոնք լեզվի «կերպարի», «դիմանկարի» նկարագրության հետ առնչություն չունեն:

Առաջիններում անընդհատ խոսքային միջավայր են բերվում այն բառերը, որոնք անվանում են լեզվական, լեզվաբանական, խոսքային, գրական և դրանց մոտ ոլորտների երևույթները՝ ձայն (ձայնել), աղմուկ (աղմկել), հնչյուն (հնչել), բան (բանել), բառ (բարբառել), խոսք (խոսել), խոստում (խոստանալ), ասք (ասել), պատում (պատմել), երգ (երգել), գիր (գրել), ձոն (ձոնել), միտք (մտածել) և այլն:

Երկրորդներում գործում է այնպիսի բառերի ազդեցությունը, որոնք, թեև իրենց առաջին, ուղղակի իմաստով հեռու են հիշյալ ոլորտներից, սակայն տեքստի հոգևոր-մշակութային աստղծր բացահայտելիս նմանություն (հոմանիշություն) կամ հակադրություն (հականիշություն) են հանդես բերում վերևում թվարկված և իմաստով դրանց մոտ այլ բառերի նկատմամբ:

Իսկ ինքն իր մասին պատմող խոսքը (տեքստը) ամեննին էլ նարցիսսականության ախտանիշը կրողը չէ, այլ կյանքի, աշխարհի և, մասնավորապես, քաղաքակրթական կյանքի վերաբերյալ հիշողության «բեռնակիրն» ու պահապանը, որի օգնությամբ տեքստը կարող է լրջորեն մասնակցել քաղաքակրթության ծագման վերաբերյալ գիտական բանավեճին:

Լեզվի և խոսքի՝ հենց տեքստում արժևորելու իրողության պարզաբանման համար անհրաժեշտ է նախ կարողանալ հասկանալ **ձայն** (հնչյուն, հնչույթ) - **բառ** (անուն, հասկացություն, գաղափար) - **տեքստ** (խոսք, բանաստեղծություն՝ և՛ լայն, և՛ նեղ առումով) աստիճանակարգի **քաղաքիչների ու տարրերի ընդհանրությունը**, ընդհանրապես խոսքը և մասնավորապես կոնկրետ տեքստը ընկալել որպես այդ աստիճանակարգի վերին օղակ, մի բան, որ գոնե մեզանում դեռևս վերջնական (հարաբերականորեն) հանգրվանի չի հասել:

Կոնկրետ տեքստը, տվյալ պահի լեզվակիրառական իրողություն լինելուց զատ, իրեն ծնող մշակութային միջավայրի «բեռնակիր» է, և մեթոդական առումով անխուսափելի է տեքստի ուսումնասիրությունը նախ տվյալ պատմական, ապա և վերպատմական (անդրժամանակային, վերժամանակային) մակարդակներում: Ի վերջո, ցանկացած տեքստի ուսումնասիրության համար անխուսափելի է այդ երկու մեթոդների համադրումը:

Պատմական (առօրեական, նույնիսկ կենցաղային) առումով ցանկացած տեքստ ստեղծվում է կոնկրետ պատմական-ժամանակային պահի համար: Օրինակ՝ այս կամ այն պաշտոնյայի ելույթը հասարակական-տնտեսական, քաղաքական որևէ իրողության առնչությամբ ու վերաբերյալ, պետությունների ղեկավարների ելույթների տեքստերը, նույն անցանկալի արարքը դարձյալ կատարած երեխայի մոր հանդիմանանքը («Կարմիր կովն իր կա-

շին չի փոխի»), լրագրողի հրապարակախոսական հոդվածն ինչ-որ հանրային երևույթի մասին ստեղծվում են տվյալ պատմական-քրոնիկ պահին տվյալ պատմական-քրոնիկ իրավիճակը սպասարկելու համար, սակայն բոլոր այս և այլ դեպքերում հնչող խոսք-տեքստերը իրենց կազմությունն ապահովող տարբեր բաղադրամասերով շաղկապված են պահից դուրս գոյություն ունեցող, մշտառկա այնպիսի իրողությունների հետ, որոնք պայմանավորում են տվյալ լեզվով խոսող հանրության, ժողովրդի մշակութային արժեհամակարգը: Իսկ այդ արժեհամակարգը հիմնված է տվյալ հանրության, ժողովրդի մտածողության, հոգեբանության, կենսափիլիսոփայության, փորձի վրա, այսինքն՝ այն համակարգի վրա, որը քիչ առաջ բերված օրինակներում կարող է պատասխանել հարցին, թե ինչու, պատկերավոր ասած, իր կաշին չի փոխում հատկապես կարմիր կովը: Սա արդեն տեքստի ընկալման վերապատմական, վերժամանակային մեթոդի խնդիրն է:

Ձայն (հնչյուն) - **բառ** (անուն) - **խոսք** (տեքստ) աստիճանակարգային առանցքի վրա կառուցվում է կոնկրետ լեզվով խոսող ժողովրդի մտածողական համակարգը, որը որպես կենդանի օրգանիզմ ապրում է տվյալ լեզվով ստեղծված, ստեղծվող և վերստեղծվող այն խոսքի մեջ, որի գոյատևումը ժողովրդի հիշողության ոլորտում (այսինքն՝ մշակութայնությունը) փաստում է դրա արժեքայնությունը: Նման խոսքեր են բանահյուսական (էպոս, հեքիաթ, ասացվածք և այլն), անվերապահորեն ընդունված անհատական գեղարվեստական (օրինակ՝ «Մատյան ողբերգության», «Ես իմ անուշ Հայաստանի») տեքստերը և այլն:

Կոնկրետ տեքստը հայտնվում է տվյալ ժողովրդի լեզվի վրա խարսխվող ողջ լեզվամտածողական համակարգի «խոշորացույցի» տակ, այն գիտակցորեն ու ենթագիտակցորեն գնահատվում է ոչ միայն որպես լեզվական, այլև նախ մշակութային իրողություն: Այդպիսով ի հայտ են գալիս և՛ այդ տեքստն ստեղծող անհատի նպատակադրումները, և՛ հենց այդ անհատի միջոցով նրա ժողովրդի ստեղծած արժեհամակարգային իրողությունները գիտակցորեն և ենթագիտակցորեն (ինքնաբերաբար) վերարծարծելու, վերարտադրելու և հնարավորինս զարգացնելու անառարկելի փաստերը:

Ձայն-բառ-խոսք աստիճանակարգն այսպիսով պարտադրում է, որ տվյալ լեզվով ստեղծված ու ստեղծվող ցանկացած տեքստ (ասենք, որևէ գրական ստեղծագործություն) գնահատվի ոչ թե այլ տեքստերի (այլ գրական ստեղծագործությունների) հետ համեմատության զուգահեռում (գրականագիտական մոտեցում), այլ տվյալ ժողովրդի ստեղծած արժեհամակարգի ուղղահայացում, որն ընդգրկվում է տվյալ ժողովրդի լեզվով (մշակութաբանական մոտեցում):

Մեթոդական այս սկզբունքով շարժվելիս ի հայտ է գալիս կոնկրետ տեքստը ոչ միայն գաղափարաբովանդակային, այլև կառուցվածքային (միտքը կառուցելու) տեսակետից գնահատելու հրամայականը, անհրաժեշտություն է առաջանում արծարծելու և պարզաբանելու տեքստի և իրականու-

թյան, տեքստի և ժամանակի փոխհարաբերության, տեքստի տեսակի, տեքստի մաքրության, տեքստի տրամաբանականության և տեքստային օրգանիզմը կազմակերպող ինչ-ինչ այլ իրողությունների (ասենք սյուժե, կերպար, խորհրդանիշ և այլն) ուսումնասիրության զանազան խնդիրներ: Հաճախ հենց կոնկրետ տեքստն է բովանդակությունն ուղղում ընդհանրապես տեքստի էության արժևորմանն ու բացահայտմանը, և, հասկանալի է, առաջին հերթին նաև նման կոնկրետ տեքստերի քննությունը պետք է լինի ուսումնասիրության թիրախ:

Լեզուն (խոսքը), ինչպես ընդունված է, մարդուն կենդանական աշխարհից էականորեն առանձնացնող իրողություններից մեկն է, մարդու քաղաքակրթական էության նախապայմանն ու երաշխավորը, և տրամաբանական է, որ խոսքի (բանի) վերաբերյալ խոսող տեքստն ունի ներուժ՝ մասնակցելու քաղաքակրթական գոյության (ձայնն ընդհանրապես կենդանության նշանն է, խոսքը՝ քաղաքակրթական գոյության և լինելության), ընդհանրապես կյանքի, մինչև իսկ տիեզերքի գոնե մեր հատվածի առաջացման վերաբերյալ խնդիրների մեկնաբանությանը, այդպիսով նաև օգնելու աշխարհընկալման կարևոր հարցերում և հավաստելու, որ լեզվաբանական այս կամ այն գիտելիքը կարող է ծառայել ոչ լեզվաբանական գիտելիքի ստեղծմանն ու համակարգմանը:

**Гадевос Тоноян – Иерархия звук – слово – текст,
текстовая значимость слова (текста)**

Речь, в каких бы целях она ни создавалась и воспроизводилась, в глубине своей сохраняет память о своем звуковом происхождении в качестве важного фундамента, на который опирается человеческое мышление и цивилизация. Иначе невозможно объяснить художественно-“образную” распространенность, столь большую роль или просто повсеместное упоминание звука и других речезыковых элементов и явлений в речи, в частности в армянской поэзии. Язык необходимо изучать в его реальном употреблении, основываясь прежде всего на психологии общества, фольклоре, мифологии, традициях, которые выражаются в различных речевых формах и во всей культуре вообще. Затрагивая подобные проблемы, необходимо основываться в особенности на фольклорном материале, являющемся венцом народной культуры, в частности – на эпосе и таких произведениях отдельных авторов, которые безоговорочно признаны и высоко оценены обществом, народом. Лингвистика всегда была чувствительна к вопросу взаимообусловленности языка и культуры, но необходимо признать, что их неразделимая взаимосвязь недостаточно изучена. Текст следует изучать не только как языковое, но и как культурное явление, так как культура прежде всего носит языковой характер. В этом случае можно выяснить, что, помимо узкого – прямого – и переносного значения, слова и составленные из них тексты имеют и другие внутренние связи, которые существуют и постоянно воспроизводятся в устной речи и текстах, созданных народом – носителем данного языка.

Tadevos Tonoyan – *Sound - Word -Text Hierarchy, Text Appreciation*

To whatever purpose it is created and re-created, the speech deep inside maintains the memory of its vocal origin as the most important timber, on which human mentality and the existence of civilization are based. Otherwise it would be impossible to explain the literary-“figurative” prevalence of sounds and other linguistic elements and realia in speech, especially in Armenian poetry, their great role or just simple widespread indication. Language should be studied in its real use, relying primarily on social psychology, folklore, mythology, traditions that are expressed in verbal forms and in the entire culture. In dealing with such problems we should rely upon the study of the folkloric material – the crown of culture, particularly the epic poem, and the works of individual writers which are unconditionally accepted and highly valued in the society and among people. Linguistics has always been sensitive to the issue of language and culture interconnection, but we have to admit that their mutual inseparable link has not been properly studied. The text should be studied not only as a linguistic but also as a cultural phenomenon, as culture is primarily a linguistic phenomenon. In this case we find out that beyond the direct and figurative meanings there are other internal relations and connections between the words and texts that are created with them, the words live and constantly reproduce in the texts of verbal art of people bearing the language.

ԽԵԹԱԿԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր – խեթերեն, հայասերեն, հայերեն, բառարմատներ, հատուկ անուններ, անձնանուններ, տեղանուններ, դիցանուններ, ենթաշերտ, ընդհանրություններ, Հայկական բարձրավանդակ

Հայկական բարձրավանդակը հատուկ անունների ուսումնասիրության տեսանկյունից գերհարուստ նյութ է ընձեռում, քանզի հազարամյակներ շարունակ այստեղ ապրել են հնագույն ժողովուրդներ, որոնք անվանակոչել են շրջապատող աշխարհի միավորները, բնակավայրերը, իրենց աստվածներին, դյուցազուններին և արքաներին՝ նրանց մասին թողնելով գրավոր բազմաթիվ հիշատակություններ: Հետագայում այդտեղ հաստատված այլ ժողովուրդները հիմնականում պահպանել են այս անունները՝ ձևափոխելով դրանք՝ ըստ իրենց լեզվամտածողության և հնչյունական համակարգերի: Կիրառվելով հազարամյակների ընթացքում՝ հատուկ անունները կորցրել են իրենց բառային թափանցիկությունը կամ ճանաչելիությունը: Ուստի լեզվաբանների համար առաջնահերթ է դառնում դրանց ստուգաբանությունը, որը պատասխանում է կարևորագույն երկու հարցի. ա) ո՞ր ժողովուրդների լեզվում են դրանք ստեղծվել, ապա կիրառվել, բ) ի՞նչ բառային իմաստ է թաքնված դրանց մեջ:

Ստուգաբանությունները թույլ են տալիս բացահայտել յուրաքանչյուր ժողովրդին բնորոշ անվանադրման սկզբունքները, առանձնացնել հատուկ անունների իմաստակառուցվածքային կաղապարները, իսկ դրանք միավորում են տարբեր լեզուները՝ երևան բերելով անվանադրման համընդհանուր կաղապարները: Հատուկ անունների նախնական իմաստի վերականգնումն առաջնային խնդիր է նաև պատմագիտության և աշխարհագրության համար, որովհետև այս գիտակարգերի տեսանկյունից հատուկ անունները տարբեր ժողովուրդների բնակության սկզբնական վայրերի, տվյալ տարածքի նախնական աշխարհագրական վիճակի, մշակութային զարգացման մակարդակի մասին բնութագրիչ տեղեկություններ պարունակող միավորներ են, յուրօրինակ վաղնջատեքստեր, որոնց միջոցով հնարավոր է վերականգնել կորուսյալ փաստեր իրենց ինքնությունը կորցրած ազգերի, նրանց լեզուների, հավատալիքների, կյանքի ու մշակույթի առանձնահատկությունների վերաբերյալ:

Ինչպես նշեցինք, պատմական Հայաստանի տարածքը վաղնջական ժամանակներից եղել է մեծ և փոքր ժողովուրդների խառնարան, որտեղ բնիկ և

եկվոր ժողովուրդները միմյանց դեմ պատերազմներ են մղել, դաշինքներ կնքել, պետություններ ստեղծել, արքայական և նախարարական տոհմեր ձևավորել: Այս ամենի հետևանքով հայոց լեզուն հարստացել է տարբեր արմատներով՝ այդ թվում իտալական, դրանցից կազմված տեղանուններով, անձնանուններով, դիցանուններով, իսկ մեր պատմությունը և մշակույթը՝ իշխանական տոհմերով, աստվածներով և հերոսներով:

Հայկական անվանահիմքերում հայ-իտալական բառային ընդհանրությունները, զուգաբանությունները յուրօրինակ շերտ են կազմում: Մեր նպատակն է առանձնացնել հայ-իտալական այն բառային զուգաբանությունները, արմատները, հատուկ և հասարակ անունները, դիցանուններն ու ժողովրդանունները, որոնք կամ ուղղակի են վկայված, կամ վերականգնվում են հայկական հատկանվանացանկերում: Դրանք փոխառություններ չեն, այլ հայերենի ենթաշերտը կազմող ձևեր են, որոնք ծագում են վաղնջահայերենից, իսկ դրանց մի մասն իր կենսունակությունը պահպանել է ցայսօր: Ենթաշերտը տեղաբնակների լեզվի ազդեցությունն է եկվորների, այդ թվում նվաճողների լեզվի վրա. վաղնջական բազմաթիվ հատուկ անուններ բացատրվում են հենց ենթաշերտի միջոցով: Այդ իսկ պատճառով ընդհանուր բառային ենթաշերտի մեջ ընդունված է առանձնացնել հատկանվանական ենթաշերտը: Հատկանվանագիտական գրականության մեջ ենթաշերտն ավելի լայն՝ լեզուների ցեղակցական բնույթից անկախ ըմբռնում ունի: Այսինքն՝ ցեղակից ժողովուրդների կամ ազգերի տեղանվանական փոխներթափանցումները ևս համարվում են ենթաշերտային, այն դեպքում, երբ ընդհանուր լեզվաբանության մեջ անհնար է խոսել ենթաշերտի մասին, երբ խոսքը վերաբերում է քույր լեզուներին¹:

Ընդհանրապես տարբեր լեզուներում տեղանունների, հատկապես՝ տեղանվանահիմքերի զուգադրությունը թույլ է տալիս բացահայտել լեզուների ընդհանրության նոր աստիճաններ, որոնցից կարևորագույնը տիպաբանական մերձակցությունն է: Այս առնչությամբ Ն. Տրուբեցկոյը նշում է. «Ես կասկածում եմ, որ երբևէ հնարավոր կլինի համոզիչ և աներկբա (գիտական տեսանկյունից) ապացուցել հնդեվրոպական լեզուների մերձավորությունը սեմական, ուրալյան կամ կովկասյան լեզուների միջև: Ընդ որում ես, «մերձավորություն» ասելով, նկատի ունեմ բացառապես նրա ուղիղ՝ ծագումնաբանական իմաստը: Կա մեկ այլ բան ևս՝ տիպաբանական մերձավորությունը, որն անկասկած գոյություն ունի ծագումնաբանորեն միմյանց հետ չկապված լեզուների միջև»²: Կարող ենք ասել, որ անվանադրումը, Կ. Յունգի բնորոշմամբ, մարդկային հիմնական արքետիպերից է: Մեր համոզմամբ,

¹ Sk' u **Агеева Р. А.**, Проблемы топонимического субстрата // Этническая топонимика. Сборник статей, М., 1987, с. 15.

² **Трубецкой Н. С.**, Проблема родства между большими языковыми семьями // Избранные труды по филологии, М., 1987, с. 61.

նրա առանձնացրած արքետիպերին պետք է հավելել *Հավերժական անվանադրի* արքետիպը, որը թույլ է տալիս մարդկանց աշխարհի տարբեր ծագերում բոլոր ժամանակներում անուններ ստեղծել սահմանափակ թվով արմատների և ածանցների միջոցով ոչ միայն մարդկանց բազմության, այլև շրջակա աշխարհի անսահմանափակ միավորների համար. «Դա առաջնային նախնական փորձ է, որը սկիզբ է առնում անժամանակության խորքերից՝ քանդելու նախաստեղծ քառսի թնջուկը»¹:

Խեթերենի հնդեվրոպական բնույթն արդեն ապացուցված է, սակայն բազմաթիվ են խեթերենում և հայերենում առկա բառային ընդհանրությունները ոչ հնդեվրոպական տարբեր ժողովուրդների հասարակ և հատուկ անունների միջև: Ինչպես փաստում է Գ. Ջահուկյանը՝ «զգալի թիվ պետք է կազմեն հայերենի՝ խեթա-լուվական լեզուներից ոչ անմիջաբար կատարված փոխառությունները, դրանք կարող են գալ խուռա-ուրարտական, սեմական և այլ լեզուների միջնորդությամբ, ինչպես հայտնի է, խեթա-լուվական լեզուների ներդրումն այդ լեզուների մեջ բավական մեծ թիվ է կազմում»²: Նման բառերի հիման վրա հնարավոր է վերականգնել տիպաբանական մերձավորության աստիճանը Փոքր Ասիայում, Ասորիքում և Կովկասում բնակված ու բնակվող ժողովուրդների լեզուների միջև:

Հայերենի և խեթերենի փոխհարաբերության հարցը գիտնականների հետազոտության առարկա է դարձել դեռևս այն ժամանակներից, երբ խեթերենի գիտական ուսումնասիրությունը նոր էր սկսվում, դեռ տարբերակված չէին բուն խեթերենը և հիերոգլիֆային խեթերենը: Հայ-խեթական ցեղակցական ընդհանրության դրույթի անդրանիկ հիմնավորողը Պ. Ենսենն էր³, որն առաջ էր քաշում այն կարծիքը, թե խեթերը հայերի նախնիներն են: Խեթերի անունը, որը ակկադական, ուրարտական որոշ սկզբնաղբյուրներում հայտնի էր *ht, hate, hattı, hati* ձևերով, Աստվածաշնչում՝ *hittim*, հնդեվրոպական լեզուներից հայտնի *t>j* հնչյունական անցումով կարող է հանգեցնել *հայ* ժողովրդանվանը: Խեթական բևեռագիր արձանագրությունների հայտնագործումից և վերածանումից հետո ևս որոշ գիտնականներ, օրինակ՝ Ի. Դյակոնովը⁴, շարունակում էին հիմնավորումներ փնտրել այդ վարկածի համար՝ ձգտելով *հայ* ժողովրդանունը կապակցել *hate, hattı, hati* անվանումների հետ: Նշենք, որ *խեթ* անվանումն ինքնանվանում չէ, *խեթերեն* եզրույթը ևս ծագել է ավելի ուշ, նախապես այս ժողովրդի լեզուն կոչում էին *նեսիտական* կամ *նեսիական*: Ինքնանվանումը *nešumnilı/kanišumnilı* մակբայից է, որը թարգմանվում է

¹ Հմմտ. **Карл Юнг**, Избранное, М., 1998, с. 8-10:

² **Ջահուկյան Գ. Բ.**, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 313:

³ Տե՛ս **Jensen P.**, Hittiter und Armenier, Strassburg, 1898.

⁴ Տե՛ս **Дьяконов И. М.**, Хетты, фригийцы и армяне. Переднеазиатский сборник, М., 1961, с. 333-368.

«խեթերի ձևով», այն ծագել է վաղ իտալական թագավորության կենտրոնական քաղաքի անունից՝ Նեսա կամ *Կանեսա* (այն գտնվում է արդի Թուրքիայի տարածքում՝ Գյուլյթեփե)¹: *Խեթերեն* լեզվանունը առաջացել է շատ ավելի ուշ ծագած աստվածաշնչյան *խեթեր* ժողովրդանունից, որի հիմքում իտալական պետության անվանումն էր՝ KUR^{URU} Hatti- «Հաթթի քաղաքի երկիր», նշենք, որ Hatti-ն հաթթի ինքնանվանումն է, իսկ հաթթերը Կենտրոնական Անատոլիայի և Հայկական բարձրավանդակի բնիկ (autochtone) ժողովուրդներից են, որոնք ձուլվեցին իտեթերին: Հաթթի լեզուն լեզվաբանության ներկայիս սովյալներով հնդեվրոպական չէր և արմատապես տարբերվում էր հին անատոլիական հնդեվրոպական լեզուներից²:

Վերջին տարիներին Մայնցի գիտությունների և գրականության ակադեմիայի Հին Արևելքի հանձնաժողովի ջանքերով ստեղծվել է համացանացային «Hethitologie Portal Mainz» շտեմարանը, որը եվրոպական այլ կենտրոնների հետ համագործակցելով՝ վիթխարի աշխատանք է կատարում՝ հրապարակելով իտեթերեն արձանագրությունների արտանկարները և դրանց վերծանմանը վերաբերող մեծաքանակ նյութեր:

Խեթերենն այսօր բավականաչափ ուսումնասիրված և գրավոր հարուստ վկայություններով փաստագրված վաղնջական լեզուներից է, որն իր գրավոր հուշարձաններով հայտնի է մ. թ. ա. II հազարամյակից, իսկ Խեթական թագավորության պաշտոնական լեզու համարվել է մ. թ. ա. XVIII-XIII դարերում: Հայտնի են իտալական գրչագրական չորս կենտրոն՝ Խաթթուսան, Սաբինուվան, Թաբիկկան և Մարիսան, որտեղ կատարված պեղումների ընթացքում հայտնաբերվել են պետական, պաշտոնական, ծիսական բովանդակության տեքստեր պարունակող տասնյակ հազարավոր կավե աղյուսներ: Ցավոք, իտալական սեպագիր աղյուսների մեծ մասն այսօր գտնվում է Թուրքիայում՝ Անկարայի ու Ստամբուլի թանգարաններում, հանգամանք, որը, գիտնականների արձանագրմամբ, անհնար է դարձնում կամ լրջորեն դժվարացնում է բնօրինակների գիտական ուսումնասիրությունը: Բարեբախտաբար Բողազքոյում գտնված տեքստերի պատառիկների մեծ մասը արտանկարված է և տպագրված³:

XXI դարում իտալագիտությունը լուրջ առաջընթաց է արձանագրում. 2008-2012 թթ. հրապարակվել են իտեթերենին վերաբերող նոր աշխատություններ, որոնք պարունակում են լեզվական հարուստ նյութ: Ամենից առաջ առանձնացնենք Հ. Հոֆների և Կ. Մելչերտի երկհատոր աշխատությունը, որի երկրորդ հատորում տառադարձմամբ տրված են իտալական բազմաթիվ

¹ St' u Касьян А. С., Свиридов А. В., Хеттский язык // Реликтовые индоевропейские языки Передней и Центральной Азии, М., 2013, с. 26:

² Հմմտ. Ջահուկյան Գ. Բ., Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Երևան, 1970, էջ 124:

³ Հմմտ. Касьян А. С., Свиридов А. В., նշվ. աշխ., էջ 29:

արձանագրություններ, ինչպես նաև Թեո Վան Դեն Հաուտի աշխատությունը, որտեղ խեթական տեքստերը տրված են թե՛ տառադարձմամբ և թե՛ բուն սեպագրերով¹: Ընձեռված տվյալների հիման վրա հավաստիության առավել բարձր աստիճանով հնարավոր է զուգահեռներ անցկացնել հայ-խեթական տեղանվանական ընդհանրությունների վերաբերյալ:

Հայ-խեթական լեզվական առնչություններին անդրադարձել են ոչ միայն հայ, այլև այլազգի հայտնի լեզվաբաններ, պատմաբաններ՝ Ջ. Բոնֆանտեն, Հ. Պեդերսենը, Գ. Ջոլտան, Ա. Կամենհուբերը, Տ. Շուլտհայսը, Ջ. Գրեպպինը, Ա. Վան Վինդեկենսը, Ն. Մարտիրոսյանը, Գր. Ղափանցյանը, Հ. Աճառյանը, Գ. Ջահուկյանը, Հ. Մանանդյանը, որոնք հնչյունական և իմաստային բազմաբնույթ հիմնավորումներով առանձնացրել են հայ-խեթական ընդհանուր բազմաթիվ արմատներ: Ջուտ հատուկ անունների ասպարեզում հայ-խեթական առնչությունների մասին առանձին հետազոտություններ են կատարել Հովհ. Կարապետյանը, Ա. Քոսյանը, Վ. Խաչատրյանը, Ա. Պետրոսյանը: Գ. Ջահուկյանը, անդրադառնալով այս հարցի նախակարապետներին, որոշ վերապահումներ է կատարում: Այսպես՝ Բ. Հրոզնու աշակերտ Ն. Մարտիրոսյանի հետազոտությունները կարևորելով հանդերձ՝ նա քննադատում է նրա մեթոդը, որը հիմնականում արտաքին նմանություններից էր ելնում: Թեև պետք է նշել, որ արտաքին նմանությունների հիման վրա բառային զուգաբանությունների ցանկի կազմումը էական կարևորություն ունի, նմանությունների որոշակի քանակից են ծնվում որակական բնութագծերը: Գր. Ղափանցյանի և Տ. Շուլտհայսի համեմատությունները համարվում են առավել համոզիչ, բայց՝ թերի: Գր. Ղափանցյանի ստուգաբանությունների հանդեպ վերապահության հիմքում վճռորոշ է այն գործոնը, որ այս մեծ լեզվաբանը չընդունեց հայերենի հնդեվրոպական բնույթը՝ մեր լեզուն համարելով ասիանիկ և հնդեվրոպական տարրերի խառնուրդ:

Անդրադառնալով հայ-խեթական ընդհանրություններին՝ Գ. Ջահուկյանը նշում է. «Եթե ճիշտ է այն վարկածը, որ հայերենի բուն կրողները՝ արմենները, Փոքր Ասիայում մասսայաբար երևացել են փոյուզիական ցեղերի հետ մ.թ.ա. XII դարի մոտերքը, ապա խոսք կարող է լինել ոչ թե բուն խեթական ժողովուրդների, այլ խեթական պետության կործանումից հետո այդ ժողովուրդների մնացորդների հետ հայերի ունեցած տևական շփման մասին»²: Այսինքն՝ հայ-խեթական բառային ընդհանրությունների հիմնական մասը պետք է լինի հայ ժողովրդի մեջ ձուլված խեթա-լուվական, հայասական ցեղերի ենթաշերտային ազդեցության արդյունք: Գ. Ջահուկյանը կարծում էր, որ հայասերենը ևս ցեղակցորեն կապված է խեթա-լուվական լեզուների հետ,

¹ Խեթագիտության վերջին ձեռքբերումները հասանելի են էլեկտրոնային տարբերակով «Hethitologie Portal Mainz» ծրագրի կայքում՝ <http://www.hethport.uni-wuerzburg.de/HPM/hethportlinks.html>

² Հմմտ. **Ջահուկյան Գ. Բ.**, նշվ. աշխ., էջ 146-147:

և փորձում էր հայասական շերտ վերականգնել հայերենում՝ իբրև բնիկ տարր: Ըստ էության այս կարծիքին էին նաև Գր. Ղափանցյանը և Ն. Ադոնցը, որոնք վերականգնում են վաղնջահայերի նախնական բնակավայրը և այնտեղ ապրող ցեղերին, որոնց անվանումների հիման վրա ծագել են հայերի ժողովրդանունները՝ *հայ, արմեն, Թորգոմյան ազգ, Ասրանազյան ազգ, Նաիրյան ազգ, սումեի*¹:

Գ. Ջահուկյանի կարծիքով՝ հայասացիների լեզուն, որը պատկանում էր հնդեվրոպական լեզուների խեթա-լուվական խմբին և պարունակում էր թրակա-փոյուզիական տարրեր, հայերենին ձուլվելու ընթացքում նրա մեջ թողել է հնդեվրոպական ծագման այնպիսի բառեր, որոնք չեն բացատրվում հայերենի բուն օրինաչափություններով²: Մենք, հետևելով այս դրույթին, հայասական ծագման անվանահիմքերը քննել ենք խեթականի հետ մեկտեղ: Գիտնականի ենթադրությամբ, համեմատաբար փոքր է խեթերենից հայերենի անմիջաբար կատարած փոխառությունների քանակը, հայ-խեթական որոշ բառային ընդհանրություններ ամենայն հավանականությամբ ծագում են շրջակա լեզուներից, նախ և առաջ՝ կովկասյան և խուռա-ուրարտական լեզուներից³: Խեթական պետության արևելյան ծայրագավառում բնակվել են անատոլիական-հայասական, խուռա-ուրարտական, կովկասյան և այլ բնույթի ժողովուրդներ, ինչպես նաև հայերենով և նրան մերձավոր լեզուներով խոսող ժողովուրդներ: Գ. Ջահուկյանը եզրակացնում է. «Անհնար չէ Խորենացու հիշատակած՝ Հայկի հաջորդների և նախարարական որոշ տների անունների մեջ տեսնել հայասական թագավորների անունների և դիցաբանական անունների արձագանքը»⁴: Որպես հիմնավորում՝ նա բերում է **Արա, Տորք, Կադմուս, Հայկակ, Հոյ** դիցանունները, **Սկայորդի** ցեղանունը: Հովհ. Կարազյոզյանը *Սկայորդի* անունը կապում է Վանում հայտնաբերված Ռուսա Բ-ի արձանագրության մեջ հիշատակված հայասական թագավոր Šaga-DUMU-ի անվան հետ՝ վկայակոչելով նաև Գր. Ղափանցյանի վերականգնումը՝ *Սկայորդի > Šaga > *Šakahi*⁵:

Գր. Ղափանցյանը անդրադարձել է նաև հայ նախարարական մի շարք տոհմանունների, որոնցից ծագում են բազմաթիվ բնականուններ և երկրանուններ՝ դրանք ստուգաբանելով որպես խեթական ցեղերի հնագույն անվանումներ⁶: Նման ստուգաբանությունների որոշ մասն այսօր վիճարկվում

¹ Հմմտ. Капанцян Гр., Историко-лингвистические работы, т. II, Историко-лингвистическое значение топонимики древней Армении, Ереван, 1975, с. 63-174, **Ադոնց Ն.**, Հին հեղինակների տեղեկությունները հայերի ծագման մասին // **Ադոնց Ն.**, Երկեր, հ. Դ, Երևան, 2009, էջ 339-359:

² **Ջահուկյան Գ. Բ.**, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, էջ 340:

³ Տե՛ս **Ջահուկյան Գ. Բ.**, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, էջ 147:

⁴ **Ջահուկյան Գ. Բ.**, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, էջ 341:

⁵ Տե՛ս **Կարազեռզեան Յովհ.**, Սեպագիր տեղանուններ, Երևան, 1998, էջ 274-277: Տե՛ս նաև **Ղափանցյան Գր.**, Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940, էջ 217:

⁶ Տե՛ս Капанцян Гр., նշվ. աշխ., էջ 65-160:

է, սակայն ընդհանուր կաղապարն իր կենսունակությունը պահպանում է ցայսօր, այսինքն՝ հայկական էթնոսի մեջ ձուլվող այլ ցեղային միավորների անվանումները սկզբնապես վերածվել են տոհմանունների, ապա՝ բնականունների, որովհետև այդ տոհմերը հիշյալ գավառների կամ աշխարհների տերերն էին ու հիմնադիրները: Այսպես՝ **Ամատունիները**, Գր. Ղափանցյանի համոզմամբ, ծագում են *mada* ցեղանունից, որը նույնն է, ինչ միդացիները, Գ. Ջահուկյանը ևս վկայակոչում է հիերոգլիֆային խեթերեն **Amatusyana** (ցեղանունը)՝ առանց մեկնաբանության այն զուգադրելով հայոց *Umsatunih* տոհմանվան հետ¹: Գր. Ղափանցյանը խեթական արմատներ է վերականգնում **Մանդակունի** տոհմանվան մեջ, որն ըստ նրա՝ բխում է *mandak* անունից, **Սլկունի** տոհմանունը՝ *sala, salak* ցեղանունից: Վերջիններս հիշատակվում են խեթական օրենսգրքում, ինչպես նաև ասորեստանյան արձանագրություններում որպես մարտունակ և ավագակաբարո ազգություններ: **Խոռխոռունի** տոհմանունը Գր. Ղափանցյանի կարծիքով ծագում է Xor անունից, որը նույնն է, ինչ Խուռ-ը, խուռիտները²: Այս տոհմանուններն իրենց հերթին շրթայաբար տեղանունների, անձնանունների հիմք են դարձել:

Պատմաբանների համոզմամբ, վերոնշյալ տոհմերի մի մասն ապրում էր Հայաստանում կամ տեղափոխվել էր Հայաստան Խեթական պետությունից, և նրանց ժառանգները դարձել էին հայոց նախարարական տների հիմնադիրներ: Երբեմն այդ տոհմերը, ձուլվելով մայր ժողովրդի մեջ, իրենց մասին վկայություններ պահպանել են միայն տեղանուններում, որովհետև նրանք չեն կարողացել երկար գոյատևել որպես ինքնուրույն ավատատեր տոհմ և կլանվել են այլ՝ ավելի բազմանդամ ու հզոր նախարարական տոհմերի կողմից: Այս առումով հետաքրքիր է ներկայումս վերակենդանացած **Քաշաթաղ** տեղանվան ստուգաբանությունը, որն արձանագրված է պատմագիր Ստեփանոս Օրբելյանի Սիսական նահանգի պատմության մեջ և զարգացվել է Գր. Ղափանցյանի կողմից, ըստ այդմ՝ *Քաշաթաղ, Քաշունիք, Քաշի մարզ* տեղանունների հիմքում *քաշիտ* ցեղն է, *Քաշունիքն* ինքնին, որպես լեզվական միավոր, տվյալ ազգի հոգնակի ուղղականի բառաձևն է: Նշենք, որ հոգնակի ուղղականի և հայցականի հոլովաձևերը տեղանուն դառնալու մեծ ներուժ ունեն³:

Խեթական ենթաշերտային տեղանուններից հիշատակենք **Արմավիր**-ը, որը Գ. Ջահուկյանը բխեցնում է հին անատոլիական *Arma* – «լուսին, լուսնաստված» անունից⁴: **Ամասիա**-ն նա համադրում է խեթերեն *hamasa-s* «թոռ»

¹ Տե՛ս **Ջահուկյան Գ. Բ.**, նշվ. աշխ., էջ 161:

² Տե՛ս **Капанцян Гр.**, ., նշվ. աշխ., էջ 46-47:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 123-125:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 161:

բառի հետ¹ այս մեկնաբանությունը համարելով առավել հավանական, բայց բերում է նաև թրակյան կամ հրեական ծագման վարկածներ: Այսպես՝ նա զուգահեռականություն է հաստատում թրակյան իգական *Αμασιαχίς* անվան և հայկական արական *Ամասիա* անվան միջև, որից Մ. Խորենացին բխեցնում է *Մասիս* լեռնանունը: Գ. Ջահուկյանը չի շրջանցում նաև *Ամասիա* անվան հրեերեն բացատրությունը, ըստ որի՝ *Ամասիան* բարդ բառ է՝ կազմված *amš* «հզոր» և *Jāh* «Եհովա» բաղադրիչներից. հրեական թագավոր *Ամասիայի* անունը այսպես է ընդունված ստուգաբանել: Այս զուգաբանությունները, սակայն, Գ. Ջահուկյանը հիշատակում է թեականության երանգով²: Իսկ Ա. Քոսյանը **Ամասիա** տեղանվան մեջ վերականգնում է իսթական *am* արմատը՝ «մայր, կին» իմաստով³:

Չուտ հայասական ծագման անվանակերտներից Գ. Ջահուկյանն առանձնացնում է **aša** մասնիկը, որը համարում է հայկական *-ական* ածանցին հոմանիշ մասնիկ, որը իսթա-լուվական լեզուներում կազմում է սեռական հոլովին զուգահեռ ստացական ածականներ, ուստի **Հայասսա//KUR^{URU} Hayaša** տեղանունը նշանակում է՝ *հայ-ական*⁴, Haya-ն համարվում է տոհմանուն, որը ծագում է անվանդիր աստուծո անունից (իսթական տեքստերում նշված է U.GUR)⁵:

Հայկական տեղանուններում հանդիպող *առիճ/առինջ* բաղադրիչը Գ. Ջահուկյանը ևս համարում է հայասական՝ բացատրելով այն «տանել» կամ «խլել» իսթա-լուվական արմատներով, թեև չի բացառում Հ. Աճառյանի բացատրությունը հայկական արմատի միջոցով *առիճ/առինջ* > «տուն, շեն» իմաստներով⁶: **Առիճ/առինջ** բաղադրիչը վերականգնվում է նաև **Պիտի-յառիճ/Պիտիյառիճք^{URU}Pitigarig/k/q(a)** տեղանվան մեջ, որը համադրվում է հայկական *Բագա(յա)ռիճի* կամ *Բթառիճի* հետ, իսկ առաջին բաղադրիչի համար վերականգնվում է հայ. բույթ «հաստ, գուլ, թավ» արմատը՝ Վասպուրականի *Բույթ* և Բայազետի *Բույթսկ* բնակավայրերի անունների համաբանությամբ:

Ա. Քոսյանը **Արիփսա//^{URU}Aripša** (Վանա լճի արևմտյան ափին) տեղանվան մի քանի ստուգաբանական փորձերից կարևորում է հայերենով և իսթերենով վերականգնումը՝ Ara դիցանուն + isba/e «ձի», որ բառացի թարգմանվում է «հեծյալ Ար» կամ «Ար աստուծո ձի», հնարավոր է նաև «Ար աստուծո սրբավայր» մեկնաբանությունը⁷:

¹ Տե՛ս Գ. Ջահուկյան **Գ. Բ.**, նշվ. աշխ., էջ 162:

² Նույն տեղում, էջ 68:

³ Քոսյան **Ա.**, Հայկական լեռնաշխարհի տեղանունները, Երևան, 2004, էջ 45-46:

⁴ Նույն տեղում, էջ 331:

⁵ Քոսյան **Ա.**, նշվ. աշխ., էջ 50:

⁶ Ջահուկյան **Գ. Բ.**, նշվ. աշխ., էջ 337:

⁷ Նույն տեղում, էջ 39:

Արմատանա/(**KUR**) ^{URU}**Armatana** տեղանունը (ենթադրաբար կասկյան երկիր) Գ. Ջահուկյանը բխեցնում է հայերեն «արմատ, տոհմ, ցեղ» բառից, այն պահպանվել է հետագա *Արմտան*-ի մեջ (*Մեծ* և *Փոքր Արմտաններ*). այս արմատի միջոցով հայագետը ստուգաբանում է նաև *Արմ-են* հայոց ժողովրդանունը՝ որպես «արմ-արմատ, ցեղ, զ-արմ» կամ «ընձիւղ, ցողուն», «մեծ, ուժեղ, հզոր», այս ձևերը ծագում են հե. *er «շարժ(վ)ել, հուզել, բարձրացնել» արմատից *-m- կամ *-men- մասնիկների հավելմամբ, ինչպես օրինակ՝ ὄρμενος «ցողուն, ընձյուղ», ὄραμνος «ձյուղ»¹:

Ազզի/(**KUR**) ^{URU}**Azzi** երկրանունն ունի ստուգաբանության տարբեր վարկածներ, Գ. Ջահուկյանն առաջարկում է՝ հայկական «ազգ, ցեղ, սերունդ, տոհմ», հե. *g'en- հիմքից բխեցնել: Այս մեկնաբանությունը մոտ է Ն. Ադոնցի կարծիքին, բայց Գ. Ջահուկյանը չի բացառում նաև *Ազզի* անվան այլ ծագում՝ օրինակ, *ազազուն* «չոր» արմատից առաջացած լինելը²:

Հայ-խեթական ընդհանուր հատկանվանակերտ արմատներից նշենք նաև հետևյալ օրինակները՝ tam/dam «կառուցել» – հայերեն **տուն**, որոնցից կազմված են հայկական մի շարք հին տեղանուններ՝ *Անգեղատուն*, *Ազոավատուն*, *Բշխանատուն*, խեթ. šuppi «մաքուր»- հայերեն **սուրբ**, *Սուրբ*, *Սուրբահան*, *Սրբանիստ*, *Սրբուհի*, խեթ. Išha «տեր» - հայերեն **իշխան**, *Բշխանասար*, *Բշխանաձոր*, *Բշխանանիստ*, *Բշխան*, խեթ. ɣappu «զետափ»- հայ. **ափն** արմատը, որից ունենք՝ *Ափնագյուղ*, *Ափնա*, *Ափում*, *Գետափ*, հիեր. խեթ. Tarhuna «որոտի աստված»- հայ. **Տորք** աստվածությունը, խեթ. Šantaš (որոտի աստվածը, ինչպես նաև՝ šant- «բարկացած, զայրացած»)- հայ. **շանթ**, որից ունենք *Շանթ* անձնանունը, հիեր. խեթ. A'-s-ti-ya-su-s անձնանունը, ինչպես նաև՝ Astuyatimaš իշխանի անունը, որ թարգմանվում է «այն թող լինի անունը», վերջինս զուգադրվում է հայերեն **աստված** բառի հետ, որը ևս հիմնաբաղադրիչ է բազմաթիվ տեղանուններում և անձնանուններում՝ *Աստվածընկալ*, *Աստվածամայր*, *Աստվածաբերդ*, *Աստվածածին*, *Աստվածատուր*, խեթ. Muršili-š- հայ. **Մուշեղ**, **Մուշ**³ և այլն:

Հիշյալ տեղանունների, անձնանունների, դիցանունների հիմքերի հայ-խեթական բառային ընդհանրություններն իրենց հնչյունական և իմաստային բնութագրիչներով աներկբա վկայում են, որ խեթերենի և հայերենի փոխհարաբերությունները նորովի գնահատման կարիք ունեն հնդեվրոպական ժողովուրդների ազգաձագման և վաղնջական պատմության առավել ճշգրիտ ու ամբողջական վերականգնման համար:

¹ Ջահուկյան Գ. Բ., նշվ. աշխ., էջ 287-288: Տե՛ս նաև **Քոսյան Ա.**, նշվ. աշխ., էջ 40:

² **Քոսյան Ա.**, նշվ. աշխ., էջ 44-45:

³ Հմմտ. **Ջահուկյան Գ. Բ.**, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, էջ 148-162:

Нарине Дилбарян – Хеттские корни в армянских собственных именах

Армянское нагорье с древних времен было перекрестком для миграции больших и малых народов, многие из которых ассимилировались или исчезли, их следы чаще можно восстановить только в древних собственных именах. В армянских собственных именах армяно-хеттские изоглоссы составляют весомую прослойку. Эти корни не являются заимствованиями, они являются частью хеттского субстрата в древнеармянском языке, многие из этих корней продуктивны и сейчас. Например, tam/dam «строить»> տուն по-армянски «дом» – *Ангехатун, Аграватун, Агавнатун, šuppi* «чистый»> սուրբ по-армянски «святой» – *Сурб, Србахан, Србанист, Србуи, išha* «хозяин, господин»> իշխան по-армянски «князь» – *Ишханасар, Ишханадзор, Ишхананист, Ишхан, փարս* «берег реки»> փն по-армянски «берег» – *Апнагюх, Апна, Апум, Гетап, A'-s-ti-qa-su-s* или *Astuqatimaīs* антропоним> աստված по-армянски «бог» – *Аствацын-кал, Аствацамайр, Аствацаберд, Аствацацин, Аствацатур* и т.д.

Narine Dilbaryan – The Hittite roots in Armenian Proper Names

Since ancient times Armenian plateau has been a crossroad for the migration of both big and small nations most of which merged with each other or disappeared, and their tracks can often be restored only by the remaining ancient proper names. The Armenian proper names of the Armenian-Hittite isoglosses make an extensive layer in the language. These roots are not loan-words, they form a substrate in ancient Armenian, and some of them are productive even today. For example, tam / dam «build»> տուն in Armenian “house” – *Angeghatun, Agravatun, Aghavnatun, šuppi* «clean»> սուրբ in Armenian “holy” – *Surb, Srbahan, Srbanist, Srbuhi, išha* «boss, Mr.»> իշխան in Armenian “prince” – *Ishkhanasar, Ishkhanadzor, Ishkhananist, Ishkhan, փարս* «riverbank»> փն in Armenian “shore” – *Apnagyuugh, Apna, Apum, Getap, A'-s-ti-qa-su-s* or *Astuqatimaīs* anthroponym> աստված in Armenian “god” – *Astvatsynkal, Astvatsamayr, Astvatsaber, Astvatsatsin, Astvatsatur*, etc.

**ԸՆԴՀԱՆՐԱՎԱՆՆԵՐԻ (ՈՒՆԻՎԵՐՍԱԼԻԱՆԵՐԻ) ՀԻՄՆԱՀԱՐՑԻ
ԱՐԻՍՏՈՏԵԼՅԱՆ ԸՄԲՈՆՈՒՄԸ ՏԱԹԵՎԻ ԴՊՐՈՑՈՒՄ**
(Արիստոտելի ծննդյան 2400-ամյակի առիթով)

*Բանալի բառեր – Արիստոտել, Հովհան Որոտնեցի, Գրիգոր Տաթևացի, ընդհանրա-
կաններ, անհատ գոյացություն, սեռ, տեսակ, ռեալիզմ, նոմինալիզմ*

Ընդհանրականների (ունիվերսալիաների) հիմնահարցը առանցքային տեղ է գրավում Տաթևի աստվածաբանական-փիլիսոփայական դպրոցի ներկայացուցիչներ Հովհան Որոտնեցու (1315-1388), Գրիգոր Տաթևացու (1346-1409), թռուցիկորեն նաև՝ Առաքել Սյունեցու (XIV դարի 50-ական թթ. – XV դարի 20-30-ական թթ.) ու Մատթեոս Ջուղայեցու (XIV դարի 50-ական թթ. – XV դարի 20-ական թթ.) աշխատություններում: Հովհան Որոտնեցին ընդհանրականների հիմնահարցը քննարկել է հիմնականում Արիստոտելի «Կատեգորիաների» և Պորփյուրոսի «Ներածության» մեկնություններում, Գրիգոր Տաթևացին՝ «Լուծմունք համառատ ի տեսութիւն Դարթի», «Համառատ տեսութիւն ի գիրս Պորփիրի», «Գիրք որ կոչի Ոսկեփորիկ», «Գիրք հարցմանց» և այլ երկերում, Առաքել Սյունեցին՝ «Յաղագս Սահմանացն Դարթի Անյադրթի փիլիսոփայի» աշխատությունում: Բնականաբար, նրանց քննարկումների կիզակետում ընդհանրականների հիմնահարցի արիստոտելյան ուսմունքն էր, որի նկատմամբ վերաբերմունքն էր պայմանավորել նրանց կողմից առաջադրված լուծումների ուղղվածությունը: Ի դեպ, եթե փիլիսոփայական այլ հարցերի կապակցությամբ հայ մտածողները, ընդունելով արիստոտելյան տեսակետը, միաժամանակ քննադատում են նրա որոշ դրույթներ, ապա ընդհանրականների հիմնահարցի քննարկման ժամանակ նրանք միանշանակ հետևում են Արիստոտելին:

Մինչև կպարզենք հայ փիլիսոփաների վերաբերմունքը Արիստոտելի ուսմունքի նկատմամբ, անդրադառնանք մեթոդաբանական բնույթի մի քանի կարևոր հարցերի, որոնք վերաբերում են ինչպես ընդհանրականների հիմնահարցի էությանն ու կառուցվածքին, այնպես էլ Արիստոտելի և հայ մտածողների հայացքների գնահատմանը: Ինչպես հայտնի է, ընդհանրականների հիմնահարցի միջնադարյան քննարկումների համար հիմք էին Պորփյուրոսի՝ Արիստոտելի «Կատեգորիաներին» նվիրված «Ներածության» մեջ ձևակերպված հարցադրումները և Արիստոտելի «Կատեգորիաներ»-ում քննարկված առաջին (առանձին, անհատ իրերի) և երկրորդային գոյացությունների (սեռերի, տեսակների) մասին ուսմունքը: Պորփյուրոսի ձևա-

կերպած հարցադրումները վերաբերում էին ընդհանուրի գոյաբանական կարգավիճակին (գոյություն ունի՞ արդյոք ընդհանուրը, եթե այո՞, ապա ինչպե՞ս իրերի՞ց առաջ ու անկախ, իրերի՞ մեջ, թե՞ իրերից հետո՝ մտածողության մեջ): Այս հարցադրումների համատեքստում ընդհանրականների հիմնահարցը կարելի է նաև ձևակերպել որպես կեցության և մտածողության համապատասխանության հիմնահարց, ավելի ստույգ, թե ինչ է համապատասխանում մեր մտքի ընդհանուր հասկացություններին իրականության մեջ: Այս հարցադրումներին կարող է տրվել երեք պատասխան. Ա) **ռեալիստական**, ըստ որի ընդհանուրը ռեալ կերպով գոյություն ունի իրականության մեջ: Ընդհանուրը կա՛մ գտնվում է իրերից առաջ ու անկախ, այսինքն՝ մտքում գտնվող ընդհանուր հասկացություններին իրականության մեջ համապատասխանում են որոշակի գոյացություններ (ծայրահեղ ռեալիզմ), կա՛մ ընդհանուրը գտնվում է իրերից առաջ, իրերի մեջ և իրերից հետո (չափավոր ռեալիզմ): Բ) **Նոմինալիստական**, ըստ որի ընդհանուրը իրականության մեջ գոյություն չունի: Ընդհանուրը սոսկ անուն է, որին իրականության մեջ կա՛մ բացարձակապես ոչինչ չի համապատասխանում (ծայրահեղ նոմինալիզմ), կա՛մ ընդհանուրը պայմանական անուն է, եզրույթ (տերմին), որով նշանակվում են իրերի դասերը (չափավոր նոմինալիզմ): Գ) **Կոնցեպտուալիստական**, ըստ որի կա՛մ ընդհանուրը ի ծնե կամ ապրիորի գոյություն ունի մտքի մեջ որպես հասկացություն (ծայրահեղ կոնցեպտուալիզմ), կա՛մ կազմավորվում է մտքում՝ անհատ իրերի նման հատկությունների ճանաչողության հիման վրա (չափավոր կոնցեպտուալիզմ): Համընդհանրականների հիմնահարցին աղերսվում են այլ ենթահարցեր, ինչպիսիք են եզակիի և ընդհանուրի, անհատի և տեսակի (սեռի), համակարգի և տարրերի, միակի և բազումի, նմանության և նույնության և այլ հարցերը, որոնց լուծումները երբեմն շփոթում են բուն հիմնախնդրի հետ՝ դրանով իսկ դժվարացնելով այս կամ այն մտածողի հայացքների ստույգ գնահատումը: Առհասարակ փիլիսոփայության պատմության մեջ սակավ են այն մտածողները, ովքեր հետևողականորեն պաշտպանել են նշված ուղղություններից մեկը: Հաճախ վերջիններիս տեսակետը ևս ներկայացվում է միակողմանիորեն: Օրինակ, Պլատոնը հայտնի է որպես ծայրահեղ ռեալիզմի տեսաբան, սակայն դա չի նշանակում, որ նա մերժում է ընդհանուրի գոյությունը առանձին իրերի կամ մտածողության մեջ: Անշուշտ, վերոգրյալից չպետք է եզրակացնել, թե անհնար է սկզբունքորեն բնորոշել այս կամ այն մտածողի հայացքները: Այս պարագայում որևէ մտածողի տեսակետ գնահատելիս հարկավոր է հաշվի առնել նախ և առաջ նրա փիլիսոփայության ընդհանուր համատեքստը՝ բնագանցական-գոյաբանական, իմացաբանա-

կան-տրամաբանական և արժեքաբանական հայացքների ուղղվածությունն ու շեշտադրումները¹:

Հարկ է նշել, որ Արիստոտելի հայացքները մասնագիտական գրականության մեջ արժանացել են հակասական գնահատականների: Օրինակ, եթե արևմտյան գրականության մեջ ավանդաբար Արիստոտելին համարում են չափավոր ռեալիստ, ապա խորհրդային և խորհրդահայ փիլիսոփայապատմական գրականության մեջ, Վ. Ի. Լենինի մի քանի արտահայտությունների ազդեցությամբ, տարածված էր այն տեսակետը, որ Արիստոտելը առհասարակ իր փիլիսոփայության, իսկ մասնավորապես եզակիի և ընդհանուրի հարաբերակցության հարցում տատանվում կա՛մ խճճվում էր օբյեկտիվ իդեալիզմի և մատերիալիզմի, կա՛մ պարզունականացված ձևով՝ ռեալիզմի և նոմինալիզմի միջև: «Արիստոտելը, – գրում է Վ. Չալոյանը, – հավասարապես չի ժխտում ո՛չ եզակիի (գոյի) և ոչ էլ ընդհանուրի (ձևի) ռեալությունը: Դրանով իսկ հնարավորություն է ստեղծվում նրա մոտ հարցը մեկնաբանելու ինչպես իդեալիզմի, այնպես էլ մատերիալիզմի դիրքերից»²: Մասնավորապես, խորհրդային փիլիսոփա-պատմաբանները նրա իմացաբանական-տրամաբանական ուսմունքը գնահատում էին որպես առավելապես մատերիալիստական, իսկ եզակիի և ընդհանուրի հարաբերակցության հարցի լուծումը՝ կա՛մ մատերիալիստական միտում ունեցող, կա՛մ նոմինալիստական-կոնցեպտուալիստական: Ըստ այդմ, եթե միջնադարյան հայ մտածողները, այդ թվում Տաթևի դպրոցի ներկայացուցիչներ Հովհան Ռոտունեցին և Գրիգոր Տաթևացին, ընդհանրականների հարցում հետևում էին արիստոտելյան ուսմունքին, հետևաբար նրանք նույնպես կա՛մ նոմինալիստներ էին և կա՛մ կոնցեպտուալիստներ: Վ. Չալոյանը հետևյալ կերպ է ներկայացնում ընդհանրականների հարցում Հովհան Ռոտունեցու ըմբռնումը. «Ընդհանուրը, հակառակ Անտիսթենեսի կարծիքի, ռեալություն է, թեպետև այն զգայորեն չի ընկալվում: Ընդհանուրը, հակառակ Պլատոնի կարծիքի, ռեալություն է շնորհիվ նրան, որ այն իր հիմքում ունի զգայական-նյութական կեցությունը՝ լինելով նրա բարձրագույն ընդհանրացումը: Չկա ընդհանուրը, եթե չկա եզակին: Ընդհանուրը նյութական չէ, բայց նրա աղբյուրը կոնկրետ նյութականն է, եզակին, ընդհակառակը, նյութականն է, նա իր գոյությամբ կախված չէ ընդհանուրից (սեռից և տեսակից), մինչդեռ ընդհանուրը կարող է լինել միայն այնտեղ, որտեղ կա եզակիությունը և նրա բազմազանությունը: Այդ բոլորը ցույց է տալիս, որ Հովհան Ռոտունեցին ընդհանուրի և եզակիի հարաբերակցության հարցում հակվում է դեպի Արիստոտելի ուսմունքը

¹ Այդ մասին մանրամասն տե՛ս **Ջաքարյան Ս. Ա.**, Ունիվերսալիաների հիմնահարցը միջնադարյան հայ փիլիսոփայության մեջ, Երևան, 2014, էջ 5-39:

² **Չալոյան Վ. Կ.**, Ընդհանուրի և եզակիի արիստոտելյան ըմբռնումը պատմական Հայաստանում // Արիստոտելը և հայ փիլիսոփայությունը (հոդվածների ժողովածու), Երևան, 1980, էջ 73:

այն վերցրած իր մատերիալիստական ըմբռնմամբ: Այս է Որոտնեցու նումինալիզմի էությունը»¹: Վ. Չալոյանը, ինչպես ընդունված էր խորհրդային փիլիսոփայապատմական գրականության մեջ, ըստ էության, նումինալիզմը հանգեցնում է մատերիալիզմին, մինչդեռ «նումինալիզմի էությունը» բնավ ընդհանրականների հիմնահարցի մատերիալիստական լուծումը չէ: Ս. Արևշատյանը համանման գնահատականներ է տալիս Հովհան Որոտնեցու և Գրիգոր Տաթևացու հայացքներին. «Ունիվերսալիաների, այսինքն՝ ընդհանուր հասկացությունների բնույթի հարցի լուծման մեջ Հովհան Որոտնեցին, շարունակելով իր իմացաբանության էմպիրիկ-սենսուալիստական գիծը, կանգնում է նումինալիզմի դիրքերի վրա»²: «Գրիգոր Տաթևացին նումինալիզմի դիրքերից է լուծում միջնադարյան փիլիսոփայության համար շատ կարևոր ունիվերսալիաների (ընդհանուր հասկացությունների) բնույթի հարցը... Տաթևացին կանգնած էր կոնցեպտուալիզմին մերձ «չափավոր» նումինալիզմի դիրքերի վրա, «ծայրահեղ» նումինալիստների նման ընդհանուրը նա չէր համարում ոչինչ չնշանակող դատարկ հնչյուն»³: Իսկ Գ. Գրիգորյանը, ով կարծում է, որ «ի տարբերություն Եվրոպայի, հայկական փիլիսոփայության մեջ արտացոլվել է **միայն նումինալիզմը. հայ հեղինակները պաշտպանել են հիմնականում նումինալիստական կոնցեպցիան**»⁴, վերապահումով է Հովհան Որոտնեցուն անվանում նումինալիստ մտածող, որովհետև՝ «թեև ուղղակիորեն քննելիս ընդհանուրի և եզակիի առաջնության հարցը, նա վճռականորեն չի արտահայտվել հոգուտ նումինալիզմի և փորձել է մեղմել նումինալիստական ու ռեալիստական տեսակետների հակադրությունը, հիմնավորել նրանց անհակասականությունն ու համատեղելիությունը»⁵: Եթե ընդհանրացնենք այս գնահատականները, ապա կարող ենք ասել հետևյալը. ըստ հայ հետոզոտողների՝ տաթևացիները ընդհանրականների հիմնահարցի լուծման ընթացքում հետևում են Արիստոտելին, իսկ քանի որ Արիստոտելը մատերիալիստական միտում ունեցող նումինալիստ կամ կոնցեպտուալիստ է, հետևաբար տաթևացիները նույնպես նումինալիստ կամ կոնցեպտուալիստ են:

¹ Չալոյան Վ. Կ., Հայոց փիլիսոփայության պատմություն, Երևան, 1975, էջ 408:

² Արևշատյան Ս. Ս., Հովհան Որոտնեցի // Հայ մշակույթի նշանավոր գործիչները. V-XVIII դարեր, Երևան, 1976, էջ 402:

³ Արևշատյան Ս. Ս., Գրիգոր Տաթևացի // Նույն տեղում, էջ 411-412:

⁴ Գրիգորյան Գ. Հ., Միջնադարյան հայ փիլիսոփայության հանգուցային հարցերի շուրջ, Երևան, 1987, էջ 53:

⁵ Գրիգորյան Գ. Հ., Հովհան Որոտնեցու փիլիսոփայական ուսմունքը, Երևան, 1980, էջ 226: Հ. Գաբրիելյանը նույնպես կարծում էր, որ Հովհան Որոտնեցին փորձում է նումինալիզմը հաշտեցնել ռեալիզմի հետ (տե՛ս Գաբրիելյան Գ. Գ., Узловые проблемы философии у армянских средневековых мыслителей. Ереван, 1981, с. 99), իսկ ըստ որոտնեցիագետ Ա. Մինասյանի՝ Հովհան Որոտնեցին «վճռականորեն չի արտահայտվել հոգուտ նումինալիզմի և փորձել է մեղմել նումինալիստական ու ռեալիստական տեսակետների հակադրությունը, հիմնավորել նրանց անհակասականությունն ու համատեղելիությունը» (Մինասյան Ա. Ա., Հովհան Որոտնեցին Արիստոտելի երկերի մեկնիչ, Երևան, 2004, էջ 67):

Մինչդեռ Արիստոտելը ո՛չ նոմինալիստ է և ո՛չ կոնցեպտուալիստ, թեև նրա ուսմունքը, եթե նկատի ունենանք նրա փիլիսոփայության մետահամատեքստը, գերծ չէ նոմինալիստական կամ կոնցեպտուալիստական տարրերից: Արիստոտելը ռեալիստ է, որովհետև ընդունում է ընդհանուրի ռեալ գոյությունը: Հայ հետազոտողները թե՛ Արիստոտելին և թե՛ Հովհան Ռոտնեցուն ու Գրիգոր Տաթևացուն նոմինալիստ են համարում, քանի որ նրանք ընդունում են անհատ, առանձին գոյացությունների առաջնայնությունը կամ նախադասությունը երկրորդային գոյացությունների՝ տեսակների ու սեռերի նկատմամբ: Իսկ նրանց համարում են «տատանվող» կամ «հաշտարար» այն պատճառով, որ տարբեր համատեքստերում և ընդհանուրի գործածման տարբեր իմաստների շրջանակում առաջնությունը տալիս են թե՛ անհատ և թե՛ երկրորդային գոյացություններին կամ հասկացություններին:

Այս կապակցությամբ նշենք հետևյալը. 1) առաջնային և երկրորդային գոյացությունների հարցի լուծմամբ չի որոշվում ընդհանրականների հիմնահարցի ուղղվածությունը. 2) անհատ գոյացությունների առաջնության ընդունումը երկրորդային գոյացությունների նկատմամբ՝ դեռևս չի նշանակում մերժել ընդհանուրի օբյեկտիվ գոյությունը. 3) ընդհանրականներին առնչվող միակի և բազումի, անհատի և տեսակի, նմանության ու նույնության հարաբերակցության ենթահարցերը չպետք է հանգեցնել ընդհանրականների հիմնահարցին: Անկախ այն բանից, թե ինչպես է լուծվում անհատի և տեսակի ծագումնաբանության ու առաջնայնության հարցը, թե՛ Արիստոտելը և թե՛ միջնադարյան հայ մտածողները բազմիցս շեշտում են, որ ընդհանուրը ռեալ կերպով գոյություն ունի բազումի մեջ կամ որպես իրերի ձև, որակ, հատկություն, կամ որպես անհատների բազմություն՝ տեսակ և սեռ:

Հետարիստոտելյան փիլիսոփայության մեջ, հատկապես նորալատոնական ալեքսանդրյան դպրոցում, որի ներկայացուցիչներից էր նաև Դավիթ Անհաղթը, անհամեմատ ավելի ճիշտ է գնահատվել ընդհանրականների հարցում արիստոտելյան տեսակետը: Այս հարցում տաթևցիները հետևում են ոչ միայն Դավիթ Անհաղթին, որը, ինչպես հայտնի է, փորձում էր հաշտեցնել Պլատոնի և Արիստոտելի տեսակետները, այլև լատին մտածողներին, մասնավորապես Բարդուղիմեոս Բոլոնիացուն, ով «Յաղագս հնգից ընդհանրից» աշխատության մեջ Արիստոտելի տեսակետը բնութագրում է որպես պլատոնյան ու անտիսթենեսյան ծայրահեղությունները մերժող «միջին ճանապարհ»¹: Չնայած հաշտարարական դիրքորոշմանը, Դավիթ Անհաղթը ընդհանուր առմամբ ճիշտ է ներկայացնում Արիստոտելի տեսակետը, կարծելով, որ Ստագիրացին պաշտպանում է ընդհանուրի եռակի գոյության բանաձևը, ըստ որի՝ ընդհանուրը գոյություն ունի իրերից առաջ, իրերի

¹ Տե՛ս **Բարդուղիմեոս Բոլոնիացի**, Յաղագս հնգից ընդհանրից, Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. թիվ 2276, էջ 214բ-215ա:

մեջ և իրերից հետո: Արիստոտելը, գրում է Դավիթ Անհաղթը, չի ընդունում իրերից առաջ և անկախ ընդհանուրի գոյությունը, իսկ «**որք ասեն, թե բանի ստեղծանէ զամենայն Աստուած՝ այնոցիկ հաւանի, և ասէ զյառաջ քան զբազումս, այս ինքն է գիտութիւնն Աստուծոյ: Եւ ոչ միայն յառաջ քան զբազումս, այլ և ի բազումս. Քանզի «Յետ քան զբնականացն» յաղագս այսոցիկ ասելոյ՝ յարացոյց նոցին ասէ, ասելով, թէ որպէս իշխան ունի յինքեան զկարգաւորութիւն և ի նմանէ ի զօրսն լինի, նոյնպէս և այսպիսի իրք առ ի յԱստուծոյ. ապա ի վերջոյ ի նիւթում: Նախ գիտէ Աստուած, և ապա ստեղծանէ զնոսաբնութիւնն»¹: Դավիթ Անհաղթի այս գնահատականը ընդունվել է տաթևցիների կողմից: Համեմատելով Պլատոնի և Արիստոտելի հայացքները, Գրիգոր Տաթևացին նշում է, որ այս հարցում տարաձայնություն գոյություն ունի հույն մտածողների միջև. «Տարաձայնին. զի Պղատոն տեսեալ զստորնայինքս փոփոխական, ասաց զհանուրն փոփոխական և զատեալ ի սոցանէ ըստ իրին և ըստ իմացմանն: Իսկ Արիստոտել ասաց զընդհանուրն լինել ի զգալիսս ըստ իրին և զատեալք ըստ իմացմանն: Այլ համաձայնին, զի երկուքն նախքան զբազումս, ի գիտութիւն Աստուծոյ ասեն զոյ»²: Որոշ հետազոտողներ փորձում են հակադրել Պլատոնի և Արիստոտելի փիլիսոփայական հայացքները, մինչդեռ խնդրո առարկա հարցում նրանց տեսակետները տարբերվում են զլիսավորապէս շեշտադրումներով. Արիստոտելը, ի տարբերություն Պլատոնի, ընդգծում է ընդհանուրի ռեալությունը իրերի մեջ, ընդհանուրի պատկանելիությունը իրերին: Ըստ էության, Արիստոտելը կիսով չափ է ազատվել գաղափարների բացարձակացման պլատոնյան միտումից, որովհետև նա չի հրաժարվում իրերից առաջ ընդհանուրի գոյության փաստից: Քննադատելով էդոսների մասին պլատոնյան տեսությունը, մասնավորապէս այն դրույթը, թե ինչպէ՞ս կարող են իրերի էությունները գոյություն ունենալ իրերից առանձին, Արիստոտելը «միանգամայն մոռանում է իր բնագանցական ձևերի մասին, որոնք գոյություն ունեն իրերից առանձին աստծո մեջ լինելով դրանց էությունները»³: Սա ընդհանրականների հիմնահարցի լուծման չափավոր ռեալիստական տեսակետ է, որը ակնհայտորեն դրսևորվում է նաև արիստոտելյան գոյաբանության և իմացաբանության մեջ: Եթե տաթևցիները բնագանցության-գոյաբանության և իմացաբանության մեջ արիստոտելյան ավանդույթի կրողներն ու շարունակողներն էին, ապա ընդհանրականների հիմնահարցի լուծման մեջ պետք է հետևեին արիստոտելյան չափավոր ռեալիստական տեսակետին: Միջնադարյան հայ փիլիսոփայության մեջ, սկսած Դավիթ Անհաղթից, արմատավորված էր այն տեսակետը, որ Արիստոտելը, նախ, քննադատում է Պլատոնի էդոսների տեսությունը,**

¹ Դավիթ Անյաղթ, Երկասիրությունք փիլիսոփայականք (համահավաք քննական բնագրերը և առաջաբանը Ս. Ս. Արևշատյանի), Երևան, 1980, էջ 128:

² Գրիգոր Տաթևացի, Գիրք որ կոչի Ոսկեփորիկ, Կ. Պոլիս, 1746, էջ 522:

³ Чанышев А. Н., Курс лекций по древней философии, М., 1981, с. 307.

նը, երկրորդ, ընդունում է ընդհանուրի եռակի գոյության բանաձևը, ըստ որի ընդհանուրը գոյություն ունի իրերից առաջ, իրերի մեջ և իրերից հետո, երրորդ, ընդհանուր գոյերը (սեռերն ու տեսակները) համարում է երկրորդային գոյացություններ, այսինքն՝ առաջնային գոյացությունների՝ առանձին իրերի որակներ ու հատկություններ:

Այժմ տեսնենք, թե Տաթևի դպրոցի ներկայացուցիչները ինչպե՞ս են լուծում ընդհանրականների գոյաբանական կարգավիճակի հիմնախնդիրը և ի՞նչ վերաբերմունք են ցուցաբերում Արիստոտելի տեսակետի նկատմամբ: Այդ լուծումը և վերաբերմունքը նախ և առաջ հարկավոր է դիտարկել նրանց աստվածաբանական ու բնագանցական հայացքների համատեքստում: Առաջ անցնելով նշեմ, որ տաթևցիների կողմից ընդհանրականների լուծման բանաձևը հստակորեն ձևակերպել է Գրիգոր Տաթևացին իր «Լուծումնք համառատ ի տեսութիւն Դարթի» աշխատության մեջ. «**Ընթեանուրն և .ե. [5] ձայնքդ է նախ քան զբազումս ի տեսութեանն Աստուծոյ. և ի բազումս ի յեութեան տեսեալ. և ի վերայ բազմաց, զի կայանայ յիմացականս մեր, զի իմացականն առանց երևակայութեանց նիւթ նոցա և մարմնաւորաց առնէ զընթեանուրն**»¹: Սա ընդհանրականների՝ հիմնահարցի լուծման չափավոր ռեալիստական տեսակետ է: Ստորև ներկայացնենք ու գնահատենք ընդհանուրի եռակի գոյության արիստոտելյան-անհաղթյան բանաձևի օգտին բերվող հայ մտածողների փաստարկները:

Ս) Ընդհանուրը գոյություն ունի իրերից առաջ՝ Աստծո բանականության մեջ որպես ստեղծվելիք իրերի նախատիպ-հարացույց

Տաթևցիների արարչապաշտական բնագանցության կենտրոնում Աստված է, ով ստեղծում է տիեզերքը, առանձին գոյերին, որոնք իրարից տարբերվում են իրենց հատկություններով: Բոլոր անհատ գոյացությունները և դրանց բազմությունները (սեռերը և տեսակները) Աստծո արարչագործության արգասիքն են. «**Մկիզբն ամենայն գոյացութեանց՝ Աստուած, զի ի նմանէ են սկսեալ և յառաջ եկեալ ամենայն բնութիւնք արարածոց՝ երևելեաց և աներևութից, բաժանեցան ի սեռս և ի տեսակս և տրոհեալ տպաւորեցան ըստ իւրաքանչիւր պատշաճի ի ձևս և ի կերպս**»²: Աստված ոչ թե ստեղծում է

¹ Գրիգոր Տաթևացի, Լուծումնք համառատ ի տեսութիւն Դարթի, ՄՄ, ձեռ. թիվ 1695, էջ 33ա:

² «Եռամեծի եւ երիցս երջանկի վարժապետին իմոյ **Յովհաննու Որոտնեցոյ** ասացեալ ի յարհնութիւն նորակերտ շինուածոյ տաճարին եւ զանկակատանն առաքելական աթոռոյ վանիցն Ստաթէի՝ որ է գլուխ եւ աթոռ Սիւնեաց վիճակին, ի բանն, որ ասէ. «Տէր ի տաճար սուրբ իւրում, Տէր յերկինս յաթոռ իւրում»: **Հովհան Որոտնեցի Ս.**, Մեկնողական-իմաստասի-

ընդհանուր գոյեր պլատոնյան էյդոսների իմաստով, այլ ըստ յուր բանականության մեջ գոյող ընդհանուր նախատիպի՝ առանձին անհատներ, որոնց հիմքի վրա աստիճանաբար առաջանում են տեսակներ ու սեռեր: Օրինակ, Աստված ստեղծում է Ադամին և Եվային, որից հետո բնական ճանապարհով առաջանում է մարդ տեսակը (մարդկանց բազմությունը): Թեև արարչապաշտական բնագանցությունը տարբերվում է անտիկ (պլատոն-արիստոտելյան) բնագանցությունից, իսկ քրիստոնեության դիմավոր Աստված՝ արիստոտելյան անդեմ աստծուց, այդուհանդերձ, սակայն, դրանց բնորոշ են նաև ընդհանրություններ: Հայ մտածողները Աստծուն բնութագրում են նաև արիստոտելյան բնագանցության հասկացություններով (Աստված սկզբնապատճառ է, առաջնաշարժիչ, անհրաժեշտ ու ներգործությամբ գոյ, բանականության կրող, որում առկա են ստեղծվելիք իրերի ձևերը՝ ընդհանուր տիպարները): Գրեթե բոլոր միջնադարյան մտածողների նման տաթևցիները նույնպես կարծում են, որ ընդհանուրը գոյություն ունի Աստծո բանականության մեջ որպես ստեղծվելիք իրերի նախատիպ կամ հարացույց. «Արարածք թեպետ մարմնապես յետոյ եկին յերևումս և ստեղծան յԱստուծոյ, սակայն իմացականապես սկզբնատիպք և յարացոյցք սոցա մշտնջենաւորապես էին առ Աստված ի կամս Նորա, որով Նա միշտ Արարիչ»¹: Առաքել Սյունեցու կարծիքով «յառաջ քան զիինելն աշխարհի կատարումս էիցս գոյր հուպ ի նախագաղափարն Աստուծոյ»²: Աստծո բանականության մեջ գոյություն ունեցող ընդհանուր գաղափարները կամ նախատիպերը հավերժական են, անփոփոխ և աննյութական, որոնք միավորվելով նյութականի հետ՝ ապահովում են արարչակարգի կայունությունն ու կարգավորվածությունը, գոյաձևերի՝ տեսակների ու սեռերի անփոփոխությունն ու հավերժությունը: Սա ծայրահեղ ռեալիստական տեսակետ է, իսկ տվյալ դեպքում՝ Աստծո մասին փիլիսոփայական (արիստոտելյան, մասամբ նաև՝ պլատոնյան) և քրիստոնեական պատկերացումների մեկտեղում: Ընդհանրականների հիմնահարցի լուծման պլատոնյան տեսակետը հակասում է քրիստոնեական արարչապաշտական բնագանցությանը: Եթե ընդհանուրը գոյություն ունի իրերից առաջ, ապա միայն՝ աստվածային բանականության մեջ: Ընդհանուրը չունի ինքնաբավ կեցություն, այսինքն՝ բացառվում է առանձին իրերից գատ և անկախ ընդհանուր բնության կամ էության գոյությունը: Այդ դրույթը Գրիգոր Տաթևացին ձևակերպում է հետևյալ կերպ. «Արդ՝ ի կարճոյ գիտելի է, զի հանուրն ոչ է ենթակայացեալ և զատեալ ի զգալեացս, որպէս ասէն պղատոնա-

րական ճառեր (քննական բնագրերը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Մինասյանի), Ս. Էջմիածին, 2009, էջ 237:

¹ Գրիգոր Տաթևացի, Գիրք որ կոչի Ոսկեփորիկ, էջ 522:

² Առաքել Սյունեցի, Լուծմունք, Յաղագս Մահմանացն Դաւթի Անյաղթի փիլիսոփայի, «Դավիթ Անյաղթ, Գիրք Մահմանաց սրբոյն Դաւթի» գրքում, Մադրաս, 1797, էջ 406:

կանքն»¹: Ըստ հայ մտածողների՝ ընդհանուրը գոյություն ունի իրերի մեջ, և ընդհանուրի առաջացումը պայմանավորված է իրերի բազմության առաջացմամբ:

Բ) Ընդհանուրը գոյություն ունի իրերի մեջ

Տաթևցիների ոչ միայն բնագանցությունը (աստվածաբանությունը), այլև արարված աշխարհի գոյաբանությունը խարսխվում են արիստոտելյան գաղափարների, ի մասնավորի, նյութի և ձևի, հնարավորությամբ և ներգործությամբ գոյերի, առաջնային և երկրորդային գոյացությունների ուսմունքների վրա: Հայ մտածողները, հետևելով Արիստոտելին, կարծում են, որ առանձին իրերը նյութի և ձևի, մասնավորի և ընդհանուրի հատկությունների միասնությունն են, որտեղ ձևը ապահովում է տվյալ դասի անհատների ընդհանրությունը, իսկ նյութը հանդես է գալիս որպես անհատականացնող սկիզբ: Եթե ընդունվում է իրերի նյութաձևության (հյուլեմորֆիզմի) կառուցվածքը, ապա նշանակում է գործ ունենք չափավոր ռեալիստական ուսմունքի հետ: Բնագանցության ու գոյաբանության լեզվով ասած՝ ընդհանուրը գոյություն ունի ոչ թե իրերից դուրս, այլ իրերի մեջ որպես դրանց էություն, բնություն կամ որպես էական հատկություն: Իրերի մեջ ընդհանուրի գոյությունը կարելի է ներկայացնել թե՛ բնագանցության ու գոյաբանության և թե՛ իմացաբանության ու տրամաբանության լեզվով: Ըստ բնագանցության ու գոյաբանության՝ ընդհանուրը գոյություն ունի իրերի մեջ որպես ձև, էություն, բնություն, որը աստվածային բանականության մեջ գտնվող ընդհանուր նախագաղափարի մարմնացումն է, իսկ ըստ իմացաբանության ու տրամաբանության՝ ընդհանուրը գոյություն ունի իրերի մեջ որպես նյութական հատկություն և որպես ապաանհատականացված էություն՝ մտքի մեջ:

Առհասարակ հայ մտածողները տարբերակել են ընդհանուրի զանազան նշանակություններ: Ընդհանուրը, հետևելով Դավիթ Անհաղթին, գրում է Հովհան Որոտնեցին, լինում է չորս տեսակի՝ *«նախ է անբաժանական, որպես փող հասարակ երկուց ընկերաց, զի երբեմն միայն հանդիպի հնչման և երբեմն միայն. երկրորդ, է բաժանականս, որպես կերակուր հասարակաց և անդաստան գեղից, երրորդ, հասարակ է, որպես տեղիք թէատրոնին նախ ժամանողաց, չորրորդ, է հանգետ ընդունական, որպես ձայն քարոզաց, որպես կենդանութիւն, կամ արեգակն և այլ այդպիսիք: Իսկ հասարակութիւն հոմանունան է ըստ չորրորդ յեղանակի, որ է հանգետ ընդունողացն»²*: Ընդ-

¹ **Գրիգոր Տաթևացի**, Համառոտ տեսութիւն ի գիրս Պորփիրի, էջ 334:

² **«Յովհաննու Որոտնեցոյ** Վերլուծութիւն «Ստորոգութեանց» Արիստոտելի», համահավաք տեքստը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ. Կ. Չալոյանի, թարգմ. գրաբարից ուսերեն Ա. Ա. Ադամյանի և Վ. Կ. Չալոյանի, խմբ. Ս. Ս. Արևշատյան, Երևան, 1956, էջ 6:

հանուրի այս չորս նշանակությունները կարելի է խմբավորել երկուսի մեջ. ա) ընդհանուրը մի աննյութական կամ նյութական բան է, որը պատկանում կամ վերաբերում է շատերին. բ) ընդհանուրը մի բան է, որը հաղորդվում է շատերին, այսինքն՝ գտնվում է բազումի մեջ: Մա ընդհանուրի արհեստողջյան սահմանումն է, որը տարածված էր միջնադարյան փիլիսոփայության մեջ: Թեև իրենց աշխատություններում հայ մտածողները գործածում են ընդհանուրի տարբեր իմաստներն ու նշանակությունները (ինչը չտարբերակելու դեպքում գնահատման առումով կարող է ստեղծվել խառնաշփոթ), այդուհանդերձ, խոսքը հիմնականում վերաբերում է բազումին հաղորդակից, բազումի մեջ գտնվող ընդհանուրին: Իսկ ինչպե՞ս հասկանալ, որ ընդհանուրը գտնվում է իրերի մեջ, այն է՝ թվով մի գոյ է, որը գտնվում է տարբեր իրերի մեջ որպես «բնություն» կամ որպես հատկություն, թե՞ վերջիններս, լինելով մասնավոր, ընդհանուր են դառնում, երբ դիտարկում ենք տվյալ իրերի տեսակի ու սեռի համատեքստում:

Տաթևցիների կարծիքով՝ իրականության մեջ գոյություն ունեն միայն առանձին գոյացություններ, որոնք օժտված են բազմաթիվ հատկություններով: Յուրաքանչյուր առանձին գոյացություն անհատական, եզակի է այն իմաստով, որ իր հատկություններով տարբերվում է մյուս գոյացություններից. «Անհատ է ի յատկութեանցն բաղկացեալ, որոյ հաւաքումն ոչ այլ ումէք ասացի, և են այսոքիկ՝ նիւթն, ձկնն, որ է կերպն, գաւառն, ազգայինքն, ժամանակն, տեղին և յատուկ անունն, յորոց թէ մի ի սոցանէ գոցի ումէք որոշեցէ ի միմեանց»¹: Մոկրատեսը և Պլատոնը միմյանց նման են, որովհետև ունեն մարդուն ներհատուկ հատկանիշներ, բայց տարբերվում են այդ հատկանիշների որակական ու քանակական աստիճաններով: Առհասարակ, հատկություններն իրերից անբաժանելի են: Նույնիսկ, երբ ասվում է, թե առանձին գոյացությունն առաջնային է, իսկ «պատահումն»՝ երկրորդային, ապա դա չի նշանակում, որ առանձին գոյացությունը և դրա հատկությունները գոյություն ունեն իրարից անկախ: Գրիգոր Տաթևացին նշում է, որ անհատի հատկությունների ամբողջությունը կազմում է նրա «բնությունը», ինչպես, օրինակ, «կենդանին և մարդն ի Մոկրատես մի բնութիւն են», կամ՝ «ումն մարդ՝ զի կոչի մարդ և կենդանի և Մոկրատես և մի է»: Նա առանձնացնում է երկու

¹ Գրիգոր Տաթևացի, Ի լուծումն Պարապմանց Սրբոյն Կիրեղի, ՄՍ, ձեռ. թիվ 10051, էջ 103ա: Նույն աշխատության մեջ Գրիգոր Տաթևացին ևս մեկ անգամ շեշտում է այն միտքը, որ իրականության մեջ բոլոր հատկություններով իրար նման երկու անհատի գոյությունը բացառվում է՝ «Ըստ կանոնի իմաստասիրացն .է. [7] են բաժանականք անհատին. այսինքն՝ տեղն, ժամանակն, դէմն, հասակն, պատահումքն, գործն, թիւն: Արդ թէ ի սոցանէ մինն միայն հանդիպի, բաժանէ զանհատսն ի միմեանց, արդ թէ ոք պարզ մտաք հարցանէ թէ սոքա եւթներինս ի վերայ երկուց ոմանց հանդիպին, այլ զինչ իրաք տարորոշին ի միմեանց: Ասեմք թէ այս անհնար է և թէ դարձեալ ինորէ, ասեմք եթէ նոյն ինքն ասելն, կցորդ միմեանց, որպէս թէ երկուսն թուակից, իբր թէ Պետրոս ժամանակակից, գործակից և այլն, յայտնապէս զանազանեն զնոսա» (նույն տեղում, էջ 52բ):

կարգի «բնություն»՝ ընդհանուր և մասնավոր, որոնք տարբերվում են հետևյալ կերպ՝ **«Հասարակ բնութիւն է՝ ի մականտածութեան, իսկ յատկացեալն բնութիւն է՝ ի գոյացութեան, զի մի կարծեսցես զընդհանուր բնութիւն...»**¹: Այսպիսի տարբերակումը կարևոր է. եթե իրականում նույն բնությունը ներհատուկ լինի մի քանի անհատների, ապա կստացվի, որ միևնույն բանը միաժամանակ գոյություն ունի իրարից տարբեր անհատների մեջ: Գրիգոր Տաթևացին վճռականապես մերժում է ընդհանուրի, իբրև թվով մեկ բնության, գոյությունը միևնույն տեսակի անհատների մեջ: «Մարդը» որպես այդպիսին գոյություն չունի առանձին մարդկանց մեջ, այլապես «միայն Պետրոսն լինէր մարդ կամ կենդանի և ոչ այլ ոք»: Այս միտքը Հովհան Ռոտունեցին հստակ է ձևակերպում. **«Որ նումեքն է, ոչ կարէ ասել եմ, այլ թէ ունիմ, որպէս սեռ զտեսակ և տեսակ զսեռն ունի, նոյնպէս և այլք: Այլ Սոկրատէսն ոչ կարէ ասել, թէ զմարդն ունիմ կամ զկենդանին, այլ ասէ, թէ մարդ եմ և կենդանի եմ»**²: Նույն բնությունը չի կարող միաժամանակ գտնվել տարբեր իրերի մեջ, բայց նույն բնությամբ տարբեր անհատներ կարելի է մտածել, այսինքն՝ մտածողության մեջ են դրանք դառնում նույնական: **«Բայց մարդս ըստ ինչ իրաց մարդ է, այսինքն՝ ըստ մարդկութեան և վասն այլ ինչ իրաց այդպիսի ինչ մարդ, այսինքն՝ Սոկրատէս: Եթէ մարդկութիւնս ի նոյն իրս մարդ էր, և այս ինչ մարդ, ոչ կարէր յաշխարհիս բազում մարդ լինել»**³: Մերժելով թվով մեկ ընդհանուր բնության գոյությունը անհատ գոյացությունների մեջ, հայ մտածողները առհասարակ չեն ժխտում ընդհանուրի առկայությունը առանձին իրերի մեջ: Անհատ գոյացությունը ներգործությամբ ունի ընդհանուրը, այսինքն՝ Սոկրատեսը ներգործությամբ ունի կենդանի, բանական, մտաց ընդունակ հատկությունները: «Գիրք որ կոչի Ոսկեփորիկ» աշխատության մեջ Գրիգոր Տաթևացին գրում է, թե **«ումն անհատ ունի զհասարակ բնութիւն լիովին յիրում առանձնութեանն. ամէն մարդ կենդանի, բանաւոր, մահկանացու, մտաց և հանճարոյ ընդունակ...»**⁴: Անհատ գոյացության բնությունը գոյանում է «ի սեռէ և ի տեսակէ և ի տարբերութեանցն», այսինքն՝ ընդհանուր (սեռատեսակային) և անհատական հատկություններից: Եթե անհատը անհաղորդելի է բազումին, այսինքն՝ այն չի կարող գտնվել այլ իրերի մեջ, ապա ընդհանուրը գտնվում է բազումի մեջ: Բացի դրանից, անհատը անբաժանելի է, իսկ երբ բաժանվում է որպես

¹ Նույն տեղում, էջ 11բ:

² «Յովհաննու Ռոտունեցոյ Վերլուծութիւն «Ստորոգութեանց» Արիստոտելի», էջ 48: Մատթեոս Ջուղայեցին, կրկնելով Ռոտունեցու միտքը, գրում է. **«զի որ յումեք է որոշմամբ ունողն ոչ կարէ ասել թէ եմ, այլ թէ ունիմ: Իսկ սեռն և տեսակն ի Սոկրատ ոչ է յումեք...զի ոչ ասէ Սոկրատէս թէ զմարդն և զկենդանին ունիմ, այլ թէ մարդ եմ և կենդանի եմ, զի անզատելի են ի Սոկրատայ մարդն և կենդանին»**: Մատթեոս Ջուղայեցի, Երկաբնականացն առ մեզ հարցումն, ՄՄ, ձեռ. 1128, էջ 199բ:

³ Գրիգոր Տաթևացի, Գիրք որ կոչի Ոսկեփորիկ, էջ 85:

⁴ Նույն տեղում, էջ 74:

ամբողջը մասերի, ապա այն չի պահպանում ամբողջի նույնությունը, իսկ «ընդհանուրն ի բազումն բաժանեալ նոյն մնայ, որպէս սեռն և տարբերութիւնքն և այլքն»: Անհատը սահմանափակված է տարածության և ժամանակի մեջ՝ **«աստ է և այժմ է, իսկ ընդհանուրն, որ է սեռն և այլքն, աստ է և յամենեսեան է, այժմ է և միշտ է»**¹: Սա անհատի և ընդհանուրի գոյատեղանակի կարևոր տարբերություններից է: Դեռևս Արիստոտելը «Երկրորդ անալիտիկաներ» աշխատության մեջ նկատել էր, որ ընդհանուրը չի կարող լինել միայն այստեղ և այժմ, քանի որ դա կհակասեր ընդհանուրի սահմանմանը. **«Իսկ ընդհանուրը մենք անվանում ենք այն, ինչը միշտ է և ամենուր»**²: Ընդհանուրի և անհատի գոյատեղանակի այս տարբերության հիմքում ընկած է բնագանցական բնույթի այն գաղափարը, որ անհատ գոյացությունները փոփոխական են՝ առաջանում և ոչնչանում են, իսկ ընդհանուրը՝ սեռերը և տեսակները, անփոփոխ են: **«Եւ մասնականքն և անհատքն անցաւորք են, գրում է Հովհան Ռոտունեցին, – իսկ ընդհանուրն մնացական և յախտենական...»**³: Այս դեպքում միախառնվում են ընդհանուրի մեկնաբանության բնագանցական-աստվածաբանական և իմացաբանական-տրամաբանական տեսանկյունները:

Ընդհանրականների հիմնահարցի շրջանակում հայ մտածողները դիտարկում են նաև առաջնային և երկրորդային գոյացությունների մասին արիստոտելյան ուսմունքը: Նրանք պաշտպանում են Արիստոտելի այն միտքը, ըստ որի առանձին, անհատ գոյացությունները հիմնագոյացություն են, իսկ երկրորդային գոյացությունները՝ սեռատեսակային հատկությունները, ածանցյալ ու կախյալ գոյեր: Անհատը հիմնագոյացություն (սուբստանցիա) է, այսինքն՝ ունի ինքնաբավ կեցություն, նրա գոյությունը կախված չէ որևէ այլ գոյից: Անհատը ենթակա է և չի գտնվում որևէ ենթակայի մեջ՝ **«ոչ ասի զայլմէ և ոչ է ի յայլում, ապա յայտ է, զի ինքնակայ ունի զգոյութիւն իւր»**⁴: Ընդհանուր գոյերը՝ սեռատեսակային հատկությունները, չունեն

¹ «Համառոտ վերլուծութիւն Պորփիրի դժուարալուծիցն ի յերկասիրութենէ մեծ հռետորին հայոց Յովհաննու Ռոտունեցոյ», «Յովհաննու Ռոտունեցոյ Վերլուծութիւն «Ստորագութեանց» Արիստոտելի» գրքում, էջ 302:

² **Аристотель**, Сочинения в 4-х томах, т. 2, М., 1978, с. 309.

³ «Եռամեծի եւ երիցս երանեալ բազմերջանիկ եւ տիեզերալոյս մեծ հռետորի եւ անյաղթ փիլիսոփայի հայոց մեծաց Յովհաննու Ռոտունեցոյ արարեալ մեկնութիւն բանին, որ ասէ. «Ո ստեղծ առանձին զսիրտս նոցա»: **Հովհան Ռոտունեցի Ս.**, Մեկնողական-իմաստասիրական ճառեր, էջ 90 և էջ 107: Ըստ Տաթևացու՝ անհատները ծնվում և մեռնում են, իսկ մարդը որպէս տեսակ մնում է. **«Ոմն անհատ ունի զհասարակ բնութիւն լիով յիւրում առանձնութեանն: Ուստի յայտ է ի սահմանէն. ամէն մարդ կենդանի, բանաւոր, մահկանացու, մտաց և հանճարոյ ընդունակ: Եւ դու Պետրոս՝ մարդ և կենդանի, բանաւոր, մահկանացու, մտաց և հանճարոյ ընդունակ: Արդ՝ դու առանձնութեամբ քո որ ունիս զհասարակ բնութիւնդ՝ ծնար այսօր ի մօրէ կամ մեռար յաշխարհէ և ոչ հասարակ մարդկութիւնս»:** **Գրիգոր Տաթևացի**, Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 74):

⁴ «Յովհաննու Ռոտունեցոյ Վերլուծութիւն «Ստորագութեանց» Արիստոտելի», էջ 38:

ինքնակա կեցություն. դրանք գոյություն ունեն միայն առանձին իրերի մեջ և իրերից դուրս չեն կարող գոյություն ունենալ: Հետևելով Արիստոտելին, Հովհան Ռոտունեցին անհատը բնութագրում է իբրև **«խկագոյն և նախկին և մանաւանդ»** գոյացություն: «Իսկագոյն» ասելով, գրում է հայ մտածողը, անհատ գոյացությունը սահմանագատում ենք «յամենայն պատահմանց», որովհետև վերջիններս «ոչ են իսկագոյն իրք, այլ հետևումնք իրացն»: «Նախկին» ասելով իրարից տարբերակում ենք առաջին և երկրորդ գոյացությունները, իսկ «մանաւանդ»-ը ցույց է տալիս երկրորդ գոյացությունների տարբերությունը պատահական հատկություններից: Անհատն առաջին գոյացություն է նաև այն պատճառով, որ դրա հիմքի վրա են առաջանում սեռերն ու տեսակները որպես բազմություններ. **«Թէ ի լինելութիւն նոցա ամենեցուն հարկ է անհատին գոլ, զի ոչ բաղկանայ սեռ առանց տեսակի և ոչ տեսակ առանց անհատի և ոչ պատահումն առանց գոյացութեան: Իսկ ի լինելութիւն անհատին ոչ է հարկ նոցա գոլ, զի կարէ գոլ գոյացութեան առանց պատահման, որպէս Աստուած: Եւ անհատ առանց սեռի և տեսակի, որպէս արեգակն և լուսին և աշխարհ, զի սոքա ոչ ունին զժողովական տեսակն, որ ի բազում անհատից, թէն ունին զգոյական տեսակն իւրեանց»**¹: Հայ հետազոտողները վերոբերյալ միտքը գնահատում են որպէս նոմինալիստական, սակայն, ինչպես վերը նշվեց, անհատի առաջնության ընդունումը դեռ չի նշանակում ընդհանուրի (սեռատեսակային հատկությունների և սեռերի ու տեսակների որպէս բազմության) օբյեկտիվ գոյության ժխտում: Անհատը ծագումնաբանորեն նախորդում ու հիմք է հանդիսանում ընդհանուր գոյացությունների առաջացման համար:

Հայ մտածողները, քննարկելով անհատի և սեռերի ու տեսակների հարաբերակցության հարցը, անդրադառնում են նաև Արիստոտելի և Պորփյուրոսի տեսակետներին: Միջնադարում տարածված էր այն ըմբռնումը, ըստ որի՝ Արիստոտելը անհատն է համարում առաջին (առաջնային) գոյացություն, իսկ երկրորդայինը՝ սեռն ու տեսակը, իսկ Պորփյուրոսը, ընդհակառակը, առաջին տեղում դնում է սեռը, հետո՝ տեսակը և վերջում՝ անհատը: Արդյո՞ք այդ երկու տեսակետներն իրար չեն հակասում: Հովհան Ռոտունեցու կարծիքով դրանք իրար չեն հակասում հետևյալ պատճառներով. **«Նախ, զի Պորփիր ճեմականացն հետևիլ խոստացաւ, երկրորդ, զի և Արիստոտել զսեռն և զտեսակն հասարակ ասէ և զանհատն մասնական, որպէս աստ զենթակայէ ասէ և ոչ զենթակայէ, երրորդ, զի և ոչ անգիտացան ունակութիւն**

¹ **Նույն տեղում**, էջ 40: Առաքել Մյունեցին նույնպես պաշտպանում է երկրորդային գոյացությունների նկատմամբ անհատ գոյացությունների առավելության մասին արիստոտելյան դրույթը, կարծելով՝ թէ **«տասն յատկութեամբ լաւ է գոյացութիւնն քան պատահումն»**: **Առաքել Միւնեցի**, Լուծմունք, Յաղագս Սահմանացն Դաւթի Անյաղթի փիլիսոփայի, էջ 274-275: Տե՛ս նաև **Առաքել Մյունեցի**, Յաղագս քերականութեան համառուտ լուծմունք, աշխատ. Լ. Գ. Խաչերյանի, Լոս Անջելոս, 1982, էջ 135-138:

նոցա, զի սեռ և տեսակ պարունակէ զանհատն և անհատն միշտ պարունակի ի նոցանէ»¹: Չպետք է Հովհան Ռոտունեցուն «մեղադրել» այն բանում, որ նա փորձում է հաշտեցնել առաջին հայացքից հակադիր այս երկու տեսակետները: Ընդհակառակը, նա իրավացի է, որովհետև Պորփյուրոսն իր աշխատության մեջ շարունակում է արիստոտելյան գիծը, մասնավորապես, հետևում «Մետաֆիզիկա» աշխատության մեջ (Գիրք Երրորդ, գլուխ երրորդ) ձևակերպված մտքերին: Ահավասիկ դրանցից մեկը. **«Քանի որ մենք յուրաքանչյուր իր ճանաչում ենք սահմանման միջոցով, իսկ սահմանման սկիզբը սեռերն են, ուստի անհրաժեշտ է, որպեսզի սեռերը նաև լինեն սահմանելի սկզբները...»**²: Համենայն դեպս, Արիստոտելի «Կատեգորիաներին» նվիրված «Ներածության» մեջ Պորփյուրոսը չի պաշտպանում հակաարիստոտելյան որևէ գաղափար: Բացի դրանից, նա գիտակցաբար խուսափում է քննարկել անհատի և ընդհանուրի (հինգ ձայների) փոխհարաբերության գոյաբանական (բնագանցական) կողմը՝ հիմնական ուշադրությունը դարձնելով հասկացությունների փոխառնչակցության տրամաբանական տեսանկյուններին: Այլ կերպ ասած, թեև Արիստոտելը «Կատեգորիաներ» աշխատության մեջ անհատն անվանում է առաջնային, իսկ սեռերը և տեսակները՝ երկրորդային գոյացություններ, այդուհանդերձ, թե՛ այդ և թե՛ այլ երկերում նա տարբեր համատեքստերում նախապատվությունը տալիս է ընդհանուրին: Այս կապակցությամբ Հովհան Ռոտունեցին իրավացիորեն նկատում է, որ Արիստոտելը նույնպես «զհասարակն դնէ սկիզբն»: Ըստ Հովհան Ռոտունեցու դրա համար Արիստոտելը բերում է երեք պատճառ. Ա) ընդհանուրը գերադասելի է մասնավորից արժեքային առումով (վասն պատվականության), որովհետև գիտության առարկան ընդհանուրն է և ոչ թե մասնավորը: Իսկապես, անտիկ հունական փիլիսոփայության, մասնավորապես իմացաբանության համար ընդհանուրը գերադասելի էր մասնավորից, անհատականից, որովհետև գիտելիքը միայն այն ժամանակ է դառնում գիտելիք, եթե ունի ընդհանրական բնույթ: Մասնավորը անթիվ է, անհամար, հարաբերական, անորոշ, իսկ անորոշի ու հարաբերականի մասին չի կարող գիտություն լինել: Բ) Արիստոտելյան տասը կատեգորիաները գոյաբանական, իմացաբանական և տրամաբանական առավել ընդհանուր հասկացություններ են, որոնց միջոցով ճանաչում և մեկնաբանում ենք գոյություն ունեցողի հատկությունները: Գ) Ընդհանուր հասկացությունները սահմանային, համապարփակ ու համընդգրկուն են, ուստի Արիստոտելը **«ընդհանուրն արար սկիզբն, զի իբր թագաւոր ընդ սահմանաւ և իշխանութեամբ ումէր ոչ պարփակի»**³: Բայց քանի որ այդ երկու տեսակետները (արիստոտելյան և պորփյուրոսյան) թվում են հակասական, ուստի Հովհան Ռոտունեցին անհատի և

¹ «Յովհաննու Ռոտունեցոյ Վերլուծութիւն «Ստորոգութեանց» Արիստոտելի», էջ 34:

² Аристотель, Сочинения в 4-х томах, т. 1, М., 1976, с. 107.

³ «Յովհաննու Ռոտունեցոյ Վերլուծութիւն «Ստորոգութեանց» Արիստոտելի», էջ 16:

ընդհանուրի (սեռի և տեսակի) հարաբերակցությունը դիտարկում է երեք տեսանկյունից՝ **առաջնության, հավասարության և առավելության**¹, փորձելով ցույց տալ, որ անհատը և ընդհանուրը գտնվում են այնպիսի հարաբերություններում, որ առանց դրանք տարբերակելու, առանց ճշտելու դրանց իմաստներն ու նշանակությունները, հնարավոր չէ որևէ մեկին նախապատվություն տալ: Գրիգոր Տաթևացին նրա նման կարծում է, որ այս երկու մտածողների տեսակետները «ոչ են ընդդեմ միմեանց», սակայն ի տարբերություն Հովհան Ռոտունեցու, նա այլ կերպ է բացատրում չհակասելու հանգամանքը, տարբերակելով երկու տեսակի սեռ՝ բնական և իմացական: Բնական սեռն այն է, որ գոյանում է տեսակներից և անհատներից, իսկ իմացականը՝ որ «յիւրում էութեան գոյ արտաքաղեալ ի սոցանէ», այսինքն՝ որ գոյություն ունի մտածողության մեջ: **«Արդ՝ յորժամ բառնին ամենայն տեսակք, բառնին բնական սեռք, այլ ոչ իմացականք: Նոյնպէս՝ թէ բառնին ամենայն անհատքն, բնական տեսակքն բառնին, այլ ոչ իմացականն: ... Իսկ փիլիսոփայն (Արիստոտելը – Մ. Ջ.) ասէ՝ թէ ի ներքոյ սեռին են բնական տեսակք. որպէս մարդն և ձին. և ի վերոյ սեռին են բաղկացականք նորա որպէս գոյացութիւն և շնչաւոր: Արդ՝ թէպէտ ամենայն տեսակք որ ի ներքոյ սեռին են բառնին, ոչ բառնի կենդանին, զի դեռևս բաղկացականք նորա ի վերոյ են և գոն: Այսպէս թէպէտ ամենայն անհատք բառնին, ոչ բառնի տեսակն, զի բաղկացականք տեսակին որ է՝ կենդանին և բանականն և մահկանացուն ի վերոյ են և մնան»**²: Գրիգոր Տաթևացու համոզմամբ՝ գոյաբանական-ծագումնաբանական առումով սեռերն ու տեսակները, որպէս բնական բազմություններ, կարող են առաջանալ միայն անհատ գոյացությունների հիմքի վրա: Այս իմաստով անհատն առաջնային է տեսակի և սեռի նկատմամբ՝ **«ամէն բազմութիւն ի միակէ ժողովի: Որպէս տեսակն յանհատէ. և զի՞ծն ի կետէ. և բազմութիւն թուոյ ի միոյն»**³: Այսպիսով, տեսակների և սեռերի, իբրև բնական բազմությունների, գոյությունը պայմանավորված է անհատների գոյությամբ: Դա նշանակում է, որ տվյալ տեսակի մեջ մտնող անհատների վերացմամբ վերանում է նաև տեսակը կամ՝ եթե վերանում է տեսակը, ուրեմն վերացել են տվյալ տեսակի մեջ մտնող բոլոր անհատ գոյացությունները: Այսպիսով, տաթևացիները մերժում են առանձին իրերից անկախ գոյություն ունեցող ընդհանրականների գոյությունը, սակայն ընդունում են, որ ա) դրանք գոյություն ունեն իրերի մեջ որպէս նյութական հատկություններ, այսինքն՝ դրանք ածանցյալ, կախյալ գոյացություններ են. բ) գոյություն ունեն որպէս բազմություններ, և այս դեպքում անհատ գոյացությունները հիմք են սեռերի և տեսակների առաջացման համար:

¹ Այդ մասին տե՛ս **Գրիգորյան Գ. Հ.**, Հովհան Ռոտունեցու փիլիսոփայական ուսմունքը, Երևան, 1980, էջ 71-74:

² **Գրիգոր Տաթևացի**, Համառոտ տեսութիւն ի գիրս Պորփիրի, էջ 375-377:

³ **Գրիգոր Տաթևացի**, Գիրք որ կոչի Ոսկեփորիկ, էջ 21:

Գ) Ընդհանուրը գոյություն ունի իրերից հետո՝ մտքի մեջ որպես հասկացություն

Ինչպես վերը ակնարկվեց, ըստ հայ մտածողների՝ ընդհանուրը լինում է երկու տեսակի՝ «ըստ իրին և ըստ իմացմանն»: Առանձին իրերի մեջ գտնվող ընդհանուրը մարմնական-նյութական է, իսկ իմացության մեջ գտնվող ընդհանուր էությունը՝ անմարմնական: Այս կապակցությամբ հայ մտածողները քննադատում են անտիկ փիլիսոփա Անտիսթենեսի ծայրահեղ նոմինալիստական տեսակետը, ըստ որի ընդհանուրը ռեալ գոյություն չունի ո՛չ առանձին իրերի և ո՛չ մտածողության մեջ: **«Սուտ ասաց,– գրում է Գրիգոր Տաթևացին,– զի յորժամ բառնի ընդհանուրն, բարձեալ լինի և մասնական անհատն: ... Այլ էացեալք են որ արտաքոյ, որպէս մասնականք, այլ ի մեր տրամախոհութիւնս լինի և մնան: Եւ ոչ են որպէս մտածմունք, նախ զի նոքա արտաքոյ նմանութիւն չունին և սոքայ ունին, զի արտաքին էութեանց ճանաչեմք զընդհանուրն»¹**: Քանի որ տարբերություն կա իրերի և մտածողության մեջ գտնվող ընդհանուրի միջև, նշանակում է, որ մտքի մեջ առկա ընդհանուր էությունը իմացական վերամշակման արդյունք է, այսինքն՝ «մեր մտածութիւնս ստեղծանէ զանազան կերպն»: Հովհան Ռոտունեցին հստակորեն միմյանցից տարբերակում է ընդհանուրի այս երկու գոյաեղանակը: Պատասխանելով այն հարցին, ըստ որի եթե Պլատոնը մարդ է, ապա «ընդդէ՞ր ոչ ասի Պղատոն մարդկութիւն, յորժամ ասի մարդ, որ նշանակէ զբոլոր տեսակն», նա գրում է. **«ԶՊղատոն մարդ յորժամ իմանանք նյութական պատահմամբքն, որով առանձնացեալ է ճանաչեմք, նոյնպէս և զայլ իւրաքանչիւր անհատսն, իսկ զընդհանուրն՝ որ է մարդկութիւն, առանց նիւթականացս մի ինչ իմանամք, այսինքն զմարդկութիւնն, վասն այսորիկ Պղատոն կարէ ասիլ մարդ նիւթական հատկութեամբն, իսկ մարդկութիւն ոչ կարէ ասիլ, զի ընդհանուրն զատեալ է ի նիւթոց»²**:

Հայ մտածողների իմացաբանությունը խարսխվում է արիստոտելյան դրոյթների վրա: Առանձին իրը բաղկացած է ընդհանուր մտահասու (իմանալի) և եզակի զգայահասու (նյութական) հատկություններից: Իմացությունն սկսվում է այն պահից, երբ արտաքին իրերը ազդում են զգայարանների վրա՝ առաջացնելով զգայություններ ու զգայական պատկերներ: Զգայական իմացությունը սահմանափակ բնույթ ունի, որովհետև դրանց միջոցով գիտելիք է ձեռք բերվում միայն մասնավորի, անհատականի և ոչ թե ընդհանուրի կամ իրերի էության մասին: Մինչդեռ գիտության խնդիրը ընդհանուրի բացահայտումն է: Ըստ Գրիգոր Տաթևացու՝ նախ, զգայարաններով ճանաչվում են միայն զգալի-մարմնական իրերը, մինչդեռ բանականությամբ՝ իմանալի և

¹ Գրիգոր Տաթևացի, Համառոտ տեսություն ի գիրս Պորփիրի, էջ 330-331:

² «Համառոտ վերլուծութիւն Պորփիրի դժուարալուծիցն ի յերկասիրութենէ մեծ հռետորին հայոց Յովհաննու Ռոտունեցոյ», էջ 302:

անմարմնական իրերը: Երկրորդ՝ զգայություններով ճանաչում են իրերի արտաքին ու պատահական կողմերը, իսկ բանականությամբ՝ իրերի էությունը: Երրորդ՝ զգայությամբ ճանաչում ենք անհատականը, մասնավորը, իսկ բանականությամբ՝ ընդհանուրը և ամբողջը: Եթե զգայությամբ տեսնում ենք անհատ մարդուն՝ Սոկրատեսին, ապա մտքով՝ ընդհանուր էությունը՝ մարդկությունը: Զգայական իմացությունը տալիս է ճանաչվող իրի զգայական պատկերը, իսկ բանականությունը, վերացարկման ու ընդհանրացման ճանապարհով, ստեղծում է մեկ ընդհանուր էություն: Այս իմաստով ընդհանուրը գերադասելի է մասնավորից, եզակիից, որովհետև գիտելիքը միայն այն ժամանակ է դառնում գիտելիք, երբ ունենում է ընդհանրական բնույթ: Մասնավորը անթիվ է, անհամար, հարաբերական, անորոշ, իսկ անորոշի ու հարաբերականի մասին չի կարող գիտություն լինել: Հովհան Ռոտունեցին շրջանառում է կրավորական և ներգործական բանականության մասին արիստոտելյան միտքը: Եթե կրավորական բանականությունը անմիջականորեն կապված է զգայությունների, երևակայության, կարծիքի ու տրամախոհության հետ, գործ ունի զգայական պատկերների ու ընկալումների հետ, ապա ներգործական բանականությունը գործ ունի աննյութական, վերացական, ընդհանուր էությունների հետ. *«Իսկ իմացական միտքս մեր ունի երկու գործիքներ՝ ներգործական և կրողական, յորժամ ծագէ զլոյս ներգործութեան իւրոյ յերևակայութիւնն, որպէս արեգակն ի վերայ մարմնոցն, յայնժամ լուսաւորեալ երևակայութիւնն ջոկին նիւթական պատահմունքն և իմանալի գոյացութիւնն, և յայնժամ կրողական գործիքն մտացն առնու յինքն զգիտութիւն անմարմին գոյացութեանն, որ է ընդհանուրն, արտաքս թողլով զնիւթական պատահմունսն: Ապա ուրեմն, մի է՝ էութիւն է, ջոկեալ ի նիւթականաց, և այս է ընդհանուրն, որ ասի ի վերայ սեռի, տարբերութեան, տեսակի և այսպիսեաց»*¹: Ակներև է, որ իմացական գործընթացում Հովհան Ռոտունեցին ներգործական բանականությանը վերապահում է «լուսավորողի», զգայական կերպարների ապանյութականացնողի և ընդհանրացման ու վերացարկման ճանապարհով ընդհանուր էությունների ու հասկացությունների կազմավորողի դերը:

Այսպիսով, ընդհանրականների հիմնահարցի քննարկման ընթացքում Տաթևի դպրոցի մտածողները հետևում են Արիստոտելի (նաև՝ Դավիթ Անհաղթի) տեսակետին, այսինքն՝ ընդունում են ընդհանրականների եռակի գոյության բանաձևը, ըստ որի՝ ա) ընդհանուրը որպէս արարվելիք իրերի նախագաղափար գոյություն ունի Աստծո բանականության մեջ. բ) ընդհանուրը գոյություն ունի առանձին իրերի մեջ որպէս հատկություն. գ) ընդհանուրը որպէս այդպիսին, որպէս մտածական էություն, գոյություն ունի մտքի մեջ որպէս հասկացություն:

¹ Նույն տեղում, էջ 300:

Сейран Закарян – Аристотелевское восприятие вопроса об универсалиях в Татевской школе (к 2400-летию со дня рождения Аристотеля)

Философия Аристотеля оказала большое влияние на армянскую средневековую философию, в частности, на формирование философских взглядов представителей Татевской богословско-философской школы – Ованеса Воротнеци (1315-1388), Григора Татеваци (1346-1409), мимолетно также повлияла на Аракела Сюнеци (50-е гг. XIV в. – 20-30-е гг. XV в.) и Матевоса Джугаеци (50-е гг. XIV в. – 20-е гг. XV в.). Если при обсуждении различных философских вопросов армянские мыслители следовали Аристотелю, но в то же время критиковали те его тезисы, которые несовместимы с христианским архимандритом, то в вопросе об универсалиях они однозначно защищали аристотелевскую умеренную реалистическую точку зрения, т.е. признавали формулу тройкого существования универсалий, согласно которой: а) универсалия существует до вещей, являясь сутью мыслей Бога, б) универсалия существует в отдельных вещах как свойство и в) универсалия существует так же, как мыслительная сущность, существует в мысли как понятие.

Seyran Zakaryan – Aristotelian Understanding of the Issue of Universalities in Tatev School (on the occasion of Aristotle's 2400 birth anniversary)

Aristotle's philosophy had a great influence on the formation of philosophical views of the representatives of Armenian medieval philosophy, in particular Tatev theological-philosophical school, Hovhan Vorotnetsi (1315-1388), Gregory of Tatev (1346-1409), Arakel Syunetsi (50-ies of XIV century – 20-30-ies of XV century) and Matthew Jughayetsi (50-ies of XIV century – 20-ies of XV century). During the discussion of various philosophical issues Armenian philosophers follow Aristotle at the same time criticizing those provisions which are incompatible with the Christian doctrine, but as far as the issue of universalities is concerned they clearly defend the Aristotelian moderate realistic point of view, that is, they accept the resolution of triple existence of universalities, according to which: a) the universal exists in the mind of God as a preidea of the things to be created, b) the universal exists in separate things as a characteristic feature and c) the universal as such, as a speculative essence, exists in the mind as a concept.

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԶԵԿՈՒՑԱԳՐԵՐԸ 1890-ԱԿԱՆ ԹԹ. ԱՐԵՎՍՏԱՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԴՐՈՒԹՅԱՆ, ԹՎԱՔԱՆԱԿԻ ԵՎ ՑՈՒՑԱԲԵՐՎԵԼԻՔ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Բանալի բառեր – Կովկասի Հայոց Բարեգործական ընկերություն, փախստական, Բաթումի վարչություն, Սուրմալուի վարչություն, Վաղարշապատ, Կարս, Ադստաֆա, Ալեքսանդրապոլի վարչություն, Նուխի մասնաճյուղ, Արիստակես եպիսկոպոս Սեդրակյան

Հայոց ցեղասպանության առաջին փուլն Օսմանյան կայսրությունում սկիզբ առավ XIX դարի 90-ական թվականներին: Այդ քաղաքականության դրդիչ ուժը Բեռլինի վեհաժողովում Հայկական հարցի միջազգայնացումն էր, երբ Արևմտյան Հայաստանում բարենորոգումների հարցը վերածվեց միջազգային խնդրի: Աբդուլ Համիդ II-ը գտնում էր, որ նման գաղափարի կենսագործումը կարող է հանգեցնել Արևմտյան Հայաստանի ինքնավարության, ապա նաև անկախության: Չնայած նա մեծ տերությունների ճնշման ներքո ընդունեց բարենորոգումների ծրագիրը, բայց միաժամանակ իր ստանձնած «չարաբաստիկ» պարտականություններից խուսափելու միակ միջոցը համարում էր հայերին կոտորելը: Աբդուլ Համիդի՝ արևմտահայության բնաջնջման ծրագրի կենսագործումն սկսվեց 1890-ական թվականների սկզբին, երբ օսմանյան իշխանությունները, քողարկելով իրենց իրական ծրագրերը, ձգտում էին քրդերի և չերքեզների միջոցով արևմտահայությանը դնել տնտեսական անելանելի կացության մեջ և ըստ այդմ դրդել զանգվածային գաղթի: Բրիտանացի նշանավոր լրագրող Էմիլ Դիլոնը այդ քաղաքականությունը համարում էր հայերի ոչնչացման ծրագրի իրականացման առաջին քայլը¹:

Արևմտահայության հանդեպ Աբդուլ Համիդի իրականացրած ցեղասպան քաղաքականությունը զագաթնակետին հասավ 1894-1896 թթ., երբ զանգվածային կոտորածների գոհ դարձան շուրջ 300.000 հայեր: Հայ ժողովրդի բնաջնջման հետևանքներից էր նաև մահվան ճիրաններից փրկվածների արտագաղթը, որն

¹ St' u Диллон Э., Положение дел в Турецкой Армении // Братская помощь пострадавшим в Турции армянам, М., 1897, отд. II, с. 15.

ավելի ամայացրեց Արևմտյան Հայաստանը՝ նպաստելով ազգացեղային նկարագրի աղճատման հետագա խորացմանը¹:

Արևմտահայ փախստականները գտնվում էին սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում՝ սննդի բացակայություն, տարբեր հիվանդություններ: Նրանց օգնելու և մահվան ճիրաններից փրկելու համար անհրաժեշտ էր կազմակերպել շուտափույթ օգնություն: Հարկ է փաստել, որ զանգվածային կոտորածներից փրկված և Կովկասի կառավարչապետություն հասած հայերին չէր ցուցաբերվում անհրաժեշտ ուշադրություն: Մարդասիրական այդ գործի իրականացումն իր վրա վերցրեց 1881 թ. նոյեմբերի 15-ին Թիֆլիսում բժիշկ Բ. Նավասարդյանի նախաձեռնությամբ հիմնադրված Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը (ԿՀԲԸ), որը ղեկավարում էին դրա խորհուրդը և տեղական վարչությունը: 1899 թ. այն ուներ 21 մասնաճյուղ (Երևանում, Վաղարշապատում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Շուշիում, Վլադիկավկազում և այլուր):

ԿՀԲԸ-ն օգնության ձեռք մեկնեց փախստականներին սկսած 1895 թ. աշնանից, երբ կոտորածներն ահագնացան Տրապիզոնում և նրա շրջակայքում²: Ըստ վրաց-իմերեթական թեմի առաջնորդ Գևորգ արքեպիսկոպոս Սուրենյանցի՝ նոյեմբերի 13-ին ԿՀԲԸ-ի խորհրդին հղած նամակի՝ շուրջ չորս հազար գաղթական, որոնց մեծ մասը կանայք և երեխաներ էին, անցել էին ռուս-թուրքական սահմանը և ապաստանել Կովկասի կառավարչապետության տարբեր գավառներում, գլխավորապես Երևանի նահանգում³: Տարրական պայմաններից զուրկ տրապիզոնցիները առաջին փախստականներն էին, որոնք հատեցին Կովկասի սահմանը: Այդ իսկ պատճառով թեմի առաջնորդը խնդրում է ԿՀԲԸ-ն վարչությանն անմիջապես միջոցներ ձեռնարկել նրանց օգնելու համար: ԿՀԲԸ-ն մինչ այդ նման ձեռնարկ չէր կատարել, որովհետև բարեգործական ընկերության կանոնադրությունը թույլ չէր տալիս գործունեություն ծավալել կառավարչապետության սահմաններից դուրս: Բայց քանի որ փախստականների քարավանն արդեն մուտք էր գործել Կովկաս, ուստի ընկերության կանոնադրության 2-րդ կետի համաձայն նրան ընձեռվում էր փախստականներին օգնելու հնարավորություն⁴:

Թեև ԿՀԲԸ-ն այդուհետև սկսում է օգնել փախստականներին, որոնք, սակայն, անբավարար էին: Ուստի նա դիմում է իշխանություններին՝ փախստականների համար դրամական և այլ միջոցներ հանգանակելու թույլտվություն ստանալու նպատակով, սակայն Կովկասի կառավարչապետությունն այս

¹ Հայոց պատմություն, հ. 3, գիրք I, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես-XIX դարի վերջ), Երևան, 2010, էջ 542:

² Այդ մասին տե՛ս 1895, Massacres d'Arméniens. Alphonse Cillière, consul de France à Trébizonde. Texte présenté par Gérard Dédéyan, Claire Mouradian et Yves Ternon, Toulouse, 2010:

³ Տե՛ս **Լեո**, Երեսնամեակ Հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում 1881-1911, Թիֆլիս, 1911, էջ 112:

⁴ Նույն տեղում, էջ 113:

առաջարկությունը մերժում է: Կոտորածների և փախստականների դրության մասին լուրերը տարածվում էին նաև մամուլի միջոցով, որի շնորհիվ բարեգութ մարդիկ սկսում են տարբեր վայրերից օգնություն ուղարկել ԿՀԲԸ-ին: Փախըստականներին օգնելու համար խորհուրդը որոշում է կազմել հանձնաժողով, որի անդամները պետք է շրջեն և ծանոթանային նրանց կացությանը: Վերջինս պետք է որոշեր ցուցաբերվելիք օգնության եղանակն ու չափը:

ԿՀԲԸ-ն իր մասնաճյուղերից ստանում է օգնության մասին համապատասխան զեկուցագրեր, որոնց մի մասը հայտնաբերել ենք Հայաստանի ազգային արխիվի թիվ 28 ֆոնդում (Կովկասի հայոց բարեգործական ընկերություն)¹: Դրանք կարևոր սկզբնաղբյուրներ են, որոնցում մասնաճյուղերը մանրակրկիտ և ամփոփ ներկայացրել են իրենց շրջանում ապաստանած փախստականների կացությունը, թվաքանակը և նրանց ցուցաբերվելիք անհրաժեշտ օգնության մանրամասները:

Ուղղագրական և կետադրական որոշ շտկումներով՝ առաջին անգամ հրատարակվող այս վավերագրերը նոր խոսք են Հայոց ցեղասպանության պատմագրության ասպարեզում:

Մեր միջամտությունները տրված են ուղղագիծ փակագծերում, իսկ ընդգծումները բնագրային են:

ԼԻԼԻԹ ՔՈՍՅԱՆ

1

Հայոց բարեգործական ընկերություն
Կովկասում տեղական վարչություն²
10 դեկտեմբերի 1896 թ. Բաթում

Թիֆլիսի Կեդրոնական Խորհրդին

Խորհրդիդ ցանկութեան համեմատ տալիս ենք հետևեալ մի քանի տեղեկությունները քաղաքս հասնող գաղթականների մեր հասցրած օգնութեան եղանակների մասին, վերապահելով մանրամասնություններն և հաշիւները ամսավերջի տեղեկագրի և կրկնում մեր խնդիրը, որ անհրաժեշտ է այս ձևեռ օգնութեան ձեռք կարկառել այդ դժբախտներին ազատելու համար նրանց քաղցի և ցրտի անողոք ճիրաններից:

¹ Նշված ֆոնդում պահվող՝ 1890-ական թթ. վերաբերող վավերագրերի զգալի մասն անտիպ է: Դրանց որոշ մասը օգտագործել է անվանի պատմաբան Լեոն իր «Երեսնամեակ Հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում 1881-1911» աշխատության մեջ:

² ԿՀԲԸ-ի Բաթումի վարչության նախագահ Ա. Հովհաննիսյանի հաշվետվությունը ԿՀԲԸ-ի վարչությանը՝ փախստականներին ցուցաբերած օգնության մասին:

Անցեալ տարուայ¹ դժբախտ կոտորածներից անմիջապէս յետոյ սգաւոր, ահաբեկեալ, և կողոպտված ժողովուրդը Տրապիզոնից, ծովափնեայ ուրիշ և մինչև իսկ ցամաքային քաղաքներից սկսաւ թափիլ Բաթում: Այդ գաղթականութեան հոսանքը դադրեցաւ գրեթէ զարնան սկզբներին հայրենագուրկ անելով մօտաւորապէս 3000 հոգու: Այս 3000 հոգուց 1000-ին մենք կարողացանք օգնութեան ձեռք մեկնել հետևեալ եղանակներով, ծախսելով մօտաւորապէս 4500-5000 ռուբլի:

I Բնակարան

Վարչութեանս առաջին պարտաւորութիւնն ոչ մի ծանօթ չ'ունեցող, լեզու չ'իմացող, նիւթական միջոցներից զրկուած, Բաթումի մշտատար անձրև ծխի տակ [sic] ծովափի աւազների վերայ շուարած մնացած այրիներին և որբերին ընդունել և պատսպարան տալ: Այս նպատակով 6 սենեակից բաղկացած մի տուն վարձեցինք, ուր 6 ամսուայ ընթացքում օթևան գտան շատ անտերունջ ընտանիքներ, որոնցից 4-ը ամբողջ վեց ամիս պատսպարուեցան այստեղ:

Բ. Գաղթականական հոսանքի սաստիկ եղած ժամանակ ճանապարհորդների յատուկ քարավանսարայներում սենյակներ վարձեցինք:

Գ. 25-ից 30 ընտանիքի առանձին բնակարանի վարձ տուինք, ոմանց մէկ ամսուայ, ոմանց աւիլի, իսկ կան մի քանի բոլորովին անտերունջներ, որոնց մինչ այժմս էլ տալիս ենք:

II Սննդադրամ

Մեր պատսպարած ընտանիքներին հարկաւոր էր կերակրել, ըստ ընտանիքը կազմող անդամոց թւին մի որոշ ամսական տալով: Մենք տուել ենք սննդադրամ ամսական 5-10 ռուբլի, ոմանց մէկ, ոմանց աւելի և մի երկու որբերով ծանրաբեռնուած թշուառների մինչև այսօր: Միանուագ սննդադրամ տուել ենք աշխատել ցանկացող և [աշխատանք] չ'գտնող գաղթականներին մինչև մի որևիցէ պարապունք գտնելին: Ամսական սննդադրամ տրուիլէ նաև քաղաքս շրջապատող գիւղերում պատսպարվող գաղթական շարանաց:

III Ճանապարհածախս

Քաղաքս հասնող գաղթականների մեծագոյն մասը քաղաքս չէր մնում, նրանք ունէին ոմանք մերձաւոր, ոմանք հեռաւոր ազգականներ, վաղուց գաղթած և կամ պանդխտած Սև ծովի ռուսական ափի քաղաքները, որոնք գլխաւորապէս ծխախոտի մշակութեամբ են պարապում և փափագում էին հասնել նրանց մոտ հաստատելով, որ էլ ապահովուած են իբր իրանց ազգականների մոտ լինին: Եւ իսկապէս էլ բոլորովին ապահով վիճակ ունին բոլոր այն գաղթականները որոնք տեղաւորվել են իրենց ազգականների մոտ և երկրագործութեամբ են պարապում, բայց ինչպէս գալ նրանց մոտ փող

¹ Նկատի ունի 1895 թ., երբ Արդուլ Համիդ II-ի նախաձեռնած զանգվածային կոտորածները նոր թափ ստացան:

չունին: Շատերը մինչև իսկ նրանց հասցեն չունեն և նրանց բնակած քաղաքին անունը չեն իմանում: Շատ ընտանիքների ազգականներին գտնելով և նրանցից փող բերել տալով ճանապարհ ենք դրել, ուրիշներին ճանապարհաձախսից պակասած փողն ենք տուիլ և աւելի շատերին ամբողջ ճանապարհաձախսն ենք տուիլ գլխաւորապէս Սև ծովի Կովկասեան ափերի քաղաքները՝ Սոխում, Սոչի, Նովորոսիսկ, մասամբ էլ Կերչ և Թէօտոսիայ:

IV Գործ

Վարչութեան մտածողութեան գլխաւոր առարկայն եղել է գործ գտնիլ, աշխատել կարողացողներին, որպէսզի, ընդ միշտ ազատենք իրանց թշուառագոյն դրութիւնից: Այս նպատակով իզական սեռից ոմանց պատուաւոր ընտանիքներում տեղ ենք գտել, իսկ այր մարդկանց գործարանում աշխատութիւն, ոմանց էլ բանակցութեան մտնելով ուրիշ քաղաքների հետ գործ և պաշտօն ենք գտել և ընտանիքով ուղարկել այն տեղը: Բացի այս բարոյական պաշտպանութիւնից ընտանիքի հայր արհեստաւորներն գործիքների և հում նիւթի (թիթեղ, կաշի, մարմար) գտնել և կամ մի փոքր առևտուր սկսելու (միրգ, ձուկ, թէյ, սալէպ¹) համար դրամագլուխ ենք տուել 10-30 ռուբլի: Մենք տուել ենք նոյնպէս երկրագործական և բնակարաններ շինելու գործիքներ գաղթական գիւղացիներին:

V Հանդերձեղէն

Մոտաւորապէս երկու սեռին պատկանող 500 հոգու տուել ենք շորեղէն: Վերարկուներ, շալեր, զգեստներ, ձերմակեղէններ, գուլպաներ, կոշիկներ: Այդ զգեստեղէնները ստացած էինք Թիֆլիզից, Եկատիրինոդարից և Ամերիկայից:

VI Բժշկական օգնութիւն

Բժշկական օգնութիւն հասցրինք երեք եղանակով:

Ա. Պ[արոնայք] բժիշկներ, Միքայէլ Միրիմանեանց և Միքայէլ Զաքարեանց խնամել են իրապէս գաղթական հիւանդներին թէ իրանց մոտ ընդունելով և թէ նրանց այցելելով:

Բ. Պետք եղած դեղորայքը ամբողջապէս վարչութիւնս է հոգացել նախապէս պայմանավորվելով Պ[արոն] Պիրքիվիզին հետ, որը 40 % զիջում է անում:

Գ. Կոտորածներում վիրաւորուածներին և ծանր հիւանդներին հիւանդանոց է փոխադրել և իր ծախսով բժշկել և վիրաբուժական գործողութիւններ անիլ տուել:

Ահա համառոտակի կերպով տեղեկացրինք Ձեզ թէ որքա՞ն փողով, որչա՞փ հոգու, ի՞նչ օգնութիւն ենք հասցրել: Մենք հաստատում ենք, որ մեր

¹ Խոլորձի կոճղեգրային արմատներից հանվող օսլա հիշեցնող սննդարար նյութ, մեղրապ:

կարողացածը արհնք մեր սուղ միջոցներով որչափ կարելի է աւելի օգտակար լինելու:

Այժմ նոր կարիք է զգացվում օգնութեան: Պօլսոյ կոտորածը գաղթականների նոր հոսանք առաջ բերաւ: Մօտաւորապէս 400 ընտանիք Տրապիզոնից քաղաքս խուժեց վախենալով նոր կոտորածից: Սրանց մեծ մասը Բաթումում մնացին, մօտաւորապէս 150 ընտանիք օգնութեան անհրաժեշտ պէտք ունեն: Կ. Պոլսից և ուրիշ քաղաքներից էլ մշտապէս եկողներ կան, որոնք նոյնպէս օգնութեան կարոտ են մինչև մի գործ գտնիլին կամ մի ուրիշ քաղաք գտնվող ազգականի մոտ հասնելու համար ճանապարհածախս: Մենք ի մոտոյ տեսնում ենք թշուառութիւնը: Բայց բաւարար օգնութիւն հասնելու միջոց չ'ունինք: Անտանելի է նրանց վիճակը: Խնդրում ենք որչափ կարելի է շատ և որչափ կարելի է շուտ օգնութեան հասէք:

Նախագահ վարչութեան՝ Աբիսողոմ Հովհաննիսեան
Գործավար՝ Մ. Համբարձումեան
«Մակ[ագրութիւն] ստ[ացուել է] 15 դեկտ[եմբերի] 1896 № 372»

ՀԱՍ, ֆ. 28, գ. 357, ց. 1, թ. 80-82 շրջ.: Բնագիր, ձեռագիր:

2

20 հոկտեմբերի 1896 թ.
Իգդիր¹

Յարգելի պ. Համբարձում Առաքելեան

Ձեր Հոկտեմբեր 13 թով գրած նամակն ստացայ և չափից դուրս ուրախացայ, որովհետև մենք գաղթականների ահագին բազմութեան նոյնքան ահագին պահանջների և կարիքների առաջ զլուխներս բոլորովին կորցրել էինք: Ձեր նամակն ավելի քան ի դէպ էր: Ահա շտապում եմ ուղարկել ներփակեալ ցուցակը, որն, ինչպէս թուում է ինձ, պէտք է կարողանայ տալ Ձեզ բաւարար տեղեկութիւններ գաղթականների թիւ և բնակավայրի մասին: Ձեր նամակն ստանալուց յիտոյ [sic] ձեռնարկուեցաւ այդ ցուցակի կազմութեան և պատասխանիս մի փոքր ուշանալու պատճառն էլ հենց այդ ցուցակն է, որովհետև բաւականին ժամանակ խլեց: Գաղթականները մեծաւ մասամբ ցրուած են Սուրմալուի գիւղերը ու մանրամասն ու ճիշտ ցուցակ կազմելու համար անհրաժեշտ էր շրջել իւրաքանչիւր գիւղ: Իմ խնդրով այդ նեղութիւնը յանձն առաւ Իգդիրից հեռու ընկած գիւղերի համար ուսուցիչ Խ. Աբրահա-

¹ ԿՀԲԸ-ն Սուրմալուի վարչության հաշվետվությունը զավառում ապաստանած փախստականների դրության, թվաքանակի և ցույց տրվող օգնության մասին:

մեան, իսկ Իգդիրում և նորան մոտիկ գիւղերում ես եմ ցուցակագրել: Այսպիսով թէն մի փոքր ուշ կարողացայ պատասխանել, բայց կարող եմ կատարելապէս վստահացնել Ձեզ, որ ցուցակը բոլորովին ճիշտ է: Մենք աշխատեցինք ցուցակում նշանակել, ինչպէս տեսնում եք, տղաների և աղջիկների թիւից բացի և նոցա տարիքը: Ես այդ բանը անհրաժեշտ համարեցի, որովհետև այլապէս դժուար կը լինէր Ձեզ համար որոշել զգեստների տեսակը և ծաւալը: Ցուցակագրուած են 99 ընտանիք 775 հոգուց կազմված, բայց այդ թիւը վերջնական չը պետք է համարել՝ նախ այն պատճառով, որ Սուրմալուի 4 լեռնային գիւղերը Մօլլա Ղամար¹, Գիւլիջայ², Աբասգիօլ³ և Կողբ⁴ չը կարողացանք մարդ ուղարկել և տեղական գաղթականները ցուցակագրել և երկրորդ՝ գաղթականները դեռ շարունակում են գալ և ո՛վ գիտէ գուցէ մինչև որ այս ցուցակը Ձեր ձեռքը հասնի, դոցա թիւը 1000-ից անցնի: Մանաւանդ որ շատերն իրանց ընտանիքի մի մասը թողել են Բայազետ կամ Ալաշկերտ և նորեն գնում բերում են: Յամենայն դէպս Բարեգ[ործական] Ընկեր[ույթյան] օգնութիւնը պետք է հազար հոգուց ոչ պակաս անձանց համար ի նկատի ունենայ:

Գաղթականները Սուրմալուի գիւղերում բաժանուած են գաւառիս գործակալ Հմայեակ վարդապետ Արշարունու ջանքերով: Սահմանն անցած իւրաքանչիւր խումբ դիմել է սորան և սա էլ յանձնարարականներ գրելով գիւղերի քահանաների և երեսփոխանների վերայ պատուիրիլ է տեղ և կերակուր տալ թշուառներին և 2 անգամ էլ անձամբ շրջել է և տեղեկացել նոցա վիճակի մասին: Դոցա վիճակին անձամբ ծանօթ լինելու առիթ եմ ունեցել և ես: Կաշխատեմ համառօտ կերպով ներկայացնել նոցա դրութիւնը, երկարօրէն գրել խիստ դժուար է: Գաղթականները մեր գավառ են մտել առանց բացառութեան մերկ և իսպառ կողոպտուած, առաջին եկողները կարողացան Իգդիրից հնոտիներ ստանալ՝ մնացածները դորանից էլ զուրկ մնացին: Գիւղերում դոցա տուել են բնակարան (շատերը խիստ անյարմար, խոնաւ) ուտելու հաց, տեղտեղ է [sic] հաւաքել են նրանց համար բաւականին ցորեն: Իսկ նոցա զգեստի և մանաւանդ անկողինների մասին ոչ ոք չէ հոգացել և գաղթականները համարեա առանց կամ սակայն բացառութեամբ զուրկ են հագնելիքից և գիշերները ծածկոյթ չունին: Մի քանի գիւղեր գործակալի յորդորներով աշխատեցին նոցա զգեստ և անկողիններ էլ մատակարարիլ՝ գնուեցան կտաւներ, բամբազեղէններ բայց արդիւնքը քիչ էր և հազիւ թէ 100

¹ Գյուղ Երևանի նահանգի Սուրմալու գավառում, հայաբնակ է եղել մինչև 1918-1920 թթ.:

² Գյուղ Երևանի նահանգի Երևան գավառում:

³ Գյուղ Երևանի նահանգի Սուրմալու գավառում, բնակիչները գերազանցապէս հայեր են եղել, որոնց նախնիների մի մասը 1828-1829 թթ. գաղթել է Պարսկահայաստանից, իսկ մյուս մասը՝ 1915-1918 թթ. Արևմտյան Հայաստանից:

⁴ Ավան Երևանի նահանգի Սուրմալու գավառում:

հոգի քաւականութիւն ստացած լինի: Այսպէս Փանիկ¹ գիւղում տրուած է անկողին, Իգդիրում իմ մոտիկ անձանց ջանքերով կարողացանք կարել 25 վերմակ և մոտ 80 երեխայի 1-12-15 տար[եկանների համար] բամբակից մի վերնազգեստ և մի վարտիկ կարել տալ, մնացած ահագին բազմութիւնը պաշարել է մեզ և աղաչում է տալ իրանց զգեստ և մանաւանդ տաք անկողին: Գիւղական բնակարանները խոնաւ են, խոնաւ են մանաւանդ գոմերի² ուր մեծաւ մասամբ ապաստանուել են թշուառները, առանց անկողնի, սառը գետնի վրայ պառկելով շատ շատերը հիւանդացան, տիֆը համարեա թէ համաճարակ է խեղճերի մէջ, չը կայ ընտանիք, որ 1-2-3-4 անդամ չունենայ հիւանդ, քիչ չ'են նաև մեռնողները և շարունակում են մեռնել բժշկական օգնութեան կատարեալ բացակայութեամբ: Թէև Իգդիրում կայ եթմիկների³ համար հիւանդանոց (При...⁴ покоя), բայց դա բացառապէս տեղական ժողովրդի համար է բժիշկն օտարներին այցելելու պարտական չէ, տեղ տալու նույնպէս, թեւ բժիշկը Չիլիատով բաւական բարեմիտ մարդ է, երբեմն երբեմն իրան դիմողներին չէ մերժում, բայց միայն Իգդիրում եղածներն են դիմում, այն էլ մի քանիսը, իսկ գիւղերը բոլորովին գուրկ են: Երկու օր առաջ գաւառապետի հրամանով դասական բժիշկի ֆելդշերը շրջեց գիւղերը հիւանդներին ցուցակագրելու համար, ասում են թէ դեղ էլ կը տան, բայց այդ էլ հազիւ թէ որևէ արդիւնք ունենայ, որովհետև մինչև այժմ ոչինչ չէ եղել, մինչև գրեն մինչև մտածեն վճռեն դեղ տալ, տիֆով հիւանդը մեռած կը լինի: Անհրաժեշտ է անմիջական օգնութիւն: Իմ բոլոր ասածներն ամփոփե.

- ա) Բարեգործ[ական] ընկերութիւնը պէտք է ի նկատի ունենայ 1000 հոգի:
- բ) Պետք է այդ բոլոր գաղթականներին սակաւ բացառութեամբ պատրաստել հագնելու շորեր մանաւանդ կանանց ու երեխաներին:
- գ) Ամենից անհրաժեշտ է այն շատ շուտով հասցնել վերմակներ և դօշագներ՝ հիւանդանում են բաց պառկելուց, պէտք է շտապել որքան հնարաւոր է:
- դ) Պետք է մտածել բժշկական օգնութեան մասին, դորա համար, ես իմ կողմից կ'առաջարկեի ուղարկել ընկերութեան բժիշկ անդամներից մէկին, որը կրկնակի նպատակ կ'ունենար, թէ հիւանդութիւնների առաջը կ'առնէր և թէ անձամբ վերահասու կը լինէր գաղթականների կացութեան: Ինչ ասել կ'ուզի, որ այդ բժիշկը պէտք է հնարաւորութիւն ունենայ և դեղեր գնել և բաժանել:
- ե) Իրերի բաշխումը Էջմիածնի բարեգ[ործական] ընկ[երութեան] ճիւղին յանձնիլն անյարմար է, որովհետև նոքա մեր գաւառին ծանոթ չեն, և

¹ Գյուղ Երևանի նահանգի Սուրմալու գավառում, Իգդիր գավառակում:

² Մի բառ անընթեռնելի է:

³ Ըստ երևոյթին հեղինակը նկատի ունի կոտորածներից որբացածներին:

⁴ Անընթեռնելի է:

կամայ ակամայ պետք է մեզ յանձնին, այսպիսով միայն ձեռք է ձեռք անցնելով օգնութեան գործը կ'ուշանայ, ուրիշ ոչինչ:

- զ) Այնուամենայնիւ անհրաժեշտ է այդ օգնութիւնը մի պաշտոնապէս ճանաչուած հաստատութեան կամ անձի յանձնիլ, մեզանում ընկեր[ութեան] ճիւղ չը կայ, իսկ միակ պաշտոնական անձը, որ ն' ծանոթ է գործին ն' այժմ անում է, ինչ որ հնարաւոր է, դա գաւառիս գործակալն է, իրերը պետք է ուղարկել նորա՝ Հմայեակ վրդ[ա]պ[ետ] Արշարունու անունով: Ինչ ասիլ կուզի, որ նա մեն մենակ չի կարող այդ գործը կատարել, իսկական բաշխումը կը կատարենք մենք՝ ես, ուսուցիչ Խաչատուր Աբրահամեանը և տեղացի երիտասարդ Ներսէս Ներսիսեանը: Չը գիտեմ այս որքան յարմար կը համարէք:

Վերջացնում եմ նամակս կրկնելով՝ որ չը պետք է մոռանալ, որ շարունակ գալիս են նոյնպէս մերկ, նոյնպէս ցրտահար, սոված, հիւանդ: Չը պետք է մոռանալ, որ ցրտերն ընկնում են և պէտք է չափազանց շտապել, շատ շտապել: Կաւելացնեմ և այս, որ հացի մասին չը պէտք է մտածել, ցորենն էժան է և գիւղացիք չեն մերժում ցորեն հաւաքել նրանց համար:

Սպասելով օգնութեան ողջունում եմ ձեզ ի բոլոր սրտէ:

Ձեր Ահարոնեան

Յ. Գ. Հմայեակ վարդապետի համաձայնութիւնն ստացել եմ իւր անունով իրերն ուղարկելու համար, համաձայն են իմ երկու միւս ընկերներն ևս:

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 358, թ. 103-105: Բնագիր, ձեռագիր:

3

22 ա հոկտեմբեր 1896 թ.

Վաղարշապատ¹

Մեծարգոյ Պ[արոն] Հ. Առաքելեան

Ստանալով Ձեր նամակը շտապում եմ անմիջապէս պատասխանել:

Մինչև այժմ Վաղարշապատ են եկել 1270 հոգի գաղթականներ, սոցանից 1212 հայեր են՝ իսկ 58 ասորիներ (իյաղուբի): Բոլոր գաղթականներից 500 հոգի, որ միասին եկել էին Վանից վերջին անգամ համարեա բոլորն էլ տղամարդիկ տեղաւորուած էին վանքի Նորաշէն տների մեջ, իսկ մնացածները՝ մեծ մասը բնակվում են վանքի գոմանոցում (պլանում), իսկ միւս մասը Վաղարշապատ գիւղում, համարեա բոլորն էլ հաց ու կերակուր էին ստանում վանքից Վեհափառի² կարգադրութեամբ, իսկ հիւանդների հ[ա]մ[ա]ր բժիշկ,

¹ Վաղարշապատի գավառում գտնվող արևմտահայերի կացության նկարագրությունը:

² Մկրտիչ Խրիմյան (Խրիմյան Հայրիկ, Մկրտիչ Ա Վանեցի 1820-1907 – Ամենայն հայոց կաթողիկոս (1892-1907):

դեղ և սնունդ հասցրել էին բար[գործական] ընկ[երութեան] տեղիս ճիւղի մի-
ջոցներով: Սեպտեմբեր ամսում վարչութիւնն ունեցել է 85 հիւանդ: Վեհա-
փառի կարգադրութեամբ Վանից եկած 500 գաղթականները, որոնք համա-
րեա բոլորն էլ վաճառականներ և արհեստավորներ էին, գնացել են՝ Երևան,
Տփլիս, Բագու ու Բաթում, իսկ մնացած 770 անձինք, որոնց մեծ մասը
կանայք ու երեխաներ էին, կրկին Վեհափառի կարգադրությամբ ցրուել են
զանազան գիւղեր՝ Վաղարշապատում 30 տուն բաղկացած 158 հոգուց, իսկ
Վաղարշապատի գաւառի գիւղերում՝ Մաստարա¹ 50 հոգի, Թալին² 150
հոգի, Եղուրդ 22 հոգի, Չիբուխչի³ 8 հոգի, Հաջիլար⁴ 12 հոգի, Ղուրդուղուլի⁵
15 հոգի, Սարդարապատ⁶ 15 հոգի, Այլանլու⁷ 12 հոգի, բացի այս վանքի
գումանոցում նոր եկել են 10 տուն ասորիներ 58 հոգուց բաղկացած: Ուրեմն
Վաղարշապատում և Էջմիածնայ գաւառի գիւղերում կան այժմ 500 հոգի
գաղթականներ, որոնց մեծ մասը կազմում են 1 տարեկանից մինչև 14-15 տա-
րեկան երեխաներ և մանուկներ, յետոյ քանակութեամբ երկրորդ տեղը
բռնում են կանայք, իսկ փոքրամասնութիւնը տղամարդիկ: Մնացած գաղթա-
կանների մեծ մասը տեղաւորուած է Երեւանայ գիւղերում, իսկ մնացածնե-
րը՝ Նոր-Բայազետի⁸, Շարուրի⁹ և Ալեքսանդրապոլի գիւղերում:

Մեր ժողոված տեղեկութիւններից երեւում է, որ բացի այստեղ եկած
գաղթականները Իգդիրում ու նրա շրջակայ գիւղերում ժողովուած են մօտ
1200 հոգի հայ գաղթականներ ամենաթշուառ վիճակի մէջ, սոցա մէջ, ինչպէս
պատմում են, տարածուած է տիֆ հիւանդութիւնը և օրեկան 5-6 մահուան
դէպքեր են պատահում: Անցեալ օրերում Տաճկաստանից¹⁰ եկած 3 գաղթա-
կաններ պատմում էին, որ Վանից նորից գաղթել են 100 տուն հայեր մօտ 500
հոգուց բաղկացած, բայց սարերի ձիւնի պատճառու չեն կարողանում սահ-
մանն անցնել:

Այս բոլորից յետոյ պետք է յայտնել և այն հանգամանքը, որ Սուրմալուից
համարեա ամենայն օր գալիս են այստեղ նոր գաղթականներ, որոնք 5-6 օր

¹ Ավան՝ Երևան-Ալեքսանդրապոլ երթուղու համանուն կայարանին կից, այժմ՝ Դալա-
րիկ:

² Ոստիկանական շրջան Երևանի նահանգի Վաղարշապատի գավառում:

³ Գյուղ Երևանի նահանգի Վաղարշապատի գավառում: Այժմ՝ Վարդանաշեն:

⁴ Գյուղ Երևանի նահանգի Վաղարշապատի գավառում: Այժմ՝ Մրգաստան: Տեղի բնակ-
չության նախնիների մի մասը գաղթել է Պարսկահայաստանի Խոյ, Սալմաստ գավառներից
1828-1829 թթ., Արևմտյան Հայաստանի Մոկս գավառից 1915-1918 թթ.:

⁵ Գյուղ Երևանի նահանգի Վաղարշապատի գավառում: Այժմ՝ Արմավիր: Բնակիչների
մեծ մասը գաղթել է Խոյից, Սուրմալուից, Ալաշկերտից, Մուշից:

⁶ Գյուղ Երևանի նահանգի Վաղարշապատի գավառում: Այժմ՝ Հոկտեմբեր:

⁷ Գյուղ Երևանի նահանգի Վաղարշապատի գավառում: Այժմ՝ Ծաղկունք:

⁸ Գյուղ ՀՀ Գեղարքունիքի մարզ: Այժմ՝ Գավառ:

⁹ Գավառ, «օկրուգ», «մարզ», շրջան Երևանի նահանգի Նախիջևանի գավառում:

¹⁰ Օսմանյան դաժան լծի տակ հեծող պատմական Արևմտյան Հայաստանը, որը 1915 թ.
Մեծ եղեռնից հետո դարձավ հայերից անբնակ ու ամայի:

այստեղ մնալուց յետոյ, Վեհափառի կարգադրութեամբ ցրվում են զանազան գիւղեր:

Սոռացայ նաեւ յիշել, որ գումանցի գաղթականների երեխաներից մօտաւորապէս 50 հոգու ճեմարանի վարչութիւնը բաժանել է աշակերտների հին շորերը: Գալով Ձեր հարցին, թէ որքան նպաստ պետք է սոցա կարիքը հոգալու, դժուար է որոշել, որովհետև բոլորը համարեա շատ քիչ բացառութեամբ, զուրկ են՝ բնակարանից, հագուստից, վառելիքից և սնունդից: Միայն Վաղարշապատի գիւղի մէջ գտնուած գաղթականները ու գումանցում բնակվողները ստանում են վանքից օրեկան հաց ու կերակուր, իսկ մնացածները, որ ցրուած են զանազան գիւղերում, պետք է օգնութիւն ստանան գիւղացիներից, որոնց դրութիւնը նոյնպէս լաւ չէ: Վանքի դիւանատան մէջ գտնուած տեղեկութիւններից երեւում է, որ գիւղացիք դժուարանում են պահել գաղթականներին, որի պատճառու գիւղերը ցրուած գաղթականներից մի քանիսը կրկին վերադարձել են Էջմիածին և խնդրում են ուրիշ գիւղ ուղարկելու:

Մնամ Ձեզ յարգ. [ստորագրութիւն]

«[Մակագրութիւն] Ստ. 28 հոկտ. [18]96 թ. № 294»

ՀՄԱ, ֆ. 28, ց. 1, գ. 358, թ. 107: Բնագիր, ձեռագիր:

4

23 հոկտեմբերի 1896 թ.

Կարս¹

Կովկասիան հայոց բարեգործ ընկերութեան յարգելի խորհրդին

Վերադառնալով վիճակիս գիւղերում ապաստան գտած գաղթականներին արածս այցելութիւնից, շտապում եմ հրաւիրել յարգելի վարչութեանս լուրջ ուշադրութիւնը այդ դժբախտների սոսկալի կացութեան վերայ: Կարսի նահանգում այժմս ապաստանած են մոտ 4500 հոգի նոր գաղթականներ, որոնք ոչ զգեստ ունեն, ոչ ուտեստ և ոչ անկողին: Ընտանիքներից մեծ մասը զուրկ հասակաւոր աշխատաւոր անդամներից՝ բաղկացած են կանանցից, փոքրահասակ երեխաներից, որոնց տեսքը սարսափ է ազդում այցելուին: Այժմս վրայ է հասնում տիւրոյս ցրտաշունչ ձմեռը իր կորստաբեր հետևանքներով այդ մերկանդամ թշուառների համար և ստիպում օր առաջ մտածել

¹ Կարսի առաջնորդական փոխանորդի համառոտ զեկուցագիրը ԿՀԲԸ նախագահին՝ մարզում գտնվող հայ փախստականների ծանր դրութեան մասին:

այդ դժբախտների դրութեան մասին, որոնց մէջ հենց այժմեանից տարածուած են տիֆ, և այլ տարափոխիկ հիւանդութիւններ: Սարսափելի պետք է լինի այդ թշուառների կացութիւնը, եթէ օր առաջ զգալի օգնութիւն չը հասցնենք նոցա, ուստի սրանով աղերսում եմ յարգելի վարչութեանս՝ շտապել օգնութեան, որպէսզի դատապարտուած չը լինենք տեսնելու, թէ ինչպէս է մեռնում մեր արիւնակից եղբայրը սովից ու ցրտից այն ժամանակ, երբ եղբայրակիցները հազարներ են վատնում շռայլութեան վրայ:

Փոխանորդ վիճակին Կարուց Եղիշէ [ստորագրություն]

«[Մակագրութիւն] Ստ[ացուել է] 4 նոյեմբերի 1896 թ. № 301 արձ[անագրութիւն] № 311896»:

ՀԱՍ, ֆ. 28, ց. 1, գ. 358, թ. 130: Բնագիր, ձեռագիր:

5

13 սեպտեմբերի 1897 թ.
Աղստաֆա¹

Կովկասի հայոց բարեգործական ընկերութեան յարգելի խորհրդին

Ամսոյս 12-ին մի հեռագրով տեղեկացրի յարգելի խորհրդիդ, որ Աղստաֆա են եկել 80 չափ մեծ ու փոքր գաղթականներ գուրկ ամենաչնչին միջոցներից, սակայն մինչև որ դոցա մասին խորհուրդը ոչ մի օգնում չհասցրեց: Այս գաղթականների մեծ մասը հիւանդ և անկար են, բնակուելու տեղ չկայ, քարվանսարայի մի բացօթեայ անկիւնում տեղաւորուել են, զիշերները սաստիկ ցուրտ, իսկ ցերեկները շոգ, որից ևս շատանում է հիւանդների թիւը: Վերջապէս երեկ սկսեց անդադար յորդ անձրև գալ, իսկ այդ թշուառները մի տեղ չգտան պատսպարելու: Ամբողջ զիշերն անցկացրին անձրևի տակ, որի հետևանքն այն եղաւ, որ մի ջահել պատճառաւոր կին այսօր առաւտտիան վախճանուեց և այստեղ մի կերպ հողին յանձնեցինք: Կան սոցա մէջ և մի քանի անկար² հիւանդներ եթէ վաղօրոք բժշկական օգնութիւն չհասցնուի բոլորը կը կոտորուին: Տեսարանը սարսափելի է, ուստի խոնհարաբար խնդրում եմ նամակս ստանալու պէս շուտով օժանդակութիւն հասցրէք սոցա ճանապարհաձախքը հոգալու, թէ այստեղ բոլորը կը փչանան: Մենք անձար ենք, մեր սեփական միջոցներով սոցա ճանապարհի ձգելու, իսկ այդպէս թողնել չի կարելի:

¹ Նամակ Աղստաֆայում ապաստանած ԿՀԲԸ-ի հայ փախստականների թվաքանակի և ծանր դրության մասին:

² Անկարող, անգոր:

Յուսամ յարգելի խորհուրդ կը մտնի այդ թշուառների դրութեան մեջ և շուտափոյթ օգնութեան կը հասնի առանց ժամանակ կորցնելու:

19 հոգի այր մարդ

21 [հոգի] կին մարդ

9 [հոգի] պատանիներ 10-15 տարեկան

33 [հոգի] մանր երեխաներ

Բոլորը Վանի նահանգից են թուրք-պարսկական սահմանի մոտի գիւղերից:

Խորհրդին՝ [ստորագրութիւն]

«[Մակագրութիւն] 16 սեպտ[եմբերի] 1897 թ. № 302 արձ[անագրութիւն]
№ 34 1897»:

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 360, թ. 116-116 շրջ.: Բնագիր, ձեռագիր:

6

№ 7

13 յունվարի 1897 թ.

Ալեքսանդրապոլ¹

Կովկասի Հայոց բարեգործական ընկերութեան Յարգապատիւ խորհրդին

Վարչութիւնս պատիւ ունի զեկուցելու, որ նա համաձայն յարգապատիւ խորհրդիս գրութեան, որ ի16 էն նոյեմբերի 1896 ամի № 275, արդէն հաւաքել է մանրամասն տեղեկութիւններ քաղաքումս գտնուած գաղթականների կացութեան մասին (24 ընտանիք) և այժմ սպասում է գաւառիս գործակալներից նոյնպիսի տեղեկութիւնների գիւղերում գտնուած գաղթականների մասին, որպէսզի առանց ուշացնելու միասին ներկայացնի յարգելի խորհրդիդ: Ի նկատի ունենալով, որ Աստրախանի տիկնայք և օրիորդները իրանց թեմական Առաջնորդի միջոցով ուղարկել են վարչութեանս հագուստեղէններ, որոնք վարչութեանս ստանալուն պէս բաժանելու է գաղթականներին և բացի այդ, որ քաղաքիս ժողովարանը ամսիս 11-ին գաղթականների օգտին պարահանդես տուց և արդիոք ունեցավ մօտ 2000 ռ[ուբլի] վարչութեանս սա այժմ կարիք է զգում 200 ռ[ուբլի] դրամի գաղթականներին օգնելու համար (բնակարանների վարձելու, բժշկական օգնութեան և ապրուստի միջոց

¹ ԿՀԲԸ-ն Ալեքսանդրապոլի մասնաճյուղի զեկուցագիրը նահանգում հաստատված հայ փախստականների համար դրամ հանգանակելու մասին:

հասցնելու համար): Ուստի պատիւ ունի խոնհարաբար խնդրելու յարգելի խորհրդից յիշեալ գումարը, յատկացնելու, որ եթէ ուրիշ պետքեր զգացուն զաւառիս գաղթականների մասին տեղեկութիւնները ստանալուց յետոյ, վարչութիւնս իսկոյն կը տեղեկացնի այդ մասին:

Նախագահ վարչութեան՝ [ստորագրութիւն]
Գործավար՝ [ստորագրութիւն]
[Մակագրութիւն] «Ստ[ացուած է]17 յունուարի N° 18»

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 357, թ. 170-170 շրջ.: Բնագիր, ձեռագիր:

7

N° 9

14 յունուարի 1897 թ.

Նուխի¹

Տեղական վարչութիւնս մեծաշնորհակալութեամբ ստացաւ մեծարոյ խորհրդիդ ուղարկած յաջորդ գաղթականների երկու հարիւր (200) րուբլի:

Պատիւ ունենք յայտնելու ի տեղեկութիւն Մեծարգոյ խորհրդիդ, որ վարչութիւնս խնամուած է Նուխում սա այժմ հարիւր տառապելալի, չհաշուելով շրջագայողներին, որոնք նպաստ ստանալով հեռանում են քաղաքից:

Խնամուող հարիւր հոգին միանգամայն գուրկ են հագուստից և որ գլխաւորն է՝ կոշիկներից: Այս ողորմելիները ամբողջ գիշերները պատկում են վարչութեանս տուած բնակարաններում մերկանդամ, որի հետևանքն եղել է այն, որ այսօր ունենք քաղաքումս դոցանցից բազմաթիւ հիւանդներ, որոնք աւելի են դժուարացնում վարչութեանս գործը, մի քանիսն էլ վախճանուել են:

Մեծարոյ խորհրդիդ ուղարկած երկու հարիւր ռուբլիով, ինչպէս նաև մեր հանգանակածներով վարչութիւնս միմիայն կարողանում է մատակարարել նոցա բնակարան, վառելափայտ, լուսաւորութիւն, թէյ և շաքար կիրակի օրերը միս և շատ չնչին նպաստ դրամով առօրեայ մանր ծախքերի համար այնպէս որ վարչութիւնս հնարաւորութիւն չունի ամեննին դոցա ազատելու հագուստի և կոշիկների գրկանքից, որ և շատ անհրաժեշտ հանգամանք է հիւանդութիւններից գերծ պահելու համար:

Հագուստեղէն ու կոշիկք քաղաքումս ձեռք բերել անհնարին է մեզ համար, որովհետև տեղացիք զլանում են տալ, իսկ նորից պատրաստել տալ փողով, այդ շատ թանկ է նստում վարչութիւնս. ուստի պատիւ ունենք խնդրել Մեծ խորհրդիդ մտնել վարչութեանս անել դրութեան մէջ, խղճալ գաղթականաց և հնարաւորութեան չափ նեղութիւն կրել փութով հասցնել

¹ Նուխիի ԿՀԲԸ-ն մասնաճյուղի գեկուցագիրը կենտրոնական վարչութեանը ստացված գումարը տնօրինելու մասին:

հին հագուստեղէն և կոշիկ, որպէսզի կարենանք մի կերպ կառավարել դոցա այս ձմեռ:

Նախագահ վարչութեան՝ Եղիշէ քահանայ Ահարոնեան
Գործավար՝ Գ. [ստորագրութիւն, անընթեռնելի է]
[Մակագրութիւն] «Ստ[ացուած է] 24 յունւ[արի] 97 № 28,
արձ[անագրութիւն] № 5 1897»

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 357, թ. 185-185 շրջ.: Բնագիր, ձեռագիր:

8

4 փետրուար 1897 թ.

[Թիֆլիս]

№ 62¹

Նորին բարձր Սրբազանութեան Արիստակէս Արի. եպիսկոպոս Սեդրակեանին²

Համաձայն իւր կազմաւ պետք է համարում խորհուրդս տեղեկութիւններ տալ Սրբազանութեան Կովկասում գտնուող գաղթականների թուի, դրութեան և մինչև այժմ ստացած նուէրների ու նրանց գործադրութիւն մասին:

Ինչպէս գիտէ Ձեր Սրբազանութիւնը, գաղթականները կենտրոնացած են գլխաւորապէս Կարսի շրջանում, Երևանեան նահանգում և Չերնոմորեան շրջանում: Ամենամեծ թիւը գտնուում է Կարսի շրջանի գիւղերում: Նրանց թիւը այդտեղ հասնում է մոտ 24.000-ի: Երևանեան նահանգում, թուով մոտ 10.000 նրանք պատսպարուիլ են գլխաւորապէս Սուրմալուի (Բգդիրի), Վաղարշապատի և Երևանի գաւառներում:

Մի մասը գաղթականների, պետք է ասել, փոքր ի շատ է լաւ վիճակ ունեցող մասը, գործ և աշխատանք գտնելու յոյսով, գնացել են զանազան քաղաքներ Բագու, Թիֆլիս, Բաթում, Գանձակ, Նուխի, Շուշի և այլն: Սակայն այնտեղ էլ նրանց մեծ մասը գործ չգտնելով ունեցածներն էլ ուտելով մնացել են զուրկ որևէ միջոցից: Իհարկէ, դեռ քաղաքներում գտնուող գաղթականները որևէ կերպով օգնութիւն են ստանում նրանց կերակրում են բնակիչները, հագուստեղէն տալիս, մանր զբաղմունքներ են ունենում և այլն, բայց

¹ ԿՀԲԸ-ն հաշվետվությունը Վրաստանի և Իմերեթի հոգևոր առաջնորդ Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանին ստացված գումարների և փախստականներին հետագա օգնություն ցուցաբերելու մասին:

² Սեդրակեան (Մելիք-Առաքելեան) Արիստակէս Սեդրակի – բանասեր, պատմաբան, եկեղեցական գործիչ, Էջմիածնի միաբանության անդամ: 1882 թվականից՝ եպիսկոպոս: Եղել է Երևանի Ս. Կարապետ, Էջմիածնի Ս. Գայանէ վանքերի վանահայր (1869-1882), Տաթևի, Արցախի, Վրաստանի, Իմերեթիայի և Աստրախանի հայոց թեմերի առաջնորդ (1867-1906), Գևորգյան ճեմարանի ուսուցիչ (1874-1876) և տեսուչ (1891-1893):

մեծամասնութեանը այն է կանանց և երեխաների, որոնք մնացել են Կարսի և Երևանի նահանգների գիւղերում, դրութիւնը շատ ծանր է գիւղացիները հազիւ կարողացել են տալ նրանց անկյուններ բնակութեան համար, խոնաւ և ցուրտ, և ցամաք հաց կամ ցորեն, ալիւր, իսկ հագուստեղէն նրանք չունին, որ տան: Այդ պատճառով մերկ և անօթի գաղթականներն սկզբում մեծ նեղութիւններ կրեցին, մինչև որ Ընկերութիւնս կարողացաւ նրանց օգնութեան հասնել: Սեպտեմբերից սկսած Խորհուրդս տեղեկութիւններ հավաքելով իւր ճիւղերից, իւր ձեռքն առաւ գաղթականներին օգնելու գործը:

Այդ բանի համար Խորհուրդս ստացաւ մինչև այս տարվա սկիզբը յօժանդակումներ 19.248 ռ[ուբլի]-74 կ[ոպեկ], որից 8521 ռ[ուբլի] ստացած է Թիֆլիսից, 5178 ռ[ուբլի] 72 կ[ոպեկ] ստացած է Ձերդ Սրբազանութիւնից, Բագուից ստացած է 2250 ռ[ուբլի], Русские Ведомости¹ խմբագրութիւնից 751 ռ[ուբլի] Մոսկվայից 500 ռ[ուբլի] իսկ մնացած գումարը (2047 ռ[ուբլի] 2 կ [ոպեկ]) ստացած է զանազան տեղերից:

Ստանալով այդ նուէրները և մոտ 3000 կտոր զանազան հագուստեղէն, Խորհրդիս գաղթականներին սկսեց օգնել՝ Երևանեան նահանգում՝ Երևանի, Վաղարշապատի ճիւղերի և Իգդիրում յատկապէս այդ նպատակով հաստատուած ինսամակալութեան միջոցով Կարսի նահանգում՝ Կարսի և Կաղզուանի, իսկ Բաթումի շրջանում՝ Բաթումի ճիւղի միջոցով:

Ստացած նուէրներից Խորհուրդս ուղարկեց մինչև յունվար ամիսը Կարս-1950 ռ[ուբլի], Կաղզուան-1000 ռ[ուբլի], Իգդիր 1550 ռ[ուբլի], Վաղարշապատ-700 ռ[ուբլի], Երևան 640 ռ[ուբլի], և Բաթում 715 ռ[ուբլի] ընդամենը 6555 ռ[ուբլի], իսկ Թիֆլիսում գործադրուել թէ այստեղի գաղթականների և թէ զաւառների գաղթականների համար հագուստներ և վերմակներ ու ներքնակներ գնելու համար 4012 ռ[ուբլի] 138 կ[ոպեկ]: Ընդամենը 1057 ռ[ուբլի] 35 կ[ոպեկ]: Խորհուրդս գնել է 1500 հատ զինուորական շինեւներ², մօտ 4000 արշ[ին]³ կտաւ⁴, կոշիկներ, գլխակներ 300 հատ վերմակ և ներքնակ և ուղարկել է ճիւղերին, որոնք իրենք ևս ստացել են թէթն նուէրներ թէ դրամով և թէ հագուստեղէնով, այսպէս, որ շնորհիւ այդ բոլորի կարելի է ասել, որ գաղթականները կարողացել են ապահուել սովամահ լինելուց հիւանդութիւնները հետզհետէ պակասել են: Խորհուրդս աշխատեց հիւանդանոցներ բանալ նաև Իգդիրում և Կարսում, բայց թոյլտութիւն չեղաւ և հիւանդները բժշկուում են մասնաւոր կերպով: Ընդամենը Խորհուրդս գործադրեց 1896 թ.

¹ Ռուսական հասարակական-քաղաքական լրագիր, որը լոյս է տեսել 1863-1918 թթ. – սկզբնական շրջանում շաբաթը երեք անգամ, իսկ սկսած 1868 թ.՝ ամեն օր: Հիմնադիրն ու առաջին խմբագիրը եղել է Ն. Ֆ. Պավլովը:

² Զինվորական տաք վերարկու, գրատ:

³ Երկարության ուսական չափ: Մեկ արշինը հավասար է 71 սմ:

⁴ Կտավատ բոյսից ստացված թելից՝ վուշից, գործած կտոր, քաթան: Առհասարակ՝ բամբակյա գործվածքներ:

սեպ[տեմբերից] յունվար 1897 թ. 10570 ր[ուրի] 38 կ[ուպեկ] (1896 թ. սեպտ[եմբեր]-ից): Յունվարից յետոյ դարձիալ Խորհուրդս ուղարկել է հիւանդներին 2500 ր[ուրի]:

Նախագահ՝ [ազգանունը բացակայում է]
Քարտուղար՝ Հ. Առաքելեան

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 967, թ. 34-35 շրջ.: Բնագիր, ձեռագիր:

Лилит Косян – Отчеты филиалов Кавказского армянского благотворительного общества о состоянии беженцев Западной Армении, их количестве и оказанной им помощи в 1890-х гг.

Во второй половине XIX века Османская империя продолжила осуществление на государственном уровне жесткой политики по отношению к находящимся под ее властью христианским народам, в особенности к западным армянам.

Насилие в отношении армян наиболее ярко проявилось в годы правления Абдул-Гамида II (1876-1908), организатора первого этапа Геноцида армян, когда было вырезано до 300.000 армян, проживавших главным образом на территории Западной Армении. Спасшиеся от поголовных погромов армяне мигрировали в разные страны. Различные благотворительные, общественные и религиозные организации и компании, как армянские, так и зарубежные, протянули беженцам руку помощи. Одной из таких организаций было Кавказское Армянское Благотворительное общество (КАБО) созданное в 1881 г. Для того чтобы лучше организовать помощь, в Совете КАБО решают в каждом своем филиале составить комиссию, члены которой должны были ознакомиться с положением беженцев и собрать подробные статистические данные об их количестве, социальном положении и требуемой помощи. На основании полученных данных КАБО в пределах своих возможностей оказывало помощь беженцам. В публикуемых документах указано количество беженцев из Западной Армении, их положение и оказываемая им помощь.

Lilit Qosyan – Reports of the Branches of the Caucasian Armenian Benevolent Society on the Status of Western Armenian Refugees, their Numbers and the Assistance Provided to them in the 1890s

In the second half of XIX century the Ottoman Empire continued implementing a strict policy at the state level against Christian nations who were under its rule, especially against Western Armenians. The violence against Armenians was most clearly manifested during the reign of Abdul Hamid II (1876-1908), the organizer of the first phase of the Armenian Genocide, when about 300,000 Armenians living in the territories of Western Armenia were slaughtered. Armenians who survived after these massacres migrated to different countries. Various charitable, public and religious organizations and companies, both Armenian and foreign, assisted the refugees. One such organization was the Caucasian Armenian Benevolent Society (CABS) established in 1881. In order to better organize the assistance the Council of CABS decided to set up committees in each of its branch, whose members were supposed to learn about the situation of refugees and collect detailed data on their number, social status and the required assistance. Based on these data CABS provided assistance to the refugees to the extent possible. The published documents indicated the number of refugees from Western Armenia, their social status and the assistance they had received.

Սամվել Մուրադյան, Հովհաննես Շիրազ. քանաստեղծը, մարդը, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, գիրք Ա, 2012, 576 էջ, գիրք Բ, 2016, 408 էջ:

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Մուրադյանի՝ Հովհաննես Շիրազի (1915-1984) կյանքի և ստեղծագործության քննությանը նվիրված երկհատոր մենագրությունն արժանի նվեր է XX դարի հայ բանաստեղծական արվեստի մեծագույն դեմքերից մեկի ծննդյան 100-ամյակին: Նախ այն հեղինակի հոգու պարտքն է բանաստեղծի հիշատակի առջև՝ որպես նրա իսկ հանձնարարականի իրականացում (Ա, էջ 46): Միաժամանակ, դա նաև գրականագետի երկու ուսուցիչների՝ Հր. Թամրազյանի և Էդ. Ջրբաշյանի պատգամն է:

Սույն մենագրությունը համարված ու համակարգված շարունակությունն ու ամփոփումն է Շիրազի կյանքին ու ստեղծագործությանը նվիրված Ս. Մուրադյանի նախորդ ուսումնասիրությունների, որոնք տեղ են գտել նրա «Գրական հանգրվանների» երեք հատորներում: Այն ընդգրկում է նաև բանաստեղծի հրատարակություններից դուրս մնացած գրավոր և բանավոր որոշ ելույթներ:

Ա գրքում զետեղված «Հովհաննես Շիրազ երևույթը» և Բ գրքի «Մուտք» բաժիններն ունեն որոշակի նպատակ. առաջինը բանաստեղծի մարդկային ու գրողական խառնվածքի ընդհանուր բնութագիրն է հայ և համաշխարհային գրականության համապատկերում, երկրորդն ապահովում է կապը երկու հաջորդական հատորների միջև: Դրանցից յուրաքանչյուրն ունի բնորոշ խորագիր և արձարձում է գերազանցապես մեկ հիմնախնդիր, թեև երբեմն մատնացույց են արվում նաև առնչակից խնդիրները և թեմատիկ-գաղափարական ու ժանրային ներթափանցումները: Ընդ որում՝ հեղինակը բանաստեղծին կենդանի գույներով ներկայացնելու և նրա միասնական քնարական աշխարհը մասնատելով չաղավաղելու նպատակով հրաժարվել է նրա կյանքն ու ստեղծագործությունը թեմատիկ բաժանմամբ քննելու ավանդական եղանակից: Ա գրքում Ս. Մուրադյանը կիրառել է Շիրազի գրական ժառանգության վերլուծության այնպիսի եղանակ, որը մի կողմից երկերը գնահատում է ստեղծման ժամանակի մեջ՝ որպես դարաշրջանի գեղարվեստական արձագանք, մյուս կողմից՝ դրանք՝ որպես մնայուն գեղարվեստական արժեքներ, դիտարկում ժամանակից դուրս: Այսպիսով՝ հաշվի են առնվել

երկերի գաղափարական-բովանդակային – ժանրային, լեզվական ու ոճական յուրահատկությունները, քնարականի և էպիկականի հարաբերակցությունը, որով առավել ընկալելի ու տեսանելի են դառնում գրողի անհատականությունն ու ինքնատիպ պատկերավոր մտածողությունը:

Շիրազյան ստեղծագործությունները ներկայացվում են կենսագրական նյութի և բանաստեղծի ապրած ժամանակաշրջանի գրական կյանքի լայն ընդգրկումով: Սկզբունքային այդ մոտեցմամբ Շիրազը հառնում է իբրև ժամանակի գրական հզոր ընդդիմություններից մեկը: Նա, իհարկե, քաղաքական գործիչ չէր, այլ նուրբ ու խոր, ինչպես նաև հզոր քնարերգու, համամարդկային արժեքներ ստեղծած ճշմարիտ ժողովրդական բանաստեղծ: Խորհրդային միակուսակցական համակարգում հենց նա քաղաքացիական խիզախ կեցվածք դրսևորեց հայ ժողովրդի համար այսօր ևս հույժ արդիական հնչեղություն ունեցող հիմնախնդիրների հանդեպ: Ս. Մուրադյանը հստակորեն առանձնացրել է բանաստեղծի գործունեությանն առավել բնորոշ երկու հատկանիշ.

- ա) «հայոց լեզվի և դրանով իսկ հայության պահպանության համար մարտնչող, ձուլման վտանգի դեմ անզիջում պայքարող» մեծ բանաստեղծ ու քաղաքացի, որն անվեհեր զինվորի նման երբեք չնահանջեց իր դիրքերից ու սկզբունքներից.
- բ) Խորհրդային Հայաստանում հենց նրա ստեղծագործություններով մարդկանց գիտակցության մեջ գեղարվեստորեն առարկայացավ հայոց տարերային պահանջատիրությունը:

Ազգապահ Շիրազը հայրենիքի արժևորումը դարձրեց նրա գնահատության գլխավոր չափանիշ և գերխնդիր համարեց Հայաստանին ու հավաքական հայությանը սպառնացող վտանգների կանխումը, հայրենասիրական ավանդույթների պահպանումն ու սերնդեսերունդ փոխանցումը: Ինչպես գրում է հեղինակը «իրականում ազգապահ այդ բանաստեղծն ապրեց բոլոր սրբացված նահատակների վարքով՝ կրելով նույնիսկ ավելի ծանր չարչարանքներ ու նվաստացումներ, քան ընդդեմ խավարի ու հանուն գաղափարի մարտիրոսված ու սրբացված նահատակ-վկաները, ապրեց իր կոչմանը ու սրբազան իդձերին, հայության ու ամբողջ մարդկության արդարության, խաղաղության երազանքին հավատարիմ՝ երբեք չմտածելով վայելքի, փառքի ու բարեկեցության մասին» (Բ, էջ 9):

Հրապարակելով հայտնի ու անհայտ շատ անուններ, անդրկուլիսային բազմաթիվ խարդավանքներ և Շիրազի հանդեպ ունեց կողմից թույլ տրված նենգ արարքներ՝ Ս. Մուրադյանն ուրվագծում է այն տհաճ մթնոլորտը, որում նա ապրել և ստեղծագործել է: Դրա հետևանքով նրա ժառանգների մոտ պահվող բազմաթիվ անտիպ բանաստեղծություններից ու հազարավոր նամակներից բացի՝ «ցրված են շիրազյան մասունքները. դրանք, խմբագրություններում ու հրատարակչություններում կորած մեքենագիր ամբողջական

գործեր են, գրքերի, հրավիրատոմսերի, լուսանկարների վրա մակագրություններ և այլն» (Բ, էջ 39):

Ա գիրքը գրողի ստեղծագործական ճանապարհի ու անհատականության կայացման, Երևանի պետական համալսարանում ուսումնառության, քնարերգության բարձունքների նվաճման և մի շարք պոեմների գիտական բնութագիրն է, իսկ Բ գիրքը սկսվում է կենսագրական ու բանասիրական բնույթի մի շարք կարևոր մանրամասների ճշգրտումներով, որոնց հեղինակը զուգահեռում է և համադրում Շիրազի հայրենասիրական, խոհական ու սիրային քնարերգության շահեկան վերլուծությունը, կատարում բազմաթիվ բացահայտումներ բանաստեղծի կյանքում էական դեր խաղացած կանանց կերպավորման վերաբերյալ, ներկայացնում շիրազյան քառյակների ընդարձակաձևավալ ու հարուստ աշխարհը՝ պոետիկայի և տաղաչափության հանգամանակից բնորոշումներով:

Շիրազի հայրենասիրության առնչությամբ Ս. Մուրադյանը գրում է, որ նա մեր ժողովրդի «ազգային մտածողության ու հոգեբանության ձևավորողն էր, հայոց պահանջատիրության, պատմական արդարության վերականգնման և աշխարհացիր հայության՝ հայրենի հողերի վրա համախմբելով Հայաստանը հզորացնելու, սփյուռքում հայոց լեզվապահպանության ու ազգապահպանության հզոր պատգամախոս բանաստեղծը: Բայց եթե նրա պատգամները չհամընկնեին արդարության ժողովրդական ըմբռնումներին..., չունենային գեղարվեստական հանդերձ, այդ բանաստեղծը չէր ունենա ներգործուն ուժ և չէր արժանանա համընդհանուր անափ սիրո» (Բ, էջ 12-13): Հիրավի, իր քաղաքացիական խիզախ դիրքորոշմամբ ու ստեղծագործական գործունեությամբ նա շարունակեց Խ. Աբովյանի, Ղ. Ալիշանի, Մ. Պեշիկթաշյանի, Բաֆֆու, Պատկանյանի, Թումանյանի, Իսահակյանի, Միամանթոյի ու Վարուժանի, Տերյանի ու Չարենցի ավանդույթները, բոլոր նրանց, ում հետ սերտորեն կապված էր գեղարվեստական մտածողությամբ ու գրական ազգակցությամբ: Այսուհանդերձ, որպես իր մեծ նախորդների ազնիվ ժառանգորդ, նա իր ինքնատիպությամբ ու երկերի ներգործուն արվեստով մեծ ազդեցություն ունեցավ թե՛ հայրենիքում և թե՛ հայկական սփյուռքի միլիոնավոր մարդկանց գիտակցության վրա:

Ս. Մուրադյանը ճշգրտում է բանասիրական կարևոր մի խնդիր՝ Շիրազի ծննդյան տարեթիվը (1915 թ. ապրիլի 27 և ոչ թե 1914 թ., երբ հունիսին ծնվել էր նրա Մանիկ քույրը), արժևորում է «Քնար Հայաստանի» երեք ժողովածուների խոհական ու հայրենասիրական բանաստեղծությունները, կանգ առնում Հայրենական մեծ պատերազմի շրջանի նրա հզոր քնարերգության վրա:

Շիրազյան նյութը, սակայն, գերառատ է, իսկ սպառելն անհնար: Ինչպես դիպուկ նկատում է Ս. Մուրադյանը, բանաստեղծի համար սերունդներին հայրենիքի արժևորմամբ դաստիարակելու սրբազան առաքելությունը, հայրենադարձության խրախուսումը, պատմական արդարության վերականգնումն ու ցեղասպանության դատապարտումը դառնում են գերխնդիր:

Մենագրությունում յուրատեսակ նշանակություն են ձեռք բերում շատ երկերի տպագրության հետ կապված արգելքների, խափանումների, անհարկի կրճատումների և դրանց կապակցությամբ բանաստեղծի անթաքույց ցասման մասին նշումները, որոնք դառնում են հետաքրքիր ծանոթագրություններ և մեկնություններ:

Իհարկե, ընթերցողի համար մեծ կարևորություն ունի Շիրազի մարդկային դրաման՝ պայմանավորված նրա որք մանկության ու կյանքի վաղ տարիների մաքառումներով և ինքնահաստատմամբ: Բ գրքի «Մերը բանաստեղծի կյանքում և քնարերգության մեջ» գլխում անդրադառնալով Շիրազի սիրային ստեղծագործություններին՝ Ս. Մուրադյանը կենտրոնանում է 1984 թ. տպագրված նրա երկերի ժողովածուի երրորդ հատորի վրա, որն ամբողջովին նվիրված է մարդկային հոգու բարձրագույն ճախրումին՝ սիրուն: Ընդ որում՝ հեղինակի վերլուծական խոսքը գերծ է նկարագրողականությունից և առավել համոզիչ է դառնում գիտատեսական համարձակ ընդհանրացումների շնորհիվ: Որպես այդպիսին կարելի է մատնանշել թեկուզ այն, որ նա, զուգահեռելով նաև Իսահակյանի ու Տերյանի սիրերգության օրինակները, ընդգրկուն հայացքով տարբերակված է քննարկում «Սիրո քնարերգականը», «Սիրո գուսանականը» և «Սիրո էպիկականը» բաժինները՝ վաղ տարիքում սիրո անմիջական բուռն զգացմունքներից ծնված բանաստեղծությունները, և հասուն տարիքում գրվածները՝ որպես սիրո «քաղցր տանջանքի ու դառը բերկրանքի» վերհուշի արտահայտություն: Կարևոր են նաև նախորդ դարասկզբին ծավալված հեթանոսական գրական շարժման՝ շիրազյան արձագանքների գրականագիտական մեկնությունները:

«Սիամանթո և Խջեզարե» քնարաէպիկական պոեմը Ս. Մուրադյանը վերլուծում է դրա ստեղծագործական պատմության, տասնհինգ հրատարակությունների զուգադրական քննությամբ, իսկ «Քնար համամարդկային» խորագրով սիրային բանաստեղծությունները դիտարկում «Սիրանամե», «Լեյլի և Մեջնուն» մեծակտավ երկերին զուգահեռ: «Կնոջ մասին բանաստեղծի ընդհանուր պատկերացումները, գրքերից բացի,– նշում է նա,– հիմնականում ձևավորվել էին կյանքի ճանապարհին հանդիպած յուրաքանչյուրից ստացած տպավորություններով» (Ա, էջ 125): Անվիճելի է, որ Շիրազը Սայաթ-Նովայի և աշխարհի մյուս մեծ սիրերգակների նման կերպավորելով անմահացրել է մահկանացու կանանց:

Հեղինակը, սակայն, մտահոգ է մի հարցով, որը մեզ ևս անտարբեր չի թողնում: Դա Շիրազին բառիս ոչ դրական իմաստով աշուղ համարելու միտումն է: Նա ոչ թե մերժում է աշուղագուսանական արվեստի հետ Շիրազի առնչությունները, այլ գիտականորեն հիմնավորում դրանց անհրաժեշտությունը հենց բանաստեղծի տեսակետից, համոզիչ ձևով ցույց տալիս, թե ինչու էր մտքի համամարդկային թռիչքներով օժտված «Բիրլիականների» հեղինակը հանրամատչելիության պահանջով երբեմն ձևականորեն «իջնում» ժողովրդագուսանականի մակարդակի և անգամ 1940 թ. հրատարակած «Երգ

Հայաստանի» ժողովածուի բաժիններից մեկը վերնագրել «Աշըղ Շիրազ»:

Բ գրքում մի ընդարձակ գլուխ նվիրված է Շիրազի քառյակների բնութագրությանը: Այստեղ ևս Մ. Մուրադյանը քննական հայացքով է վերլուծել նրա այդ ժանրաձևով գործերը՝ դրանց բովանդակության ու արվեստի հարցերը քննելով Օմար Խայյամի, Բաբա Թահերի, Աֆգելեդդին Խաղանիի, հայկական ժողովրդական խաղիկների, Մայաթ-Նովայի ու Աբովյանի բայաթիների և հատկապես Թումանյանի ու Չարենցի քառյակների համատեքստում՝ բացահայտելով այն բովանդակային ու ձևական նորությունները, որոնցով բնորոշվում է շիրազյան բանաստեղծական մտածողությունը: Այս պարագայում Մ. Մուրադյանն իրավացիորեն գնահատության չափանիշ է ընդունել ոչ թե քանակական առավելությունը, այլ գեղարվեստական որակը և հմուտ վերլուծությամբ ցույց է տվել, թե նախորդների ավանդույթները զարգացնելով Շիրազն ինչ քառյակներ է ստեղծել դասական այդ ժանրով՝ փոքրածավալ երկերում խտացնելով մեր ժողովրդի բարոյական բարձր ըմբռնումներն ու առողջ, համամարդկային կենսափիլիսոփայությունը:

Շիրազի տաղանդը փայլատակել է նաև պոեմներում, որոնց բովանդակության և արվեստի գիտատեսական հանգամանալից քննությունը կատարել է հեղինակը: Ա գրքի «Պոեմների աշխարհը», «Բիրլիական շնչառությամբ», «Պատմական հիշողության ճիչը» գլուխներում դիտարկված է դրանց մեծ մասը, իսկ Բ գրքում ներկայացվում են միայն «Անի» և «Թոնդրակեցիները» պոեմները: Ի դեպ, մենագրության գլխավոր արժանիքներից է և այն, որ Շիրազի՝ «Տիգրան Մեծի վիշտը և հավերժությունը», «Հայոց դանթեականը», «Անի» և «Թոնդրակեցիները» պոեմների մասին հայ իրականության մեջ ասվում է առաջին լուրջ ու ծանրակշիռ գրականագիտական խոսքը, ինչը կողմնորոշիչ է լինելու հետագա ուսումնասիրողների համար:

Հեղինակը 1960-ական թթ. սկզբներից ականատես է եղել Հայոց ցեղասպանությունը պատկերող «ողբամունչ դատաստանամատյանի»՝ «Հայոց դանթեական»-ի լրամշակման գործընթացին և նրա ստեղծագործական ու հրատարակման պատմության մասին հաղորդում է արժանահավատ տեղեկություններ: Միաժամանակ նա կատարում է պոեմի գրականագիտական համակողմանի վերլուծություն՝ մեկնաբանելով ողբերգականի գեղարվեստականացմանն առնչվող բազմաթիվ խնդիրներ: Հայ գրականագիտության պատմության մեջ նա է տալիս դանթեականի երկու՝ չարենցյան և շիրազյան ըմբռնումների հստակ բնորոշումները՝ ընդհանրությունների և տարբերությունների դիպուկ մատնանշումով:

Այս և պատմական թեմայով գրված շիրազյան մյուս երկերը քննելիս հեղինակը հենվել է առհասարակ պատմագեղարվեստական երկի պատմության ու տեսության հիմնախնդիրների վրա, նորովի արժարծել պատմական անցուդարձերի, փաստերի գեղարվեստական պատկերման և պատմական անձնավորություններին որպես պատկերվող դարաշրջանում գործած լիարժեք ու համոզիչ կենդանի մարդկային բնավորություններ կերպավո-

րելու շիրագյան արվեստի յուրահատկությունները: Նա համոզությամբ է պարզաբանել մասնավորապես հայոց պատմության՝ նորագույն ժամանակների համար արդիական նշանակություն ունեցող կարևորագույն դրվագների գեղարվեստականացմանն առնչվող խնդիրները:

1950-ական թվականներին գրված Շիրագի «Անի» և «Թոնդրակեցիները» քույր պոեմների միայն վերջերս հրատարակումը հարկ է համարել անիրավության դեմ հաղթանակ, ինչպես նաև հայ գեղարվեստական ու պատմաքաղաքական մտքի երկու գլուխգործոցային երկերի փրկություն կորստից կամ անորոշ ճակատագրից: «Անբուժելի քաղցկեղի արագությամբ տարածվող այդ շարժումը խարխլեց հայ եկեղեցու և պետականության հիմքերը, պառակտեց մեր ազգային միասնությունը: Թոնդրակեցիներն ու թոնդրակուհիները գործում էին ծածուկ, հույժ գաղտնի՝ թաքցնելով իրենց քայքայիչ գործունեությունը», – գրում է Ս. Մուրադյանը (Բ, 368): Սակայն խորհրդային օրերում պետական քաջալերմամբ հայտնվեցին իրենց գիտական ու գեղարվեստական երկերում թոնդրակյան գաղափարախոսության պաշտպաններ: Ի՞նչ պիտի բերեր թոնդրակյան շարժումը հայությանն ու Հայաստանին, եթե այն չկասեցվեր: «Հարցի լավագույն գեղարվեստական պատասխանը, – գրում է հեղինակը, – Շիրագի «Թոնդրակեցիները» պոեմն է, որի գիտականության տարրն ավելի նշանակալից է, քան ժամանակի պաշտոնական կեղծ տեսակետը» (Բ, էջ 373):

Ս. Մուրադյանի երկհատոր ուսումնասիրությունը Շիրագի կյանքի և բազմաժանր ստեղծագործության խոր ու ընդգրկուն քննությունն է գիտատեսական բարձր մակարդակով: Այն խոշոր ներդրում է ոչ միայն շիրագագիտության, այլև մեր գրականագիտության մեջ առհասարակ, քանզի Շիրագ երևույթը գրական ազգակցության տեսանկյունից համակողմանիորեն դիտարկում է մեր բանաստեղծական մտքի զարգացման համապատկերում և պարզաբանում նրան առնչակից բազմաթիվ խնդիրներ: Շատ բան է արված, բայց կան դեռևս շատ անելիքներ: Ահա թե ինչու մենագրությունն ավարտվում է «Վերջ Բ գրքի» արտահայտությամբ, որ նշանակում է՝ նյութը սպառված չէ, և բացահայտումները շարունակվելու են:

ՍԱԼԳԻՍ ՄԽԻԹԱԼՅԱՆ

Т. В. Варданесова, *Культура хачкаров Арагацотна и Котайка IX-XVII вв.*, Ереван, Издательство ЕГУ, 2016, 191 с.

Տ. Վ. Վարդանեսովա, *Արագածոտնի և Կոտայքի խաչքարային մշակույթը IX-XVII դարերում*, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2016, 191 էջ

Книга Т. В. Варданесовой посвящена такой малоизученной в культуре хачкаров теме, как определение хачкарных школ на примере двух смежных исторических гаваров – Арагацотна и Котайка – в рамках изучения общих вопросов культуры хачкаров. Несмотря на видимое многообразие форм, в изучаемом регионе эти хачкары имеют много общих черт, что позволило автору воссоздать целостную картину развития культуры хачкаров в отдельно взятом регионе. Так, в книге на примере хачкаров Арагацотна и Котайка описываются и анализируются процессы формирования локальной системы художественной хачкарной школы. С учетом новизны затронутой темы в книге также разработаны и научно обоснованы такие категории, как «стиль» и «тип» в художественной школе, которые легли в основу понятия «художественная школа хачкаров».

Первая глава книги посвящена анализу изображений ряда крестных композиций на раннехристианских стелах и в декоративных рельефах первых христианских базилик на рассматриваемой территории, а также изучению ранних хачкаров Арагацотна и Котайка. Анализ раннехристианских крестных композиций определяет роль той базовой структуры, которая несколькими веками позже легла в основу композиций ранних хачкаров. Далее исследуется генезис ранних хачкаров. Автор сопоставляет многие хорошо известные и еще не описанные в литературе крестные композиции Арагацотна и Котайка. Крестные композиции в Парпи, к примеру, которые располагаются на архитектурных фрагментах у церковей Св. Геворк и Св. Таргманичк, Циранавор, имеют определенное сходство с некоторыми рельефами ереруйкской базилики. Схожие крестные композиции встречаются и на базах в Аване, Талине, Аруче и Катнахпюре. В основе этих крестных композиций лежит одна из двух раннехристианских схем изображения равноконечного креста в медальоне. Схема композиции, построенная на изображении центрального креста в медальоне, характерна для многих ранних хачкаров и используется в композиции хачкаров практически до середины XIII в. Крестные композиции на территории Котайка есть в Аване, Джрвеже, Птгни, Егварде и некоторых других местах. Здесь используется вторая схема раннехристианской крестной композиции, построенная на изображении креста с “просшей” вершиной. В книге описаны две нововыявленные крестные композиции из Бджни, которые сохранились в развалинах раннехристианской церкви над этим селением, и несколько не описанных прежде ранних хачкаров. Сопоставительный анализ раннехристианских крестных композиций Арагацотна и Котайка показал, что связь этих крестных композиций с хачкарами изучаемого региона носит более обобщенный характер и не влияет на формирование индивидуаль-

ного регионального стиля хачкаров, который формируется значительно позже, но структуры хачкарных композиций и принцип изображения основных элементов уходит своими корнями в раннехристианские изображения.

Хачкары конца IX-X вв. в районе Котайка и Арагацотна составляют отдельную немногочисленную группу. В основном они сохранились в Талине, в окрестностях села Даштадем, а также в пределах современного города Раздана, в селении Гарни и его окрестностях. Единичные ранние хачкары встречаются и в других местах региона. Условно культуру ранних хачкаров IX-XI вв. можно разделить на два этапа – период формирования хачкара как архитектурного монумента (конец IX-X вв.) и период, когда можно говорить о взаимном соответствии архитектурной формы хачкара его рельефной композиции, что способствовало дальнейшему ее развитию на плите (XI в.). Ранние хачкары с изображением креста очень похожи друг на друга и несовершенны по технике выполнения рельефа. Художественные композиции на хачкарной плите появляются уже к началу X в., а сопоставительный анализ ранних хачкаров выявил три композиционных типа, которые развивались и использовались почти параллельно друг другу с конца IX-X вв. В целом, несовершенные в структурном и техническом плане ранние хачкары Арагацотна и Котайка похожи.

Для хачкаров XI в. характерно то, что при видимом внешнем разнообразии в основе их композиции лежит одна и та же структура, которая условно определяется как композиция «анийского» стиля. Эта специфика композиции XI в. представлена в сопоставительном анализе хачкаров изучаемого региона с некоторыми датированными и хорошо известными хачкарами XI в., среди которых хачкары Ани. Хачкары с подобной композицией встречаются повсеместно, включая и изучаемый регион, что говорит о том, что композиция скорее всего носит всеобщий характер. Приведенные в книге примеры хачкарных композиций изучаемого региона свидетельствуют о том, что большинство хачкаров в Арагацотне и Котайке установлены местными мастерами и только одна работа (хачкар в Бджни) предположительно выполнена анийским мастером (или мастерами), обладавшим высокими профессиональными навыками резьбы по камню.

Вторая глава, посвященная формированию и развитию хачкарной школы Арагацотн-Котайка, начинается с теоретического обоснования тех принципов, на основе которых можно говорить о существовании «школы» в культуре хачкаров, и описания признаков этой школы. «Школа» в значении направления или течения в науке, литературе и искусстве обозначает единство основных взглядов, общность и преемственность основных принципов и методов. Основное содержание этой главы посвящено сопоставительному анализу хачкаров Арагацотна и Котайка, где на многочисленных примерах показано, что в основе всего многообразия хачкарных композиций конца XII-XIV вв. лежит параллельное развитие двух региональных хачкарных стилей – художественного стиля Арагацотна и художественного стиля Котайка. Художественные стили хачкаров Арагацотна и хачкаров центральной части Котайка формируются практически одновременно и в два этапа: первый этап – это формирование регионального стиля, когда одновременно развиваются архитектурные формы и художественная композиция хачкаров; второй этап – когда хачкарная композиция достигает пика развития своей структуры и на время остается достаточно устойчивой. В этот период наблюдаются также изменения вариаций в рамках конкретного изобра-

зительного ряда. Этот этап в культуре хачкаров можно определить как период наивысшего расцвета средневековой культуры хачкаров, который в начале XIV в. резко прерывается завоеванием страны татарами-монголами. Для художественного стиля Арагацотна характерен только один – «аштаракский» – тип композиции, в то время как художественный стиль Котайка более разнообразен по типу композиций. В центральной части Котайка с конца XII-XIII вв. выделены композиции «аринджского» и «разданского» типа. В рамках художественного стиля Котайка следует выделить и композицию «гегардского» типа, развитие которой начинается чуть позже – с 20-х годов XIII в. Композиция «гегардского» типа сочетает в себе стилистические признаки хачкарных композиций Котайка и Арагацотна. Таким образом, в книге на многочисленных примерах автор показывает, что в историческом Арагацотне и Котайке существовала единая хачкарная школа, формирование которой начинается с конца XII в., а расцвет приходится на XIII в. В плане развития архитектурных форм на хачкарах конца XII-XIII вв. следует выделить такой тип, как «крытые» хачкары. Исследования показали, что «крытые» хачкары в изучаемом регионе относятся к художественному стилю Арагацотна, однако они установлены как в Арагацотне, так и в Котайке. Основываясь на том, что в изучаемом регионе процессы формирования и развития стилей протекали одновременно и параллельно друг другу в один и тот же период, а также на то, что хачкары с различным типом композиции часто установлены по соседству и что один из характерных композиционных типов Котайка, «гегардский» тип, вобрал в себя признаки обоих стилей, что есть сходство объемно-архитектурного оформления хачкаров Котайка и Арагацотна, что часто встречаются смешанные композиции на плите с признаками совмещения композиционных типов обоих стилей, автор книги доказывает, что речь идет о единой хачкарной школе.

Третья глава посвящена упадку традиций хачкарной школы Арагацотна и Котайка, последнему этапу развития культуры хачкаров, а также хачкарам XV-XVII вв., которые относительно немногочисленны в регионе. Ареал их распространения в изучаемом регионе неравномерен. Большая часть хачкаров этого периода сохранилась в пределах современного Еревана – в Ариндже, Аване, Канакере, а также в близлежащих к Еревану городах и поселениях: Аштараке, Егварде, Арзни, Агавнадзоре, Бджни, Авуц-Таре и некоторых других местах. По мере удаления от Еревана хачкаров XV-XVII вв. становится все меньше, а в отдаленных частях Котайка и Арагацотна их практически нет. В композиционном плане хачкары последнего этапа культуры условно можно разделить на две части – хачкары XV в. и хачкары XVI-XVII вв., где на хачкарах XV в. еще хорошо заметны традиции отдельных региональных стилей и конкретных композиционных типов, характеризующих хачкарную школу Арагацотна и Котайка. Хачкары XVI-XVII вв. уже не отличаются друг от друга в зависимости от места, где они установлены, а стиль этих хачкаров больше зависит от индивидуального вкуса и квалификации отдельных мастеров. С XVI в. традиции хачкарной школы окончательно исчезают, уступая место общим принципам развития композиции. Хачкары XVI-XVII вв. достаточно однообразны. В этот период на плите часто встречается имя мастера, и среди хачкаров изучаемого региона можно выделить работы таких мастеров, как мастер Григор, Ованес, Акоб, Давид, чьи имена указаны на специально отведенном в композиции месте. Особо следует отметить

работы двух крупных мастеров – мастера Кирама и мастера Меликсета, чьи хачкары установлены и за пределами Арагацотна и Котайка. Предположительно эти мастера могли иметь стационарные мастерские. Исходя из схожести и однотипности хачкаров XVI-XVII вв. можно предположить, что большинство из них выполнялись «серийно», т. е. для рынка. К концу XVII в. культура хачкаров практически исчезает, а хачкары заменяются высокими сундукообразными или прямоугольными надгробиями. В заключении книги обобщаются результаты исследования, а автор приходит к выводу о том, что, несмотря на то что традиции региональных художественных стилей Арагацотна и Котайка имеют различные корни, на определенном этапе своего развития они оформились в единую хачкарную художественную школу, которая сформировалась и развилась с конца XII-XIII вв. на территории двух смежных исторических гаваров и просуществовала до конца XV в., когда индивидуальный почерк мастера и массовое производство приводят к исчезновению традиции.

Книга Т. В. Варданесовой интересна и актуальна, т. к. феномен хачкаров является элементом проявления богатого культурного наследия армянского народа и одним из ярких элементов его идентификации. Изучение хачкарных школ позволяет выявить новые творческие очаги культуры и определить дополнительные параметры атрибутики хачкаров при отсутствии эпиграфики. Определение принадлежности хачкаров к конкретной хачкарной школе позволяет проследить сложные процессы формирования отдельных творческих очагов и ликвидировать тот пробел, который связан с длительным периодом игнорирования этой отрасли средневековой культуры. Недопонимание истинной ценности этого культурного наследия широкими массами часто приводит к смещению и повреждению хачкаров на осваиваемых в наши дни под гражданское строительство землях. Особенно это заметно на тех средневековых кладбищах, которые уже входят в черту населенных пунктов и используются под новые захоронения или же под строительство.

Монография Т. В. Варданесовой, написанная на русском языке, позволяет расширить аудиторию и заметно способствует представлению культуры хачкаров широкому кругу читателей. Текст иллюстрируется схемами и многочисленными фотографиями хачкаров (299 иллюстраций). В конце представлены аннотации на армянском и английском языках.

ГАЙК АВETИСЯН

Արման Եղիազարյան, Աշոտ Երկաթ. թագավոր Հայոց, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2016, 120 էջ

Բագրատունյաց թագավորության ժամանակաշրջանը Հայոց պատմության ամենահետաքրքրական և կարևոր, բայց միաժամանակ դեռևս խորությամբ չուսումնասիրված պատմափուլերից է: Բագրատունի արքաների պետականակերտ գործունեությունը, Հայոց թագավորության ծաղկումն ու զարգացումը, պետության գոյության դեմ մարտահրավերներն ու դրանց չեզոքացման հերոսական դրվագները մինչ այժմ ամբողջությամբ լուսաբանված չեն:

Այս համատեքստում մեր ժողովրդի հիշողության մեջ առավել վառ հետք թողած հերոսներից մեկի՝ Հայոց արքա Աշոտ Երկաթի գործունեությունն ամբողջությամբ չի ուսումնասիրվել: Դեռ ավելին, նրա հիրավի դարակազմիկ դերակատարությունը մեր գիտական ու ընթերցող հանրությանը չի ներկայացվել ամբողջ ծավալով: Այն, որքան զարմանալի է, Աշոտ Երկաթի գործունեությանը հիմնականում ծանոթ է շնորհիվ Մուրացանի՝ գեղարվեստական մեծ արժեք ունեցող «Գևորգ Մարգպետունի» վեպի, որտեղ պատմական մի շարք դեպքեր, ցավոք, շրջված են գլխիվայր:

Մինչդեռ Աշոտ Երկաթն այն հայ թագավորներից է, որոնց գործունեությունը հենքային նշանակություն է ունեցել Բագրատունյաց Հայոց պետականության հետագա գոյության համար: Հանդես գալով Բագրատունյաց թագավորության ամենաօրհասական պահին, երբ Ատրպատականի ամիրի զորքերի անընդմեջ արշավանքների հետևանքով պետականությունն ըստ էության գրեթե ամբողջությամբ փլուզվել էր, Աշոտ Երկաթն առանց վարանելու պայքար է սկսել թշնամու գերակշիռ ուժերի դեմ, որը տևել է շուրջ մեկուկես տասնամյակ և ավարտվել փառահեղ հաջողությամբ. Հայաստանը վերջնականապես ազատագրվել է, իսկ Հայոց պետականությունը՝ վերահաստատվել:

Այս ամենը հաշվի առնելով՝ ուղղակի օրվա պահանջ էին հայոց հերոսական գահակալի թագավորության տարիների մանրագնին ուսումնասիրությունը և այն ընթերցող հանրությանը ներկայացնելը, ինչը ձեռնարկել և հաջողությամբ իրականացրել է ԵՊՀ սիյուռքագիտության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր Արման Եղիազարյանը: Աշոտ Երկաթին նա դիտարկել է «դարաշրջանի հերոսի» կամ «պատմական անձի» հայեցակետից: Այդպիսին են պատմական առաքելության հստակ գիտակցումով, անսահման քաջությամբ ու անձնուրաց նվիրումով օժտված գործիչները, որոնք այդ ամենի շնորհիվ պատմության մեջ խաղում են հանգուցային

դեր: Նման հերոսներն ունեն գերնպատակ և իրենց ամբողջ ներուժը ներդնում են հանուն դրա իրականացման (էջ 99): Հեղինակը հիմնավորում է, որ այդպիսի հերոսներից էր նաև Աշոտ Երկաթը:

Գրախոսվող աշխատությունն աչքի է ընկնում հետազոտական կուռ կառուցվածքով, հստակ ժամանակագրությամբ և դարաշրջանի կնճռոտ հիմնահարցերի լուծումը գտնելու նպատակայնությամբ: Բացի Աշոտ Երկաթի գահակալության ժամանակաշրջանի պատմության խորքային ուսումնասիրությունից, հեղինակն իր առջև նպատակ է դրել «հավուր պատշաճի գնահատել Հայոց թագավորության պահպանման, համակարգային առումով վերակառուցման և հետագա խաղաղ զարգացման գործում անխոնջ ու հերոսական գահակալի վճռորոշ դերը, որն ընդհանուր առմամբ գրեթե համարժեք է Բագրատունի առաջին թագավոր Աշոտ Ա Մեծի (887-891) պետականակերտ գործունեությանը» (էջ 7): Այդ առումով կարծում ենք, որ նա հասել է իր նպատակին, քանզի ընթերցողի առջև իր ամբողջ վեհությամբ հառնում է անասելի քաջությամբ և եռանդով լեցուն հերոսական Հայոց թագավորը, որը երբեք կանգ չի առել դժվարությունների առջև և անվարան շարժվել է դեպի գերագույն նպատակը՝ Հայաստանի ազատագրումը:

Աշոտ Երկաթի գործունեության քննությունն Ա. Եղիազարյանը սկսել է X դարի սկզբից, երբ նա հանդես է եկել Հայոց իշխանաց իշխանի, այն է՝ գահաժառանգի կարգավիճակով: Այնուհետև ուսումնասիրել է նրա մղած ազատամարտի առաջին փուլը, երբ նա ազատագրել է Հայաստանի ընդարձակ շրջանները և հարդյունս՝ թագադրվել: Հեղինակը ցույց է տալիս, որ այդ պատերազմն Աշոտ Երկաթը սկսել է դեռևս հոր՝ գերեվարված արքա Սմբատ Ա-ի (891-914) կենդանության օրոք՝ 913 թ.: Խնդիրն այն է, որ թեև նա գիտակցում էր, որ դրանով Ատրպատականի ամիր Յուսուֆին դրդելու էր տանջամահ անել իր հորը, սակայն սպասելն այլևս անհնար էր: Յուսուֆի զորքերի ասպատակությունների հետևանքով Հայոց պետականությունը գրեթե տապալված էր, իսկ պետական իշխանության համակարգն իր բաղադրիչներով՝ փլուզված: Հապաղումը կարող էր մահացու լինել:

Հեղինակն իրավամբ նշում է, որ «ստեղծված իրավիճակում հաղթանակի հասնելու համար անհրաժեշտ էր այնպիսի առաջնորդ, որն ունակ լիներ միավորելու երկրի ցրված ուժերը, վերականգնելու նրանց բարոյահոգեբանական վիճակը և առաջնորդելու կենաց պատերազմի: Ահա՛ հենց այդ պատմական անհրաժեշտությունն էր, որ «ծնեց» Աշոտ Երկաթ առաջնորդին, տիրակալ, որն օժտված էր վճռականությամբ և եռանդով, քաջությամբ ու զորավարի տաղանդով» (էջ 22):

